

Գ. Ն. ՍԱՐԴԵԱՆ

ՀԱՅ

ՅԵՏԵԱԱԳԻՅԱԿԱՆ

ՄՏՋԻ

ԶՆՆԱԿԱՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

33
U-26

Ռ. Ն. ՍԱՐԻՆՑԱՆ

ՀԱՅ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ
ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

(XIX դ. 70—90-ական թվականներ)

1865



«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1984

Հասարակվում է նեւանի ժողովրդական տնտեսության ինտիմատի ֆալգամտնետուրյան ամբիոնի եւալիսալիտուրյանը

Սարիցյան Ռ. Ն.

Ս 265 Հայ տնտեսագիտական մտքի քննական վերլուծություն (XIX դ. 70—90-ական թվականները). Եր.։ Հայաստան, 1984.—228 էջ:

Գրքում նոր փաստական նյութերի հիման վրա յուսարանվում է XIX դարի երկրորդ կեսի հայ տնտեսագիտական մտքի զարգացման պատմությունը: Բացահայտվում է հայկական պարբերական մամուլի մի շարք օրգանների տնտեսական բովանդակությունը: Հատկապես ջուլջ է արվում ուս հասարակական մտքի բարեբար ազդեցությունը հայ տնտեսագիտական մտքի զարգացման վրա: Գիրքը նախատեսված է տնտեսագետների, տնտեսագիտական բուհերի դասախոսների և ուսանողների համար:

0604020107

U — 52—84

701 (01) 84

ԳՄՂ 65 . 02 <

33

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Վերջին տասնամյակներում XIX դարի հայ տնտեսագիտական մտքի պատմության ուսումնասիրությունն արգասավորվել է գիտական արժեքավոր ներգրումներով: Լույս են տեսել արեւտեսական ուսմունքների վերաբերյալ մենագրական հետազոտություններ, պատմական ուրվագծերի մեջ համակարգվել են տնտեսագիտական մտքի զարգացման էտապներն ու զլիտալոր ուղղությունները: Այս աեսակետից հատկապես ուշադրության արժանի են Ս. Զուրաբյանի, Խ. Գուլանյանի, Մ. Ազունցի, Վ. Աղուզումցյանի, Ն. Քոզմասյանի, Ա. Օճանյանի, Մ. Գրիգորյանի ուսումնասիրությունները:

Հայ հասարակական հոսանքների հարցը գրողեցրել է նաև պատմաբաններին ու գրականագետներին (Մ. Ներսիսյան, Վ. Ռշուանի, Խ. Բարսեղյան, Ա. Հովհաննիսյան, Վ. Ավետիսյան, Կ. Գանեիկյան, Մ. Մխիթարյան, Լ. Գևորգյան և ուրիշներ), որոնց ուսումնասիրություններն արժեքավոր են և հետաքրքրություն են ներկայացնում ժամանակի տնտեսագիտական մտքի բնութագրման աեսակետից:

Սակայն հարցերը տակավին սպառված չեն: Գիտության առաջընթացն ինքնաբերաբար պարտադրում է կատարել վերստուգումներ, վերանայումներ և վերագնահատումներ, իսկ նյութի համակողմանի հետազոտությունն ինքնին ի հայտ է բերում բաց տարածություններ, անհայտ էջեր ու նորահայտ անուններ, որոնք հարստացնում են աւարիկայի պատմության քնդգրկումներն ու բովանդակությունը: Հենց այս շրջանակներում պետք է դիտել ներկայացվող աշխատության առաջադրանքը: Առանձին սկներկներում մենք փորձում ենք փաստական նոր տվյալների հիման վրա լրացնել այն բացը, որը մինչև այժմ գրություն ունի Ալեքսանդր Երիցյանի, Գրիգոր Արթուրունու, Ստեփան Գուլիշամբարովի, Սուլտան Նդիազարյանի և այլոց տնտեսագիտական հայացքների, ինչպես նաև XIX դարի վերջին քառորդի հայ մի շարք պարբերականների (սՄեզու Հա-

յաստանի», «Մշակ», «Նոր դար», «Արձագանք», «Մուրճ», «Պատկ», «Արարք», «Փորձ», «Տարազ») տնտեսական բովանդակության լուսարանման բնագավառում:

Առաջագրելով «Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուղիքները» իր աշխատության խնդիրները, Ա. Զուրաբյանը գրում է. «Մեր այս աշխատության մեջ մենք կանց ենք անում գլխավորապես այն գործիչների, ամսագրերի և թերթերի արտահայտած տնտեսագիտական հայացքների վրա, որոնք ավելի կարևոր նշանակություն են ունենել քննարկելով ժամանակաշրջանի հայ հասարակական-տնտեսագիտական մտքի զարգացման պատմության մեջ, որոնք այս կամ այն շափով արտահայտել են հասարակական պրոպրիետարի շահերը և զգալի ազդեցություն են ունեցել հայ հասարակական-տնտեսագիտական մտքի զարգացման պատմության մեջ»¹: Անշուշտ, Ս. Զուրաբյանի պիրքը տեսական որոշակի ներգրում է հայ տնտեսագիտական մտքի պատմության ուսումնասիրման բնագավառում, սակայն հետազոտողը այսպես թե այնպես նեղացրել է առարկայի սահմանները, խնդիրը դիտելով միակողմանիորեն: Ստացվում է, որ հայ տնտեսագետների հայացքները քննելիս պետք է վերցնել միայն այն դրականը, ինչը բխում էր «հասարակական պրոպրիետարի շահերից»: Բայց որքանով է դա օրջեկտիվ արտահայտում այս կամ այն մասնուղի հայացքների համակարգը՝ հասարակական հոսանքների զարգացման փոխազդեցությունների, ներհակությունների և տարրեկամային միասնականության մեջ:

Մի բարդ պատկեր է գծում XIX դարի 70—90-ական թվականների հայ տնտեսագիտական մտքի հայացքների սխտեմը. առանձին հոսանքների շրջանակներում միասնական ու որոշակի, բայց էպայան է կլեկտիկ ու հակասական մտայնություն, որը բխող էր անցման շրջանից: Ահա թե ինչպես է բացատրում Ֆ. Էնգելը XIX դարի երկրորդ կեսի ուսու հասարակական մտքի այդ առանձնահատկությունը Պլեխանովին ուղղած նամակներից մեկում. «Մի քանիսի երկրում, ինչպիսին Չեռն է, որտեղ ժամանակակից խոշոր արդյունաբերությունը պատվաստված է նախնազարյան գյուղացիական համայնքի վրա և որտեղ միա-

ժամանակ ներկայացված են բաղադրարկության բոլոր միջակա ստադիաները, մի երկրում, որը, բացի գրանից, շրջապատված է դեպարտիզմի բաշած ավելի կամ պակաս ամուր ինտելեկտուալ շիտակի պարսպով, չպետք է վարմանով իդեաների ամենաներհակադիտի ու ամենատարբերակ զուգորթությունների առաջացման վրա: Վերցրե՛ք... Ֆիլոսոֆիան...: Այդ մի ստադիա է, որը պետք է անցնի երկիրը՝ Արդյուն դրա հետևանք էր, որ հայ իրականության մեջ լիբերալ-բուրժուական հոսանքը որոշակի նստաբերություն էր ցուցաբերում գյուղի բարեկարգման նարոդնիկական ակնկալություններին, իսկ ազգային-դաճակնորական հոսանքը, որին հարագատ էր մանր արտադրության վրա խարսխված նարոդնիկական արտադրանքը, իր հայեցողությամբ հարում էր կապիտալիզմի առանտիկական քննադատությանը:

Վ. Ի. Անինը նարոդնիկության տնտեսական բովանդակությունը բնորոշում է որպես մանրբուրժուական և ուսուպիական կազմափարախոտություն, որը բողոքելով էր կապիտալիզմի հակասությունները, բայց և միաժամանակ նկատում է, որ «դա մի ամբողջ աշխարհայեցողություն է սկսած Գերցենից և վերջացած ն.Օն-ով: Հասարակական մտքի հակալական շրջան»², որ թեև Գերցենի ուսումնարան «սոցիալիզմի նշույլ անգամ չկա», բայց մեծ էր այն զեբը, որ նա կատարեց՝ առուսական հեղափոխության նախապատրաստման գործում»³ կամ թեև Տոլստոյի ուսմունքը անվանում էր ռեակցիոն որպես ամենանիշույլ և ամենախոր նշանակությամբ, այնուամենայնիվ, նրան անվանում է առուսական հեղափոխության հայելի»⁴: Այս պիտույությունները մեթոդոլոգիական ուղեցույց են հանդիսանում «ետնեֆումյան, բայց նախահեղափոխական» (Անին) շրջանի հայ հասարակական աշխարհայեցողության զննաստման տեսակետից: «Արևելահայ տնտեսագիտական մտքի պատմությունը» աշխատության մեջ Ա. Օհանյանի հայ տնտեսագետների հայացքների բնութագրության հարցում նկատելի է որոշ միագծություն:

¹ Ա. Մուր-սու, Ֆ. Էնգելս, նամակներ «Կապիտալիստ մասին», Երևան, 1954, էջ 383—384.

² В. И. Ленин, Тетради по аграрному вопросу 1900—1916, М., 1969, стр. 21.

³ Վ. Ի. Անին, ԵՊՏ, հ. 21, էջ 313—315.

⁴ Վ. Ի. Անին, ԵՊՏ, հ. 17, էջ 248.

¹ Ս. Զուրաբյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուղիքները, Երևան, 1959, էջ 15—16.

Այսպէս, եթէ Ա. Արասխանյանը իրերբալ-բորժուական մտածող է, ապա նրա հայացքներում չեն կարող լինել զեմկառտական մտայնութիան նստավածքներ ու անտեսական երևութիւններ ու կատեգորիաների գիտական վերլուծութիւններ, եթէ Ա. Քալանթարը իր անտեսագիտական ու սոցիալ-քաղաքական հայացքներով ինչ-ինչ ընդհանրութիւններ ունի Գ. Արծրունու հետ, ապա նրա հայացքները ենթակա են վերլուծութեան միայն այդ շրջագծում, եթէ մամուլի առանձին օրգաններ անտեսական դարգացման հարցերում առաջադրում էին իրերբալ-բորժուական մտածողների անկասկածները, ապա կարելի է ժխտել իբրև հասարակական մտայնութեան նրա ինքնութիւնը և այլն և այլն¹:

XIX դարի 70—90-ական թվականներին հայ անտեսագիտական մտքի ապարդիւտ նկատում է մի օրինաչափութիւն, որն ընդհանրապէս բնորոշ էր իր զարգացման մակարդակով, այսպէս ասած, «ուշացած ժողովուրդներին» մտաւոր պոթու-նեութեանը: Երբ արդեն զարգացած ժողովուրդները հարյուրամեկակաների ընթացքում անցել են հասարակական ֆորմացիաների օրինաչափ և բնական հաջորդափոխութիւններ, «ուշացած ժողովուրդներին» մտածող մարդիկ փորձում էին համատեղել այն, ինչ զարգացած ազգերը յուրացրել և հաղահարել են պատմական զարգացման երկաթառակ պոչոցեում: Հայ տեսարանները փորձում էին ըմբռնել հասարակական առաջընթացի օրինաչափութիւնները և այս առումով նրանց համար հսկասկան չէր թվում ինչպէս նախորդ, այնպէս էլ իրենց ժամանակի անտեսագիտական ուսմունքների յուրացումն ու մեկ միասնական համակարգում դրանց համատեղումը, ձև տալով մի ուրույն «համապարփակ էկլիկտիզմ»: Եվ իրոք, անտեսական երևութիւնների ու պոթուների մեկնարանութեան ժամանակ հայ անտեսագիտական միտքը զիմում էր Մարքսին ու Էնգելսին, Չերնիշևսկուն ու Գորրուլուրովին, Գերցենին ու Բելինսկուն, Պլեխանովին ու Լաֆարգին, Բերելին ու Գիկշևսկին, Սմիթին ու Ռիկարդոյին, Բուաչիլերբրին ու Քեննին, Կովալևսկուն ու Լավովսկին, Պոսանիկովին ու Կորսակին, Սպենսերին ու Բոքրին, Մենդելեևին ու Իվանիլովիչին, Տուգան-Բարանովսկուն ու Սարու-

¹ Տե՛ս Ա. Օհանյան, Արեւիահայ անտեսագիտական մտքի պատմութիւնները, 1960, էջ 89—126, 241, 255:

վելին, Սեն-Միժոնին ու Միսոնզուն, Միխայլովսկուն ու Օուենին, Գարդինին ու Մեչնիկովին, Բատտալիին ու Սելին, Էնգելզի պոչոցին ու Ուսպենսկուն և շատ ուրիշներ: Թերևս զա էր պատճառը, որ հայ անտեսագետների հայացքներում հաճախ կարելի է նկատել նույն հարցի վերաբերյալ իրարամերձ հետևութիւնների, անտեսագիտական տարբեր ուղղութիւնների՝ իրար բացառող անսական ընդհանրացումներ:

Իհարկե, զա հայ անտեսագիտական միտքը չի զրկում ինքնուրույնութիւնից և սոցիալ-անտեսական կյանքի վերլուծութիւնից:

Այդ «համապարփակ էկլիկտիզմի» ընդհանուր համակարգում, սակայն, նկատելի էր մի հանգամանք, զա որս անտեսագիտական մտքի ազդեցութիւնն էր հայ անտեսագիտական մտքի զարգացման վրա: Բանն այն է, որ նախորդ հնտագիտողները հայ անտեսագիտական միտքը բնարկել են գերազանցապէս եվրոպական անտեսագիտական մտքի զուգահեռներում: Չմիտելով եվրոպական անտեսագիտական մտքի ազդեցութիւնը, մենք ցույց ենք տալիս, որ հայ անտեսագիտական մտքի զարգացումը ընթացել է սուսականի անմիջական ազդեցութեամբ:

Կարևոր նշանակութիւն ունի XIX դարի երկրորդ կեսի արեւելահայ անտեսագիտական մտքի գիտական պարբերացման հարցը: Ա. Օհանյանը մինչմարքսյան արեւելահայ անտեսագիտական միտքը բաժանում է երկու շրջանի. «Առաջին էտապն» ընդգրկում է 1850-ական թվականներինց մինչև 1880-ական թվականներին կեսերը, երբ երկրի անտեսական կյանքում որոշակի բեկում կատարվեց և աստիճանաբար սկսեցին զարգանալ արդյունաբերութիւնը, երկաթուղային ու անոնյա տրանսպորտը, ինչպէս և գյուղատնտեսութեան ապրանքային ճյուղերը:

Երկրորդ էտապն ընդգրկում է 1880-ական թվականներին երկրորդ կեսից մինչև 1900-ական թվականները տեսած ժամանակաշրջանը, երբ Անդրկովկասի Կոնստիական, արդյունաբերութեան զգալի շափով զարգացել էին... երբ օտարերկրյա կապիտալի ներթափանցումն Անդրկովկաս ուժեղացել էր, և երկիրը բողբոջվել էր միջազգային տնտեսական-շուկայական հարաբերութիւնների սլորտի մեջ¹: Մէջ թվում է, որ նման պար-

¹ Ա. Օհանյան, Արեւիահայ անտեսագիտական մտքի պատմութիւնից, էջ 4:

բերացումը ճիշտ չի արտացոլում ժամանակաշրջանի հայ արեւ-
տեսագիտական մտքի պատկերը: Ինդիքի արժեքն է, որ մինչև
70-ական թվականները գեոևա նոր էին ձևափոխում հասարա-
կական առաջընթացը պայմանավորող այն ուժերն ու տեղեկեց-
ները, որոնք պետք է ձևունդ տալին արմատական անդաշտ-
մերի, իսկ արդեն 80-ական թվականների կեսերին կապիտա-
լիստական հարաբերությունները երկրամասում որոշակի ձևա-
փոխում էին ստացել: Ինքնին հասկանալի է, որ 70—80-ական
թվականների տնտեսագիտական միտքը տարբերվում էր նա-
խորդ տասնամյակներից ինչպես իր բարձրացրած հարցերով,
այնպես էլ լուծումներով: Առաջիկ նս ճիշտ ըէ 1880—900-ական
թվականները մեկ շրջանի մեջ ներկայացնելը, քանի որ 900-
ական թվականներին արդեն հայ հասարակական միտքը դի-
մորոշվում է զեպի մարքսիստական ուսմունքը: Ըստ էության
70—90-ական թվականները հայ տնտեսագիտական մտքի պատ-
մության մեջ նշանավորում են մի ամբողջական էտապ, մի
հասկամանք, որը պայմանավորված է և տնտեսական զար-
գացման առանձնահատկություններով, և ճիշտ է արտացոլում
ժամանակի տնտեսագիտական մտքի ընդհանուր ուղղությունն
ու բովանդակությունը: Եվ պատահական չէ, որ այդ ժամանա-
կաշրջանում տնտեսական կյանքի զարգացումը գրեթե նույն
հարցերն էր առաջադրում տնտեսագիտական մտքի ուղղու-
թյուններին:

Ընդհանրապես XIX դարի հայ տնտեսագիտական մտքի
գլխավոր ուղղությունները մի ուրույն համապատասխանություն
ունեին հասարակական հոսանքների սոցիալ-բովանդակության
հետ: Այս տեսակետից թերևս որոշակի են տարբերակվում
տնտեսական զարգացման այն ուղեգծումները, որ առաջադրում
էին հասարակական որոշակի հոսանքներ ներկայացնող «Մշակ»
և «Մուրճ», «Մեղու Հայաստանի», «Նոր-դար» և «Արձագանք»,
«Գործ» պարբերականները: Մական կային նաև այնպիսի
պարբերականներ, որոնք թեև ձև չէին տալիս ամբողջական ու
վերջավորված ուղղության, և թերևս աչքի չէին ընկնում սոցիալ-
տնտեսական կյանքի խոր ու համակողմանի վերլուծությամբ,
այնուամենայնիվ, իրենց ուրույն երանգն էին տալիս ժամա-
նակի սոցիալական խնդիրների լուսաբանությամբ («Պոսակ»,
«Արաբո», «Տարազ»):

Յուրյց տալով դրանից յուրաքանչյուրի բերած նորությունը,

դրանց միացնող ու բաժանող տիրույթները, հարցերի տեսա-
կան դրվածքը գիտելով առսական և եվրոպական տնտեսագի-
տական մտքի զուգահեռներում, մենք միաժամանակ, տնտե-
սական զարգացման ուղեգծումների վերաբերյալ հայ հեղինակ-
ների հայեցումները քննելիս, ուշադրություն ենք դարձնում
նաև տեղական կոնկրետ հանգամանքներով, ավանդակեցու-
թյամբ, աշխարհազարկան, քնական, պատմական ու հոգեբա-
նական զործոններով պայմանավորված ուրույն ազգային փո-
խաձեւումներին:

«ՄԵՂՈՒ ԼԱՅԱՍԱՆԻ» ԳՐԱԲԵՐԱԿԱՆԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶՈՐԳԱՑՄԱՆ ՈՒՆԵԿԺՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումը XIX դարի 70-ական թվականներին առանձնապես սուր բնույթ տվեց հասարակական հոսանքների գաղափարական դիրքորոշմամբ: Այդ իրողությունն առավել բացահայտ դարձավ Գրիգոր Արծրունու «Մշակին» հայտնությունը: Տնտեսական ու մտավոր նորոգությունն ակնկալող «Մարտիոզական», «Ինքնաբնական» նրա ուղղությունն այնքան որոշակի էր, որ առաջադրեց գաղափարական այլ հոսանքների ձևավորման անհրաժեշտությունը և, փաստորեն, պայմանավորեց «Մեղու Հայաստանին» վերածնունդը¹:

Գեոե 1863 թվականին «Մեղու Հայաստանին» որոշ ձևակերպումներ է առաջադրում հասարակական զարգացման ուղիների վերաբերյալ: Գրվածությունը կապիտալիստական տնտեսակարգը որպես մարդկության զարգացման ուղեցույցի, թերթը գրում էր. «Մարդկության ամենից լուսավորյալ, գործունյա և բարոյապես նշանավոր ազգերը Նվրդայային մեջ են բնակում, ուստի և ամենայն մարդկային կենսագործությունները այժմ բնականապես այնտեղ պետք է կատարվին կամ այնտեղից պետք է սկիզբն առնեն. մարդկության համար ամենայն օգտավետ կարգադրությունները ու միջոցները յուրաքանչյուր այլարենակ ազգի նյութական և բարոյական բարօրության և աշխարհային նրբանկրության համար իրենց ազդուորը այնտեղ պետք է ունենան»²: Թերթն ակտիվ քաղաքական կյանքի էր կոչում ազգը, դրա հետ առնչելով նրա բարոյական ու նյութական դարձումը: Այստեղից էլ սկիզբ է առնում ազգի առաջադիմության վերաբերյալ թերթի տարբերան ուղղությունը:

Նրա մշակականները առաջին պլանի վրա էին դնում տնտեսական վերափոխումների անհրաժեշտությունը, ապա մե-

ղուականների ելակետը հանգում էր լուսավորելու պահանջին: Որքանով մշակականները կարևոր տեղ էին հատկացնում տնտեսական գործոնին, այնքանով մեղուականների հայեցողությունը խարսխված էր գիտակցության որոշիչ դերի գաղափարի վրա, որքան «Մշակը» արմատական էր, այնքան «Մեղու Հայաստանին» պահպանողական՝ և ակնկալում էր տնտեսական առաջընթացի մի զանգուղ պրոցես:

Լուսավորության անհրաժեշտությունը մեղուականների կարծիքով թեկադրվում էր պատմության փորձով, որպիսին պարտազրուցում է զարգացման ազգային ուղու առանձնահատկությունը: «Հայը, դարևոր փորձից հետո,— գրել է Պետրոս Սիմոնյանը,— զգում է, որ միայն մեկ ճանապարհ՝ մնաց իրեն անցած հարվածների դրան հետևանքներից ազատվելու՝ կրթվելու լուսավորվելու՝ Ազգի կրթվելու և լուսավորվելու հարցում թերթը մեծ տեղ էր հատկացնում ընկերակցական գործունեությանը: Սարգիս Տեր-Վարդանյանցը «Մարգա ընկերական արարած է և ընկերակցության համար ստեղծված» հողգածում մարդկանց միջև փոխադարձ հարակցությունների անհրաժեշտությունը դիտում էր որպես բնական անհրաժեշտություն, որպես հասարակության առաջադիմության նախապայման: «Եթե մարդիկ ընկերություն չունենային,— գրում է նա,— եթե իրանց մտքերը, այսինչ, այնինչ երևույթի վրա արած վճիռը, բնության իրանց վրա արած ներգործությունը, իրանց գտած զանազան գյուտերը ուրիշին, իրանցից փոքրից շահանալու՞, պարզ բան է, որ մարդկությունն էլ առաջ էր դնում և դարձնում էլ գիտության կողմից զանազանություն չէին ունենալ»³: Հեղինակը գտնում էր, որ հարյուրամյակներ շարունակ մարդն ինչպես փորձի, այնպես էլ գիտելիքների ճանաչողական փոխանցման նորոգիվ հասել է զարգացման ժամանակակից մակարդակին: Նախորդ ժամանակաշրջանի ձևեր բերված գիտելիքների յուրացումը նա միաժամանակ համարում էր մարդկության հետագա կատարելագործման, բնության գաղտնիքների բացահայտման նախապայման:

Հասարակության անդամների ընկերակցությունը հեղինակը պայմանավորում էր քանակական մարդու ներքին ձգտումով, իհարկե

¹ Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 3, Երևան, 1964, էջ 21:

² «Մեղու Հայաստանի», 1863, № 1, էջ 2:

¹ «Մեղու Հայաստանի», 1863, № 28, էջ 235:

² «Մեղու Հայաստանի», 1866, № 42, էջ 311:

էական դեր հատկացնելով նաև բնական սկզբին: Մարդկային հասարակության ընդհանուր ընկերակցության «ազգերի, որպես մարդկության մասերի» և որպես «մարդկության շղթայի» առանձին օղակների վերաբերյալ նրա գաղափարի հիմքում դրված էր օրգանական դպրոցի տեսությունը: Ս. Տեր-Վարդանյանցն ազգի քարոյական կյանքի՝ պակասությունները կապում է «ընկերության» բացակայության հետ, գտնելով, որ եվրոպական երկրների առաջադիմության զրգապատճառը պետք է փնտրել մտավոր և նյութական կարողությունների՝ «ընկերության, աշխատության և միության» համազործակցության մեջ:

Ըստ Ս. Տեր-Վարդանյանցի, «բարոյական առաջադիմությունը» պայմանավորված է մտավոր կյանքի աստիճանով, վերջինս՝ ուսման ու գիտության, իսկ սա էլ, իր շերթին, ընկերությանը: Այս սխեման չի արտասայտում որևէ կոնկրետ պրոցես ու թեև հեղինակն անընդհատ վիշակելու է եվրոպական քաղաքակրթության պատմությունը, բայց այն ներկայացնում է վերացական և ընդհանրական բոլոր ժողովուրդների համար: «Մեզու Հայաստանին», փաստորեն, այն տեսակետն էր, որ բարոյական զարգացումը հասարակության առաջադիմության հիմքն է: Հենց այս առումով թերթը դրվատանքի խոսքեր էր ուղղում Ռոբերտ Օուենին, ակնարկելով վերջինիս քարոյական կատարելագործման նկատառումներն ու պրակտիկ միջոցառումները. «Ռոբերտ Օուենը մեր դարու երևելի մարդկանցից մինն է: Նորա գլխավոր միտքը այն է, որ մարդս ծնունդ է դանազան հանգամանքների: Փոխանքեր նրա շրջակայքը — առում էր նա, — կիտախի և նա: Աշխարհ էլնելիս նա ոչ չար է և ոչ բարի: Այս մտքի ճշմարտությունը նա ապացուցանում էր ոչ թե միայն խոսքերով, այլև բազմատեսակ արդյունավետ գործերով... թեպետ նա չկարողացավ հասնել իր նպատակին, այսինքն, բուրբովին թե՛ կանցնել և՛ բարվոքել հաղաբավոր աղքատ մշակների կյանքը, բայց նորա գլխավոր գաղաբարները մնացին և այժմ ահա մարդասեր գիտնականը ամեն սեղ աշխատում են իրագործել նրա մտքերը»¹:

Հեղինակն ընդհանուր տեսանկյան սակ է գնում և՛ ամբողջ կրոնաբարտիվ շարժումը, և՛ ուսույթական սոցիալիստների,

որոնք կոպտերատիվները համարում էին այն միջոցը, որը հնարավորություն կտար առանց հեղափոխության անցում կատարելու կապիտալիզմից սոցիալիզմի, և՛ Պրուդոնի, որը կապիտալիստական հասարակարգի շարքները փորձում էր վերացնել ժողովրդական բանկերի միջոցով, և՛ Ֆ. Լայպսին, որը փրկությունը տեսնում էր պետության օգնությամբ ստեղծվող արտադրական սոցիալիստներում, և՛ Գիլման Շույզե-Գեյլիին ու Ռայֆայզլենին, որոնք էլքը տեսնում էին ինքնօգնության հիմունքներով կազմակերպվող արտադրական կոոպերատիվներում և այլն և այլն:

Վերը նշված բոլոր տեսակետներն էլ աչքի են զարնվում պատմական սահմանափակությամբ: Կարլ Մարքսը բազմիցս շեշտել է կոոպերատիվների միջոցով կապիտալիզմի վերափոխման անհնարինությունը, որ «հասարակական արտադրությունը ազատ և կոոպերատիվ աշխատանքի հսկայական ու ներդաշնակ սխեմանի վերածնունդ համար անհրաժեշտ են ընդհանուր սոցիալական փոփոխություններ, հասարակարգի հիմքերի փոփոխություններ, այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են ձեռք բերվել միմիայն հասարակության կազմակերպված ուժերի, այսինքն՝ պետական իշխանության, կապիտալիստներից և հողատերերից հենց իրենց արտադրողներին փոխանցվելու ուղիով»²:

Ուշագրավ է, որ «Մեզու Հայաստանին» Ռոբերտ Օուենի սոցիալական ու տնտեսական զարգացման գաղափարներին ծանօթանալու համար առաջարկում է կարդալ Ն. Գորբոլյուբովի «Ռոբերտ Օուենը և հասարակական սեփարմաների նրա փորձերը» հոդվածը: Հայտնի է, որ Ն. Գորբոլյուբովը, բարձր գնահատելով Օուենի սոցիալիստական միտումները, նրան անվանել է «համառ միամիտ»³ և նշել նրա ծրագրերի իրականացման անհնարինությունը: Ընդ է, թերթին ոչ հետաքրքրում էր Ռ. Օուենի հասարակական վերակառուցման տեսության սեփարմատորական ուսույթական սոցիալիզմը և ոչ էլ Ն. Գորբոլյուբովի հեղափոխական ուսույթական սոցիալիզմը, սակայն նրա հեղինակի հայացքների վրա նկատելի էր վերջիններիս ուսմունքում անհատի գործողությունների սոցիալական պայ-

¹ «Մեզու Հայաստանին», 1866, № 1, էջ 4:

¹ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 16, М., 1960, стр. 199.

² Н. А. Добролюбов, Собр. соч., т. 4, стр. 31.

մանպրօքվածության փաստի ընդունումը, հակառակ անարդարացիության ուսմունքի, որը մարդկանց հաստիությունները բացատրում է նրանց բնական ծագմամբ, ստանց հաշիքի առևելյու հասարակական գործոնը: Ճիշտ էլ թերթի այն պնդումը, թե անպիտան մեծ ուսուցիչստի օճանունը ոչ թե մեք հայերին, այլև ուսանելիին շատ հայտնի էլ¹: Արդեն անցյալ դարի 30—40-ական թվականներին ուսուսական առաջադիմական միտքը մի հասուն կուլտուրայում էր դարձնում արևմտահայրենական ուսուսական սոցիալիստների աշխատությունների վրա: Յուրացնելով ուսուսականների սոցիալիստական ուսմունքը, Վ. Բելինսկին, Ա. Գերցենը, Ն. Գորբուլյուսովը, և Չերնիշևսկին և մյուս հեղափոխական զեմտրոստները այն հասցրին տեսական մի նոր ստիճանի՝ ուսուսական սոցիալիզմի, առևելյով այն հեղափոխական զեմտրոստիզմի հետ:

Ինչպես արդեն նկատել ենք, «Մեղու Հայաստանին» ազգության պահպանության նախադրյալ էր համարում «բարոյական հարստությունը»: Այնուամենայնիվ, հասարակական կյանքի տեղաշարժերը, նյութական արտադրության ոլորտի զարգացումը և դրա հետ կապված ապրանքափոխային հարաբերությունների շրջանակների ընդլայնումը պարտադրում էր թերթին անդրադառնալու նաև այդ հարաբերությունների հատուկ կատարելաների վերլուծությանը: Այս տեսակետից ուշագրավ է և. Խաչատրյանի «Փողի ծագումը և նրա գործածությունը» հոդվածը, որի բառ էությունը նվիրված էր Ալեամ Սմիթի «Շենագոտություն ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների մասին» հայտնի աշխատության դրույթների մեկնությանը:

Ինչպես և անպիտան տեսնագետը, և. Խաչատրյանը փողի պրոբլեմը բնույթից էլ ենթարկում էր մինչև ապրանքի և արժեքի վերլուծությունը: Նա նկատում է, որ մարդի իր պահանջներների բավարարման համար չի կարող ամեն ինչ արտադրել, ուստի արտադրելով ալելին, քան անհրաժեշտ է իր կարիքների բավարարման համար, հարաբերության մեջ է մտնում այլ արտադրողների հետ, կատարում արդյունքների փոխանակություն: Նման մոտեցումը փոխանակությունը ներկայանում է որպես մատուցող բնական հակվածության գրեթեման ձև, որի հետևանքով, իբր թե, «ամեն մարդ դառնում է մի վաճառա-

կան, իսկ բոլոր մարդիկների հասարակությունը դառնում է հասակագիտ առևտրական մարդիկների հասարակություն»²: և. Խաչատրյանը, սակայն, հակառակ էր, որ այդ պայմաններում փոխանակությունը հանդիպում է որոշակի զգվարությունների, հասակագիտ այն զեպում, երբ արտադրողներից յուրաքանչյուրը մյուսի արտադրանքի նկատմամբ պահանջարկ չունի: Այդ հանգուցը նա լուծում է հետևյալ ձևով. «Մարդիկ փորձելով այդպիսի զգվարությունները, հետևել են պահել իրանց մոտ, իրանց սեփական աշխատանքով ստացած իրերից այնպիսի մի իր, որ միշտ հարկավոր լինի մարդիկների մեծ մասին և կարելի լինի միշտ փոխել ամեն մի մարդու աշխատանքով պատաստած իրերի հետ»³: Դրանից հեղինակը հանգում էր այն կերպացության, որ փոխանակության զարգացման պրոցեսում տարերային ձևով առաջանում են միջնորդ ապրանքներ, որոնք կատարում են փողի ֆունկցիա: Ընդ որում, ինչպես նշում է և. Խաչատրյանը, տարբեր ժողովուրդների մոտ միջնորդ ապրանքների ֆունկցիա են կատարել զենքը, անասունը, ծխախոտը, կաշին, բրնձը և այլն: Այս միջնորդ ապրանքներն էլ իրենց հերթին, կապված տեխնիկական արդիւքների հետ, զգվարացնում էին փոխանակության պրոցեսները, և այդ պատճառով էլ փոխանակվելու հիմնական միջոց դարձան մետաղները: Հեղինակը քննադատում է կեղծ դրամներ թողարկելու պրակտիկան, այնուհետև նշում, որ դրամահատումն աստիճանաբար դառնում է պետության գործը:

Դրանակնք և. Խաչատրյանի մոտ այն է, որ նա, ինչպես և Ա. Սմիթը, ընկալում էր փողի ապրանքային բնույթը: Սակայն միայն այդքանը: Նա փողը համարում էր լոկ փոխանակության պրոցեսն արագացնող միջոց: Կ. Մարքսը նկատել է, որ բուրժուական կլասիկ տեսնագետները նշել են փողի ապրանքային բնույթը, միևնույն ժամանակ մարդու զգվարությունը հենց ապրանքների փող դառնալու անհղձվածի մեջ էլ: Այդ պարբերի լուծման համար Կ. Մարքսին անհրաժեշտ եղավ ստեղծել մի մարդու ուսմունք արժեքների մասին:

Այնչալ դարի 70-ական թվականների վերջերին և 80-ական

¹ «Մեղու Հայաստան», 1871, № 10, էջ 74, նույնք տես՝ Ա. ՏՄԻՏ, «Исследование о природе и причинах богатства народов», М., 1935, стр. 24.

² «Մեղու Հայաստան», 1871, № 10, էջ 74:

³ «Մեղու Հայաստան», 1866, № 1, էջ 4:

Յվականների սկզբներին «Մեղուն» տպարան էր հողվածներ, որոնք նվիրված էին մի կողմից նարոդնիկական, մյուս կողմից եվրոպական մանր բուրժուական սոցիալիստական գաղափարխոսության ուսմանը և մեկնաբանությանը: Այդ հեղինակներից հատկապես ուշագրություն արժանի են Հ. Տեր-Մովսիսյանը և Տ. Ս.-ն (Գ. Տեր-Մկրտչյան):

2. Տեր-Մովսիսյանի կարծիքով, հատկապես տնտեսական զարգացման հարցերի ուսումնասիրությունը հող կնիստագրության հետագա պրակտիկ գործունեության համար: Անդրադառնալով Պետրովսկու գյուղատնտեսական ակադեմիայի հայ ուսանողների խմբակում՝ Ն. Տեր-Քարսեղյանի «Համայնական հողատիրությունը» գեկուցման հիմունքները, նա համաձայնում է վերջինիս այն մտքին, թե «Համայնական հողատիրությունը համեմատաբար ամենակատարյալ և ամենաշահավետ հողատիրության ձևն է և ամենից ավելի մտանում է ընդհանուր համամարդկային իրավունքին»: Հողվածագիրը համաձայնում է նաև խմբակի մեկ այլ անդամի՝ Գր. Յուզբաշյանի այն հարցադրմանը, ըստ որի «հողը բնության տուրք լինելով, կատարյալ սեփականություն համարվել չի կարող»: Հարկ է նշել, որ Պետրովսկու գյուղատնտեսական ակադեմիայի հայ ուսանողների խմբակի անդամների վրա զգալի ազդեցություն էին գործում լիբերալ նարոդնիկների տնտեսագիտական հայացքները: Այդ բանը նկատել է նաև Հ. Տեր-Մովսիսյանը, նշելով, որ խմբակում կարգապահող կաթսխոսությունները մի զգալի մասով էլ նպաստել ունենին հայ իրականությանը հաղորդելից զարձնել նիկոլայ-Օն-ի, Գուլովալովի, Բ. Բ.-ի և մյուսների աշխատություններին:

Հայտնի է, որ XIX դարի 80-ական Յվականներին ուսուկան իրականության մեջ լայն տարածում ստացավ տնտեսական ուսմանտիպը: Այս ուղղության ներկայացուցիչները (Վ. Վորոնցով, Ն. Գանիբալտ և ուրիշներ) փորձում էին սուսական իրականության ինչ-ինչ առանձնահատկություններ հաշվի առնելով, հասարակական զարգացումն ուղղել դեպի «ժողովրդական արտադրության» հունը: Ահա հենց այդ ոգով էլ Հ. Տեր-Մովսիսյանը գրում էր. «Ես այն կարծիքին եմ, որ արհեստագործությանը կարելի է այնպիսի ուղղություն տալ, որ ապագա-

յում արդյունադործության գործիքները (орудия производства) պատկանեն գյուղական հասարակություններին և մենք աղետավոր լինենք այդպիսով եվրոպական բուրժուախիայի: Քաղաքահամբարների կազմակերպության ուսումնասիրությունն էլ նմանապես պետք է մեր զիսավոր հասարակներին մեկ լինի, որովհետև համբարությունների մեջ պահպանվում է հավասարության և ինքնօրինության բարձր գաղափարը»:

Մեկ այլ հողվածում նա ավելի է զարգացրել իր մտքերը. «Քայց, եթե մեր գյուղաբայրում Երևանյն փորրիկ-փորրիկ գործարաններ, ուր մշակեն գյուղական բերքերը, այն ժամանակ գյուղատնտեսությունը ավելի շահավետ գործ կդառնար և գյուղացին երբեք չէր թողնել հայրենի երկիրը: Մի գյուղում կարելի էր մի համայնական պարեզը շինել, մյուս գյուղում՝ մի համայնական շոգենաղաց (общинная паровая мельница), երրորդ գյուղում՝ մի համայնական ձիթարան, չորրորդ գյուղում մի համայնական կտավի գործարան և այլն: Այդպիսի փորրիկ գործարանները մեծավիճ կնպաստեն մեր կյուղացու տնտեսական գրույթյան բարվորմանը: Վերջապես բուրժուայն ուրիշ բան է բուրժուական գործարանը և համայնականը»:

Միևնգամայն ակերե է, որ Հ. Տեր-Մովսիսյանի հասարակական առաջնիվացի սխեման տեղափոխվել է նարոդնիկների տնտեսական ուղղգծումների շրջանակներում, այն է՝ դարգացումն ուղղել դեպի համայնական, արտեկային արտադրությունը: Հայ հեղինակը չէր տեսնում, որ այդ մանր ձևերարկություններն ավելի են ընդլայնում արտադրության տնտեսությունը, զրանով իսկ նպաստավոր նախադրյալներ ստեղծելով կապիտալիզմի զարգացման համար: Ապրանքազրգացման հարաբերություններն այն ունեն, որը հեղուցներն ակնհայտ է զարձանում ժողովրդական արտադրության արեւածին հիմունքներին մասին նարոդնիկական տեսության սխալակնությունը: Տ. Էնգելսը գրում է. «Ռուսական համայնքը ենթարկվելը նույն պրոցեսին, որը Սուլինց ոչ շատ առաջ, փոխային տնտեսությունը Արևելք թափանցելը կապիտալիզմի, հասցրել Արևելքի տաճարական կարգերի քայքայմանը: Սուլինց կարող էր, հիշա է, այն ժամանակ զեռես բովանական Երիտասարդ մասնաանփա-

1 «Մեղու» Հայաստան, 1882, № 21:

2 «Մեղու» Հայաստան, 1882, № 45:



կանատիրական իրավունքի մեջ սեռայուցիոն ներխուժման միջոցով աղատագրել ստրկացած պարտապաններին, պարզապես ոչնչացնելով նրանց պարտքերը: Բայց կյանքի վերագրանել հին Աթենքի տոճատիրական կարգերը՝ նա չէր կարող, և ճիշտ այդպես էլ աշխարհում չկա այնպիսի մի ուժ, որն ի վիճակի լինի վերականգնելու սուսական համայնքը, երբ նրա քայքայման պրոցեսը հասել է որոշ ստիճանի¹:

2. Տեր-Մովսիսյանը գլուղացու ժանր սնտեսական կացության պատճառը համարում էր նրա տգիտությունը, հին արտադրանքների կուլում լինելը: Գրչապետության սնտեսական վիճակի բարելավման ու կատարելագործված երկրագործության արմատավորման գործում նա մեծ տեղ էր հատկացնում գլուղատեսական մտավորականության առաքելությանը, անգիր-ասանլով, որ վերջինս չէր կարող իրականացնել իր ծրագրերը, քանի որ նյութական կախված էր հասարակության բարձր խավերից, որոնց ձևերում էլ կենտրոնացված էին սնտեսական լծակները: Հեղինակը հետաքրքրական մտքեր է արտահայտել նաև 1861 թվականի գլուղացիական ռեֆորմի վերաբերյալ: Գրանք հանդում են այն ընդհանուր եզրակացություններ, որ ռեֆորմն իր սոցիալ-սնտեսական բովանդակությամբ լլուծեց գլուղաշինարարության հարցերը:

Այսպես, օրինակ, 2. Տեր-Մովսիսյանն անդրադառնալով հոգրի հոգնման գործարքի սնտեսական բովանդակությանը, գտնում էր. «Արդյոք ճշմարտության զեմ չէ՞, որ այն հողը, որ պետք է գլուղացու սեփականությունը համարվեր, նորից նորս վերս ծախվում է... հողային բարենորոգումն ընդհանուր սերտիվենական նշանակություն ունեցող մի իրողություն էր, ինչո՞ւ որմեն տերության բոլոր դասերի մարդիկ շարիտ մասնակցեին այդ գործը իրագործելու ծախսերի մեջ»²: Հեղինակի վրա նկատելի է ն. Չերեխլևեու ազդեցությունը, որն ընդհանրապես մերժելով նոգնման անհրաժեշտությունը, նրա իրավական ու սնտեսական շիժմավորվածությունը, պահանջում էր, թե որքանով ռեֆորմի հետևանքով «շահում է ամբողջ ազգը,

հետևապես ծախսերն էլ պիտի անի ամբողջ ազգը», «կառավարությունից մինչև վերջին դիմողը»¹:

«Մեզու Հայաստանի» էջերում սնտեսական հարցերի բընուությունն ակնկալող սնտեսադիտական բազմաթիվ հողամաներ է հրատարակել Գալուստ Տեր-Մկրտչյանը: Տնտեսական հարցը նա համարում էր ժամանակի ամենակարևոր հասարակական հարցը, եվ քանի որ դրա հետ անմիջականորեն առնչվում է հասարակության զսակարգային ու սոցիալական հակասությունների լուծման խնդիրը, որ մշտապես զբաղեցրել է մարդկությանը, ուստի հասարակության պատմությունը բնա Գ. Տեր-Մկրտչյանի ներկայանում է որպես «սնտեսական խնդրի պատմություն»²:

Տնտեսական ամեն մի հարց ունի որոշակի սոցիալական բովանդակություն: Այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում սոցիալ-տնտեսական լուծումների վերաբերյալ Գ. Տեր-Մկրտչյանի նկատողությունները: Հայտնի է, որ սոցիալ-դարձիխիզմի ներկայացուցիչները փորձում էին 2. Գարձիխի սեսություն սկզբունքները տարածել նաև հասարակական կյանքի վրա, ընդհանուր բուզահեռ անցկացնելով բնության էլուլուցիոն զարգացման և հասարակական առաջնթացի միջև: Անդրադառնալով սոցիալ-դարձիխիստների «գոլություն կովի» օրենքին, Գ. Տեր-Մկրտչյանը քննադատում էր բուրժուական այն սեսաբաններին, ովքեր այդ օրենքը տարածում էին նաև մարդկային հասարակության վրա և փորձում «սրագործել» «այժմյան զսակարգերի» բուժանումը մարդկային հասարակության մեջ, ապացուցելով, թե անհրաժեշտ են տիրապետող և ստորակ դասերը, թե մարդկանց մի մասը պետք է աշխատի մյուսների համար, թե համերաշխություն չի կարող լինել մարդկանց մեջ, այլ միայն մրցումն և պատերազմ. ինչպես կենդանիների մեջ»³: Հեղինակը ճիշտ է ընկալել սոցիալ-դարձիխիզմի սոցիալական բովանդակությունը, որի միտումն էր գոլության կովի օրենքով արդարացում սոյ ապակարգային ներհակություններին, մրցակցությանը, կապիտալիստական երկրների գաղութատիրական քաղաքականությունը:

¹ Գ. Խաբոխ և Յ. Էնգիլիի նամակագրությունը ուսու յաղաքական գործիչների հետ, Երևան, 1954, էջ 376:

² «Մեզու Հայաստանի», 1881, № 233:

¹ Н. Г. Чернышевский, Полн. собр. соч., т. V, 1950, стр. 565, 724.

² «Մեզու Հայաստանի», 1881, № 69:

³ «Մեզու Հայաստանի», 1882, № 42:

Գ. Տեր-Մկրտչյանը չէր բնորոշում հասարակական կյանքի «բիուրոգիզացիան» հասարակության զարգացման շարժիչ ուժը գրոյեցիան պայքարի մեջ տեսնելու մտայնությունը, որը ոչ միայն երաշխիք չի կարող լինել հասարակության կատարելաբնականը, այլև կարող է կործանարար հետևանքներ ունենալ։ Մարդկային հասարակության նրա իղիարը ենթադրում էր «համերաշխության օրենքի» գրոյությունը։ Մարքսիզմի դասականները մի անգամ չէ, որ անդրադարձել են սոցիալ-դարվիսիզմի քննադատությունը։ Ֆ. Էնգելսը նկատել է. «Միանգամայն մասնատություն է ձգտել պատմական զարգացման ու նրա բար-դացման ողջ հարուստ բաղձադանությունը հանգեցնելու վտիտ ու միակողմանի՝ «գրոյության կոիվ» ֆորմուլային։ Այդ ոչինչ չափ է նշանակում ամ գրանից էլ բիւ բան»¹։

Հասարակության տնտեսական կյանքի զարգացումը Գ. Տեր-Մկրտչյանը համարում էր օրինաչափ երևույթ, գտնելով, սակայն, որ այն ոչ միշտ է ուղեկցվում բնակչության բարեկեցության բարձրացմամբ։ Հնդկականի համոզմամբ, դրանք կարող են գտնվել հակադարձ կապի մեջ²։

Խոշոր արդյունաբերության զարգացումը տանում է դեպի սոցիական մանր արհեստագործական արտադրության քայքայում։ Մերենայական արտադրության է վարձու աշխատանքի վրա հիմնված կապիտալիստական արտադրությունը հնարավորություն է տալիս ավելի էժան ծախելու ապրանքները և դուրս մղելու արհեստներին։ Գ. Տեր-Մկրտչյանը զրոս պատճառը համարում էր այն, որ կապիտալիզմի ժամանակ «արհեստավորների վարձկաններ են և ստանում են իրենց աշխատանքի միայն կեօր, մի կրորդը, մի քառորդը և այլն, մինչդեռ անձնական աշխատող արհեստավորը օգտվում է իր աշխատանքի բոլոր եկամտից. վերջապես դրամատիրական սխտեճում ամեն բան կատարում է մեծ չափով, զորքը դյուրացնող թանկագին մեքենաներով, բազմաթիվ գործավորների աշխատանքը կենտրոնացած է մի գործարանում և այլն, որը և տալիս է միջոց չափազանց արժանացնել ապրանքի գինը և մրցման ժամանակ հաղթանակ տանել»³։

Հայտնի է, որ պարզ ապրանքային արտադրության ժամանակ բացակայում էր շահագործումը, բանի որ անմիջական արտադրողն ու արտադրության միջոցների սեփականատերը նույն անձնավորությունն էր։ Գ. Տեր-Մկրտչյանը կարծես կուսնել է այդ երևույթի էությունը, այն, որ մանր ապրանք արտադրողների արտադրության ծախսերը ներկայացնում են ամբողջ մշխատանքի ծախսումները, այսինքն համընկնում են ապրանքների արժեքին, իսկ կապիտալիզմի պայմաններում արտադրության ծախսերին զումարվում է նաև վարձու բանվորների կողմից ստեղծված հավելյալ արժեքը։

Հնդկահար տեսնում էր, որ մերենայական, կոպերացված աշխատանքը տանում է դեպի աշխատանքի արտադրողականության բարձրացում, հետևապես նաև ապրանքի միավորի էժանացում, իսկ դա կարևոր նախադրյալ է ապրանք արտադրողների մրցակցային պայքարում հաղթանակ տանելու համար։ Նա տարբեր առիթներով անցրադարձել է կապիտալիստական մեքենայական արտադրության տնտեսական հետևանքների բացահայտմանը։ Ընդհանրապես, նշել է նա, մեքենաները կոչված են «մարդկային աշխատանքը թեթևացնելու և շատ անգամ մեր անձնական ուժերի համար անկարելի կարելի դարձնելու համար»։ Բայց արդե՞ն է և, արդյոք, կապիտալիստական արտադրության պայմաններում և, «թեթևացնող» այդ ամենամեծ դասի թվառությունները։ Մեքենայի առաջին «բարենաստությունը» բանվորների համար «առանց աշխատանքի՝ պարսպ մեալու առաջադրությունն է», հսկայական դանդաղների զործադրությունն ու քաղցածությունը։ Անդրալի տնտեսական զարգացման պատմությունն այդպիսի տխուր էջեր շատ ունի։ Կապիտալիզմի պայմաններում մեքենաները մրցում են բանվորի հետ, վերջիններիս դարձնելով նրանց կցորդներն ու թըշնամիները, պայման, որը ստեղծում է սուր ներհակություն արտադրողի և արտադրության միջոցների միջև։

Յնի մի կողմից Գ. Տեր-Մկրտչյանն արդարացնում էր աշխատանքի միջոցների գեծ բանվորների պայքարը որպես վարձկանների, ապա մյուս կողմից՝ նրանց համարում էր տղան ու կարճատես։ Մեքենաները բանվորներին դարձնում են վարձկաններ և «ամբողջ դասակարգի պատկանած եկամտաբ խըլվում է և լցվում մեկի կամ երկուսի գրպայր։ Փոխանակ աշխատության ժամերը կրճատելու, ստիպում է վարձկաններին

1 Ֆ. Էնգելս, Ռուսիայի Գիտելակիկա, Սրան, 1969, էջ 321.

2 «Մեկուս Հայաստանի», 1882, № 73.

3 «Մեկուս Հայաստանի», 1882, № 75.

փոխնիփոխն զոր և դիշեր աշխատել, որովհետև այդպես է պահանջում մասնավոր տիրոջ շահը»¹:

Մեքենայական արտադրության բացասական հետեանքներից մեկն էլ համարելով գործարարությունը, Գ. Տեր-Մկրտչյանը նշում է, որ թեև մեքենաները կողմն են էմանացնելու ապրանքները, բայց դա ուրիշ համեմատական է բանվորների օրավարձին: Երբ ապրանքների դինն էժանեցում է, արտադրությունը կրճատվում է, և բանվորների մի մասը արձակվում է աշխատանքից, իսկ մյուս մասն էլ «ստիպված է լինում պակաս վարձով ծառայել, ապա թե ոչ՝ շատերը կան այդ պայմանն հանձն առնելու պատրաստ»: Եթե սովյալ ապրանքի նկատմամբ մեծանում է հասարակական պահանջարկը, ապա արտադրությունն ընդլայնվում է և կթի որոշ չափով բարձրանում է օրավարձը, ապա թանկացած ապրանքներ գնելիս այն նորից վերադառնում է կապիտալիստներին, «այս նշանակում է աշով ստանալ, ձախով սալ»²:

Մեքենան ընդհանրական կողմն է հասարակության համար օգտակար լինելու ոչ միայն բանակական, այլև որակական առումով: Բայց կապիտալիզմի պայմաններում այն դառնում է շարք: Գ. Տեր-Մկրտչյանը ճիշտ է նշում, որ մեքենան մրցույթություն է առաջ բերում բանվորների միջև, որակավորում չունեցող բանվորներին փոխարինում են որակյալ բանվորները: Վերջիններս աշխատում են առաջինների օրավարձով, կիրառվում է կանանց ու տղամարդկանցի էման վարձատրվող աշխատանքը: Փաստորեն, Գ. Տեր-Մկրտչյանը նկատում է այն երևույթը, որ մեքենան, նպաստելով աշխատանքի արտադրողականության հակալական բարձրացմանը, առաջ է բերում մրցակցություն ու գործազրկություն, որի հետևանքով աշխատավարձն իջնում է աշխատուժի արժեքից ցած: Եվ հեղինակը պատկերավոր նկարագրում է բանվորների ծանր աշխատանքը կապիտալիստական գործարաններում: Հեղինակի վերոհիշյալ գիտողությունների վրա նկատելի է սոցիալիստական ուսմանքների ազդեցությունը, սակայն սոցիալական հարցի լուծման նրա ծրագիրը իր էությունը մանրբուրժուական է և ուսմանտիկ: Հեղինակը դատապարտում էր արևմտյան կարգերի պատմական

գոյության իրավունքը: «Չգուշանալ արևմտյան սխալներից, — գրել է նա, — որոնք հուժկու տասանմունքների և ներքին խռովահուզ պատերազմների պատճառ են լինում: Հասկանանք, որ մեզ ոչ թե մեքենաներ, այլ մեքենաների հասարակության մեծամասնության համար օգտակար գործածություն է հարկավոր: Ուստի և նա կողմնակի համար առաջադրում էր զարգացման մի այնպիսի ուղի, որը մի տեսակ համասեղում է արտադրության պատմական ու բուրժուական արտադրանքների տարբերը: Վերանում են հին արտադրանքներ, «իրենց հետ թաղելով միջնադարյան, թեև շատ պակասավոր, բայց անկախ սխտեմի և տեղի տալով նոր, բայց ավելի վտանգավոր սխտեմի, և մեզ պետք է այդ երկու սխտեմների ուսումնասիրությունն էլ, որպեսզի բանի հարմար ժամանակ ունիք, բնորոշ մի ուրիշ, — երրորդ սխտեմ, որը կարողանա մրցել նոր սխտեմի դեմ և չունենա այդ նորի պակասությունները»³: Իսկ այդ երկու սխտեմները կարելի է զուգորդել, պահպանելով առաջին սխտեմի (դրամատիկական — Ռ. Ս.) ձևը գործի ժամանակ, երկրորդի ձևը (անձնական — Ռ. Ս.) աշխատանք (արդյունք) բաժանելիս: Գ. Տեր-Մկրտչյանը նկատում էր կապիտալիստական արտադրության և բաշխման միջև հակասությունը, որը և փորձում էր լուծել իր առաջադրած «երրորդ սխտեմի» միջոցով, դրանով իսկ արտադրությունը ենթարկելով հասարակական շահին:

Գ. Տեր-Մկրտչյանը չէր պատկերացնում ոչ միայն բուրժուական հարաբերությունների ձևավորման մեխանիզմը, այլև խոչըր մեքենայական արտադրության և մանր արտադրության որպես ապրանքային տնտեսության տարբեր ձևերի փոխադարձ կապը: «Տնտեսական ուսմանտիզմի բնութագրության շուրջը» աշխատության մեջ Վ. Ի. Լենինը ինչպես XIX դարի սկզբի կիրոպական ուսմանտիկներին, այնպես էլ XIX դարի վերջի ուսմանտիկներին ուսմանտիկների գծրախառնությունը համարում էր այն, որ նրանք իրենց համար հորինում էին ինչ-որ վերացական, արտադրության հասարակական հարաբերություններից զուրս կանգնած մանր տնտեսություն, անտեսելով, որ այդ մանր արև-

¹ «Մեկու Հայաստանի», 1882, № 77:

² «Մեկու Հայաստանի», 1882, № 78:

¹ «Մեկու Հայաստանի», 1882, № 78:

² «Մեկու Հայաստանի», 1882, № 75:

³ Տե՛ս «Մեկու Հայաստանի», 1882, № 91:

տեսությունը դանձում է ապրանքային արտադրության պայ-
մաններում: Միսմոնդիին, որպես մանրրոտմուսկան տնտեսա-
գետ բնութագրելիս Վ. Բ. Լենինը հիմնվում էր այն բանի վրա,
որ նա չէր հասկանում մանր արտադրության (որն իդեալակա-
նացնում էր) և խոշոր կապիտալի (որի վրա հարձակվում էր)
կապը, «հենց այն բանի վրա, որ նա չի տեսնում, թե ինչպես
նրա սիրած մանր արտադրողը՝ գյուղացին, իրոք, մանր բուր-
ժուս է դառնում»¹:

Իհարկե, Գ. Տեր-Մկրտչյանը տեսնում էր մանր արտադրու-
թյան պատմական դատապարտվածությունը, բայց և միաժա-
մանակ իր տնտեսական իդեալը ուղղում էր դեպի անցյալը:

Կ. Մարքսը և Ց. Էնգելսը մանրրոտմուսկան սոցիալիզմի
բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ համարում էին
այն, որ նա փորձում էր արտադրության և փոխանակության
ժամանակակից միջոցները բռնությամբ զարձայլ խցկել սեփա-
կանության հին հարաբերությունների շրջանակների մեջ: Եվ
որբան էլ Գ. Տեր-Մկրտչյանը վկայակոչումներ էր բերում Սեն-
Միտենից, մարդկային հասարակության սոսկեղաբրոն տեսնելով
նրա ապագա զարգացման ու կատարելագործման մեջ, որբան
էլ առաջադիմական էր բուրժուական հարաբերությունների նրա
քննադատությունը, այնուամենայնիվ, իր ուղեղծումներով նա
զուրս չէր գալիս մանրրոտմուսկան տնտեսական առմանտիզ-
մի շրջանակներից:

Այսպիսով, ազգային առաջընթացի տեսանկյունից հասարա-
կության տնտեսական զարգացման հարցերի մեկնաբանություն-
ներ «Մեղու Հայաստանի» տեսաբանների հայացքներում, իր
հակասություններով ու սահմանափակությամբ հանդերձ, որո-
շակի հետաքրքրություն է ներկայացնում հայ տնտեսագիտա-
կան մտքի պատմության մեջ:

ԱՆՔԱՆԿՐ ԵՐԻՑՅԱՆԸ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԿՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՆԵՐԻ ՄԱՍԻՆ

XIX դարի երկրորդ կեսի հայ գրական-հասարակական մտքի
պատմության հիշատակվող անուններից է Ալեքսանդր Երից-
յանը: Նրա գրչին են պատկանում պատմագիտական, հնագի-
տական, հրապարակախոսական, ազգագրական և տնտեսագի-
տական բնույթի բազմաթիվ հոդվածներ ու ուսումնասիրություն-
ներ, որոնք առաջադրում են հայ ժողովրդի պատմության և
ժամանակի սոցիալ-տնտեսական ու գաղափարական տեղաշար-
ժերի ուրույն ընկալումներ ու մեկնաբանումներ: Ա. Երիցյանին
առանձնապես զբաղեցրել են Անդրկովկասի սոցիալ-տնտեսա-
կան զարգացման հնոսակարի հարցերը: Վերլուծելով երկրա-
մասի տնտեսական հարաբերությունները և երևույթները քննե-
լով ուս և եվրոպական տնտեսագիտական ուսմունքների փոր-
ձով, նա տեսակետներ է զրանցել տնտեսագիտական կատեգո-
րիաների և տեսական այլ պրոբլեմների վերաբերյալ, որոնք
ուշադրության արժանի տեղ են զբաղում հայ տնտեսագիտա-
կան մտքի պատմության մեջ:

Իր հայացքներով և ըմբռնումներով, ինչպես իրավացիո-
րեն նկատում է Ա. Ս. Համբարյանը, Երիցյանն առավելապես
հարում էր ազգային-պահպանողական հոսանքին և հենց այս-
տեղ էլ պետք է որոնել աշխարհայացքային այն հիմքը, որի
գիտակետից նա մեկնաբանել է հայ ժողովրդի սոցիալական
ու տնտեսական զարգացման հարցերը՝ 1866 թվականին Գ. Տեր-
Ալեքսանդրյանցը Քիջիխում սկսում է հրապարակել «Վաճա-
ռական» շտրաբաժներով, հիմնական աշխատակից ունենալով
Ալեքսանդր Երիցյանին: Քերթի անվանումն ինքնին բնորոշում
է նրա հիմնադիրների սոցիալ-տնտեսական հայեցողության բո-
վանդակությունը: Եվ որովհետև երկրամասի տնտեսական
կյանքում տիրապետողն անտրական կապիտալն էր, ուստի և
տնտեսագիտական արձարժումներում առաջնակարգ նշանակու-

¹ Վ. Բ. Լենին, Եժ, հ. 2, էջ 267—269:

¹ ՏԼՎ «ՊՔՀ», 1960, № 1, էջ 150:

Յյուն եւ ստանում փողի և շրջանառութեան ոլորտի հարցերը: Հայտնի է, որ 1861—65 թվականների բաղաբացիական պատերազմը Ամերիկայում որոշակի անտեսական հետեանքներ ունեցավ կապիտալիստական աշխարհի և հատկապէս եվրոպական երկրների էկոնոմիկայի վրա: Մայրահեղորեն կրճատվեց բամբակի հումքի ներմուծումը, սառչ բերելով, այսպէս ասած, «բամբակի սով» եվրոպական շուկայում, խորացնելով արդեն բռնկված համաաշխարհային ճգնաժամը: Ինչպէս նկատվեց Ա. Երիցյանը, դրա հետեանքով «Ֆարբիկայում հարյուր հազարավոր բանդը մշակները մնայուն անգործ, ֆարբիկաների մեծ մասը կողզվեցավ: Բամբակ չկա— անտարական աշխարհումը կնշանակի գործ չկա, հաց չկանք: Եվ ահա եվրոպական երկրները սկսեցին որոնել նոր շուկաներ, ապրանքաշրջանառութեան ոլորտն ընդգրկելով ասիական երկրները, այդ թվում նաև Անդրկովկասը: Երիցյանը նշում է, որ եվրոպական երկրների անտեսական այդ կացութիւնը բացասաբար անդրադարձով կանոնավոր դրամաշրջանառութեան և հատկապէս շրջանառութեան մեջ եղած փողի քանակութեան վրա: Պակասել էր շրջանառութեան մեջ եղած կանխիկ փողը, բարձրացել էին վարկի տոկոսները, որին, Երիցյանի կարծիքով, էլ ավելի նպաստեց ապրանքաշրջանառութեան վերելքը ասիական երկրներում: Բանն այն է, որ եվրոպական տերութիւններն ամերիկյան բամբակի դիմաց արժած ոսկին ու արծաթը նորից ետ էին ստանում զնված բամբակից պարտատի ապրանքներն ամերիկյան շուկայում իրացնելու միջոցով, մինչդեռ «ազնիվ մետաղները» կառուցվում էին ասիական երկրներում, առողական շուկայի ցածր տարողութեան և եվրոպական ապրանքների նկատմամբ համապատասխան պահանջների բացակայութեան հետեանքով: Ի դեպ, այդ իրողութիւնը նկատում էր նաև Տուգան-Բարանովսկին նրա կարծիքով, արևելյան երկրներից փողի կանխիկ վճարումով ապրանքների ներմուծումը միացյալ թագազորութեան, «Անգլիայում առաջ բերեց դրամական ճգնաժամ»¹:

¹ Տե՛ս՝ Л. Мендельсон, Экономические кризисы и циклы, М. 1949, стр. 70.

² «Վաճառական», 1866, № 1, էջ 1:

³ М. И. Туган-Барановский, Промышленные кризисы в современной Англии, их причины и влияние на народную жизнь, С. Петербург, 1894, стр. 249.

Ա. Երիցյանը գտնում էր, որ ասիական ժողովուրդների բնօգնուր բաղաբարկրական մակարդակի հետագա բարձրացման պարագայում, ազնիվ մետաղները նորից կհոսնեցնելու պահանջների հասարակութեան բոլոր խավերի կենսամակարդակների աճին¹:

Տնտեսագետը դրամաշրջանառութեան կարգավորմամբ է պայմանավորում անտեսական օրինաւաքի դարգացումը, հասարակութեան սոցիալական տարբերացման փաստը, ինչպէս նաև մշակների կենսապայմանների բարելուցութիւնը: Պետք է նշել, սակայն, որ թէև Ա. Երիցյանը նկատում էր անտեսական ճգնաժամի ինչ-ինչ անխտապահիչ հետեանքներ, այնուամենայնիվ, չէր բժշկում, որ անտարի և դրամաշրջանառութեան ճրգնաժամը հենց արդշուտանքական ճգնաժամի արշույնը է, այսինքն՝ նյութական արտադրութեան ոլորտի ճգնաժամի արդշույնը ու դրսերման ձևերը մեկը: Տնտեսական ճգնաժամների բացատրութեան հարցում նա ըստ էութեան տուրք էր տալիս վարկադրամային տեսութեանը: Իսկ որքանով «փոխանակային կոնցեպցիայի» այս երակետը շրջանառութեան ոլորտին հատկացնում էր առաջնային նշանակութիւն, դրանով իսկ այն ձևեր է բերում իդեալիստական բովանդակութիւն:

Բայց փնչ է փողը, որ Ա. Երիցյանին ներկայանում է որպէս «ազգերի բազարական, բարոյական և անտեսական վիճակը»² պայմանավորող կարևորագույն գործոններից մեկը: Կապիտալիստական հարաբերութիւնների դարգացման հետ ուժեղանում էր փողի տիրապետութիւնը: Այն իշխում է ամենուրեք, գտնում երկրպագութեան առարկա, որոշում մարդու հասարակական կացութիւնը, տեղն ու դիրքը: «Մենք ամենք էլ,— գրել է նա,— սիրում ենք փող, ոսկի, արծաթ: Մեկ համար ոսկին հարստութեան, իշխանութեան, փառքի և բախտավորութեան իդեալն է»³:

Փողի, որպէս անտեսական կատեգորիայի, Ա. Երիցյանի բնութագրումները շուճեն հետեղական բնութիւնը: Եթէ մի կողմից նրա հայացքներում կարելի է նշմարել առանձին ակնարկումներ բուրժուական դասական անտեսագետների այն դրույթի, թէ

¹ Տե՛ս՝ «Վաճառական», 1866, № 1, էջ 2:

² Նույն տեղում, № 22, էջ 26:

³ Նույն տեղում, № 7, էջ 23:

փողը նույնպես այդանք է, ինչպես «ճրագուն, կաշին, ալյուրը, գինին», ապա մյուս կողմից անկիտեղի չէ նաև ոսկին ու արծաթը հարստության ունիվերսալ ձև դիտելու մերկաների հասնե-
րի մասնությունը: Փողից է կախված ամեն տեսակ այդանք-
ների շինելու, գործածելու և առուտորի դրությունը»¹:

Անգլիացի տնտեսագետ Վիլյամ Պետտին, քննարկելով շքը-
ջանատվության համար անհրաժեշտ փողի բանակության հարցը,
այն համարում է «բազաթական օրգանիզմի ճարպը», որի պա-
կասը նույնքան է խանգարում նրա պրոծունկությանը, ինչքան
և ավելցուկը²: Ա. Երիցյանը կարծես շարունակում է Պետտիի
պատկերավոր խոսքը. «Մեր կյանքում,— գրում է նա,— փողի
ձեռքից-ձեռք անցկենալը միևնույն նշանակությունն ունե, ինչ-
պես արյունը մեր մարմնի մեջ: Անփողությունը միևնույնն է
մեր տնտեսության համար, ինչ որ արնի սակավությունը մեր
ստղղության համար: Արնի անկարգ վաղելուց բարձրվում է
մեր ստղղությունը, իսկ երբ արյունն էլ չէ շարժվում, մարդս
մեռնում է. միևնույնը պատահում է և մեր կյանքումը, երբ որ
փողի կարիք ենք ունենում»³:

Ընդհանրապես փողի՝ որպես այդանքի արժեքի հարցը
Ա. Երիցյանին չի հետաքրքրել: Քնկուղ նա ակնարկում էր փո-
ղի «ներքին արժողության» մասին, սակայն բոլոր դիպվածե-
րում խոսում էր միայն փողի գնի մասին, ելակետ ունենալով
ստադարիկ ու պահանջարկի տեսությունը: «Ճշմարիտ է,— գրում է
Երիցյանը,— որ փողի գինը բարձրանում է և ցած է ընկնում
հարցնողին մտիկ սալով, բայց էդ չի նշանակի թե փողը
և որից այդանքները միևնույնն են: Տեղին է ժողովրդին մտիկ
սալով, փողի արժեքը միշտ կարող է փխսվել, միևնույն փողը
կարելի է երբեմն ավելի, երբեմն պակաս այդանք անել. բայց
փողի նշանակությունը և հատկություններն ամեն տեղ միև-
նույն են... Էդպես ուրեմն փողը առուտորի միջոց լինելով, ապ-
րանք չէ, ինչպես որ կարծում են տնտեսները: Առանց թուրթու-
նի, շաքարի, առուտոր կարող է լինել, բայց բանի որ ամեն
այդանքների գին դեռ չի փողն է, առանց փողի առուտորը

անկարելի է»⁴: Վկայադրելով Ազամ Սմիթի այն տեսակետը,
թե փոխանակության փողային ձևին նախորդել է այդ ֆունկ-
ցիան կատարող այլ պարաների միջոցով ստեղծու
պրակտիկան, Ա. Երիցյանը, սակայն, այլ մեկնաբանությամբ
էր ընկալում և քստ էություն ժխտում էր փողը այդանք գիտելու
դասական տեսանկյունով կարևորագույն դրույթներից
մեկը: Ինքնին արդեն հասկանալի է, որ նա չէր կարող ըմբռնել
նաև այդանքափոխանակության զարգացման երկարատև այն
պրոցեսը, որը հանգեցրեց փողի, որպես ընդհանրական հա-
մարձեքի առաջացմանը, մի պարբեր, որ չկարողացավ լուծել
ամբողջ նախամարքայն տնտեսագիտական միտքը: Ապրան-
քափոխանակության վերաբերյալ Երիցյանի պատկերումն
իր հիմքով սուրյակտիվ է, որը և էլակետ է դառնում ինչպես
փողի, այնպես էլ մյուս այդանքների արժեքի որոշման հա-
մար: Քննադատելով Յունիս, Մարքսը գրում է, որ «նա շրջա-
նառության պրոցեսի մեջ մտցնում է այդանքներն առանց գնի,
իսկ ոսկին ու արծաթը՝ առանց արժեքի» և դա է պատճառը, որ
նա սերբեք չի խոսում այդանքների արժեքի և ոսկու արժեքի
մասին, այլ միայն որանց փոխադարձ բանակների մասին»⁵:

Փողի պարանքային բնույթի շրկակալելը Ա. Երիցյանի հար-
ցադրումներում ուղղակիորեն անշլվում են ծագման վերաբեր-
քում ոչ գիտական մեկնաբանությունը: Ելակետ ունենալով փողի
պետական ծագման տեսությունը, նա նեխարում էր, թե սեղ-
պես ահա ոսկին ու արծաթը փող են համարվում ոչ թե էն
պատճառով, որ երկար դիմացող, ազնիվ կամ թանկագին մե-
տաղներ են, այլ միայն էնորով, որ տերությունները հանձնե-
րում են առել երաշխավորությունը և էդուրով տվել են օսկուն
էն մեծ նշանակությունը, որ ունենա առուտորի մեջ»⁶: Այս-
պիսով, ժխտելով փողի պարանքային բնույթը, որպես տարե-
րաշիրեն զարգացող պարանքային հարստությունների օրյեկ-
տիվ աղբյուրը, Ա. Երիցյանը հանգել է փողի նոմինալիստական
տեսությանը, դիտելով այն որպես իրավաբանապես աղբյուրը,
որով և որոշվում է նրա վճարունակությունը:

Ա. Երիցյանն անդրադարձել է նաև թղթագրամի հարցի

¹ «Վանասական», 1866, № 7, էջ 25:

² Вильям Петти, Экономические и статистические работы, М., 1940,
стр. 25.

³ «Վանասական», 1866, № 7, էջ 25:

⁴ «Վանասական», 1866, № 7, էջ 26:

⁵ 4. Մարքս, Քաղաքատնտեսական բնագագտության շուրջը, Երևան, 1948,
էջ 196:

⁶ «Վանասական», 1866, № 11, էջ 42:

քննութիւնը: Նա ընդունում է, որ պատմականորեն սկզբնապէս շրջանառութիւն միջոցի ֆունկցիան կատարել են ոսկին ու արծաթը, նախ ձուլուկներն է ապա դրամի ձևով: Երջանառութիւն պրոցեսում դրամի ունայ պարունակութիւնն աստիճանաբար խզվում է իր անվանական բովանդակութիւնից, սակայն մաշված դրամները շարունակում էին շրջանառութիւն կատարել որպէս լիարժէք դրամներ: Այդ իրողութիւնը հանգեցրեց այն բանին, որ շրջանառութիւն ֆունկցիայի իրականացման համար ոսկու և արծաթի փոխարեն սկսեցին բաց թողնել փոխարինող ֆլոյթադրամներ: Վերջիններս ըստ էության արժէք չունեին, զրանք «փողի նշաններ են և զործ են ամփում միայն փողի տեղը»: «Փողի նշաններ» վերաբերյալ նրա դրույթը ըստ էության բովանդակազրկվում է, քանի որ նա չէր հասկանում ոսկու և արծաթի բնութիւն իբրև փողի նա փողի մյուս ֆունկցիաների մասին ընդհանրապէս չէ խոսում և ապրանքային փողի փոխարինումը դրամներով չի ամանցում փողի որպէս շրջանառութիւն միջոցի ֆունկցիայի առանձնահատկութիւնից: Ուստի և նա ոսկու և արծաթի որպէս փողի և ֆլոյթադրամի ծագումը ենթարկում էր նույն օրինակափոխութիւններին: Հենց այն առումով էլ նա չէր համաձայնում բոլոր այն տեսեսագետների հետ, որոնք ոսկու և արծաթի այդ առանձնահատուկ զերբ փորձում էին բացատրել այն բանով, որ դրանք «թանկ են, հազվապատ են, պիղք են, չեն փառնում և Էսպիտի հատկութիւններով ազիլի բարձր են, քան թէ մյուս մետաղները և դրամաթղթերը»¹:

Ա. Երիցյանը հակված էր գերազնահատելու ֆլոյթադրամի նշանակութիւնը և պատահական չէ, որ վկայակոչում է Ռեկարդոյի այն խոսքերը, որ «փողի կատարելու ձևը ֆլոյթադրամն է»²: Ի դեպ, սա յուրահատուկ էր նմանախոսներին, հաստատելով փողի նկատմամբ ապրանքային մտեցման անտեսումը և ընդունելով սուրստանցիտույի հանդեպ նրա անվանական նշանակութիւն անազնութիւնը:

Ա. Երիցյանը առաջադրում է մի տեսակետ, ըստ որի ֆլոյթադրամի առաջացման անհրաժեշտութիւնը պայմանավորված էր այն հակասութիւնով, որ դրույթիւն ուներ ոսկու և արծաթի

բանակութիւն և առետրի ընդլայնման միջև, այսինքն՝ արտադրված ապրանքների և դրանց իրացման համար անհրաժեշտ փողի սահմանափակ բանակի հետ: «Որքան որքան շատ է որևիցէ երկրի առուուուրը ծաղկում,— դրում է նա,— էնքան ազիլի է փողի հարկավորութիւնը շատանում և էնքան ազիլի է քչանում և անհետանում փողը»³:

Ուստի նա կարծում է, թէ կգա ժամանակ, երբ «ոսկին և արծաթը բոլորովին էլ չի գործածվիլ փողի պէս»⁴: Ինչպէս իրավացիորեն նկատում է պրոֆեսոր Ս. Զուրաբյանը, Երիցյանը ոչ թէ բուրժուական շատ տեսեսագետների նման ուտոպիական ծրագիր ուներ ընդհանրապէս վերացնելու փողը և դրանով իսկ հասցնելու կապիտալիստական ներհակութիւնների վերացմանը, այլ պարզապէս հանգել է ազնիվ մետաղները շրջանառութիւն այլ միջոցներով փոխարինելու գաղափարին⁵:

Ըստ Ա. Երիցյանի, տեսեսական ճգնաժամները փողի բանակի և ապրանքների քանակի անհամապատասխանութիւն հետևանք են: Այս առումով խոսելով բանկերի կատարած զերբի մասին, նա եզրակացնում է, թէ «այժմյան բանկերը չեն կարող կատարել իրենց նշանակութիւնը և փոխանակ առուուուրին կենդանութիւն տալու, միայն զանդաղեցնում են առուուուրը և պատճառ են լինում կրիզիսների և թէ կոարուփոխմանը»⁶:

Բանկերի նկատմամբ նման բացասական վերաբերմունքը պատահականութիւն չէր: Դեռևս անցյալ դարի 30—40-ական թվականներին տեսեսագետներ Օվերստոնը, Տորրեսը և ուրիշներ տեսեսական ճգնաժամների առկայութիւնն Անգլիայում կապում էին բանկային գործի ոչ ճիշտ կազմակերպման հետ, որ իբր արժեթղթերի չափից դուրս բացթողումը տանում է կանոնավոր դրամաշրջանառութիւն խախտումների, պատճառ դառնալով ճգնաժամների: Ըճնաժամների նման բացատրութիւնը գիտական չի կարող լինել և բնական է, որ վերստադրութիւնը կարգավորելու նպատակով Անգլիայում 1844 թվականին անցկացված Ռոբերտ Պիլի բանկային ռեֆորմը որևէ դրական արդյունք չունեցաւ:

¹ «Վաճառական», 1866, № 18, էջ 70:

² Նույն տեղում, № 11, էջ 41:

³ Ա. Զուրաբյան, Հայ տեսեսագիտական մարի գաղափարման ուրվագիծը, Երևան, 1959, էջ 244:

⁴ «Վաճառական», 1866, № 27, էջ 105:

¹ «Վաճառական», 1866, № 11, էջ 41:

² Նույն տեղում, էջ 42:

³ «Վաճառական», 1866, № 27, էջ 105:

Իհարկե, Ա. Երիցյանը բնաժ էլ հակված չէր վերացնելու բանկերը: Ընդհակառակն, նա բանկերը դիտում էր որպես հասարակութենի օգուտ համար կազմված բաներ¹, ուստի և առաջարկում էր՝ նախ իրականացնել հասարակական հսկողություն բանկերի վրա, ստեղծելով մեկ հասարակական կենտրոնական բանկ, ուր կենտրոնացված լինեն անտարական բոլոր գործարքները և այս հաշվի առնելով հասարակության օգուտը, կարգավորել տոմսակների և թղթաբանների գործածության ուղիղ քննազոր²: Ինչպես տեսնում ենք, Ա. Երիցյանը նպատակ ուներ շրջանառության ոլորտի կարգավորման միջոցով շտկելու կապիտալիստական վերարտադրության ներհակությունները, նկատելով, որ բանկերի միջոցով տարեբայնորեն տեղի է ունենում կապիտալի բաշխում արտադրության տարբեր ճյուղերի ու ոլորտների միջև, որը նպաստում է արտադրողական ուժերի զարգացմանը, արտադրության հասարակական բնույթի խորացմանն ու կապիտալիզմի հակասությունների հետագա սրմանը:

Քաղաքատնտեսության պատմությունն սկսվում է մերկանտիլիստներից (XVI—XVII դդ.): Դա անտարական կապիտալի զարգացման և նախահղորմական կուտակման ժամանակաշրջանն էր, երբ ստեղծվում էին կապիտալիստական հասարակարգի զոչացման նախարարյաները: Մերկանտիլիստները վաղ շրջանի արդյունաբերական կապիտալի նախորդող անտարական կապիտալի զարգացարտոսներն էին, կապիտալիստական հասարակարգի տնտեսական կառուցվածքի առաջին վերլուծողները, որոնք առաջին անգամ փորձ արեցին քննության ենթարկել հարստության ստեղծման պրոբլեմը: Արևմտահվորպիական երկրների զարգացող արտաքին տնտեսական կապեր, կապված աշխարհագրական նոր հայտնագործությունների, զարգացվող երկրների շահագործման հետ, որն ուղեկցվեց ազնիվ մետաղների հսկայական հոսքով դեպի մալթ երկրները, մերկանտիլիստներին այն համոզմանը բերեց, թե երկրի հարստության ստեղծման հարցում վճռական գերը պատկանում է արտաքին անտարին, իսկ ազնիվ մետաղները հարստության ունիվերսալ ձևն են ու այս կամ այն երկրի հարստության որոշիչը: Ա. Երիցյանի համոզմամբ մերկանտիլիզմի տնտեսական ու-

մունքը տիրապետել է մինչև XVIII դարի վերջերը, մինչև անգլիացի տնտեսագետ Ադամ Սմիթի հանդես գալը, որն իր սկզբների հարստությունն կրչված աշխատությունով քանակեց էլ ուսումի հիմքերը: Տեղին է նկատել, որ մերկանտիլիզմը որպես տնտեսագիտական ուսմունք արդեն սկսել էր հաղթահարվել Ֆրանսիայում ի դեմս դասական տնտեսագիտության, որի ներկայացուցիչները (Բուպիերը, Քենն, Տյուզոն և ուրիշներ), սկսած XVII դարից, տնտեսական երևույթների ուսումնասիրության ելակետը շրջանառության ոլորտից փոխադրեցին արտադրության ոլորտ, փայծելով առլ հարստության ստեղծման հարցի գիտական բացատրությունը:

Ա. Երիցյանի կարծիքով թե՛ մերկանտիլիստները և թե՛ ազատ անտարի կորմնակիցները իրենց մտեղծման մեջ նիշա չէին, սորովհետև երկուսն էլ մեկ նպատակ ունեն ապստեղծելի, միայն թե նպատակին հասնելու համար զոտազան ձևապարհներ ունեն ընտրած³:

Թեև Ա. Երիցյանը գրում էր թե՛ սկզբից շկա, որ առատուրը պետք է ազատ լինի⁴, սակայն նա չէր բնորոշում դասական տնտեսագիտության և նախահղորմական անտարի սկզբունքները և հակված էր շափավոր մաքսային քաղաքականության միջոցով հավասարակշռված անտարի իրագործմանը: Նիշա է, ազատ անտարի քաղաքականությունը կործանաբար հետևանքներ կարող է ունենալ տնտեսական թույլ զարգացած երկրների համար, սակայն հայ տնտեսագետը չէր հասկանում, որ այն պահանջները, որ դեռ շատ առաջ առաջադրում էին տնտեսագետները Կրյուսեն, Բուրգոնը, Քեննը, Ռիվերան և ուրիշներ, և որոնք իրենց տնտեսական մարմնացումն ստացան Սմիթի և Ռիկարդոյի աշխատություններում, պատահական չէին և պայմանավորված էին օբյեկտիվ պայմաններով: Ստեղծվել էր զրա իրականացման նյութական հիմքը, կապված արդյունաբերական հեղաշրջման հետ: XIX դարի սկզբներին արդյունաբերությունն այնքան էր հզորացել, որ հնարավորություն էր տվել ստեղծելու համաշխարհային շուկայում Անգլիայի համար ամեն մի մրցակցությունից դուրս վիճակ: Այս առումով, որքան բնական էին մերկանտիլիզմի տնտեսական դրույթները, նույնքան նոր ժամանակների համար

¹ «Համառակած», 1866, № 8, էջ 27.

² Նույն անգամ, № 9, էջ 34.

¹ «Համառակած», 1866, № 27, էջ 107.

բնական էին ազատ անտրի քաղաքականության վերաբերյալ դասական տնտեսագիտության տեսական հիմնավորումները: Ազատ անտուրը տնտեսական ազատ նախաձեռնության օկոլոգրեններից մեկն էր, որն ակնկալում էր արդյունաբերական բուրժուազիայի քաղաքական տիրապետության հաստատում և միջնադարյան ցեխային հարաբերությունների վերջնական ոչընչացում: Ա. Երիցյանի ազատ անտրի ըմբռնումները վկայում են, որ երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերում նա հարում էր ազգային-պաշտպանողական հոսանքի գաղափարական հայեցողությանը:

Որ հարատուության ստեղծման պրոբլեմը Ա. Երիցյանն ավելի շուտ լուծում էր մեկկանտրիիզմի ուսմունքի շրջանակներում, վկայում են նրա հետևյալ ստույթները: «Անտրի մեջ միշտ նրա կողմն է օդուտը, ով ավելի փող ունե ու կարողացել է սրան կամ նրան շահով իրանց տալ: Ով է հարուստը—փողատերը, որը որ նաղը ոսկի և արծաթ ունե, թե վաճառականը, որը որ ապրանք ունե դարսած իր ամբարներում: Փողատերը միշտ կարող է առնել ինչ-որ կամենա, իսկ վաճառականը առաջ պետք է ծախե իր ապրանքները, որ հետո փող ունենա, իսկ ապրանքները, ինչպես հայանի է, ամեն թուփ ու օնց որ լինի չի կարելի ծախել: Ամեն փողերիշտան առուտուրի հետ ծանոթ մարդ պետե, որ առանց փողի առուտուրը— կոտորվենի նշան է, էլ զ պատճառը, որ ոսկու և արծաթի մեք երկրի սահմանից դուրս տանելուցը կանգնում է ու դժվարանում է առուտուրը»¹: «Քոլոր մարդկությունի վիճակը կախյալ է առուտուրից: Եթե հանկարծ վերջանար աշխարհիս վրա էլ առ ու սուրը, կարելի է սասել, որ բնօրհանուր մարդկությունը կկուտրանար, հարյուր միլիոնավոր մարդիկ քաղցած կմեռեին... Առուտուրը նման է մեք երակներումը վաղը արյունիս, և ինչպես որ արյունի վաղը շտպացնող կամ ծանրացնող բաները վնասակար են առողջությանին, էնպես էլ մեք տնտեսական կյանքին և բարորութեին վնաս է էն ամեն բանը, որը որ խանգարում է և ծանրացնում է առուտուրի ուղիղ ընթացքը»²:

XIX դարի 60-ական թվականներին հայ իրականության բուրժուական զարգացման պրոգրեսիվ միտումները զեռ նոր

էին ձևավորվում, ուստի միանգամայն բացատրելի են արեստեսական երևույթների նման մեկնարանությունները: Ֆ. էնգելսը մի առիթով նկատել է, թե «կապիտալիստական արուտուրության շահատեսացած միճակին, շահատեսացած դասակարգային հարաբերություններին համապատասխանում էին նաև շահատեսացած տեսությունները»³:

Ա. Երիցյանը աշխատանքի բաժանումը չէր կապում արուտուրողական ուժերի և ապրանքափոխանակային հարաբերությունների զարգացման հետ: Որքանով ստանդիտ անհատն իր բազմակողմանի պահանջումներին բավարարման համար չի կարող ամեն ինչ առաջընել, ուստի և տառաջանում է օժեկը մյուսին օգնելու» անհրաժեշտությունը: Եթե մի կողմից սահիչներում է տնտեսական կյանքում մարդկանց փոխարարություններին մասին Ազամ Սմիթի ձևակերպումը, թե «սուտը ինձ այն, ինչ ինձ անհրաժեշտ է և որս կտանանա այն, ինչ թեղ է անհրաժեշտ»⁴, ապա մյուս կողմից բնօրհանություններ է հայտնաբերում Ֆրեդերիկ Բաստիայի տնտեսական հարաբերությունները փոխադարձ ծառայությունները գիտելու մտայնության հետ: Այսպիսով, եթե մի դեպքում կապիտալիստական հասարակարգն իր սոցիալական ու տնտեսական հակասություններով ներկայանում է որպես ներդրանակ սոցիալացիա, ապա մյուս կողմից նրա տնտեսագիտական սխտանը փաստորեն ուղղված էր դասական տնտեսագետների արժեքի աշխատանքային տեսության դեմ:

Ա. Երիցյանն անորոշաբարձել է նաև երկրամասի ներտնտեսական խնդիրների լուարանմանը: Հայտնի է, որ տնտեսագիտության ազատ դարացի ներկայացուցիչները մրցակցությունը համարում էին տնտեսական կյանքի զարգացման խթանը: Երիցյանը խոսելով րորսանքի մասին, նկատում է, որ «բուտը չէ վաճառականների թե մարդկների և թե անողների միասին ժողովը և միասին որոժ տեսները պատճառ է լինում նրանց մեջ կոնկուրենցիա ծագելու, առանց որի ոչինչ առաջընթուություն աշխարհիս վրա կարելի չէ: Կոնկուրենցիան միայն կա-

¹ Կ. Մաբա և Ֆ. Կեկոյ, Հուսի երկեր, Երևան, 7, 2, էջ 151:

² Ա. Տմիտ, Исследование о природе и причинах богатства народов, М.—П., 1931, стр. 21.

³ Տե՛ս Ֆրեդերիկ Բաստիա, Экономические гармонии.—Библиотека экономистов, выпуск VII, М., 1896, стр. 210.

¹ «Վաճառական», 1866, № 9, էջ 33—34:

² Նույն անգամ, № 19, էջ 74:

բող է շահավոր ուղղութիւն տալ վաճառականութեանն և ազատել վնասակար մտնուպոլիտից¹։ Բնշպես տեսնում ենք, ազատ մրցակցութիւնը զարգացման խթան դիտելուց բացի (որը համապատասխանում էր զարգացման բուրժուական ուղին քննելու՝ մտնու Լերիւմատի պահանջներին), նա այն միասնամանակ համարում էր որպէս մտնուպոլիտի առաջացմանը խոչընդոտող կարեորագույն միջոց, ինչպատկելով, որ ազատ մրցակցութիւնը հենց այն գործոններից մեկն է, որը զարգացման գիպեկտիկայի ուժով տանում է դեպի արտաարկիւյան համակենտրոնացում և զրա հետ նաև մտնուպոլիտի առաջացմանը։

Ա. Երիցյանն բնշահարկան կողմնակից էր երկրամասի տնտեսական արագ զարգացման համար արտադրութիւն առաջավոր մեթոդների ներդրմանը։ Այս առումով նա կարենք է դիտում եւրոպական կապիտալի բարեբար ազդեցութիւնը, երկաթուղու շինարարութիւնը, որը մեծապէս կրեպլայնի երկրամասի կապերն այլ տնտեսական շրջանների հետ, ուսումնարանների բացումը, որոնք հնարավորութիւն կտան «կանոնավոր կերպով սովորեցնելու մեզ հարկավոր արհեստները»² և այլն և այլն։ Ա. Երիցյանը հատկապէս կարեոր էր համարում բնական գիտութիւնների զարգացումը։ Ընթերցողներին ծանոթացնելով Պ. Ռոնշեակու կարգացած մի դասախոսութիւնը, Ա. Երիցյանը շեշտում էր նրա այն տեղիքը, որոնցում հեղինակը նկատի առնելով եւրոպական երկրների տնտեսական զարգացման փորձը, բնզգծում է. «Արեւմտյան եվրոպայում ամենի սովորելու և զբաղող բանն է բնական գիտութիւնը... ոչ մեկ գիտութիւն էնքան օգտաւետ չէ և մարդու պիտանի, ինչպիսի բնական գիտութիւնները»³։

Հետևելով անգլիացի տնտեսագետ Կորդենին, Ա. Երիցյանը հասարակական բարօրութիւնը մի զգալի մասով էլ կապում է խնամախոսութիւնի գաղափարի հետ։ «Աշխատանքը և պահպանողութիւնը, — գրել է նա, — կարող են ամեն մարդու անկախութեան հասցնել»⁴։ Նման մեկնարանութիւնը տեսական եզրեր է որոնում զեւհիկ տնտեսագիտութիւնի «ժուճկալութիւն» տեսութիւնի հետ, որը մի կողմից արգարացնում է հարստութիւն

բաշխման կապիտալիտական կարգը, մյուս կողմից հանդես գալիս որպէս հասարակական առաջնիքացի զսպանակի թեկուզ ոչ հստակ, Ա. Երիցյանը, այնուամենայնիվ, կարեոր էր համարում նաև փոզերի արտադրողական կիրառութիւնը։

Սրանք են տեսական այն զուգահեռները, որոնց շրջանակներում Ա. Երիցյանը կատարում է տնտեսական կատեգորիաների վերլուծութիւնը։ Բնշպես նրա, այնպիսի էլ բնշահարկան «Վաճառականի» տնտեսագիտական դիրքորոշումները ունեն իրեպիտական բնույթ։ Թեև գոյի ու գիտակցութիւն փիլիսոփայական հարցում առանձին զեպերում կարեոր և առաջնային տեղ էր հատկացվում նյութական կողմին, սակայն դրանք մնում էին միայն որպէս մասնակի գիտարկումներ։

Որքանով շրջանառութիւնն ուրարտի տրվում է առաջնային նշանակութիւն, պտղ է դառնում հասարակութիւն պատմական զարգացման հարցերի վերարբնյալ առաջադրված սկզբունքների մետաֆիզիկական բովանդակութիւնը։

¹ «Վաճառական», 1866, № 39, էջ 119։

² «Վաճառական», 1866, № 3, էջ 10։

³ Նույն տեղում, № 6, էջ 23։

⁴ Նույն տեղում, № 35, էջ 138։

**«ՄՇԱԿԸ» ԵՎ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՐՈՒՄԻ
«ԱՌԱՋԱԿԻՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ» ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԼՈՒԹՅՈՒՆԸ**

«Արքայության արդատությունը և վերջն էլ դատական վերահսրագությունը, գյուղական ինքնավարությունը, նորամուտ լուսավորությունը, երկաթուղի, հեռագիր և այլն, մին մինի ետևից հանկարծ գալով՝ շատերին ժողովրդին, մի հանկարծական փոփոխություն ձգեցին նրա նիստ ու կացի և վարք ու բարքի մեջ: Ժողովուրդն այնպես փոխվեց մի առան տարվա մեջ, որքան փոխված չէր հարյուրավոր ասրիների ընթացքում»¹: XIX դարի երկրորդ կիսաշրջանն այսպես է բնութագրել հայ անվանի գրող Կոզմա Աղաջանը: Դա անտեսական ու սոցիալական դարացած մի անեմաթոզիկ պատմաաշրջան էր հայկական կյանքում:

Կապիտալի նախապահության կուտակման պրոցեսը, որը վաղուց սկսվել էր Ռուսաստանում և Անդրկովկասում, ճորտատիրության վերացումը, օտար կապիտալիզմի մուտքը երկրամաս ստեղծել էին այն բոլոր նախադրյալները, որոնք անհրաժեշտ էին արդեն զարգացող կապիտալիստական հարաբերությունների համար: Աշխուժացող առևտրական կապիտալն ընդարձակում էր ապրանքադրամական հարաբերությունների շրջանակները, նպաստելով նահապետական գյուղի քայքայման պրոցեսին: Մեկում էին նոր արտադրողական ուժեր: Արտադրության մեքենայական անտեսածնը քափանցում էր ամենատարբեր ճյուղերը, զուրա մղելով հեռամենի նդանակները: Չեւավորվում էր հայկական արդյունաբերական բուրժուազիան: Դա հայ իրականության «հասարակական կյանքի մեծ զարկերի» ծամանակաշրջանն էր, որին զուգարդեց Գրիգոր Արքունուն գործունեությունը: Հայկական լիբերալիզմի պարագլուխը հրապարակ կեղծ նոր պատմափիլիսոփայությունը՝ սոցիալ-անտեսական տեղաշարժերը քննության ենթարկելով աշխատանքի փիլիսոփայության դիտակետից:

Դեռևս 1867 թվականին Գ. Արքունին «Հայկական աշխարհում» տպագրեց «Աշխատենք» վերնագրով հոդվածը: Փարզվածքներ կատարելով ֆրանսիացի մասնագետ Էդմոնդ Արուի «Առաջադիմություն» գրքից, նա այն միտքն էր զարգացնում, թե աշխատանքն էր մարդկային հասարակության և նյութական բարիքների արտադրության հիմքը, թե հասարակական կյանքի էվոլյուցիայի հետ փոխվում են ինչպես աշխատանքի բնույթը, այնպես էլ նրա ոլորտները: Ճիշտ այնպես, ինչպես բուրժուական դասական տնտեսագետների պատկերացմամբ արտադրությունը «արտադրություն էր արտադրության համար», նույնպես և աշխատանքը, անկախ նրա արտադրողական կամ անարտադրողական բնույթից, Գ. Արքունուն համար հասարակական առաջադիմության խթանի բնչահարույցն էր: Վերջինս, որի վրա մենք բնակվում ենք, ոչինչ չէ տալիս մեզ առանց աշխատանքի: Սառ տնկել, տուն շինել, գործիք կամ դեղ հնարել, երկխոսել, գրաստիարակել, նոր միտք մեկնել, ճշմարտություն հայտնել, գիրք գրել, պատկեր նկարել,— ա՛հա այն բաները, որ ամեն մեկը մեզանից կարող է ավելացնել հասարակաց զուսարին»²: Եվ արդեն «Մշակի» առաջին համարի առաջնորդող հոդվածում, աշխատանքն իր ամենաբնիցանուր հասկացությամբ բնութագրվեց որպես լուսավորության և առաջադիմության հիմքը:

«Երևկ մենք կտակարանային ազգ էինք
Այսօր մենք ազգատերեր ենք
Էզոց մենք պետք է աշխատողներ դառնանք»³:

Աշխատանքի, որպես «ծամանակակից քաղաքակրթության ամենազորեղ, հիմնական, կենդանացող տարրի»⁴, Գ. Արքունուն գրավատանքը միանգամայն համահունչ էր բուրժուական հարաբերությունների զարգացման վերելքին և բխում էր այդ զարգացման պահանջներից: Իսկ սա թելադրում էր «ինքնահանաչում» և «ինքնաբնություն», հասարակական երևույթները «անտեսական կետից»⁵ վերլուծելու անհրաժեշտություն: Քաղաքիչների դարն անգալմ», կյանքը գործնականություն է պա-

¹ Գրիգոր Արքունուն աշխատությունները, Թիֆլիս, 1904, հ. 1, էջ 42:
² «Մշակ», 1872, № 1:
³ «Մշակ», 1877, № 62:
⁴ «Մշակ», 1873, № 35:

¹ Կոզմա Աղաջան, Երկեր, հատ. 2, Երևան, 1939, էջ 280:

Հանքում, խորսխոված ժամանակակից հասարակական կողմա-
կերպության հիմնական սկզբունքների՝ անհատական զարգաց-
ման, աշխատանքի և շահութարության վրա¹։ Եվ այսպես, հասարակական առաջադիմությունը Գ. Արծրունու հայացքներում
ենթադրված էր «XIX դարի լուսավորության գլխավոր գործչին»՝
«աշխատանքին»²։ Աշխատանքի, իբրև հարստության աղբյուրի, և
աշխատանքի բաժանման հարցերում նրա հանցություն վրա
նկատելի էր Ազամ Մմիթի ազդեցությունը։

Ոչ խոսք, աշխատանքի բաժանումը և փոխանակությունը
կապված են միմյանց հետ։ Մականք բառ Մմիթի ոչ թե աշխա-
տանքի բաժանումն է նախորդել և պատմականորեն պայմանա-
վորել փոխանակության հարաբերությունների կրեան զայր, այլ
ընդհակառակն։ Գ. Արծրունին նույնպես կապ էր հայտնաբեր-
ում մարդկային պահանջունքների և աշխատանքի հասարակ-
ական բաժանման միջև Աշխատանքի հասարակական բաժա-
նումը նա համարում էր որպես հասարակական առաջադիմու-
թյան հետևանք, որպես օրյեկտիվ երևույթ. «Հասարակությունը
զարգանալով և լուսավորվելով, նորս մեջ գիտության և ար-
հեստների ճյուղերն ևս բնդարձակվում էին, և աշխատանքի
բաժանության երևույթը հայտնվեցավ ոչ թե որպես մարդի
ազատ կամքի գործը, այլ որպես լուսավորվող հասարակության
առաջադիմության անհրաժեշտ և բնական հետևանք»³։ Այս
միտքը, սակայն, Գ. Արծրունու ընդհանուր հայեցողության մեջ
հետագա զարգացում չի ստանում։

Ճիշտ է, մարդկանց պահանջունքների անընդհատ աճը
հասարակական առաջադիմության օրյեկտիվ հետևանք է, սակ-
այն սխալ է Գ. Արծրունու այն պատկերացումը, թե այդ պատ-
հասով ամեն մի անհատ ընտրում է մի որևէ պարագայունք,
սահմանափակում է իր գործունեությունը մի ատանձին ճյու-
ղում։ Ստացվում է, թե մարդկանց պահանջունքների անընդ-
հատ աճն է օրյեկտիվորեն սահմանափակում անհատի արտա-
դրողական գործունեությունը և որպես մեծանուն են պահանջ-
ները, այնքան ընդլայնվում են աշխատանքի բաժանման շրջ-
անակները։

Գ. Արծրունու հայացքներում աշխատանքի հասարակական
բաժանման որպես դրամավորող հասարակության անհրաժեշտ
և բնական հետևանքի, հարցադրում կարվում է արտադրու-
ղական ուժերի զարգացման իրական հիմքից և անհատի պա-
հանջունքների ընդլայնման երևույթը ներկայանում է իբրև
անտեսական զարգացման խթան։ Այդ ձևով փաստորեն կար-
վում է նաև արտադրողական ուժերի զարգացման և փոխա-
նակային հարաբերությունների կապը, փոխանակային հարա-
բերությունների հիմքում դրվում է ոչ թե աշխատանքի բաժա-
նումը, այլ անձնական շահը։ Ստացվում է, որ հասարակական
հարստության և բաշխման հարցերը կարգավորվում են մարդ-
կային բնությունից իրող օրենքներով։ Այս ստույգ էլ Գ. Արծ-
րունին փոխանակությունը համարում է հասարակության վեր-
խաղըր հատկությունը, գտնելով, որ որտեղ չկա փոխանակու-
թյուն, աշխտեղ չկա և հասարակությունը՝ նրա համոզմամբ
հենց փոխանակության զարգացման աստիճաններն էլ պայ-
մանավորում են բազմակերպության առաջննթացի աստիճան-
ները։

Եթե Գ. Արծրունու փոխանակային կոնցեպցիան մի կողմից
տեսական եզրեր էր որոնում Ազամ Մմիթի ուսմունքի, սպա
մյուս կողմից բնդհանրություններ է հայտնաբերում Ֆրեդերիկ
Բասախյի շահերի ներգաշնակության տեսության հետև հետև-
ական հարաբերությունները նրա բարձրամար կերպայնում և
որպես փոխադարձ ծառայությունների, ամբողջությունի Գ. Արծ-
րունին օրինակ է բերում երկու հարեան բարեկամների նրան-
ցից մեկն օպն ծառայությունն է անում մյուսին, որ ջուր է
ճարում նրա ամենօրյա պիտույքների լուսավորություն է ստիչու
փոխարենը բարեկամի կրեխային հասարակություն է արդիու
Փոխանակ երեխային ուսում տալու նա կարող է իհարկե իր
բարեկամին մի ուրիշ ևս ծառայություն անել, որ միևնույն ար-
ժողություն ունենար բարեկամի աչքերին, — օրինակ, ամեն օր
մի կես լիտր (ֆունտ) հաց տալ նորան սա աշխատանքի փո-
խարեն, որ բարեկամը գործ է զնում գնալից ջուր բերելու
համար, — կամ վերջապես այն քանակության հացի գինը ար-
ժանով տալ։ Ուրեմն արձանքը երկու մարդիկների մեջ հարա-
բերությունների արժողության նշան է։ Իսկ արժողությունը երկու

¹ «Մշակ», 1876, № 27.

² «Մշակ», 1872, № 1.

³ Գրիգոր Արծրունու աշխատությունները, հ. 1, էջ 355.

¹ Գրիգոր Արծրունու աշխատությունները, հ. 1, էջ 181.

փոխանակված ծառայությունների հարաբերություն է՝¹ (այստեղ Արծրունին վկայագրում է Բաստիայի «Տնտեսական ներդաշնակություններ» աշխատությունը)։ Ահնրե է, որ հասարակական առաջագիմության շարժիչ ուժ է դիտվում անձնական շահը։ Տնտեսական ներդաշնակության նրա սկզբունքի հիմքում ընկած է փոխանակությունը, իսկ վերջինիս անհրաժեշտությունը պայմանավորված է պահանջներով։ Այսպիսով, «անձնական շահը», «ծառայություն ծառայության դիմաց» կերպարանքով Գ. Արծրունին ներկայացնում է որպես հասարակական առաջագիմության գործոն, իսկ կապիտալիստական հասարակարգն իր սոցիալական ու տնտեսական հակասություններով՝ որպես մի ներդաշնակ սոցիալացիա։

Հետաքրքրական է, որ Գ. Արծրունին, ինչպեսև Բաստիան, փոխանակությունը տարածում էր հասարակական կյանքի բոլոր սֆերաների վրա, դա լինի նյութական արտադրություն, թե մտավոր գործունեության բնագավառ։ Փաստորեն նրա տեսնողությունական սխալները ուղղված էր դասական տնտեսագիտության արժեքի աշխատանքային տեսության դեմ։ Պատահական չէ, որ նա վկայակոչում էր Բաստիայի աշխատության հենց այն մասը, որտեղ արծաթը դիտվում էր իբրև «երկու մարդիկների մեջ հարաբերությունների արժողության նշան, իսկ արժողությունները փոխանակված ծառայությունների հարաբերությունն»²։ Երևան մտոնցմամբ տնտեսական հասկացություններն ու կատեգորիաները խզվում են ռեալ իրականությունից և անհնարին է դառնում դրանց ամեն մի գիտական վերլուծությունը։ Ինչպես նկատել է Կ. Մարքսը, Բաստիան իրականում չի տալիս արժեքի և ոչ մի վերլուծություն, նա միայն ծամծամում է անբովանդակ հասկացություններ այն միջավայրական սպառույցի համար, թե աշխարհը լինի է մեծ, գեղեցիկ, օգտակար ծառայություններով³։

Մարդկային պահանջմունքների յուրահատկությունը որոշվում է անհատի գործունեության սոցիալական բնույթով, ամենից առաջ աշխատանքի բնույթով, արտադրողական ուժերի զարգացման մակարդակով և աշխատունքի բաժանման մասշտաբներով։ Պահանջմունքները պարունակում են ոչ միայն կենսաբանական տարրեր, այլև, լինելով աշխատանքային գործունեու-

թյան նախադրյալներ, միաժամանակ այդ գործունեության արդյունք են։ Կ. Մարքսը նշում էր, որ ստանց պահանջմունքի չկա արտադրություն, բայց հենց սպառումն էլ վերարտադրում է պահանջմունք։

Սակայն աշխատանքի բաժանման հարցերում Գրիգոր Արծրունու հայացքներում առկա են նաև արժեքավոր դիտողություններ։ Նա գտնում էր, որ աշխատանքի բաժանումը խմանում է արտադրողի «ճարտարության» բարձրացմանը, ժամանակի խնայողությանը, մեքենաների գյուտերին և, վերջին հաշվով, աշխատանքի արտադրողականության աճին։ Այս առումով Արծրունին վկայակոչում էր Ադամ Սմիթի բերած զեղանկների արտադրության օրինակը⁴։ Նրա կարծիքով, աշխատանքի բաժանումը, զրպեև հետևանքներով հանդերձ, ունի նաև բացասական կողմեր, այն, որ մարդու մեջ զարգանում են մտակողմանի հակություններ։ Ուղակույցի «չղոհի մարդու» անհատական, և՛ հոգևոր, և՛ մտավորական հարմար զարգացումը, նա առաջարկում է մի խիստ անբնական ուղի, աշխատանքի բաժանումը դնելով որոշակի շափի մեջ⁵։ Թվում է այս հարցում Գ. Արծրունու վրա նկատելի է Ն. Կ. Միխայլովիկու ազդեցությունը, որն աշխատանքի բաժանման հարցը քննության է ենթարկում տնտեսական ֆիլոսոֆիայական առումով։

Քննադատելով կապիտալիստական արտադրանքը, Ն. Կ. Միխայլովիկին առաջագիմությունը կապում էր «ամբողջի անբաժանելիության» հետ։ Նա գտնում էր, որ աշխատանքի բաժանման հետևանքով անհատի առանձին ավելանք ստանում են հսկայական ինտենսիվություն, վերջնականապես խլացնելով մյուս ուղղությունները⁶։ Եվ արդյոք ամբողջի անբաժանելիության պահպանումը չէր հետաժամում Գ. Արծրունին, որը լինելով հայկական խոշոր քրիստոնեական գաղափարախոսը, հակված էր նաև աշխատանքի կոպեյբրացիայի պարզ ձևերի պահպանությանը։ «Զմոռանք,— գրել է նա,— որ մեր փրկությունը մենք կգտնենք նպատակով, ընդարձակելով փոքր արդյունաբերության շրջանը և փոքր արդյունաբերողներ թիվը»⁷։

¹ Գրիգոր Արծրունու աշխատությունները, հ. 1, էջ 182—183։

² Տե՛ս նույն տեղում, էջ 356։

³ Տե՛ս Н. К. Михайловский, Соч., т. 1, С. Петербург, 1906, стр. 105—106.

⁴ «Մշակ», 1872, № 24։

¹ Գրիգոր Արծրունու աշխատությունները, հ. 1, էջ 182—183։

² Նույն տեղում, էջ 182—183։

³ Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 16, стр. 326.

Գ. Արժրունու մոտ չկա աշխատանքի հասարակական բաժանման և մանուֆակտուրային բաժանման որևէ ահմանագրություն: Աշխատանքի հասարակական բաժանումը հաճախ նրա մոտ ներկայանում է որպես մանուֆակտուրային բաժանում և բնդհատական Մինչդեռ, ինչպես նշել է Կ. Մարքսը, ընթացած զոյություն ունեցող բազմաթիվ համանմանություններին և շաղկապող օգակներին, աշխատանքի բաժանման այդ նրկու տիպերը տարբեր են ինչպես իրենց աստիճանով, այնպես էլ էությունը:

Գ. Արժրունու կարծիքով, աշխատանքի հասարակական բաժանումը, որը տանում է զեպի մասնագիտացում, ինքնին նպաստում է արտադրության զարգացմանը: Սակայն միաժամանակ նա գտնում էր, որ պատմական ալիսլիզ զարաշրջաններում, օրինակ, միջնադարյան Ֆրանսիայում, արհեստավորական զիլդիաների միջև զոյություն ունեցող աշխատանքի բաժանումը և զործող օրենսդրական կարգը խուճրգոաներ էին սեղծում բնդհատոր զարգացման համար:

Իր հասարակագիտական հայացքներով Գ. Արժրունին հարում էր օրգանական զլորոյին: Այդ ուղղության տեսության սկզբունքները տարածելով նաև մարդկային հասարակության զրա, նա գրել է. «Մնչպես որ հասարակությունը կազմված է անհատներից, այնպես և բոլոր մարդկությունը կազմված է սզգրություններից: Ազգը միևնույն զիտն է խաղում մարդկության մեջ, ինչ-որ առանձին անհատը հասարակության մեջ»: Եվ անցկացնելով զուգահեռներ, «Մշտնա խմբադիր մարդու անհատականությունը կախման մեջ էր զիտմ նրա բնդհանուր կազմվածքից, բնությունից ստացած ներքին հատկություններից, բնզումակություններից, հակումներից, զաստիարակությունից, իսկ սզգի անհատականությունը պատմականորում էր օտորա ցեղի հատկություններով և նմանպես արտաքին աշխարհի երևույթների, կլիմայի, երկրի աշխարհազրական և տեղազրական զրության, պատմության բնթացքի ազդեցությամբ»: Այստեղ փաստորեն զրզում է համաշխարհային մասշտաբով աշխատանքի բաժանման հարցը և եթե այն մի

կողմից կազմում է ազգերի բնածին հատկությունների, այս մյուս կողմից՝ պատմական ու աշխարհազրական պայմանների հետ:

Որչալի է Գ. Արժրունու հայացքների զրա զերմանական պատմական զարցրի և հատկապես նրա պատմաոսալիտական թևի (Կ. Ռոշեր, Կ. Կնիս, Բ. Հիլդերբրանդ) ազդեցությունը, որոնք զերագնահատում էին տարբեր ժողովուրդների առանձնահատկությունների զործոնը և հանգելով նրանց սոցիալտեստեսական զարգացման ուղիների կրկնելություն անհարկությունից տեսությունը, փաստորեն ժխտում էին հասարակական զարգացման օրչկետիվ օրենքների աոկայությունը: Հնեց այս առումով էլ Գ. Արժրունին վկայակալում է Կ. Կնիսին, բաղաբաղիթություն խոդիքը համարելով օգտնել, հարուցանել և զարաչանել մի ազգի մեջ ևս նորան հատուկ այնպիսի կողմը, որը նորա հոգեկան և տեստեսական կյանքում արդյունավոր զործիլ կարողանար զատելալ:

Հետևելով 2. Սպենսերին, Գ. Արժրունին հասարակությունը նմանեցնում էր բնական ճանապարհով զարգացող օրգանիզմի: «Մարդի կամ անասնի մարմինը կամ բույսը,— զրում է նա,— մենք օրգանական մարմիններ ենք անվանում, որովհետև այն մարմինները բաղկացած են զանազան մասերից (զործիքաներից), որոնք ալիսլիզ պաշտոններ կատարելու նշանակված են: Մարդկային հասարակությունը, եթե նորան նալենք որպես մի անբողջ մարմին, նմանապես մի բաղադրյալ օրգանական կաղմվածք է: Հասարակությունը բաղկացած է անհատներից, որոնք հասարակական կյանքում ալիսլիզ պաշտոններ կատարելով՝ հասարակության ալիսլիզ զաան են կազմում»:

Հասարակական կառուցվածքի և օրգանիզմների կառույվածքի այսպիսի զուզորոումը, ճիշտ է, իր մեջ պարունակում է սոցիալտեստեսական երևույթների ճանալողություն հարցերում օրչկետիվ տարբի աոկայությունը, սակայն, բնդհանուր առմամբ, այն իզեալիտական է, ուր զերագնահատվում է կենսաբանական զործոնի զերը, բնզումվում զարգացման էվոլյուցիոն ուղին: Եվ բոլորովին պատահական չէ, որ Գ. Արժրունին

1 Տե՛ս Գրիգոր Արժրունու աշխատությունները, հ. 1, էջ 354—356:

2 Եունյ տեղում, հ. 1, էջ 357:

3 Եունյ տեղում, էջ 358:

1 Գրիգոր Արժրունու աշխատությունները, հ. 1, էջ 360:

2 Եունյ տեղում, էջ 292:

գոյութան կռիի օրհներ փոխադրում է նաև մարդկային հասարակութան վրա:

Հարկ է նկատել, որ էվոլյուցիոնիստական սկզբունքը Գ. Արծրունին տարածում էր ոչ միայն հասարակութան տնտեսական զարգացման բնթացքի, այլև վերաշնչերային հաստատությունների և նույնիսկ գիտության ու մտածողության պրոցեսի վրա՝ նրա կարծիքով, և՛ հասարակական անհատի, և՛ ազգի հարատևությունը պայմանավորված է այն բանով, թե դրանք որքանով են լավ հարմարված շրջապատող պայմաններին: Իսկ դրա համար նա անհրաժեշտ էր համարում քաղաքակրթվել, «լուսավորության որբան կարելի է մեծ պաշար ձեռք բերել», որպեսզի «շրջապատողների հետ հավասար գեներով պատերազմել և իր գոյությունը պաշտպանել»¹:

Այսպիսով, մարդկային հասարակության զարգացման պատմությունը ըստ Գ. Արծրունու ոչ միայն գոյության պայքարի, այլև այդ պայքարի համար անհրաժեշտ միջոցների կատարելագործման պատմություն է: Հասարակական կյանքի զարգացումը պահելով որպես էվոլյուցիոն զարգացման պրոցես, Գ. Արծրունին մերժում է հասարակության հեղափոխական հերթավաճության գաղափարը: Նրա համար ուղացույց է դարձել Պրուզնի «հեղափոխություններ» ոչ երբեք, վերանորոգություններ միշտ» արտահայտությունը: Գ. Արծրունու և «Մշակի» հետաքրքրությունը սոցիալ-գարվիեիզմի նկատմամբ բխում է տեսական հենց այդ հայեցակետից: Այդ հուանքը, որ անցյալ զարաշրջանի երկրորդ կիսամյակում լայն տարածում էր գտել, իր հետևորդներն ունեցավ նաև Հայ իրականության ընդհանուր փորձում էին Չ. Գարվինի տեսության սկզբունքները տարածել նաև հասարակական կյանքի վրա՝ ընդհանուր գծեր տեսնելով բուխյան էվոլյուցիոն զարգացման և հասարակական առաջընթացի միջև: «Մշակի» 1878 թվականի 186—191-րդ համարներում տպագրված է Հայ անվանի գրող Բաֆֆու «Մարդը գոյության կռիվ մեջ» հոդվածաշարը: Այն, ինչպես վկայում է հեղինակը, գրվել է ուսանվանի գիտնական Ի. Ի. Մենդիկովի «Պայքար գոյության համար լայն իմաստով» հոդվածի անմիջական ազդեցությամբ, որը տպագրվել է «Вестник Европы» հանդեսի 1878 թվականի 7-րդ համարում: Ինչպես Ի. Մենդի-

կովը, Բաֆֆին ևս կենսաբանականացում էր որոշ սոցիալական երևույթներ: Հոդվածում մեջբերումներ կատարելով անհետաքրքիր հեղինակներից (Գարվին, Սպենսեր, Վագներ, Մեյնհոլդ, Եմմլեր, Կանգն, Շեֆլե, Մաուրեր, Սմիթ, Մակհալլիս և ուրիշներ), Բաֆֆին, ըստ էության, հանգում է Գ. Արծրունու վերը հիշատակված եզրակացությանը, ըստ որի գոյության պայքարում դիմանալու համար պետք է «գործունեության ձևերը փոխել ժամանակի և հանգամանքների համեմատ», իսկ դա պահանջում է ժամանակի պահանջների ճանաչում, որոնց հարմարվելու համար անհրաժեշտ է «ժամանակի քաղաքակրթության համեմատ զարգացած լինել»²: Բաֆֆին, ինչպես և Գ. Արծրունին, չէր հասկանում, որ գոյության կռիվը պայմանավորված է մասնավոր սեփականատիրական հարաբերություններով:

Հայտնի է, որ Սպենսերի օրգանական տեսությունը XIX դարի 60-ական թվականներին լայն տարածում էր ստանում նաև Ռուսաստանում: 1867 թվականին լույս տեսավ Ն. Միխայլովսկու «ԻՆ է աուզադնությունը» աշխատությունը, որը նպատակ ուներ տեսականորեն միտել հասարակության զարգացման ուղևեցության օրհները: Ինչպես իրավացիորեն նշել է է. Վիլենսկայան, և՛ թե օրգանական պրոցեսի ներկայացուցիչների համար հասարակական և օրգանիզմի զուգարման սխեման նպատակ ուներ ապացուցելու հասարակական զարգացման ներդաշնակությունը, ապա Ն. Միխայլովսկին այդ զարգացման մեջ տեսնում էր հակասական պրոցես, այն, որ հասարակության ընդհանրական զարգացումը ընդհարվում է առանձին անհատների համակողմանի զարգացմանը³: Հայ մտավորականները լավատեղյակ էին Ն. Միխայլովսկու վերը նշված աշխատությունից⁴ և պետք է ենթադրել, որ կրել են նրա որոշ ազդեցությունը: Այդ ազդեցությունը նկատելի է նաև Գ. Արծրունու վրա: Նա, ինչպես և Միխայլովսկին, բնորոշում էր տիրող անասական ու սոցիալական հակասությունների փաստը: Ճիշտ է, հա-

¹ «Մշակ», 1878, № 191.

² ՏՆ՝ Յ. С. Виленская, Н. К. Михайловский и его идеяная роль в народническом движении 70-х начала 80-х годов XIX века, М., 1979, стр. 102.

³ «Մշակը» 90-ական թվականների վերջերին քաղվածքներ էր տպարում Ն. Միխայլովսկու «Ին է աուզադնությունը» և այլ աշխատություններից:

⁴ «Մշակ», 1878, № 82:

ստրակոմիայան օրգանական զարգացման մեջ Գ. Արծրունին նույնպես աճեցում էր անհատի կենսաբանական հատկություններին ցրտերման տարր, նշում հասարակական ներհանրությունները, բայց էլ էին ն. Միխայլովիկին ժխտում էր այդպիսի դարգացման ներդրանակությունն ու ատարադրամականությունը, այսպես Արծրունու կարծիքով, ատարադրամությունը պետք է ընթանա ճնշել այց ձևով: Եվ էլ էին հասարակական բուրժուական առաջընթացը ն. Միխայլովիկուն ներկայանում էր որպես անբնական զարգացման պրոցես, ապա Արծրունու հասարակական առաջընթացն ակնկալում էր զարգացման բուրժուական ուղին: «Հասարակական կյանքի երևույթները... որք է նա,— նման էն օրգանական կյանքի երևույթներին: Ինչպես ատանձին օրգանական մարմնի, նույնպես և հասարակության մեջ հանդիպում ենք արդյունաբերության և կիրառության կամ սպառման երևույթներին: Ինչպես օրգանական անհատի, նույնպես և հասարակության մեջ նշմարվում է նախապես զործունեների (հասկացող) և երևույթների կոիվը, որի հետևանքը գորությունների համագորակությունն կամ քրշնակցությունն է (արժանի)»:

Կինկով օրգանական զարգացի հետևորդը, Գ. Արծրունին հարում էր աշխարհագրական դեմոսթրիկոմին, որի ներկայացուցիչները հասարակության տնտեսական ու սոցիալական զարգացման գլխավոր գործոնը համարում էին աշխարհագրական միջավայրը: Մեծարելով անգլիական պատմաբան և իր սոցիոլոգիական հայացքներով պրոֆեսոր Ռոջերն, Գ. Արծրունին գտնում էր, որ մեծ անհասականությունները ոչ միայն «արտասնայություն են այն հասարակության, որտեղ նորա ձեվել են,— այլ պիտի աչքի առաջ ունենալ օրիշ, աղելի հիմնավոր և պատճառող գործիչներ՝ ինչպես բնության ազդեցությունը մարդկային հասարակության վրա և ազդարարական երևույթները մի հասարակության մեջ»: Բնական գործոնի այս գերազանահատուկը խոսում է Գ. Արծրունու կողմից պատմության կառուցարարական ըմբռնման մասին:

Ինչպես արդեն նկատել ենք, Գ. Արծրունու աշխատանքի փիլիսոփայությունն ակնկալում էր ինչպես նյութական, այնպես էլ մտավոր առաջադիմություն: Այդ «միասնական» աշխատանքի

փիլիսոփայությունը, սակայն, նրա հայացքներում երկատվում է, որպես առաջադիմության շարժիչ գործոններին Ռոջերնով հասարակական հարցերի քննարկում նրա հայացքությունը ուշադրություն էր սևեռում «անտեսական կետին», այնքանով օրինկով էր, իսկ որքանով մտավոր զարգացումն էր համարում առաջնային, սուբյեկտիվ էր և չէր բխում պատմական պրոցեսի օրինաչափությունից: Գ. Արծրունին, ճիշտ է, ընկալում էր զարգաբարական ու բարոյական երևույթների կախումը տնտեսական հարաբերությունների բախխային հիմքից, սակայն նրա հայացքները դեռ չէին Կուտի և Ռոջերի ազդեցությունից, որոնց կարծիքով պատմական զարգացման վճարական գործոնը հասարակության ինստիտուտալ զարգացման ստիմանն է:

Գեաև վաղ շրջանի Շոգվածները մեկում Գ. Արծրունին գրում էր, որ մարդկային հասարակությունը կատարյալ չէ, պակասություններ ունի: Հեղինակը գտնում էր, որ այդպիսի վիճակը հնարավոր է բարվոքել մտավոր աշխատանքի միջոցով: Մտավոր աշխատանքի նրա ըմբռնումը իր հիմքում ուներ գիտության ուժի սուբստանցը, որին հեղինակը մեծ տեղ էր հատկացնում հասարակության զարգացման գործում: Ենչպես և պրոֆեսորիկաները, ճանաչողության հարցերում Գ. Արծրունին ընդունում էր փորձի նշանակությունը, բայց և միասնական գիտության խելիքը համարում էր «Այդ ցանազան փորձերի մեջ պատճառական կապի» նշանաբերումը: Իրավացի է Գ. Հակոբյանը, նշելով, որ էլի պրոֆեսորիկոմի դասականները գիտության ուժի ճանաչողության հետ միասին միտում ունեն «ստճամանափակելու նրա ներթափանցման ոլորտները», այսպես Գ. Արծրունու գիտական ճանաչողության անասնանուժի նկատմամբ եղած հավատք գործնականում սննով չէր կարող սասանվի: Դա թույլ էր տալիս նրա հասարակագիտական հայացքների համակարգում տեսնելու մատերիալիստական տարրեր:

Գ. Արծրունին մեծ նշանակություն էր տալիս բնական գիտություններին, որպես հասարակական առաջընթացի կարևորագույն գործոն: Դա միանգամայն համապատասխանում էր բուրժուական հարաբերությունների զարգացման պատմաշրջա-

1 Գրքեր Արծրունու աշխատությունները, 5, 1, էջ 294:

2 Մշակ, 1874, № 15:

1 Գրքեր Արծրունու աշխատությունները, 5, 1, էջ 370:

2 Հայ էսթետիկական մտքի պատմությունը, գիրք 1, Երևան, 1974, էջ 17:

նի գործնականության ոգուն: Ճիշտ է, այս հարցում Գ. Արծրունու մտ կարելի է հանգիսի վկայագրումների Կարլ Տոխտեյց, Ռուսենկոյից, Լյուսից, Միխայլից, սակայն նրա վրա առավել նկատելի է Պիսարևի ազդեցությունը: Վերջինս շեշտելով գիտության զերբ արտագրողական ուժերի զարգացման պրոցեսում, բնական գիտությունները համարում էր արտագրողական ուժերի բաղկացուցիչ մասը, որպես անմիջական արտագրողական ուժ: Հետևելով Պիսարևին, Գ. Արծրունին գիտության վերափոխիչ ուժը համարում էր մեծ տնտեսական ուժ: «Կոզկուսը և Հայաստանը,— գրել է նա,— հայտնի են կենդանիների, բույսերի և մետաղների հարստության կողմից, բայց մի՞թե բազմական է բնության հարստությունը՝ գործարաններ երկրի մեջ հիմնելու համար: Հասկանա՞նք վերջապես, որ մենք աշխատասիրության և գիտության միջոցով հարստանալու ենք միույն մեր բնության հարստություններից զոտս բազելով»:

Ընդհանրապես հասարակական զարգացումը Գ. Արծրունու համար մի կետի վրա դրված անփոփոխ մեծություն չէ՝ մեկընդմիշտ սահմանված շրջանակներով. «Եթե մենք քննական աչքով նայենք բնության երևույթների, թե մարդկության պատմության ընթացքի, թե անհատի հոգևոր կյանքի վրա,— մենք կհամոզվենք, որ ոչ մի տեղ, ո՛չ օրգանական և ո՛չ անօրգանական բնության մեջ չկա՞ անշարժություն», որպես ամեն տեղ կենդանության մշտնջարվոր ձգտումն զիտումն կատարելագործության»¹: Նշելով, որ ինչպես մարդկային հասարակության, այնպես էլ բնության մեջ գոյություն չունի կատարելատիպ, Գ. Արծրունին կատարելագործվելու ուժը բնութագրում է իրեն զարգացման գոպանակ: Սրանում դրսևորվում է Գ. Արծրունու սոցիալական օպտիմիզմը:

Մարդկության պատմությունը Գ. Արծրունու համար ավելի շուտ անհատականության զարգացման պատմություն է, և, որպես այդպիսին, այն լուկ բուրժուական անհատականության փոխադրումն է մարդկության պատմության վրա ընդհանրապես: Ուստի անհատականությունը, նրա կարծիքով, գառնում է ոչ թե պատմության արյունքը, այլ կրակետը, տնտեսական

նորմալ գործունեության պայմանը: Այս զուգահեռներում էլ Գ. Արծրունու հասարակական առաջադիմության սոցիալիզմ կերբ էր որոնում իր զարաշրջանի տեսական մտածողության հետ, փորձելով սրբապետոզ փիլիսոփայական, տնտեսագիտական և սոցիոլոգիական ուսմունքների հակասական ոլորտներում կառուցել անհատի և անհատականության սեփական հանցությունը:

* * *

Ուսաստանում կապիտալիզմի արագ զարգացումը տնտեսական լուրջ հետևանքներ ունեցավ նաև երկրի ծայրամասերի ժողովուրդների կյանքում: Վ. Ի. Լենինի արտահայտությամբ, առասպառնական կապիտալիզմն իր ոլորտի մեջ ներթափեց նաև Կովկասը:

Տնտեսության մեջ կատարվող տեղաշարժերը հասարակական միտքն զրաղեցնում էին նոր հարաբերությունների քննությամբ, սուր կեանք վրա դնելով հասարակական զարգացման ուղիների հարցը: Գրիգոր Արծրունին հայ այն մտալորականներից էր, որն իրեն նոր դասակարգի գաղափարախոս բմբունց սոցիալ-տնտեսական կյանքում կատարվող տեղաշարժերի պատմական իմաստը և, կնիելով նոր զարգացող հասարակարգի առաջադրած խնդիրներից, իր մտղակող ուղղությամբ պատկերավ չայտարարեց հին կարգ ու կանոնների, հին հասարակության հաստատությունների ու դրանց համապատասխան գաղափարախոսության դեմ: «Մշակ» անդրկովկասյան առաջին թանրը սերտորեն կապում էր կապիտալիստական հարաբերությունների հետ, զարգացման եվրոպական ուղին համարելով որպես իսկական բնական ուղի:

Հայտնի տնտեսագետ Ավետիք Արասխանյանը «Եվրոպայի նյութական հարստությունները» հոդվածում սույով արեմտա-եվրոպական երկրների տնտեսության ընդհանուր պատկերը, կապիտալիզմը դիտում է որպես հասարակության բնապատմական զարգացման արյունք, վայրենությունից անցում դեպի քաղաքակրթություն, գտնելով, որ մարդկային տնտեսության զարգացումը սմարդկային հասաչադիմության պատմությունն է՝ Այս առումով էլ եվրոպական երկրների տնտեսական զար-

¹ Գրիգոր Արծրունու աշխատությունների, հ. 1, էջ 381:

² Նույն տեղում, էջ 368—370:

³ Յճ՝ 2. Գարեիկյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 3,

զացման համակարգը նրան ներկայանում էր որպես Անցրիզիկ-կասի համար ուղեցույց: «Մենք ետ մնացած ազգ ենք, աչք-նեքս նոր բացված, մենք զգում ենք և պարզպես տեսնում, թե ինչ մտի թափարի մեջ ենք... Գարևոր այդ քնից մեզ զարթ-նեցնելու համար հարկավոր է մի ուժ, մի զորավոր ճանապարհ, մի մեծ զարկ և այգյուհին ներկայացրավ. դա այժմյան եվրոպան է իր քաղաքակրթությամբ»¹: Քաղաքարական այս որոշակիությունը հանգերծ, «Մշակը» աշխուժ հետաքրքրություն էր ցուցաբերում հասարակության զարգացման ուղիների հարցերն ակնկալող տեսական ուղղությունների հանդեպ:

Ինչպես հայանի է, XIX դարի երկրորդ կեսին կապիտալիզմի լինել կամ չլինելու հարցը սուս մտապարականության (հատկապես նարոդնիկության) առջև ծառայած հանգուցային հարցն էր: Եթե 60—70-ական թվականների նարոդնիկության հեղափոխական թևը ելակետ ունենալով Գերցենի տեսությունը, ընդհանրապես ժխտում էր կապիտալիզմի զարգացման հնարավորությունը Ռուսաստանում, ապա 80—90-ական թվականների լիբերալ նարոդնիկությունը, կապիտալիզմի զարգացման փաստի հետ, խոսում էր նրա հետագա առաջադիմության հնարավորության մասին: Հասարակության կապիտալիստական զարգացման նարոդնիկական բնույթունն իր արձագանքն է գտել նաև «Մշակի» էջերում: Այսպես, օրինակ, թերթի 1854 թվականի համարներից մեկում սպագրված է «Մեր անտեսական ապագայի առթիվ» հոդվածը, որի հեղինակը քննարկելով կապիտալիստական տնտեսակարգն ու նրանից բխող դասակարգային, սոցիալական և տնտեսական ներհակությունները, գրել է. «Հայտնի տնտեսագետներից մեկը հավատացնում է, որ տնտեսապես ոչ զարգացած ազգերը կարող են տեսնել իրենց ապագա տնտեսական զարգացման ընթացքը հիմնիկա տնտեսապես ավելի զարգացած ազգերի պատմության մեջ,— ուրեմն ազգերի տնտեսական կյանքը զարգանում է հայտնի հասարակական օրենքներով, և այս օրենքները համարյա հատուկ են բոլոր երկրներին»²:

Ըստ երևույթին «հայտնի տնտեսագետ» անելով հոդվածագիրը նկատի է ունեցել Կ. Մարքսին, որը վերլուծելով տնտե-

սական կյանքի երևույթները ու պրոցեսներն ներքին կայր և բացահայտելով հասարակական դարգացման օրենքները, մի առիթով նկատել է. «Արդյունաբերապես ավելի զարգացած երկիրը պակաս զարգացած երկրին միայն նրա սեփական ապագայի պատկերն է ցույց տալիս»³: Հողավաճախի կասկածի տակ է դնում այս միտքը: Ուստի պատահական չէ նրա այն հարցադրումը, թե զարգացման կապիտալիստական ուղին պարտադիր է, արդյոք, բոլոր երկրների համար, թե կարող են լինել երկրներ, որոնք կապված ինչ-ինչ տանձնահատկությունների հետ, կարող են շրջանցել կապիտալիզմը: Հեղինակը դրական պատասխան է տվել հարցարժան միայն երկրորդ մասին. «Ռուսաստանում ծաղկող տնային արդյունագործությունները, գյուղական համայնք և արտելները (ընկերությունները) և նույնիսկ կապիտալիզմի շնչին առաջադիմությունը կարծես համոզում են, որ կապիտալիզմը չի պիտի դառնա տիրապետող տնտեսական սիստեման Ռուսաստանում, ինչպես եղել է նա եվրոպայում»⁴: Միանգամայն ակնհայտ է հեղինակի վրա լիբերալ նարոդնիկության «ներգաշնակ գոկործնայի» (Անին) ազդեցությունը, որը հակադրվելով Արևմտյան եվրոպայի և Ռուսաստանի տնտեսական զարգացման օրենքները, նպաստել էր հետամտում «ժողովրդական արտագրության» և տնտեսության համայնական արտելային կազմակերպման գիրքերից ապացուցել Ռուսաստանի կապիտալիստական զարգացման անհնարակարությունը:

Ի դեպ, մի անգամ չէ, որ Ք. Արծրունին հանդես է եկել «Русь» թերթի հեղինակների հասարակական-տնտեսական դրսև առևտական հաշիցության քննադատությամբ, որոնց կարծիքով, հողային համայնքը նարավորություն կտա շրջանցելու կապիտալիստական ուղին, ստեղծելով «իր սեփական ինքնուրույն մեները», մի հասարակարգ, որը խարխված կլինի «բարոյական, վերացական սկզբունքների վրա»⁵: Համայնքի ընդունելով որպես ազգերի զարգացման պատմության մեջ համբնդանոր երևույթ, Ք. Արծրունին հասարակական առաջընթացի հեռունկալը տեսնում էր եվրոպայի տիրող տնտեսակարգում⁶: Թեև

¹ «Մշակ», 1879, № 35.

² «Մշակ», 1884, № 6.

³ Ք. Մարքս, *Կապիտալ*, 5. 1, էջ 7.

⁴ «Մշակ», 1884, № 6.

⁵ «Մշակ», 1881, № 110.

⁶ Տե՛ս «Մշակ», 1881, № 101.

տեսնական օրենքների լիմացության հետևանք էր, որ «Մշակի» թղթակիրները ոմանք Կովկասն անցատում էին համառուսական ընդհանուր զարգացումից, փորձելով ցույց տալ, որ, եթե կապիտալիստական ուլիքի Ռուսաստանի համար իրական հիմքեր չունի, ապա Կովկասի զարգացումը պետք է ընթանա ըստ կապիտալիզմի ուղիով:

Որո՞նք են, «Մշակի» հոդվածագիրներից մեկի կարծիքով, Կովկասի կապիտալիստական զարգացումը պայմանավորող գործոնները: Հայտնի է, որ Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման անհնարինությունն ապացույցելու համար նարոգներիններ փաստարկում էին արտաքին շուկայի բացակայությունը, արտադրված արժեքների իրացման զովարությունները: Արտաքին շուկայի անհրաժեշտությունը որպես Կովկասում կապիտալիզմի զարգացման նախապայմանի ընդունում էր նաև «Մշակի» հոդվածագիրը, իբրև այդպիսիք համարելով Ռուսաստանը և հարևան երկրները:

Իրականում Ռուսաստանի և Կովկասի տնտեսական փոխադարձ կապերի ընդհանրության մեջ առաջինի շուկան երկրորդն էր: Ռուսաստանը յուրք տեղ էր գրավում Կովկասի տնտեսական յուրացման ու կապիտալիստական փոխակերպության բնագավառում:

«Մշակի» հոդվածագիրը երբեմն ընդունում է Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման փաստը: Նա գործարանային արտադրության նախադրյալ համարում է երկրամասի բնական հարստությունները, որոնք, նրա համոզմամբ, կհասցնեն առևտրական կապիտալի արդյունաբերական փոխակերպությանը, հողի պահպանությունը և դրա հետևանքով՝ նաև ազատ ձեռքերի առկայությունը, համայնքների և առհասարակ ընկերակցության բացակայությունը: Այսպիսով, ընդունելով կապիտալիզմի զարգացման փաստը Ռուսաստանում և նրա հետագա առաջադիմության հարցում տուրք տալով լիբերալ նարոգների կողմից հայտարարված, հոդվածագիրը, այնուամենայնիվ, հակված է այն կարծիքին, թե «տնտեսական զարգացման հոսանքի մեջ կապիտալիզմը նշանավոր քաղաքակրթական դեր է կատարում», «հասարակական քայքայված ուժերը մոտեցնում է, մեկ մեկուրնկերացնում է», «պատրաստում է այն հասարակատնտեսա-

կան տարրերը, որոնցից պետք է բաղկանան ապագայի արդյունաբերող ընկերությունները»¹:

Վ. Ի. Անիկը բնագրատելով Միխայլովսկուն, Գանիկունին և լիբերալ նարոգների կողմից մյուս ներկայացուցիչներին, գրում էր, որ նրանք «նարոգների կան ուսմունքի պատասխինները Ռուսաստանի կապիտալիստական զարգացումն ընդունելու հետ ստրեձելու ողորմելի»² փորձեր են անում:

«Մշակի» հեղինակը կապիտալի տիրապետությունը, այնուամենայնիվ, համարում էր մի անխուսափելի պրոցես ինչպես երկրամասի, այնպես էլ Ռուսաստանի համար. «Մենք չենք նայում կապիտալիզմի վրա ինչպես հասարակական-տնտեսական հարաբերությունների վերջնական նպատակի վրա, նրա մեջ դեռ չէ ապահովված յուրաքանչյուրի բարեյական և նյութական զարգացումը. նա մի անփախելի ճանապարհ է, որը տանում է մարդկանց զեպի ալիքի խելացի ճանապարհ է, որը տանում է ոչ թե ինքնբարեկյան, այլ նրանով, որ նա պետք է պատրաստի ապագայի հասարակական արդյունաբերող ուժերը»³: Այս դատողությունների արտաբերուած թվացող սոցիալիստական բովանդակությունը իրականում երկնտ ունի դերմանական պատճանակն զպրոցի «պետական սոցիալիզմի» տեսությունը: «Կապիտալիզմի բերած թշվառությունները լավ հայտնի են,— գրում է «Մշակի» հոդվածագիրը,— յուրաքանչյուր պետություն աշխատում է հսկողության տակ զցել նրան, զուպել նրան, մեղմացնել նրա տված շարիքները, թեպետ կապիտալիզմը շատ է սիրում «սզաատ մրցում» և laisser passer, laisser faire, մախվանդ նա շատ է վիրավորվում, երբ պետությունները խոտնրվում են տնտեսական հարաբերություններին, այնուամենայնիվ պետական իշխանությունը ձգտում է կանոնավորել կապիտալի մշակների հարաբերությունները, և առհասարակ բոլոր տրնտեսական հակասությունները, այսպես առաջ է եկել պետական սոցիալիզմ ապված վարդապետությունը»⁴: Հենց այս առումով էլ հեղինակը խոտում է Ռուսաստանում գործարանային հսկողություն իրականացնող ինչ-որ վերակազմների մասին, որոնք պետք է պաշտպանեն իրենաների և կանանց աշխատանքը

¹ «Մշակ», 1884, № 6.
² Վ. Ի. Անիկ, Սեմ, հ. 1, էջ 240.
³ «Մշակ», 1894, № 6.
⁴ Նույն տեղում:

կապիտալի շահագործումից, բարեխղիկին բանվորների առողջապահական պայմանները և այլն:

Հայտնի է, որ XIX դարի վերջերին Պետերբուրգի Ազատ տնտեսական քննկրությունը մաքրի լայն փոխանակություն էր ծափաղի Ռուսաստանում կապիտալիզմի ձեռնարկի հարցի շուրջը:

Մ. Ի. Տուզան-Բարանովսկին ժամանակի այն գիտնականներին էր, որը հակառակ նաբոդիկական մտայնության, ընդունում էր կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում, բերելով այն հաստատու հարուստ փորձարկական ալյալանին «Մշակը» ազատ շարադրելով Տուզան-Բարանովսկու 1898 թվականի Պետերբուրգի Ազատ տնտեսական քննկրությունում կարգացած «Ռուսաստանի արդյունաբերական զարգացման վիճակագրական արդյունքները» գեղուցյան հիմնական դրույթը, բառերի «Ռուսաստանն էլ մտնել է կապիտալիզմի շրջանը և նա պետք է ձեռնարկի կերպով առաջ ընթանա ինչպես Արևմտյան եվրոպայում¹, այնուհետև հարցադրում է կատարում, թե որքանով է այն ճշմարիտ և ընդունելի Գոլկոպի համար: Ընկերության մյուս թևի ներկայացուցիչները հակված էին այն անսահմանին, որ, ընայած ֆարքիկազորմարտային արդյունաբերության որոշ զարգացմանը, «պետության ընդհանուր ընկերությունը» մնում է երկարգործական, իսկ սաշխատողների մեծ մասը դեռևս կապված է հողի հետ: Ընդհանուր, շինկերականներով իր միտքը, կարծես ավելի հակված էր այս վերջին տեսակետին, գտնելով, որ նույնը կարելի է ասել Անդրկովկասի մասին. «Կովկասի աշխատող դաստարըրը դեռ մեծ մասամբ կապված է հողի հետ: Զուտ բանվոր դասակարգ գոյություն ունի մեր մի քանի բազաններում, ուր հին արհեստավորների և արքառ բազաբացիների սերունդը ավել է ազատ աշխատող ձեռքեր այն արդյունաբերությունների համար, որոնք կապված են տեղական տնտեսական կցանքի զիբավոր աղբյուրը»²:

Տարբեր առիթներով հայ ընթերցողներին հաղորդակից զարմնելով լիբերալ նարոդնիկների և լեզավ մարքսիստների հայացքներին, «Մշակը» առանձին հոդվածագիրներ, այնուամենայնիվ, համոզված էր, որ կապիտալիզմի հակառակորդ-

ները «ապարդյուն կրվով են զրաղված, երբ շահը են գործ դնում իսպառ կանգնեցնել կապիտալիզմի մուտքը և նրա զարգացումը Ռուսաստանի մեջ»:

«Մշակում» երբեմն փորձեր են արվել կապիտալիստական արտադրության զարգացումը զննելու ինչ-որ սահմանների մեջ, որպեսզի ազգարտադրության բարեկեցությունը չենթարկվի կապիտալիզմի զարգացման իդեալին:

Ինչպես հայտնի է, կապիտալիստական արտադրության առաջացման և զարգացման պայմաններից մեկը ազատ, արտադրության միջոցներից զուրկ աշխատողների առկայությունն է որպես կապիտալիստական ձեռնարկություններում աշխատող վարձու բանվորների: «Մշակը» այլ կարծիքի էր. «Կա այնպիսի մեծ պայման կապիտալիզմի լայնարձակ զարգացման համար, դա արդյունաբերած ապրանքների սպառելու և վաճառահանելու խնդիրն է: Իսկ այդ վաճառահանման համար անհրաժեշտ է ունենալ հարուստ ազգարտադրություն, որ սպասի գործարանների մշակած և պահպանե հարուստ կերպով նրանց զույլությունը»³: Ակներև է ոչ ոչ հարցում «Մշակի» մեկնաբանի վրա լեզավ նարոդնիկության ներկայացուցիչներին՝ Վերոնցովի, Միխայլովսկու, Յուսկովի և մյուսների սպեկուլյունը: Պատահական չէ, որ «Մշակը» «Ազատ տնտեսական քննկրության նիստ» հոդվածում վկայակոչում է Վ. Վերոնցովի «Կապիտալիզմի բարխոր Ռուսաստանում» աշխատությունը, շարադրելով նրա հոդվածները Ռուսաստանի տնտեսական զարգացման շարահանությունների մասին: Աշխատության հեղինակի կարծիքով, սուսական տնտեսական կայուն և սեղաղրվում եվրոպական կապիտալիզմի օրինաչափությունների մեջ⁴:

Վերջ հիշատակածից պարզ է դառնում, որ «Մշակը» նույնպես հակված էր կարևոր նշանակություն ապու ապրանքների իրացման պրոբլեմին: Սակայն եթև սուս տնտեսագետներին համար կապիտալիզմի զարգացման դժվարությունը կապված էր արտաքին շուկաների բացակայության փաստի հետ, ապա «Մշակը» փորձում էր հաստատության կապիտալիստական ուղին հարթել ներքին շուկայի ընդլայնման, բնակչության հա-

¹ «Մշակ», 1898, № 26:

² Նույն տեղում:

¹ «Մշակ», 1899, № 48:

² «Մշակ», 1899, № 43:

³ Տե՛ս «Մշակ», 1898, № 33:

բրտաացման և իրրև սպառողների նրանց զնոդունակության բարձրացման միջոցով:

Հասարակության առաջընթացի «Մշակի» ուղեգծումները ակնկալում էին կապիտալիստական առաջընթաց: Հենց այս առումով էլ թերթը գրում էր, թե XIX դարը «գմնա կովկասի տարեգրության մեջ շատ նշանավոր իրրև նրա նոր կյանքի, իրրև նրա կուլտուրական շարժման և համաշխարհային շփման մի բեղմնավոր սկզբնավորության դար»¹:

90-ական թվականներին հասարակական զարգացման վերաբերյալ «Մշակի» այս հայեցողությունը միանգամայն տրամաբանական էր: Գա Ռուսաստանի արդյունաբերական-զարգացման վերելքի ժամանակաշրջանն էր, երբ վերջնականապես շրջազովում էին Ռուսաստանի «ազգային կապիտալիզմի», հետևապես և Անդրկովկասի կապիտալիստական-զարգացման սահմանները: Անդրկովկասում կապիտալիստական փոփոխությունների գործում որոշակի զեբ է խաղացել նաև օտար կապիտալների մուտքը: Արդեն 70-ական թվականներինց սկսած Բարձր նավթային արդյունաբերության մեջ տիրապետում էին ֆրանսիական, անգլիական, շվեդական, հատկապես Ռոտշիլդի ու նորեյի կապիտալները: Երկրամասի պղծի հանքերը շահագործում էին գերմանական «Միմենս» ընկերությունը և ֆրանսիական կապիտալները, երկաթուղային տրանսպորտում իշխող դիրք ունեին անգլիական և բելգիական կապիտալիստները և այլն: Անդրկովկասը շահութաբեր դեանդման ոլորտ էր արտասահմանյան կապիտալների համար, որի հանդեպ XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական միտքի ունեը հակասական վերաբերմունք: Եթե լիբերալ և լիբերալ-պահպանողական ուղղությունների ներկայացուցիչներն այդ երևույթի բարերար ազդեցությունն ընդունում էին շափավոր սահմաններում, ապա ազգային պահպանողականությունն ընդհանրապես բացասաբար էր վերաբերում դրան:

«Մշակը» բազմիցս անդրադարձել է օտար կապիտալների զեբի դեանտությունները: Հանդես գալով «Русский кырбер» լրագրի մի հոդվածի դեմ, Գ. Արծրունին արտասահմանյան կապիտալը հատկապես կարևոր էր համարում երկրամասի արտադրողական ուժերի զարգացման համար: Զարգացման մի

էտապում, երբ երկրամասում ոչ կապիտալներ կան, ոչ էլ «ձևնարկող ոգի», նրա կարծիքով, օտար կապիտալների մուտքը կտոլորեցնի կիրառել արտադրության նոր ձևեր, իրացնել արդյունաբերության նոր և կատարելագործված սխեմաներ, անցնելով «մի սխեմեմական զարդոցի միջով և պատրաստվելով ապագայում ընդունակ լինելու անկախ և ինքնուրույն գործունեություն»¹: Սակայն Գ. Արծրունին օտար կապիտալի բարերար ազդեցությունն ընդունելի էր համարում մինչև մի որոշ սահման, որից հետո տնտեսական առաքելության ֆունկցիան վերաբերելով տեղական կապիտալների ինքնուրույն գործունեությանը: Այս վերջին մասով Գ. Արծրունու նկատառումները գրծնական չէին, քանի որ օտար կապիտալները տանում էին երկրամասի տնտեսական և քաղաքական կախվածության հետագա ուժեղացմանը: Եվ պատահական չէր, որ շնայած ուսուսական պետությունը մի կողմից խրախուսում էր արտասահմանյան կապիտալի ներդրումը, մյուս կողմից՝ ուղիներ էր որոնում նրա սահմանափակման համար:

Անդրեաս Արծրունին նույնպես կարևոր տեղ էր հատկացնում օտար կապիտալներին: Անդրկովկասի արտադրողական ուժերի զարգացման գործում, նշելով, որ դրա շնորհիվ հնարավորություն կստեղծվի «բովագործելու» երկրամասի հանքերը, կատարելագործելու արտադրությունը, բարելավելու աշխատողների զրույթունը և արժանավորելու աշխատանքի բուրժուական դաստիարակության սկզբունքները²: Գ. Արծրունու սխեմեմական զարդոցի և Ա. Արծրունու նկատառումները հետաժամում էին արտադրության կապիտալիստական հարաբերությունների արժանապատումը:

Իհարկե, «Մշակը» չէր անտեսում այն, որ արտասահմանյան կապիտալը, տիրապետելով երկրամասի բնական հարստություններին, կտոլորեցնի տեղական կապիտալների ինքնուրույն տնտեսական գործանունությունները: Այդ իմանկից դուրս գալու էլքը Գ. Արծրունին տեսնում էր տեղական արտադրության կատարելագործման մեջ, վերջինս համարելով որպես օտարների հետ մրցության կարևոր պայման: «Երկրագործ և արհեստավոր հավը,— գրել է նա,— անշարժ են մնացել, հայի երկրագործա-

¹ «Մշակ», 1899, № 50:

¹ «Մշակ», 1888, № 99:

² Տե՛ս «Մշակ», 1874, № 39:

կան արհեստագիտական պարադոմները մնացին նույն նա-
նպետական, անշարժ դրոժյան մեջ, ինչպես Հինգ Հարյուր
տարի սրանից առաջ: ...դիմում ենք օտարին, որովհետև չենք
կատարելագործվում»¹:

Անցյալ դարի վերջին քառորդը երկրամասի համար բնորոշ
էր արտադրողական ուժերի արագ զարգացմամբ: Անհատական
կապիտալների իրենց շահերով սահմանափակ էին և չէին բա-
վականացնում լայն մասշտաբներով արտադրողական ձևանա-
կումներին: Նոր գործարանների կառուցումը, արտադրության
նորագույն տեխնիկայի կիրառումը պահանջում էին մեծ կա-
պիտալներ: Առաջացել էր անհատական կապիտալների² որպես
ավելի մեծ տնտեսական ուժի միախառնման օրինակով անհրա-
ժեշտություն: «Մշակը» առաջարկում էր հենց այդ ձևով էլ
լուծել հակասությունը:

Գ. Արծրունին գտնում էր, որ հասարակության առաջադի-
մության մակարդակը ընտրոշվում է ընկերությունների դար-
գացման աստիճանով. «Փանի քաղաքակրթվում է, դարգանում է,
լուսավորվում է մի հասարակություն, աչքան նա ավելի և
ավելի սկսում է բմբռնել ընկերական ոգու, ընկերակցական
ուժի օգտավետությունը, ուրեմն ավելի էլ սկսում է բմբռնել
գանազան ընկերակցությունների հիմնելու անհրաժեշտությու-
նը»³: Ավետիք Արասխանյանը և «Տնտեսական հարցը և ազ-
գային կրթությունը» հոդվածում ազգային վերածննդի կարևոր
պայմաններից մեկն էլ համարում էր ընկերական ոգու զաս-
տիարակությունը⁴:

«Մշակը» հասարակական կյանքի զարգացումը, բնության
անտեսական չորացումը կապում է կրկու գործոնների՝ դե-
տոնության և ընկերական սգու հետ: Գ. Արծրունին կշռամբում էր
տեղական արդյունաբերությունին և հատկապես նավթադու-
նաբերողներին, որոնցից «չորաբանչուրը ուրիշից չոկ է աշ-
խատում, ոչ որ չի կամենում միասել ուրիշի հետ, չեն մտա-
ծում միմյանց հետ միանալով կազմել մի մեծ բաժանորդական
ընկերություն թե նավթը հանելու և թե երկրի մեջ նրան օրինա-
վոր կերպով, միացած ուժերով մշակելու համար»⁵:

Բաժնետիրական հիմունքներով Անդրկովկասի բնական հա-
րսատույթուններն օգտագործելու և արտադրություն կազմակեր-
պելու վերաբերյալ «Մշակին» ծրագիրը միանպաստան համապա-
տասխանում էր կապիտալիստական հարաբերությունների ձևա-
վորման ժամանակաշրջանի պահանջներին: Այդպես է եղել նաև
Եվրոպայի զարգացած կապիտալիստական երկրներում:

Կապիտալիստական արդյունաբերության ձևավորման ու
վերջինի ժամանակաշրջանում ազատ տնտեսական ձևերեցու-
թյան սկզբունքը դիտվում էր որպես մի կարևոր գործոն արտա-
դրողական ուժերի դարգացման համար: «Մշակը» հիշողական
իմաստով ազատ մրցակցությունը համարում էր երկրամասի
տնտեսական առաջադիմության կարևոր խթան: Ա. Արասխան-
յանը «Նմանակ Փարիզին» հոդվածում նկարագրելով Եվրոպայի
տնտեսակարգը, վերջինիս հարստության աղբյուրը սրբում էր
աշխատանքի և գործնականության մեջ: Ընդ որում, նա զրկա-
տանքով է խոսել մրցակցության մասին: Մրցակցության սկզբ-
րումը Գ. Արծրունի նույնպես ներկայանում է որպես ճշա-
դարակիրթ, ինքնձանաչողության բարձր աստիճանի հասած
հասարակության հիմնական սկզբունքներից մեկը⁶: Նա «Ինչեց-
նում է օրս տնտեսագետ Բ. Չիչերինին, որը «մարդկության
զարգացման բարձրագույն կետը» համարում էր մրցակցությու-
նը, այն դիտելով որպես տնտեսական գործունեության բնա-
կան ձև:

Անտրական կապիտալը պատմականորեն նախորդել է ար-
դյունաբերականին: Այն զրոյված էր միայն շրջանառության
դուրսում և նրա ֆունկցիան մանր ապրանքարտադրողների
արտադրած արդյունաբերի իրացում էր: Անդրկովկասում գա-
արդեն անցած էր այս էր, և «Մշակը» ընդգծում էր անտրական
կապիտալն արդյունաբերականի փոխակերպվելու և, ըստ այդմ,
հասարակության մեջ վաճառական դասի տնտեսական նոր
ֆունկցիայի անհրաժեշտությունը: Այդ առիթով թերթը 1873
թվականի 19-րդ համարում տպագրել է «Շալի տնտեսությունը»
առաջնորդող հոդվածը, որտեղ խնայողությունը համարվում է
հասարակական կյանքի մղիչ ուժ: Հոդվածագիրը կարծես կրկ-
նում է գտեհիկ տնտեսագետ Անեխոյի այն տեսակետը, ըստ որի

¹ «Մշակ», 1878, № 102.

² «Մշակ», 1878, № 15.

³ Տե՛ս «Մշակ», 1881, № 172.

⁴ «Մշակ», 1878, № 133.

⁵ Տե՛ս «Մշակ», 1878, № 94.

⁶ Տե՛ս «Մշակ», 1886, № 64.

հասարակության առաջադիմությունն ալելի մեծ «ժողովալու-
թյուն է պահանջում: Բայց դրա հետ միաժամանակ նա ընդ-
դեմ էր նյութական միջոցների անհրաժեշտությունը. «Հայր
հավարում է, այլ: Բայց հավարում է միայն նրա համար, որ
սուղղուկներում պահի իր հավարածը...: Նրան պակաս է այն
հատկությունը, որն արհի խնայողությունը մի գիտարկ խոսք
է՝ նա զուրկ է իր հավարածը մի որևէ ձևով արկուտից գործ
զննելու հատկությունից»¹: Ակնհերև է, որ խոսքը վերաբերում է
կապիտալի արդյունաբերական կիրառությանը:

Պ. Արծրունին գտնում էր, որ արդևն եկել է մանրավաճա-
ռությունը թողնելու և հումքի վերամշակման սեփական գործա-
րաններ հիմնելու ժամանակը: Դա, նրա կարծիքով, կտար օտար
կապիտալների հետ մրցապայքարում երկրամասի ազգային
կապիտալների ինքնահաստատման հնարավորություն: Այս
առումով Պ. Արծրունու տեսեսական ծրագրի էությունն արտա-
հայտված է նրա հետևյալ խոսքերում. «Խույս ձեռ արդար և
անարդար միջոցներով հավարած հարստություններն էլ գործ
չլրբի արհեստագործության, երկարգործության, անտեսության
զարգացման նպատակուն, չհիմնեցիք գործարանները, լրովա-
գործեցիք երկրի հանքերը, լրարվեցեցիք երկարգործությունը,
զինեգործությունը, շերամապահությունը,— և այլ բոլորը պի-
տի կատարեն ձեռ տեղք օտարազգիները, որովհետև դուք ուշա-
ցար, ինքնահավանությանը կրկնելով զղեղես վաղ է»²: «Մշակե՛ք
խմբագիրը փառարանում էր բուրժուական ձևներեցությունը:
Նրա համոզմամբ այն ազգերը, որոնց մեջ իշխում է առևտրա-
կան դասակարգը, «մարմնով թուլամորթ են լինում», «ուղեղով
անշարժ և քնած դրուժյան մեջ»³:

Այսպիսով, «Մշակե՛ք» ու նրա խմբագիրը տեսեսական զար-
գացման և հարստության գործում վճռական տեղը հատկացնում
էին արտադրողական ուժերի զարգացմանը: Պ. Արծրունին զրտ-
նում էր, որ արտադրության առկա պայմաններում երկիրը
«ուշին չի արդյունաբերում, բայց սպառում է», իսկ դա տանում
է նրա ազատացմանը Արտասահմանյան ապրանքները տի-
րում են ներքին շուկային, որի հետևանքով «մեր փողը հոտում

է արտասահման», «գործարաններ ենք հիմնում, իսկ հանքերը
օրհնակիլի կերպով լենք բովազործում», ուրեմն պետք է զարկ
սալ «հում նյութերի արդյունահանությանը»⁴: Վերահիշյալ տե-
սակետն է հայտնում նաև Ա. Արծրունին «Ինչպես է զարգանում
արդյունաբերությունը» հոդվածում: Բնութագրելով ֆարրիկա-
գործարանային արտադրության զարգացման նախադրյալները,
նա հասարակական զարգացումը անևնում էր նրա անընդհատ
կատարելագործման մեջ. «Ինչպես բնությունը կառավարվում
է անփոփոխ, զրական օրենքներով, այնպես էլ մարդկային հա-
սարակությունը, ինչպես բնական օրենքներով երբեք վերադառ-
նալու չեն կորած հանգած, նախահեղեղյան անասունների ան-
սակները, այնպես էլ կարող չէ մարդկային հասարակության
զարգացումն ուրիշ ընթացք բանել, քան թե հետևողական ըն-
թացքը»⁵:

Մի կողմ թողնելով Ա. Արծրունու տեսեսական օրենքների
և բնության օրենքների գծած զուգահեռների բնությունը, նկա-
տենք, որ նա հասարակական զարգացումը համարում էր որ-
պես մշտական պրոցես նրա կարծիքով, Անդրկովկասի տղն-
անսական կյանքը գտնվում է մի ինչ-որ նախապատրաստական
շրջանում և այդ վիճակը փոխելու համար անհրաժեշտ է նախ
հում նյութերի արդյունահանել, պայմաններ ստեղծել տեղական
արդյունաբերության համար, իսկ այնուհետև հիմնել գործա-
րաններ. «Սովորենք նախ աշխատել և անպետք շիտղևի մեր
երկրի հարստությունները, պարսպենք երկարգործությունով և
զյուղաանեսական ուրիշ ճյուղերով, բովազործենք մեր բազ-
մատեսակ հանքերը, սխիսատելով այս արհեստագործության
ճյուղերը կատարելագործելու գիտությունից մեզ առաջարկված
կատարելագործված միջոցներով»⁶:

Եթև մինչև 70-ական թվականները հիմնական ուշազրուժյու-
նը զարվում էր շրջանառության ոլորտի հարցերին, ապա հե-
տագյույում արդեն արտադրողական ոլորտն էր ստանում առաջ-
նային նշանակություն՝ որպես հարստության ստեղծման բնա-
գավառ «Մշակե՛ք» տպագրում էր հոդվածներ, որոնցում տեսե-
սագիտական սարբեր ուղղությունների զուգահեռներում տեսա-

¹ «Մշակ», 1873, № 19:

² «Մշակ», 1872, № 28:

³ «Մշակ», 1887, № 2:

⁴ «Մշակ», 1874, № 13:

⁵ «Մշակ», 1874, № 14:

⁶ «Մշակ», 1874, № 14:

կան քննության էր ենթարկվում հարստության ստեղծման պրոբլեմները։ Այսպես, Ա. Արասխանյանը քննադատում էր սակարակ կապիտալի գաղափարախոսներին՝ մերկանտիլիստներին, որոնք հարստության ստեղծման աղբյուրը փնտրում էին շրջանառության դրոշմում։ Նա տեղին էր կշռում, որ նման սխալ պատկերացումներն արտահայտություն են գտնում նաև հայ որոշ տնտեսագետներին ու հրապարակագրողներին հայացքներում, որոնք երկրի հարստությունը նույնացնում էին փողի քանակության հետ։ Մինչդեռ մեղսուղի երկրներից նա է ալվելի հարուստ, որը կարողանում է իր սենցամոյլ ալվելի բավականություն տալ հասարակության արտադրերին¹։ Ա. Արասխանյանը համարում էր դրան կարևոր է հասնել երկրի տնտեսական հորստության բարձրացման, նյութական բարիքներ արտադրող շյուղերի զարգացման միջոցով։

Գ. Արժրունին արտադրության զանազան շյուղերի զարգացումը համարում էր արտաքին տնտարի ընդլայնման միջոց։ Նա պահանջում էր հումքի արդյունաբերական մշակումն իրականացնել տեղում։ «Զենք արդյունաբերում, բայց ծախում ենք» հեղձվածում այդ կապակցությամբ նա գրել է. «Մենք մեր երկրից դանառահանում ենք միայն այն, ինչ որ քնոթյունը մեզ տալիս է, առանց որևէ մշակումների, առանց սեփական արդյունաբերության...»²։ Մենք դուրս ենք տալիս և ծախում ենք օտար երկրներին միայն մեր երկրի հում արդյունքները՝ բամբակ, մետաքս, թուղթ³։ Իսկ դեռևս «Հայկական աշխարհում» ապարդյավ ճողպաններից մեկում նա հայեկի թյվառայության պատճաններից մեկն էլ համարում էր այն, որ նրանք միայն «տնում և ծախում են, բայց երբեք արդյունքներ չեն ձուլում»⁴։ Փորձելով նոր պայմաններին համապատասխան գնահատելու անտարական րուստալիսից օտնեսական ու նաստրուկական դերը, Գ. Արժրունին վաճառական զասից պահանջում էր գործել ըստ «ժամանակի նշանի», զրգարել յով վաճառական լինելուց և ձեռնամուխ լինել երկրի ընդհան հարստությունների օգտագործմանը⁵։

Հնամանուս լինելով հայրենական արդյունաբերության զար-

գացմանը, «Մշակը» անդրադարձել է նաև տնտեսական քաղաքականության հարցերին։ Ինչպես արդեն նկատել ենք, թերթը արժրեք առիթներով անդրադարձել է մերկանտիլիստների քննադատությանը։ «Երկիրն այն ժամանակ հարուստ է համարվում,— գրել է Գ. Արժրունին,— երբ նա ալվելի արտահանում է, քան ներմուծում։ Մինչև այժմ մենք մեծ մասամբ ուրիշ երկրներից էինք ներմուծում ապրանքներ..., ուրեմն մեզ մոտ ապրանք էր գալիս, իսկ մեզանից փողը դուրս էր գնում»⁶։ Գուցե և այս ձևակերպումը մի ինչ-որ տեղ հիշեցնում է մանուֆակտուրային շրջանի մերկանտիլիստներին, որոնք արտադրության զարգացումը միջոց էին համարում անտարի ընդլայնման և հարստացման համար։ Սակայն հեղինակը միանգամայն իրավացի կշռել է, որ անտարական սեփով հաշվեկշիռը, վերջին հաշվով, երկրի տնտեսական դրությունը քննադատող ցուցանիշ է և արտահայտում է արտաքին շուկաներից տվյալ երկրի կախվածության աստիճանը։

Մինչև անցյալ դարի 70-ական թվականները Ռուսաստանի արդյունաբերությունն ապահովված չէր արտասահմանյան ըրքանցությունից և, ըստ էության, քաղ մարտերը ենթադրում էին արտաքին անտարի անտա ըարգրակահանություն։ 70-ական թվականներից ռուսական պետությունը սկսեց ձեռնարկել մի շարք մարտային միջոցառումներ, որոնք նպատակ ունին հովանավորելու հայրենական արդյունաբերության զարգացումը։ «Մշակը» անդրադառնալով անցյալ հարյուրամյակի վերջին տասնամյակում Ռուսաստանում իրականացվող հովանավորական քաղաքականության մանրամասներին և նպատակներին, կշռել է, որ բարձր մարտերից տուժում են միայն սպառողները։ «Տեղական արդյունաբերության այս կամ այն ճյուղի զարգացման համար ժողովուրդը վերցնում է իր վրա հայտնի գոհողություն... մինչև որ արդյունագործությունը արմատներ գցի երկրի մեջ..., գործարանատերերը ոչ միայն ընտելանան գործին, այլև էժանացնեն արդյունաբերությունը»⁷։

Սեկ այլ հոդվածում «Մշակը» տեղին ընդգծել է, որ ընչամ մարտերը հասնում էին ապրանքների գնի 40 տոկոսին, սակայն հայրենական արտադրությունը շապահովեցին արտասահ-

1 «Մշակ», 1879, № 89:

2 «Մշակ», 1875, № 28:

3 Գրիգոր Արժրունու աշխատությունները, 5, 1, էջ 171:

4 Տե՛ս «Մշակ», 1890, № 1:

1 «Մշակ», 1890, № 1:

2 «Մշակ», 1895, № 23:

մանյան մրցակցութունից, հատկապես պատրաստի արտադրանքի ներմուծման առումով:

Հայրենական արդյունաբերության հովանավորումն ակնկալող մաքսերի բարձրացման հետևանքով գների աճը մեծ նկատուհան էր բերում արդյունաբերողներին և հաճախ կորցնում իրենց խիստնի զեբբ արտադրության կատարելագործման քնազավտում, «Տեղական գործարանատերը, հույսը կապելով մաքսերի օգնության վրա, չէ մտցնում բոլոր այն կատարելագործությունները, որ անհրաժեշտ են, չէ մտցնում տնտեսության իր գործի մեջ և շատ մեծ տակո շահ է հաշվում իր օգուտի, շնտածելով ապրանքների էժանութիան մասին: Անցնում են տարիներ և փոխանակ տեղական արդյունագործության հաստատ զարգացման, մենք տեսնում ենք արհեստական մի գրույթյուն, որ պահպանվում է արհեստական միջոցներով»:

Գ. Արծրունին երկրի տնտեսական համակարգում կարևոր տեղ է հատկացնում ֆինանսներին: Հետաքրքրական է նրա այն միտքը, ըստ որի երկրի ֆինանսները միայն այն ժամանակ են լավանում, երբ ինքը «ժողովուրդը հարուստ ու արդյունաբերող է դառնում և որ երկրի ֆինանսական լավ գրույթյունը կախված է ոչ թե կառավարության այս կամ այն բազմակողմանի ազբյուրներից ստացվող առատ եկամուտներից, այլ նրանից, թե ինչպես և ինչի վրա է ձախտում տերությունն իր առատ եկամուտները»¹: Ակներն է, որ Գ. Արծրունին առողջ ֆինանսների սակայությունը կապում էր արտադրողական ուժերի զարգացման և ժողովրդի հարստության հետ: Եւ, փաստորեն, դեռավ էր հասարակության բուրժուական զարգացման համար կապիտալի կուտակման և ազգային արդյունաբերության զարգացման հարցը: Այս առումով էլ Գ. Արծրունին քննադատում էր այն սխառեմները, որոնք չէին ձառայում աշխատավորներից գանձված հարկերի արտադրողական ձևով օգտագործելուն:

Վերլուծելով Անդրլուվիայի տնտեսական հարաբերությունները, Գ. Արծրունին տեսականորեն հիմնավորում էր երկրամասի արդյունաբերական զարգացման անհրաժեշտությունը, դրանով իսկ ուղի հարկելով արդյունաբերական բուրժուազիայի սիրապետություն համար:

«Մշակը» կարևոր տեղ է հատկացնում նաև ազրարային հարաբերություններին քննությունը, անզրադատելով արևելահայ նախաեմֆորմյան և ետեմֆորմյան շրջանների հողատիրություն և հողօգտագործման հարցերին: Թերթը հողային հարցի կարգավորումը համարում էր մի կարևոր միջոց ազգի տնտեսական առաջընթացի համար: Այս առումով էլ պատահական չէր «Մշակը» վրա «հողի փոխկալություն» ազդեցությունը: Ք. Սեր-Արքահամյանը ազգի հարատևությունը կապում էր հողի հետ. «Ին ազգություն, որ պարսպում է երկրագործությունը, չի վառում սաստեղական կյանք, այլ կապված է հողի հետ, ...սակակամ երկարատև գոյություն կարող է ունենալ»²: Իսկ Բ. Արծրունին «Ազգի գոյության հիմքը» հողվածում գրում էր. «Ամեն ազգի գոյության հիմքը հողն է: Ուրեմն ամեն ազգի հասարակական գլխավոր ուժը կիրառողությունն է: Մի ազգ, որ հետզհետ կորցնում է իր երկրագործական դասը, նա անհետանալու է որպես ազգություն աշխարհի երեսից»³:

Հողային խնդիրը «Մշակը» համարում էր տնտեսական զարգացման այն կարևորագույն հանգույցներից մեկը, որը մշտապես զբաղեցրել է հասարակական միտքը:

Արևելյան Հայաստանում գյուղացիության ու կալվածատիրական դասի հարաբերություններն ուսումնասիրելու և կարգավորելու նպատակով ցարական կառավարությունը ստեղծում էր հատուկ հանձնաժողովներ, հրապարակում զանազան օրենքներ: Ս. Ղորգանյանը «Մշակի» էջերում ցույց է տվել, որ այդ օրենքները նպատակ էին հետապնդում ֆեոդալական իրավունքի ամրապնդումը և ազնվականական դասի, որպես կառավարության հենարանի քաղաքական-տնտեսական վիճակի բարելավումը⁴:

«Մշակի» մի այլ հեղինակ⁵ Հ. Առաքելյանը, նույնպես այն կարծիքին էր, որ Ռուսաստանին միանալուց հետո էլ Արևելյան Հայաստանում ազրարային հարցը մնում է լուծված և ամենակենտոն հարցերից մեկը: Եւ զա կապում էր այն բանի հետ, որ կառավարությունը, լավատեղյակ լինելով ստեղական իրավունքներին, սոցիալություններին, հողատիրական հարաբերություններին, իրրե սեփականատեր ճանաչից այն անձանց, որոնց

1 «Մշակ», 1889, № 4:
2 «Մշակ», 1887, № 49:

1 «Մշակ», 1887, № 36:
2 «Մշակ», 1878, № 176:
3 Տե՛ս «Մշակ», 1886, № 136:

ձեռքում գտավ հողը երկիրը նվաճելիս և այդպիսով ժամանակավոր տիրապետողը դարձավ սեփականատեր»¹: Այդ ձևով առաջ եկավ բեկերի, մուլաբաղաների և աղալարների մի «հողոր դասակարգ», որոնց ձեռքում էլ կենտրոնացավ հողը: Եվ դա այն դեպքում, երբ վերջիններս ներկայացուցիչները նախկինում հողային որևէ սեփականություն չէին ունեցել:

Խաների հարաբերությունները դեպի շահը մի ինչ-որ տեղ հիշեցնում էին նվերուլայի նախկին տնտեսակազրք²՝ ֆեոդալիզմը: 2. Առաքելյանը դա վերջում էր արտաբուստ ֆեոդալիզմի մասնավորում: Այդ առիթով նա վերաբերվեց և պարսկական տիրապետության շրջանում տիրող հողային հարաբերությունները: Նա ցույց է տալիս, որ շարիաթի համաձայն, ինչպես բնության մյուս հարստությունները՝ օդը, ջուրը և այլն, այնպես էլ հողը, ամբողջությամբ պատկանում էր պետությանը և գտնվում էր շահի տնօրինության տակ: Վերջինս կարող էր օժտել կամ սրան ու նրան պարգևել հողի արտադրության այն մասը, որ պետք է օրենքով հասնի գանձարանին»:

2. Առաքելյանը գտնում էր, որ Պարսկաստանում գյուղացին ճորտ չէ, նա ազատ է և կարող է մի գյուղացի մյուս գյուղը ցնալ և ապրել տվյալ համայնքի համաձայնությամբ: Երկրում հողը համայնական սեփականություն էր, որը պարբերաբար բաժանվում էր գյուղացիների միջև, իհարկե, ստացված արդյունքներից մաս հանելով թե՛ գանձարանի և թե՛ այլ հարկերի համար:

Այնուհետև 2. Առաքելյանը քննության է ենթարկում հողագրագործման մյուլաբաղանի և ֆեոդալական ձևերը: Մյուլաբաղանում էր պետական ծառայության մեջ գտնվող բարձր աստիճանավորներին և ինքնակալի մերձավորներին՝ ժառանգական կամ ցմահ իրավունքով: Վերջիններս չվերագրելով որևէ սեփականություն կապի իրավունք, 2. Առաքելյանը ճիշտ է նկատում, որ «մյուլաբաղարը չի համարվում տեր կամ տիրապետող գյուղի հողի և բնակիչների այն մասի վրա, որ սրված է իրեն իրեն մյուլը, այլ միայն նա մասնակից է այն եկամտին, որ բերում է այդ գյուղը կամ հողը»³: Իսկ դա կազմում էր գյուղատնտեսական արտադրանքի 3/30 մասը:

Նախաեֆորմյան Արևելյան Հայաստանի տնտեսական հարաբերությունների հայտնի հետազոտող Բ. Շոպենը մյուլաբաղաներին դիտում էր որպես «գանձարանի եկամտանքի հասարակ մասնակիցներ»⁴: Նկատենք, որ 2. Առաքելյանցի վրա նկատելի է Բ. Շոպենի հայացքների ազդեցությունը, որից կատարում է վկայակոչումներ:

Բիուլը հողագրագործման այնպիսի ձև է, որը շահի հատուկ ֆուլլալիզմից արտանման ընթացքում արժանավորների ցմահ հնարավորություն է տալիս յուրացնել տիրուկական հողերից ստացվող եկամտանքի մի մասը, որպես այստասովորաբար: 2. Առաքելյանը ճիշտ է նշում, որ ֆեոդալները հողը չէր տնօրինում, չունեի այն օտարելու իրավունք: Չնայած հեղինակը չի տալիս մյուլի և ֆեոդի բովանդակության ամբողջ վերլուծությունը և ժխտում է ճորտատիրության առկայությունը Արևելյան Հայաստանում, բայց ուշագործության արժանի է նրա այն միտումը, որ այդ կատեգորիաներն արտահայտում են ֆեոդալական շահագործման հարաբերություններ:

Վերջին հաշվով, և՛ ֆեոդալ, և՛ մյուլը ֆեոդալական իրավունքի իրացում են, մի տարբերությամբ, որ եթե դասական ֆեոդալիզմը ենթադրում էր հողի նկատմամբ մասնավոր սեփականության առկայություն, ապա այստեղ այն ներկայանում է որպես գյուղացիության շահագործման իրավունք: Պրոֆեսոր Մ. Եգանյանը ճիշտ է նկատում, որ եթե Արևմուտքում «մասնավոր սեփականության իրավունքը պայմանավորում է գյուղացիների շահագործման հողատիրոջ իրավունքը, այստեղ շահագործման իրավունքը պայմանավորում է հողին տիրելու իրավունքը»⁵:

Ցարական կառավարությունը հետագայում մի շարք նոր օրենքներ հրապարակեց (20 ապրիլի և 28 դեկտեմբերի 1847 թ., 8 հուլիսի 1852 թ.), նպատակ ունենալով Արևելյան Հայաստանում վերջնականապես կարգավորելու գյուղացիների և կալվածատերերի հարաբերությունները: Այդ օրենքները, սակայն, չուժեցին կնճառը ճարգերը և, ինչպես նկատում է Ալեկսանդր Արասյանյանը, ոչ միայն չիֆուլազցրին գյուղացիության ֆեոդալական շահագործումը, այլև, բեհհասիառակն, կատարվող պար-

1 «Մշակ», 1898, № 32:

2 «Մշակ», 1892, № 32:

1 Տէ՛ս Մ. Ն. Եգանյանի «Аграрные отношения в Армении до и после ее присоединения к России» գրեթե ամբողջ գրեթե ամբողջում, էջ 57—58:

տավորութիւնների օրինականցումը գյուղացիութիւնը որեւց անտեսական ավելի ծանր կացութիւն մէջ, ուժեղացավ նրանց անտեսական կախիժամութիւնը, որը, ըստ էութեան, տանում էր զեպի ճորտատիրական հարաբերութիւնների արմատավորումն ու ամրապնդումը¹:

Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի օրենսդրական վերացումը արդուներ էր մի կողմից կապիտալիստական հարաբերութիւնների զարգացման, մյուս կողմից՝ գյուղացիական շարժումների աշխուժացման: Ճորտատիրական իրավունքը երկրում վերացվեց, բայց գյուղացիութիւնը անտեսական վիճակը մնաց նույնը: Իրավագիտական ազատ ճանաչված գյուղացին, փաստորեն, զուրկ էր անտեսական ինքնորոշութիւնից: «Մշակը» դրականորեն գնահատելով ուժեղորմը, միաժամանակ քննադատարար էր մտածելում նրա թերութիւններին: Ռեֆորմի բացասական հետեանքների մասին «Մշակին» էջերում հանդես են եկել նաև Գ. Արծրունին, Ս. Գաղապանը, Ա. Քալանթարը, Ս. Կոբզանյանը և ուրիշներ: Նրանք նշում էին, որ ճորտատիրութիւնը վերացումից հետո առաջ գյուղացիներն ընկան հսկայական պարտքերի տակ՝ կապված հողերի ետգծման ու վաշխառուական կապիտալի աշխուժացման հետ:

Ս. Գորգանյանի կարծիքով, 1870 թվականի մայիսի 14-ին հրատարակված «Պոլտոներիս» հայ գյուղացու համար գրեթե նույն սոցիալ-անտեսական հետեանքներն ունեցավ: «Երկական ուժեղորմը բոլորովին բացասական նշանակութիւն ունեցավ մեր երկրի համար. նա աճեցրեց Անդրկովկասի բեզերի տարրը և արտոնագիրը նրանց զենք տվեց հողից, իրավունքից զուրկ գյուղացուի գնմ գործելու համար, իսկ նրանց՝ բեզերի կալովածների սամանների ուլ որոշելը (размежевание) միշտ պատճառ է եղել պետական հասարակական հողերի ամենաանխիղճ կերպով հափշտակելուն»²:

Ա. Քալանթարը «Կալովածական խնդրի արկիթով» հողովածում նշում է այն բացասական հետեանքները, որ ունեցավ «շինական» ուժեղորմը համայնական հողատիրութիւնը վրա: Մինչդեռ Արևմտյան եվրոպայի նոր իրավաբանները (Հենրի Մեն, Լավելլե, Նասստե) և մասնավորապէս առաջինների անդրադառ-

նալով կյանքի և հաստատութիւնների ձևերին, գտնում են, որ «համայնքը նույնպէս հարգելի է (զուցն է գերազանց է), որչափ և մասնավոր սեփականութիւնը սկիզբը»³:

«Մշակը» քննադատում էր առաջին օլովոնաֆիլներին, որոնք համայնական հողատիրութիւնը ձևեր դիտում էին որպէս «սոցիական ազգին» յուրահաստակ ձև, նույնիսկ ենթադրելով, թե Պետաստանը իր անտեսական և բարոյական նոր ձևերով պետք է վերանորոգի ամբողջ եվրոպայան⁴: Ա. Քալանթարը հասցնում էր գյուղի և գյուղական իրավունքի ուսումնասիրութիւնը նվիրված հողովածում վիճակում է, որ հայկական գյուղը դեռ շատ մասնորով շարունակում էր պահպանել հին նիստ ու կացը, հողատիրութիւնը համայնական սկզբունքը, որը եվրոպական երկրներում և հատկապէս Անգլիայում ենթարկվել էր խոր փոփոխութիւնների, իր տեղը զիջելով անձնական սեփականութիւնը: Գ. Արծրունին նույնպէս համայնքը դիտում էր որպէս հասարակութիւնը զարգացման ցածր աստիճանի վրա կանգնած բոլոր ազգերին հասուկ անտեսանալ: Սակայն նա համայնքը բարձրացման անտեսական հիմքերի բացատրութիւնը հարցում կանգնած էր սխալ տեսակետի վրա, կապելով այն ազգաբնակչութիւնը խտութիւնը հետ: «Նախհետեան ազգաբնակչութիւնը շատ անալով,— գրել է նա,— և ժողովուրդը անտեսապէս և մտավորապէս զարգանալով, համայնքի հողի սեփականութիւնը ձևեր կորչում էր և նրա տեղը հետագայում բռնում էր գյուղական անձնական հողատիրութիւնը»⁵:

Ընդհանուր առմամբ, «Մշակը» դրական վերաբերմունք ուներ համայնական հողատիրութիւնը ձևեր նկատմամբ: Ընդունելով, որ այն շարունակում է պահպանվել Ռուսաստանում և Եվրոպայի խտում, Ա. Քալանթարը եզրակացնում էր, որ հասարակական հողերի վրա հողգործութիւնը, հասարակական բոլոր գործերում բնդհանուր ու համայնքային իրավասութիւնը, հասարակական շինութիւններ (փողոց, կամուրջ և այլն) կառուցելուն յուրաքանչյուրի մասնակցութիւնը ժողովրդի կյանքին տալիս են բարոյական վեհութիւն, կազդուրում են նրա անձնական և ընդհանուր շահերի համեքաշինութիւնը:

1 Տե՛ս «Մուրե» 1893, № 4, էջ 516:

2 «Մշակ», 1886, № 136:

1 «Մշակ», 1881, № 150:

2 Նույն տեղում, № 101:

3 Նույն տեղում:

4 Տե՛ս «Մշակ», 1879, № 59:

«Մշակի» մի շարք հեղինակներ առաջադրում էին գյուղական հարաբերությունների ուսումնասիրության պահանջը: Երանք գտնում էին, որ վերջինս հնարավորություն էր պատմության և այլ երկրների տնտեսական զարգացման փորձով ճիշտ ուղղություն տալ համայնքի ժամանակակից սկզբունքներին:

Ա. Քայանթարը նկատում էր, որ կապիտալիստական զարգացման պրոցեսը հնագույն թաշաղում է հողատիրության համայնական սկզբունքները: Նա առաջարկում էր այն հարմարեցնել տնտեսական զարգացման երթ ձևերին, կարճելով, թե համայնքը ենթակա է հարատևության: Եթե այժմ համայնքը չի համապատասխանում մի քանի նոր պահանջներին, — գրել է նա, — դա չի նշանակում, որ համայնքը անպիտան ու վնասալից է, այլ այն, որ պետք է համայնքը հարմարեցնենք այդ նոր պահանջների համեմատ»¹:

«Մշակի» հեղինակները, իհարկե, չլին բացարձակացնում համայնքի հաստատությունը և նկատում էին նրա ինչպես բացարձակ, այնպես էլ դրական կողմերը: Ք. Արծրունու կարծիքով, համայնքը լինելով գյուղացու համար մշտական ապրուստի միջոց, միաժամանակ խոչընդոտում է հողերի առ ու ծախիս և, որ գլխավորն է, հակազդող նա է գյուղական պրոլետարիատին կազմավորման համար: Համայնքի բացասական կողմերից Ք. Արծրունին հատկապես շեշտում էր այն, որ նա չի տանում արտագրողական ուժի բարձրացմանը²:

Ինչպես արգին նկատել ենք, մարդկության պատմությունը Ք. Արծրունուն ներկայանում է որպես անհատականության զարգացման պատմություն: Անհատի ձգտումները նա բնութագրում էր որպես տնտեսության նորմալ գոյության պայման: Այս առումով էլ մտանավոր սեփականությունը նրան ներկայանում էր որպես տնտեսական ձևերի կատարելագործման բնական պայման: «Այսպես է միշտ ստեղծված մարդը, որ անձնական շահը միշտ ավելի դորեղ, դրիչ է աշխատանքի և կատարելագործության, քան թե հասարակաց շահը, որին ըմբռնելու, որին անկեղծ ծառայելու համար հարկավոր է անհամեմատ ավելի բարձր մտավոր և բարբառական զարգացում ունենալ»:

Ք. Արծրունին, ի վերջո, հանգում է մի եզրակացության, որ ենթադրում է զարգացման մի ինչ-որ միջին գիծ, իր մեջ սինթեզելով համայնական և մասնավոր տնտեսականների դրական կողմեր (իրը ինչպես Ֆրանսիայում, Եվրոպայում, Ավստրիայում և Գերմանիայում), որոնք սիրանց փոխադարձ պահատություններով և արժանավորությամբ միմյանց հավասարակշռում են ... միջը մյուսին պահպանում են»³:

Համայնական հողատիրության հարցերը քննության է ենթարկել նաև Ս. Ղորանյանը: Նա գյուղացիական կյանքի ուսումնասիրության, մեր երկրի հողատիրության և երկրագործության տմի ամփոփ մշակված պատմության բացակայության հետ էր կապում տնտեսական զարգացման մեջ տեղ գտած թերությունները: Հեղինակին թվում էր, թե դա է այն պատճառներից մեկը, որ տնտեսական զարգացումը շեղվել է կանոնավոր բնթացքից և «այժմ, երբ նահապետականության փոխարեն սկսում է ներս սողալ կիզո՞ր թաղաբակրթությունը, համայնական հողատիրությունը սկսում է աստիճանաբար թուլանալ, շեղվել իր ճանապարհից»⁴:

Անընդունալով համայնական հողատիրության առանձին մանրամասներին, Ս. Ղորանյանը նկատում է, որ խախտվել են նրան հատուկ սկզբունքները, և դա կապված է հողերի բաշխման կարգի հետ: Մի զեպքում գյուղը իր տրամադրության տակ ունենալով համապատասխան քանակության հող, հողերի վերաբաժանման ժամանակ հաշվի է առնում համայնքում կատարված փոփոխությունները, իսկ հաճախ էլ այս կամ այն քնտասիքին հասկացրած հողը առանց որևէ փոփոխության մնում է վերջինիս անօրինության տակ, որը «շատ վատ հետևանքներ է ունենում մոլորվորի տնտեսական զարգացման գործում, նպաստելով գյուղական պրոլետարիատի կազմակերպությանը»⁵:

Ս. Ղորանյանը հողերի բաշխման հավասարության սկզբունքի խախտման պատճառներից մեկն էլ համարում էր կառավարության ուժեղացումը:

Հայտնի է, որ գյուղացին իրավունք չունեք վաճառելու իր

¹ «Մշակ», 1881, № 101:

² «Մշակ», 1886, № 57:

³ Այն տեղում:

¹ «Մշակ», 1881, № 153:

² Տճ՝ ա նույն տեղում, № 101:

տրամադրության տակ գտնվող համայնական հողի բաժինը, սակայն հաճախ նա մի հնարք էր գտնում իր հողից օգտվելու իրավունքը վաճառելու համար: Այսպես, գյուղացին հողի վրա ստեղծում էր այդի, ու թեև կրկին բաժանման ժամանակ հողը տրվում էր նախկին տիրոջը, բայց արդյունքները յուրացնում էին ունեորինները: Ինչպիսի Ս. Դորգանյանն է նկատել, վերջիններն մուրհակ էին տալիս գյուղացուն, որ իրը «փող է պարտ առել», և ժամանակը լրանալուց հետո մուրհակի տերը սեփականացնում էր գյուղացու այգին և հողը¹:

Վերջ նշված դիտողությունները, անշուշտ, վկայում են այն հակասությունների մասին, որ առկա էին ետեղֆորմյան գյուղի համայնքի ունեոր և շունեոր անդամների միջև, հանգամանք, որ մատնացույց էր անում գյուղացիության դասակարգային շերտավորման պտոցներ²՝ ճանգնեցնելով մի կողմից գյուղական բուրժուազիայի առաջացումը, իսկ մյուս կողմից՝ աղքատ գյուղացիության պրոլետարականացմանը:

Կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով գույքային անհավասարություն բեռնացումը, ապրանքադրամական հարաբերությունների հետագա անջ, առևտրական ու վաշխատական կապիտալների ազդեցությունն արագացրին համայնքի քայքայման պրոցեսը: Այդ իրողությունը տեսնում էին նաև «Մշակի» հեղինակները: Նրանք այն կարծիքն էին հայտնում, թե համայնքը, ինքնբարեկրթյան, ունենալով չլատ համակրելի կողմեր, իրր ժողովրդական մեծամասնության ապահովության մի գրավական, կարող է խոչընդոտ չհանդիսանալ երկրի արդյունաբերության աճման և ընդհանուր առնուստական զարգացման, իսկ ի՞նչ նա ներկայից պայմաններում ունի աննպատակ կողմեր, պետք է նա բարձրորի այնպես, որ պահպանելով իր հիմնական լուծվույթը, ազատ լինի վերագրած պակասություններից³:

«Մշակի» հայեցողությունը չէր ակնկալում Գերցենի, Չերնիշևսկու կամ Նարոդնիկների՝ համայնքը որպես սոցիալիստական հասարակության պատրաստի բջիջ դիտելու նկատառումները: Թերթի էջերում այն ավելի շուտ ներկայանում էր որպես մի դեմոկրատական կազմակերպություն, որը, իրը, թույլ կատար

գյուղացիությանը կապելու հողի հետ, նրան պաշտպանելու ագրատացումից և պրոլետարացումից:

Սկզբնափինները համայնքը դիտելով որպես զուտ ուսուկան երևույթ, միաժամանակ այն համարում էին հեղափոխությունը կանխելու հաստատություն: Թերես այդ պատճառով էլ ցարական կառավարությունը համայնքի նկատմամբ վարում էր պաշտպանողական քաղաքականություն, սահմանափակելով գյուղացիության համայնքից դուրս գալու պրոցեսը: Հենց այս երևույթի թյուրբերմամբ պետք է բացատրել Ա. Քալանիարի լիբերալ դրվատանքը կառավարության քաղաքականությունը, որն ի տարբերություն Անգլիայի, ուր գյուղացիների հողազրկումը կատարվել է բռնի ձևով, իրը նպատակ ուներ կալվածատերերի և գյուղացիների միջև հաստատել այնպիսի հարաբերություններ, որոնք չպիտեղով առաջինին, չվնասեին և մշտնին⁴:

Ինչպես տեսնում ենք, «Մշակը» համայնքը դիտում էր որպես մի կարևոր հաստատություն: Երկ հեղմվացումը՝ հնարավորություն կտար բարելավելու գյուղացիության տնտեսական վիճակը և նրան փրկելու պոլիտարացումից: Սակայն գյուղը կանգնում էր կապիտալիստական զարգացման ուղու վրա: Գյուղացիության տնտեսական վիճակն էլ ավելի էր վատթարանում ոչ միայն 1870 թվականի «Պոլմենիայի» բուրժուական բնույթի, այլ նաև հենց բուն տնտեսության կապիտալիստական փոխակերպության հետևանքով:

Դեռևս 1840-ական թվականներից ավելանում էր գյուղացիների պահանջարկը փողի նկատմամբ: Դա կապված էր պետական գյուղացիներից գանձվող մթերքային բահրան դրամականով փոխարինելու հետ: Հարկերի ու բահրանների հետագա ավելացումը, սակավահողությունն ու գյուղատնտեսական մթերքների իրացման դեռևս սահմանափակ հնարավորությունները բարենպաստ պայմաններ ստեղծեցին վաշխատական կապիտալի աշխուժացման համար, որն ուղեկցվեց գյուղացիության շահագործման, նրա տնտեսական քայքայման ու տարագնացության ուժեղացմամբ:

Հայաստանում մեծ էր վաշխատական կապիտալի տնտեսական գործունեության ոլորտը: Դա կապված էր վարկային հաստատությունների բացակայության հետ: Թերես դրանով է

¹ Տե՛ս «Մշակ», 1886, № 57:

² «Մշակ», 1894, № 12:

³ Տե՛ս «Մշակ», 1879, № 60:

բացատրվում այն, որ «Մշակը» հաճախակի հողվածներ էր սպաղարում վաշխառուական կապիտալի և նրա տնտեսական հետևանքների վերաբերյալ, առաջադրելով գյուղը փրկելու մի ամբողջ ծրագիր: Քերթի խմբագրության համոզմամբ վաշխառությունը երկրի հասարակական այն շարիքներից մեկն է, «որոնց դեմ ամենայն ուժով պետք է մարտնչի, որովհետև այդ շարիքը փորում է ժողովրդի տնտեսության հիմքերը»¹: Սակայն կարևոր է ոչ այնքան վաշխառության բացասական ազդեցության մեկնությունը, որքան գյուղատնտեսության և գյուղացիության վիճակը բարվարելու «Մշակի» առաջադրող միջոցառումների ճեմնությունը: Այս տեսակետից բնորոշն այն է, որ քերթի աշխատակիցները հայ գյուղի վերելքի հիմնական պայմանը համարում էին արտադրական կոոպերացիաների և վարկային հաստատությունների հիմնումը: Նրանց կարծիքով, բացի այն, որ վարկային հաստատությունները պետք է վերացնեին վաշխառությունն ու կաշառակերությունը, այլև գյուղացիներին հնարավորություն կտային զենկ նոր հողեր և վերացնել սակավահողությունը: Եվ այսպես, տասնամյակներ շարունակ «Մշակը» գրում էր վարկի՝ որպես գյուղացիության դրությունը բարելավելու կարևոր միջոցի մասին, քերտ շինողներով, որ վարկային հաստատությունները, ըստ էության, պետք է դառնային գյուղական բուրժուազիայի տնտեսական կազմակերպությունները:

«Մշակում» շատ է զրվել ընկերակցական ուժի օգտակարության մասին: Գ. Արծրունու կարծիքով, էթն նման ընկերակցությունները դրամատեր դասակարգերի մոտ շատ քն քիչ առկա են, ապա մշակների մոտ գոյություն չունեն: Մինչդեռ հարկավոր էր «վերջապես մտածել և աշխատանք, արդյունաբերող ամբոխին օգնելու, նրա մեջ էլ ընկերակցություններ մտցնելու»²: Սակայն Գ. Արծրունին ակնկալում էր ավելի հեռահար նպատակներ: Նա ենթադրում էր մարդկանց տարբեր խմբերին, դասակարգերին դնել միատեսակ գոյության մեջ, դրանով իսկ բուրժուազիայի տնտեսական ուժին հարկազրկել կոոպերատիվ, վարկային հաստատությունները՝ որպես օգյուղական պայքարում» հավասարազոր զենքի: Գ. Արծրունին առաջարկում էր

կոոպերատիվ վարկային հաստատությունները կազմակերպել Շուշե-Գեղիչի և Ֆերդինանտ Լասսալի առաջադրած սկզբունքներով, որոնցից առաջինը հիմնված է «խրեոդոտության», իսկ երկրորդը՝ պետության կողմից մատչելի տոկոսներով վարկավորման զաղափարի վրա: Նկատենք, որ Ռուսաստանում ևս 70-ական թվականներից սկսած մանր գյուղացիական վարկի կազմակերպման մասին շատ էր խոսվում: Այսպես, տնտեսագետ Ա. Վասիլիևիովը «Շողային մանր վարկ» աշխատության մեջ, որը լույս է տեսել Պետերբուրգում, 1876 թվականին, նպատակ ունենալով կանխելու կապիտալիզմի զարգացումը և գյուղացիության պրոլետարացումը, ժողովրդական վարկը համարում էր ազրատության վերացման և «բնդհանուր ասոցացիոն հարցի ճյուղերից մեկը»³:

Գյուղացիության դրության բարելավման, նրա բարուական, մտավոր և նյութական առաջադիմության համար «Մշակի» ստանձին հեղինակները պահանջում էին հողը զենկ անմիջական արտադրողի տրամադրության տակ: Ուրիշ հեղինակներ էլ պահանջում էին ստեղծել հասարակական շտեմարաններ: Ոմանք էլ ելքը որոնում էին հասարակական գանձարանների ստեղծման, Ռուսաստանի օրինակով զեմսովային կազմակերպությունների մեջ և այլն և այլն: Սակայն այդ բոլորը կարող էին արագացնել միայն գյուղի կապիտալիստական զարգացումը:

«Մշակը» տնտեսական զարգացման երաշխիքը մի մեծ մասով էլ կապում էր գյուղական մտավորականության հետ, զբանեցվելով, որ վերջինս մեծ ֆունկցիա ունի կատարելու նա պետք է «նյութեր ժողովի» և դրանց հիման վրա համապատասխան ուղղություն տա գյուղի տնտեսական զարգացման ընթացքին:

Ընդհանրապես մտավորականության պատմական առաքելության հարցում «Մշակի» հեղինակների վրա նկատելի էր նարդիելիության ազդեցությունը: Պատահական չէ, որ Բ. Մուրադյանը «Մոռացված պարտքը» հողվածի բնաբան էր բնարդի Ա. Ն. Էնգելզարդի խոսքերը. «Ինտելիգենտ մարդը հարկավոր է երկրին, հարկավոր է և գյուղացուն: Նա հարկավոր է, որովհետև հարկավոր է լույսը, խավարը հեռացնելու համար: Ինտե-

¹ «Մշակ», 1896, № 20.

² «Մշակ», 1876, № 15.

³ А. Голубев, Книзь Александр Владимирович Васильчиков (биографический очерк), С. Петербург, 1882, стр. 102.

լիզենտ մարզիկ մեծ գործ ունեն կատարելու: Երկիրը նրանց սպասում է և ամենքի համար տեղ կգտնվի»¹:

Ս. Ղորղանյանը կշտամբում էր մտավորականությանը, որը «խորշում է գաղափարից և մեր գաղափարական կյանքը մնում է նույն վաղեմի անմշակ գրության մեջ»², Հենց այդ առումով էլ Գ. Արծրունին խոսելով «Вестник Европы» ամսագրում ապագրված Ելեզրինի հոդվածների մասին, առաջարկում էր հայ գրականությունն ուղղել դեպի «շեղգրինյան ռեալիզմի ուղին», որպես ստեղծագործական մի ամբողջություն, որը «ներկայաշնուն է ուսուցիչ գյուղական մի վերջացրած, մի կատարյալ պատկեր»³: Մի այլ հեղինակ գտնում էր, որ ուսուսական և հայկական կյանքը շատ ընդհանուր կետեր ունեն, ուստի անհրաժեշտ է հասարակությանը ծանոթացնել զարգացման այն խնդիրներին, մտքի այն թանկագին արտահայտություններին, որոնք առաջադրվել են վաթսուսական իմպականներից և, հատկապես, Բելինսկու, Գորբոլյուբովի, Նեկրասովի, Չերնիշևսկու, Ռուսկոնսկու, Պիսարևի, Միխայլովի, Տուրգենևի, Ելեզրինի ստեղծագործություններում⁴:

«Մշակի» համար քննությունից էր կապիտալիստական հիմունքներով գյուղատնտեսական ձեռնարկությունների հիմնումը, որը, նրա կարծիքով, լայն ապարդիկ կրացիոն մտավորականության գործունեության համար: Իհարկե, «Մշակը» բնավ էլ միտում չուներ էնգելզարդի արտեւային տնտեսության մեջ տեսնելու սոցիալիստական տարրեր: Նրան ավելի շատ գրավում էր այդ միջոցառման գործնական նկատառումը, այն է՝ նպաստել գյուղացիական տնտեսության առաջընթացին: Էնգելզարդին թվում էր, թե խոշոր արտեւային տնտեսությունների միջոցով հնարավոր կլինի հասնել արտագրության արդյունավետության ավելի բարձր աստիճանի՝ մեքենաների կիրառման և աշխատանքի բաժանման հիման վրա⁵: Ինչ իսոթ, այս գաղափարը ստացավոր էր, քանի որ մանր գյուղացիական տնտեսությունների փոխարեն առաջադրում էր հիմնել խոշոր տնտեսություն-

ներ: Սակայն, այդ միջոցով գյուղը շերտավորումից փրկելու գաղափարը լուր ուսուսպիս էր: Կապիտալիստական հարաբերությունների զարգացումն ինքնին ավելի շուտ նպաստում էր վերջինիս:

Գյուղի բուրժուականացումն առաջ բերեց սոցիալական մի նոր երևույթ՝ տարագնացությունը: Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը զուգակցվում էր գյուղացիության սոցիալական շերտավորման ուժեղացման: Գյուղական բուրժուազիայի ձեռքում հողերի կենտրոնացման, վարակական հարաբերությունների ուժեղացման հետևանքով գյուղացիության մի հսկայական մասը զրկվում էր արտագրության միջոցներից, դիմում տարագնացության՝ դեպի երկրամասի արդյունաբերական կենտրոնները և նրա սահմաններից դուրս: Գրիգոր Արծրունին բացասական վերաբերմունք ուներ այս իրողության հանդեպ. «Եվ նա (գյուղացիությունը— Ի. Ս.) անզուգար և անզուգար զաղթում է քաղաքները, թողնելով ապարդյուն երկրագործական պարապմունքը, հաշտվելով մի անբնական հրեշավոր զգացմունքի հետ, ընտանիքի և հայրենիքի հալիտեղանակ կորուստը»¹: Տարագնացությունը շանջատելով երկրամասի տնտեսական զարգացումից, նա առաջարկում էր բոլոր հնարավոր միջոցներով խափանել գյուղից քաղաք բնակչության հոսքը: Ինչպես և պետք էր ենթադրել, տարագնացության հիմնական պատճառը «Մշակը» համարում էր սակավահողությունը և բնակչության շատանալը, որը համայնքի մի մասին դարձնում էր ավելորդ:

«Մշակը» երկրագործ դասակարգի հետ էր կապում ազգի հարատևությունը, այդ պատճառով էլ աշխատում էր խափանել գյուղից դեպի քաղաք այդ շարժումը, այնպես անել, որ տարագնացները կենտրոնանային գոնե երկրամասում: Դա, Ս. Ղորղանյանի կարծիքով, «պետության շահերի, պետության ամբողջության համար վնասակար չի լինի, որովհետև ուժերը չեն կորչում, այլ մնում են միևնույն կառավարության սահմաններում»²:

«Մշակը» տարագնացությունը պայմանավորող գործոններից

¹ «Մշակ», 1885, № 104:

² Նույն տեղում, № 132:

³ «Մշակ», 1887, № 5:

⁴ Տե՛ս «Մշակ», 1885, № 50:

⁵ Տե՛ս՝ А. Н. Энгельсарт, Из деревни. 12 пвсем, М., 1960, стр. 294.

¹ «Մշակ», 1872, № 43:

² «Մշակ», 1886, № 57:

կը համարում նաև գյուղատնտեսության թույլ զարգացումը։ Այս առումով էլ թերթը կարևոր է համարում երկրագործական կատարելագործված արտադրության ձևերի օգտագործումը, երկրագործական զարգացման ինչպես էրտանեխով, այնպես էլ ինտենսիվ ուղիների կիրառումը։

Գյուղատնտեսության զարգացման աստիճանն անհասարակ կախված է տվյալ երկրի արտադրողական ուժերի զարգացումից, որը և պայմանավորում է, թե յուրաքանչյուր կտոր հողը որքան հարստություն կարող է տալ, որքան ազգաբնակչություն կարող է կերակրել։ Ա. Արասխանյանի կարծիքով, Ֆերմեռական տնտեսությունը լայն հնարավորություններ է ստեղծում գյուղատնտեսության մեջ մերենաների կիրառման, գիտության նվաճումների օգտագործման ու հողի մշակության նոր սխեմաների իրացման համար, գործոններ, որոնք վերջին հաշիվով նպաստում են աշխատանքի արտադրողականության բարձրացմանն ու գյուղատնտեսական մթերքների աճելացմանը։ «Մշակչ» շփոխելով փոքր տնտեսությունների օգտակարությունը, նեխապատվությունը, սակայն, տալիս էր խոշոր տնտեսություններին, որտեղ աճելի մեծ հնարավորություններ են ստեղծվում արտադրության ինտենսիվացման համար։

Վերջ շարադրվածից հետևում է, որ «Մշակչը» տարազնացության պատճառների և դրանց կանխման հարցերում միշտ տեսակետ չունի։ Թերթի աշխատակիցները չլին նկատում, որ դա հենց ազգաբնագրամական հարաբերությունների զարգացման անխուսափելի հետևանքն է։ Տարազնացությունը վկայում էր ազրարային ղեկրնակչության ստեղծություն, աշխատուժի շուկայի կազմավորման մասին, որպես կապիտալիստական զարգացման հետևանքի և միաժամանակ նրա պայմանի։

Տարազնացության վերացման «Մշակի» առաջադրած հաջող գործնական միջոցը տնայնագործության զարգացումն էր. «Ինչպես հողը, այնպես էլ տնային արդյունաբերությունը կապում է գյուղացուն իր շրջանի հետ, ին թողնում գյուղական դասակարգին ցրվելու, հեռանալու ղեպի քաղաքները, նա աշխատանք է տալիս հազարավոր պարապ մարդկանց, նա աղատում է ձմեռվա անզորությունից գյուղացուն, և այսպիսով մի տեսակ կանոնավորություն մտցնելով նրա պարապուժների մեջ՝ մատակարարում է նրան կենսական ապահովության մի նոր, լրացուցիչ միջոց»։ Հեղինակի կարծիքով, երկրամասում կապի-

տակների պակասությունը և բնական հարստությունների առկայությունը բարենպաստ պայմաններ էին տնայնագործության զարգացման համար, որը կրավորեի գյուղացիների անտեսական կյանքը» և կիտրելչոտի գյուղական պրոլետարիատի առաջացմանը¹։ Այդ մասին գրել են նաև «Մշակի» այլ հեղինակներ², որոնք ընդունելով կապիտալի հետ մրցության զոժարությունը, միաժամանակ առաջարկում էին տնայնագործներին ապահովել էժան հումքով, բացել խնայողական դրամարկներ, կատարելագործել արհեստները և այլն։

Զարգացող կապիտալիստական հարաբերությունները հետազհետև փոխում էին գյուղացիության նիստ ու կացը։ Գյուղացիական տնտեսությունը օպրանքային բնույթ էր ընդունում։ Այս հանգամանքը նպաստում էր այնպիսի գյուղատնտեսական կուլտուրաների մշակությունը, ընդլայնմանը, որոնք կապված էին շուկայական պահանջարկի հետ։ Հենց այս հարցերի թրևնություն է նվիրված Ա. Արասխանյանի «Յորենի տնտեսուրը Անդրկովկասում» հոդվածաշարում։ Տնտեսագետն արձանագրում է այն փաստը, որ մեծաբքի, նալլիի, մարգանցի և մի շարք այլ ապրանքների կողքին 1880-ական թվականների կեսերին միջոցային շուկայում երեաց նաև Անդրկովկասի հացահատիկը։ Եթե եղիպտացորենի արտահանությունը սկսվել էր 1860-ական թվականների վերջերից, ապա ցորենի մուտքը միջոցային շուկա բոլորովին նոր իրողություն էր և սկիզբ էր առնում 1885 թվականից և, չնայած այդ կարճ ժամանակամիջոցին, այն ընդունել է բազմակախին մեծ չափեր։

Այդ երևույթը, ինչպես նկատել է Ա. Արասխանյանը, երկամասի տնտեսական կյանքում ունեցավ լուրջ հետևանքներ։ Ամենից առաջ դա անդրազարձավ Անդրկովկասի ներքին շուկաներում գյուղատնտեսական կուլտուրաների ղեկերի բարձրացման վրա, որն, անշուշտ, արդյունք էր նվիրողական շուկայի արդեցության։ Ա. Արասխանյանի կարծիքով, հացահատիկի բարձր գների վրա կարող է ազդել նախ անդրկովկասյան երկաթուղու ստեղծությունը և ապա՝ եվրոպական շուկաներում հնդկական և ամերիկյան հացահատիկային կուլտուրաների մրցակցությունը։ Այս առումով էլ տնտեսագետը երբևիցս նշում

¹ «Մշակչ», 1886, № 125.

² Տե՛ս «Մշակչ», 1886, № 94, 131, 1894, № 140, 1892, № 53 և այլն.

է, որ երկրամասի ներքին շուկաներում հացահատիկի բարձր գինը երաշխավորում է մշտապես, որն իր բացասական կողմերի հետ միասին, խթանում է գյուղատնտեսության բոլոր ճյուղերի զարգացմանը:

Տնտեսագետի տվյալներով 1885—1887 թվականներին ընթացքում երկրամասից միջազգային շուկա էր ուղարկվել ավելի քան 6 միլիոն փոփ ցորեն ու գարի, որը տեղական գներով կազմում էր ավելի քան 4200000 ուրլի: Դա պետք է նկատենք նահապետական բնատնտեսության բայթայմանն ու գյուղացիական տնտեսությունների փոխակերպությանը: Հենց այս խնասուռով Ա. Արասխանյանը հացի գների այս հեղափոխությունը միաժամանակ համարում էր հեղափոխություն սոցիալացիների կենցաղյան» մեջ¹:

Հացահատիկի առևտրի վերելքը, տնտեսագետի կարծիքով, պետք է նպաստեր շրջանառության ոլորտում գործող կապիտալի աշխուժացմանն ու նրա շափերի մեծացմանը, նախկինի համեմատությամբ ձեռք բերելով ճկունություն ու կենսունակություն: Այդ մասին են վկայում Քիֆլիսի առևտրական բանկի տվյալները: 1885 թ. հուլիսի 1-ի դրությամբ բանկի ժամկետային մուծումները կազմել էին 1451112 ուրլի, իսկ ընթացիկ հաշիվներում այդ գումարը հավասար էր 849803 ուրլի: Մուտավորապես մեկ տարի հետո այդ գումարները համապատասխանաբար ավելացան 6,25 և 38,82 տոկոսով: Սահմանափակվեցին պարտավորակալին գործառնությունները:

Ա. Արասխանյանը «Մշակի» էջերում մանրամասն վերլուծել է հացահատիկի արտահանության ձևերն ու եղանակները, անդադարձել հացահատիկ արտահանող նահանգների ու ներմուծող երկրների յուրահատկություններին, ժամանակագրական կարգով բերել վիճակագրական հետաքրքիր տվյալներ արտահանության շափերի, գների, փոխադրական ծախսերի մասին: Այդ նյութերը կարևոր արժեք են ներկայացնում XIX դարի երկրորդ կեսի հայ գյուղացիության սոցիալական և տնտեսական պատմության ուսումնասիրության տեսակետից: Սակայն մի հանգամանք ավելի է գրավում Ա. Արասխանյանի ուշադրությունը: Դա հացի առևտրի հետագա զարգացման հնարավորությունն է:

Գ. Արժրունին 1885—1886 թվականներին հացի արտահանման աշխուժացումը կապելով նախորդ տարիների կուտակումների հետ, որը, նրա կարծիքով, արդյունք էր միայն բնական բարենկազատ պայմանների, անասնապահուս որևէ հետանկար չէր տեսնում հացահատիկի ապագա արտահանության շափերի ընդունակության համար: Եույն տեսակետին էր նաև «Մշակի» մի այլ հոդվածագիր: «Մեր երկիրը,— գրել է վերջինս,— այնքան հաց չէր արտադրում, որ կարողանայինք մեր պիտույքները լրացնելուց հետո մեծ քանակությամբ արտահանել: Մեր կարծիքով այդ երևույթը կարելի է բացատրել նրանով, որ այդ տարիներին արտահանվում էր մի քանի առատ տարիների ընթացքում ժողոված ավելորդ հացը»:

Այդ բանը չէր ժխտում նաև Ա. Արասխանյանը: Բայց միաժամանակ նա խնդրին մտնելում էր այլ կերպ, ենթադրելով, որ հացի առևտուրը աստիճանաբար կցնե դեպի ընդլայնում:

Ի՞նչ նախադրյալներին էլնելով էր անտեսազետը այդպես կարծում: Այն իրողությունից, որ հացահատիկի արտադրության ավելացմանը պետք է նպաստի երկրամասի արտադրողական ուժերի զարգացումը: Իսկ զրա հնարավորությունը, Արասխանյանի կարծիքով, միանգամայն իրական էր. բանի որ Անդրկովկասում կային հսկայական շափերի հասնող անմշակ հողատարածություններ, որոնք քիչ ծախսումներով կարելի է դարձնել բերրի հողեր: Դրան կարելի էր հասնել նաև գյուղատնտեսության ինտենսիվ վարման շնորհիվ: Տնտեսագետի կարծիքով, հացահատիկային արտադրության ծախքերն Անդրկովկասում անհամեմատ ցածր են, այնինչ միջազգային շուկայում գները բարձր են, շահույթը մեծ, ուրեմն, հացահատիկի արտադրության կարգացումը միանգամայն նպատակահարմար է, իսկ զրա կշահագրգռի ինչպես կապիտալիստներին ու պետությանը, այնպես էլ գյուղացիներին՝ ձեռնարկելու գյուղատնտեսության կատարելագործման միջոցառումները:

Տնտեսական հիշյալ նկատառումները, սակայն, միայն տեսականորեն էին հիմնավորված և մնացին լուկ որպես վերացական գուշակություններ: Տնտեսագետը, անշուշտ, վրկպում էր, անտեսելով իր առաջադրած տնտեսական ձեռնարկումների սոցիալական բովանդակությունն ու դրանց իրականացմանն անլ

¹ «Մշակ», 1886, № 137.

հնարավորությունը ֆեոդալիզմի մնացուկների առկայության պայմաններում:

Գր. Արծրունին այս հարցում ավելի իրավացի էր: Ինչպես ցույց տվեց փորձը, 80-ական թվականների վերջերին հացի առևտուրն ավելի ու ավելի նվազեց և կորցրեց իր տնտեսական նշանակությունը: Եթե մի կողմից Անդրկովկասը հաց էր ներմուծում Ռուսաստանից, ապա մյուս կողմից՝ արտահանում էր եվրոպական շուկա: Սա մի անհամաձայնություն էր, որ վաղ թե ուշ պիտի զգացնել տար իրեն և ի վերջո բացասաբար անդրադառնար հացի արտահանության վրա:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԼԵՄՆԵՐԸ «ԱՐՁԱԿԱՆ-ՔՈՒՄ»

Ի տարբերություն ազգային պահպանողական հոսանքի մյուս թևի («Մեղու Հայաստանի», «Նոր-գար»), «Արձագանքն» բնորոշում էր Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման պատմական օրինաչափությունը: Թերթի աշխատակիցները կապիտալիզմը համարում էին հասարակական-տնտեսական զարգացման մի նոր աստիճան:

Անդրկովկասում կապիտալիստական հարաբերությունների արագ զարգացումն ուներ իր ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պատճառները: Այդ փոխակերպությանը խոչոր ազդակ հանդիսացավ ճարտարական հարաբերությունների վերացումը, որը, արագացնելով Ռուսաստանի կապիտալիստական զարգացումը, միաժամանակ կանխորոշեց ծայրամասերի, այդ թվում անդրկովկասյան ժողովուրդների առաջընթացի ուղղությունը:

Երկրամասում կապիտալիզմի զարգացմանը մեծապես խթանեց նաև եվրոպական կապիտալի հոսքը, որը հատկապես ուժեղացավ անցյալ դարի վերջին քառորդին: Իր էջերում հաճախակի անդրադառնալով Անդրկովկասի առաջընթացին, «Արձագանքն» ավելի շատ քննարկում էր կապիտալիզմի զարգացմանը տեղական բուրժուազիայի զերի և մասնակցության հարցը, դրա հետ կապիտոլ երկրամասի ապագա տնտեսական դրությունը:

Պատմական փորձը ցույց է տվել, որ օտար կապիտալները եթե մի կողմից նպաստում են տվյալ երկրի արտադրողական ուժերի զարգացմանը և նոր հարաբերությունների հաստատմանը, ապա մյուս կողմից ազդին դրվում են նյութական հիմքից, խոչընդոտում ազգային բուրժուազիայի կազմավորմանը: Այդ հակասությունն բժրոնում էին նաև «Արձագանքի» հեղինակները: Ուստի նրանք անհրաժեշտ էին համարում ապահովել երկրամասի տնտեսությունն ու ինքնուրույնությունը, ընդգծելով, որ այդ բանին հասնելու համար պահանջվում են «դրամ,

գիտություն և բնկերական ոգի»¹։ Ա. Արասխանյանն Անդրկովկասի արտադրողական ուժերի զարգացման կարևոր պայմաններեց մեկն էլ համարում էր անհատական կապիտալների միավորումը։ Նա կշտամբում էր երկրամասի այն դրամատորերին, որոնք խուսափում էին բնկերություններից²։

Այդ բոլորի հետ միաժամանակ, «Արձագանքը» պահանջում էր կատարելագործել արտադրությունը, կիրառել արտադրության առաջավոր եղանակները, գտնելով, որ հին, նահապետական ձևերով հնարավոր չի լինի մրցակցել օտար կապիտալներին հետ և հասնել տնտեսական անկախության³։

Երկրամասի արդյունաբերական զարգացման հեռանկարները ինքնաբերաբար սապարեկ էին բերում առևտրական բուրժուազիայի տնտեսական ու հասարակական դերի գնահատման հարցը, մի հարց, որ սկսած 70-ական թվականներից դրականչում էր հայ հասարակական միտքը։ Եթե մինչ այդ երկրամասի տնտեսական կյանքում կապիտալի տիրապետությունը սահմանափակվում էր գլխավորապես շրջանառության ոլորտով, ապա հետագա տասնամյակներին, խոշոր արտադրության զարգացմանը զուգընթաց, արդյունաբերական կապիտալը ձգտում էր իշխող դիրք գրավել։ 1887 թ. «Արձագանքի» մի քանի համարներում տպագրվել է թերթի խմբագիր Արցաղ Հովհաննիսյանի «Հայ ազգի կատաղի թշնամին» հոդվածաշարը։ Հեղինակը, առաջ քաշելով առևտրական դասի քաղաքակրթվելու պահանջը, թեև հիմնավոր ձևով չէր խոսում առևտրական կապիտալը արդյունաբերականի փոխանցելովելու և նոր պայմաններում նրա տնտեսական դերի մասին, ինչպիսի հետևողականություններով դա առում է «Մշակը», այնուամենայնիվ, նրա հոդվածի վերնագրին ինքը վկայում էր տնտեսական զարգացման հետ կապված ներգրասակարգային հարաբերությունների տեղաշարժերի, արդյունաբերական բուրժուազիայի տնտեսական դերի մեծացման մասին։ Օտար կապիտալների հետ մրցակցաբարում ազգային բուրժուազիայի տնտեսական անկախությունը «Արձագանքը» կապում էր «մանրամասնառությունից ու կալվածատնելությունից» «արդյունաբերական ձեռնարկումների»⁴ անցնելու հետ։

Կապիտալիզմի զարգացումը Անդրկովկասում հասարակական մտքի առաջ ամբողջ սրույթամբ դրեց պրոլետարիատի հարցը։ «Արձագանքը» տարբեր առիթներով անդրադարձել է այդ քասակարգի սոցիալական ճակատագրի բնույթին։ Այսպես, օրինակ, Յ. Տիգրանյանը բանվորական հարցը համարում էր զարի ամենակենսոտ հարցը և «ժամանակակից պատմության ամենախոշոր երևույթներից մեկը», որն իբրև էլ հրատապ գործնական խնդիր ծառայել է բոլոր եվրոպական ազգերի և կուսակցությունների առջև։ Անկարկելով Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», նա գրել է. «Այս նպատակին են ծառայում և Արևմտյան Եվրոպայի բնկերավարանք, որ ունեին իրանց կազմակերպված կուսակցությունները զանազան երկրներում, ունին իրանց վարդապետությունը և բնկերական կանքում գործելու նախագիծը»¹։

Հեղինակը բարձր էր գնահատում XVIII դարի ֆրանսիական լուսավորիչների գործունեության և ֆրանսիական հեղափոխության նշանակությունը Եվրոպայի տնտեսական ու քաղաքական կյանքի հետագա զարգացման գործում։ Նա գտնում էր, որ դուրեր ի վեր իր ավանդություններով ու հասարակություններով ապրող և կառավարող հին հասարակարգը պետք է ենթարկվի օսմենասխիստ խուզարկության և վերաբնույթության, և այս՝ նոր փիլիսոփայության տեսանկյունից, այն էլ՝ արդիային բնական իրավանց տեսակետից²։ Յ. Տիգրանյանը ճիշտ էր նկատում, որ հեղափոխության հույսկած ազատության և հավասարության սկզբունքները խաբսխված էին լուսավորիչների զաղափարների վրա, որոնք սոցիալական բոլոր հակասությունների պատճառ տեսնում էին հասարակական զարգացումը բնական օրենքների համաձայն բնկանալու մեջ։ Մասացած սոցիալական հակասությունների և բանվորական հարցի լուծման պատասխանները անտեսադիտության զասական դպրոցի ներկայացուցիչները որոնում էին տեսական հնց այս գուպահաներում, գտնելով, որ հասարակության գոյությունը պետք է խաբսխված լինի բնական ներդաշնակության սկզբունքի վրա։ Ենկելով անհատականության սկզբունքից և ժխտելով ամեն մի օրենսդրական Էքստմություններին երկրի տնտեսական կյանքում, նրանք կարծում

¹ «Արձագանք», 1885, № 6:

² Տե՛ս «Արձագանք», 1882, № 24:

³ Տե՛ս «Արձագանք», 1885, № 6:

⁴ «Արձագանք», 1893, № 41:

¹ «Արձագանք», 1884, № 33:

² Նույն տեղում, № 40:

էին, թէ «ուժերի ազատ խաղը» նյութական բարեքնների արտադրութեան բաշխման և փոխանակութեան ոլորտներում ինքնաբերաբար կհասցնի սոցիալական հավասարութեան: 3. Տիրաւանքը դա համարում էր այն «բացարձակ սկզբունքը», բոտ որի ամբողջ տնտեսական կյանքը «օրենսդրի առջև ներկայանում է իբրև առանձին արտադրողների փոխադարձ հարաբերութեան մի շարք, որոնց անձնական շահերը կարգավորվում են բնական տնտեսական օրենքներով»¹:

Փամանակի տնտեսագիտական մտքի այս բնութագիրը վերաբերում է Ադամ Սմիթի և Դավիթ Ռիկարդոյի տեսութեանը, որը, ելակետ ունենալով ֆիզիոկրատների բնական կարգը, արդունաբերական բուրժուազիայի ավարտուն գաղափարախոսութեան էր: Այդ դպրոցի սոցիալական իդեալը ենթադրում էր, թէ անհատի գործունեութեան հիմքը նսասիրութեանն է, որ լինելով տնտեսական կյանքի բնական շարժիչ ուժ, տանում է է անհերքելի բնական ներդրանակութեան ու հասարակութեան բարօրութեան: Ինչպես Կ. Մարքսն էլ նշել, անզղիական դասական բազաբառնետութեան ներկայացուցիչներին «անհատը ոչ թէ պատկերանում է իբրև պատմութեան հետեանը, այլ իբրև նրա ելակետը: Որովհետև մարդկային բնութեան մասին նրանց ունեցած հայացքով՝ բնութեանը համապատասխան, անհատը նրանց թվում էր ոչ իբրև պատմականորեն առաջ եկած, այլ հենց բնութեանից տրված»²:

«Արձագանքում» Տաճարակի ընդգծվում էր, որ ֆիզիոկրատների հռչակած «բնական կարգն» իր հետ բերնց միայն հոսասխարութեան: Սոցիալական ու դասակարգային ներհակութեանները, որոնց հիմքում ընկած էին երկու հակամարտ դասակարգերի անհշառելի շահերը, էլ ավելի խորացան: «Այդ «բնական» կարգը, — գրել է Յ. Տիրաւանքը, — իսկույն ցույց տալից իր ներքին բնավորութեանը, որ շատ տարբերվում էր սպասած հաշտութեան և ներդաշնակութեան կապ լինելուց: Հին դասակարգային խտրութեանները նորից երևան եկան, և նոր ձևներով դեռի դասակարգը նույն առավելութեան ստացալ ստորադրելով բանվորների դասակարգի վերաբերութեանը, ինչոր

հետում էլ կար, միմիայն ուրիշ ձևով»³: Հեղինակի համոզմամբ բանականութեան թագավորութեանը բուրժուազիայի իդեալականացված թագավորութեանն էր լույս հասարակական կառուցվածքի իր հակասութեաններով, խորախլված բուրժուական սեփականութեան և բուրժուական շահագործման իրավունքի վրա: Այլ, իսկպակս, հեղափոխութեան հռչակած սկզբունքները դարձան պատմութեան: «Արձագանքի» հեղինակները տեսնում էին, որ նոր հասարակական կարգին «անզոր են տնտեսական շահերի ներդաշնակութեան ստեղծելու և ընկերական համերաշխութեան մտապիտու...»:

Կապիտալիստական հարաբերութեանների այս ճիշտ բնութագրումից հետո Յ. Տիրաւանքը, սակայն, հանգել է սոցիալական ու տնտեսական հակասութեանները հարթելու լիբերալ-բուրժուական այն սխալ կարակացութեանը, բոտ որի բանվորական հարցի լուծումը կախված էր անկա տնտեսական կարգերի ինքնակատարելագործման հաջողութեանից⁴: Ըստ երևույթին Յ. Տիրաւանքն այս հարցում կրել է պատմական դպրոցի սպետական սոցիալիզմի» սոցիալական ռեֆորմների ծրագրի հեղինակների ազդեցութեանը: Վերջիններս ձգտում էին հասարակական կյանքում «սոցիալական արգարութեան» սկզբունքներն արմատախորել առանձին, մասնակի ռեֆորմների օգնութեամբ: Սակայն Յ. Տիրաւանքը ռեֆորմների նկատմամբ երբեմն ցուցաբերում էր կասկածիլ վերաբերմունք: Բուրժուական հոսասխարակութեան խորացող հակասութեանների պայմաններում նա վատատեսորեն էր տրամադրվում ապագայի «այն անթիվ հասարակական խնդիրների» իրագործման նկատմամբ, որոնք շուշափում են «նորա ամենամտա և ամենախոշոր տնտեսական և հասարակական շահերը»⁵:

Նկատենք, որ գիտես «Փորձի» խմբագրութեան տարիներին Արգար Հովհաննիսյանը գիտեղում էր հարվածներ, որոնցում սոցիալական երևույթների բացատրութեան հարցում հիմք ունենալով ֆրանսիական գիտնական կապիտալ մեխանիստական դետերմինիզմը, խոսում էր նաև բազարակրթութեան այն նվա-

¹ «Արձագանք», 1884, № 40:

² Կ. Մարքս, Փազարատնտեսութեան բնագառութեան շուրջը, Երևան, 1945, էջ 232:

¹ «Արձագանք», 1884, № 40:

² Տե՛ս նույն տեղում:

³ «Արձագանք», 1884, № 13:

Հումներն մասին, որոնք ուղղված էին «ժողովրդի նյութական բարորությանը»¹:

Անցյալ դարի վերջին բառորդին Անդրկովկասի տնտեսական կյանքը գտնվում էր մի անցումային շրջանում, որտեղ զուգորդվում էին արտադրության նահապետական և կապիտալիստական արտադրության առաջավոր ձևերը: Հասարակության կյանքում տեղի ունեցող փոփոխություններն արտացոլել են նաև «Արձագանքի» էջերում: Ընդ որում, Քերթի աշխատակիցները իրավաճիորեն գտնում էին, որ այս կամ այն երկրի բարոյական կյանքի ուղղությունը որոշվում է տնտեսական կյանքի ուղղությամբ:

Քննարկելով կապիտալիստական արտադրական հարաբերությունների զարգացման հետ կապված բարոյական կյանքի անկման հարցերը, Քերթը գլխավոր ուշադրությունը նվիրում էր տնտեսական գործունեին, պահանջելով, որպեսզի դասակարգերը, սոցիալական խմբերն ու անհատն իրենց որոշակի տեղն ու դերն ունենան հասարակության մեջ. «Կանոնավոր տնտեսական կյանք ասելով մենք հասկանում ենք այն կյանքը, երբ ժողովրդի նյութական միջոցները բխելով մի հաստի աղբյուրից, բաժանվում են այդ ժողովրդի անդամների կամ դասակարգերի մեջ պարզ ու որոշյալ բանակությամբ, երբ աղքատությունից զերկ միջակ կարողություն և վերջապես դեպի հարստություն կան հասնի աստիճաններ, որտեղով մարդիկ կամ բարձրանում են հեռագհետ, կամ ցած իջնում: Այդպիսի կյանքում աղքատությունը և հարստությունը իբրև իջարդ հակասող տարրեր, գրված լինելով հաստի շրջանակի մեջ, ամենայն մեկը զոցանից բարոյապես մարդկանց կրթում է իր սեփական ավանդությունների համաձայն»²:

Վերը նշվածից երևում է, որ հեղինակը կողմնակից է մասնավոր սեփականության վրա հիմնված հասարակության սոցիալական շերտավորմանն ու դրան համապատասխան բարոյական նորմաներին:

«Արձագանքը» տեսնում էր ազգի բարոյական դիմապատկերի կախվածությունը սոցիալ-տնտեսական պայմաններից, բայց և Կանտի բարոյափոխաբարության դիրքերից հանգում

էր մարդկության աստիճանական կատարելագործման գաղափարին: Երկրամասում կապիտալիստական հարաբերություններին հաղթանակի անխուսափելիության դիտակցումը Քերթի տեսարաններին բերում էր ավատական կապերը նոր հարաբերությունների հետ սինթեզելու հայեցողությանը. «Միանգամայն ապարդյուն կլինի հասարակության մեջ նահապետական կյանքը պահպանելու րոյտը չանբերը, հասարակություն, որ ամենուրեք անհատականության տարրերի վրա է հիմնված: Ինչպես այն է, որ նահապետական կյանքի գերդաստանական տարրերն անպիսի տարրերով փոխարինվեն, որոնք գերդաստանական կապերին առաջվա ամրությունը ապին, իհարկե նոր սկզբունքների վրա հենվելով»³:

Ինչպես ժամանակի հայ պարբերական մամուլի մյուս օրգաններին, այնպես էլ «Արձագանքին» հատկապես զբաղեցնում էին վաշխառուական կապիտալի և տարագնացության հարցերը: Քերթի էջերում սրտանետախկաբար բերվող օրինակները ցույց են տալիս, թե ինչպիսի անասունի շահեր էր ընդունել վաշխատությունը, արագանցելով գյուղացիության սոցիալական շերտավորման ու տարագնացության պրոցեսը: Սակայն վաշխատությունը վերացնելու և տարագնացությունը կանխելու «Արձագանքի» առաջադրած ծրագիրը դուրս չէր գալիս լիբերալ-դեմոկրատական հոսանքի տնտեսական ուղեգծումների շրջանակներից: «Արձագանքի» հեղինակներից ոմանք գյուղացիության վիճակի բարելավումը կապում էին «հասարակական շտեմարաններին և հասարակական գրամագլուխներին»⁴ որպես «հասարակական ապահովության եղանակը տնտեսական ֆակտորների» բացակայության, գյուղի տնտեսական կյանքի անբավարար զարգացման հետ: Ոմանք էլ գյուղացիների փրկությունը տեսնում էին գյուղացու բանկերի⁵ կամ զեմստովային կազմակերպությունների⁶ ստեղծման մեջ:

Առաջարկված միջոցները, ճիշտ է, արագացնում էին կապիտալիզմի զարգացումը Անդրկովկասում, բայց որքանով որ նոր հարաբերությունների հաղթանակը «Արձագանքին» ներկայանում էր ոչ շատ մտա ապագայի հարց, այնքանով Քերթը «Նայ

¹ «Արձագանք», 1892, № 6:

² Տե՛ս «Արձագանք», 1896, № 21:

³ Տե՛ս «Արձագանք», 1882, № 18:

⁴ Տե՛ս «Արձագանք», 1898, № 2:

¹ «Փոքոս», 1876, № 2:

² «Արձագանք», 1885, № 9:

շինականի բարորությունը՝ զգալի շափով էլ կապում էր տեղական մանր տնայնագործական արտադրության զարգացման հետ. «Առտնին արհեստները զեռ երկար ժամանակ մեծ դեր կխաղան մեր ժողովրդի մեջ, քանի որ շոգեշարժ գործարանները բնավ չեն տարածված...: Կմնա օգուտ քաղել այդ ժամանակամիջոցից և զարկ տալ մեր առտնին կամ քնտանեկան արհեստագործությանը», որպես «մեր երկրի տնտեսական ամենազլխավոր ուժերից մեկը»¹: Իհարկե, հեղինակը հասկանում էր տնայնագործական արդյունաբերության պատմական դատապարտվածությունը, այն, որ խոշոր արդյունաբերության զարգացումը, ի վերջո, կհանգեցնե՛ր մանր արտադրության կործանմանը:

Մանր տնայնագործական արտադրության տնտեսական դերի «Արժագանքի» գնահատականը եզրեր էր որոնում ռուս ներդնիկական տնտեսագիտական մտքի հետ և բխում էր Խերթի աշխատակիցների պահպանողական նկատառումներից, այն բանից, որ նրանք կապիտալիզմը համարում էին իբրև զարգացման հեռավոր փուլ: Ընեց այս զուգահեռներում էին «Արժագանքի» տեսարաններն առաջարկում հանգամանորեն ուսումնասիրել Տոգատիրության ձևերն ու գյուղացիության տնտեսական միճակը, բարձրացնել ժողովրդի մտավոր աստիճանը որպես նրա «ինքնազաշտպանության հիմքի», դրա հետ կապելով երկրի «բնդհանուր բարոյականությունն ու նյութական առաջադիմությունը»², իսկ ստանձին գեպերում էլ նրանք Տույբը դնում էին գյուղական համայնքի վրա³:

Հայ տնտեսագիտական մտքի որոնումների այդ շրջանում Թևե ժամանակի առաջադրած ստիչալ-տնտեսական հարցերը «Արժագանքում» խոր տեսական հիմնավորում չեն ստացել, այնուամենայնիվ, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում:

«ՆՈՐ-ԳԱՐԻ» ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԳԱԿՈՒՓՅՈՒՆԸ

Ազգային պահպանողական հոսանքի տնտեսական բովանդակության բացահայտման վերաբերյալ հատուկ ուսումնասիրություն հայ տնտեսագիտական մտքի պատմաբանների կողմից մինչ այժմ չի գրվել: Ըստ էության սուկ արձանագրվել է այդ հոսանքի առկայության փաստը, փորձ է կատարվել տալու նրա բնդհանուր գնահատականը:

Ս. Ե. Զուրարյանը XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական-տնտեսագիտական միտքը ստորաբաժանում է երեք ուղղությունների՝ հեղափոխական-գեմեոկրատական, լիբերալ-բուրժուական և կղերա-ֆեոդալական⁴: Ժիշա է, կղերա-ֆեոդալական ուղղության զարգիարական բովանդակության ու տրեմնական զարգացման ծրագրերի հարցերը Ս. Զուրարյանը չի քննարկել, սակայն հասարակական հոսանքների տնտեսագիտական հայեցողությունների նրա մեկնությունը կնում էր որոշակի հիմքից:

Հայ տնտեսագիտական մտքի ուղղությունների հարցը այլ լուծում է ստացել Ա. Օհանյանի «Արևելահայ տնտեսագիտական մտքի պատմությունից» աշխատության մեջ: Ընդհանրապես, ինչպես նշված է գրքի առաջաբանում, նպատակ է ունեցել քննության առնել «XIX դարի երկրորդ կեսի արևելահայ լիբերալ-բուրժուական ու գեմեոկրատական տնտեսագիտական մտքի զարգացումը և բացահայտել նրա ստիչալ-դատակարգային էությունը»⁵: Ինչպես տեսնում ենք, միանգամայն ակնհերև է հայ հասարակական-տնտեսական միտքը երկու ուղղությունների ստորաբաժանելու միտումը: Եթե «գեմեոկրատական տնտեսագիտական միտք» հասկացության սակ նկատի ունենանք միայն

¹ «Արժագանք», 1882, № 32;
² «Արժագանք», 1889, № 25;
³ «Արժագանք», 1895, № 102;
⁴ «Արժագանք», 1897, № 84:

¹ Տե՛ս Ս. Ե. Զուրարյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուղղակիք, 1959, էջ 10:

² Ա. Օհանյան, Արևելահայ տնտեսագիտական մտքի պատմությունից, էջ 2:

Մ. Նարեանդյանի դավանած ուղղութիւնը, ինչպես այդ ներկայացնում է Ա. Օճանյանը, ապա փաստորեն անտեսվում են ազգային-պահպանողական և նարոզնիկական հոսանքները, որը ճիշտ չի արտացոլում ժամանակաշրջանի հայ հասարակական-տնտեսագիտական մտքի պատկերը: Անդրադառնալով տնտեսական զարգացման պրոբլեմների վերաբերյալ «Արձագանք», «Մեղու Հայաստանի», «Նոր-գար» պարբերականների դրույթներին, հեղինակը նկատում է, որ «XIX դարի երկրորդ կեսի մյուս աչքի բնկնող պարբերականները («Մեղու Հայաստանի», «Նոր-գար», «Արձագանք») կամ այս ու այն կերպ կրկնում էին «Մշակի» և «Մուրճի» արժարժած տնտեսագիտական գաղափարները («Արձագանք»), կամ էլ բացասական վերաբերմունք էին ցուցաբերում լիբերալ-բուրժուական տնտեսագիտական մտքի հանդեպ («Մեղու Հայաստանի», «Նոր-գար»)»: Այս ձևակերպումը հակասական է: Եվ իրոք, եթե մի զեպում ազգային պահպանողական հոսանքը գիտվում է որպես լիբերալ-բուրժուական հոսանքի կրկնություն, ապա մյուս զեպում՝ որակվում է որպես նույն լիբերալ-բուրժուական հոսանքին հակադիր ուղղություն: Իհարկէ, իրազեպի է Ա. Օճանյանը, որ «Արձագանքում» ավելի բնոգծված ձևով էր արտահայտվում լիբերալ-բուրժուական հոսանքի մտայնությունը: Սակայն թե որտեղ էին հասարակական զարգացման ուղիների վերաբերյալ նրա և «Մեղու Հայաստանի» ու «Նոր-Գարի» բնոգծություններն ու տարբերությունները, կամ ինչ կետերում է այդ հոսանքը եզրեր որոնել հասարակական այլ հոսանքների հետ, բստ էություն չի բացահայտվել: Ե՛շտ է, նու գնում է սելյուլիական արտադրության համեմատությանը «մտավոր զարգացման» ստաբիլության հետ պայմանավորված հասարակական տնտեսական խնդիրների վերաբերյալ «Նոր-Գարի» ցուցաբերած «բազանիություն» նարքը, բայց դա ես մեկնություն չի ստացել: Հասարակական զարգացման առաջնութացի վերաբերյալ ազգային-պահպանողական հոսանքի ուղղությունն ավելի հրատակ է բնորոշված Վ. Ռշտունու «Հայ հասարակական հոսանքների պատմությունից» աշխատության մեջ: Հեղինակը խոսելով «Նոր-Գարի» մասին, գրում է. «Եսկ երբ խնդիրը վերաբերում

էր մեզ այստեղ հետաքրքրող հարցերին, այն է՝ Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման կապակցությունը արեւելահայերի տնտեսական-հասարակական կյանքը հուղող պրոբլեմներին, հենց կապիտալիզմի նկատմամբ բանկիթ դիրքին, ֆեոդալիզմի մնացորդները գոյություն վերացնելու հարցերին, գոյով ու բազարի աշխատավորների համար ստեղծված նոր պայմաններին տնտեսական-հասարակական նոր մթնոլորտում,— ապա նրա սկզբունքային անհաշտության հիմքերն ու առիթները հայ լիբերալների հետ զգալի շափով անհետանում էին ու նշված հարցերի հանդեպ «Նոր-Գար» կամ ուղղակի նկատելի անտարբերություն էր երևան բերում, կամ զգալի սկզբունքային տարածայնություն հանդես չէր բերում...»:

Ինչպես տեսնում ենք, բստ էություն նույնացվում են ազգային պահպանողական և լիբերալ-բուրժուական հոսանքների սոցիալ-տնտեսական հայեցությունները, տարբերություններ չնշմարելով հասարակական զարգացման ուղիների վերաբերյալ նրանց ծրագրերում: Մինչդեռ տարածայնություններն այդ հոսանքների միջև սկիզբ է առնում հենց այդ կետից:

Խ. Գուլանյանը, գուղահետ անցկացնելով լիբերալ-բուրժուական և ազգային պահպանողական հոսանքների միջև, տալիս է մի շատ պարզունակ բնորոշում, թե իրը «Մեղու Հայաստանին» ու «Նոր-Գար» վախճում էին, շլինի, թե հայերը կորցնել իրենց նախնիներից ժառանգած հին հարսբերությունները: Գրանով արդեն բնորոշվում էր այդ պարբերականների կոնսերվատիվությունը: Եման բացատրությունը, որն ի զեպ հատուկ է նաև ալլ հեղինակներին, հաճախ դառնում է վերլուծությունների մեկնակետ, փակուղի ստեղծելով այդ հոսանքի գիտական բացատրության համար:

Ժամանակին Ա. Արասիանյանը այսպես էր բնութագրում ազգային-պահպանողական հոսանքը. «Այդ սերունդների բնավորիչ հատկություններից մեկն էր մտավախությունը, որով իսկայես այդ սերունդները ստատանվել են մյուսներից: Ամեն միտք, ամեն մի նոր առաջարկություն... այդ բոլորից քաշվում են այդ սերունդները և քիչ է մնում բիմիակական գիտություն

¹ Ա. Սնույան, Արեւելահայ տնտեսագիտական մտքի պատմությունից, էջ 155:

¹ Վ. Ռշտունի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երևան, 1956, էջ 57:

² ՏՄ և Խ. Գ. Գուլանյան, Որվագներ Հայ տնտեսագիտական մտքի պատմության, Երևան, 1959, էջ 387:

նշանակութեան մասին մեր ազգի մասին՝ նորա դիմեն խորհրդի Մոզես Խորենացուն և Եղիշինն¹։ Եվ դա հասկանալի է, քանի որ պահպանողականների տեսնական հայեցողությունը չէր համընկնում հասարակութեան կապիտալիստական զարգացման լիբերալ հոսանքի ուղեգծումներին։ Սակայն չպետք է ենթադրել, թե ազգային պահպանողականները հակված չէին քննուկնելու հասարակական առաջընթացներին։ Նման մեկնաբանությունների դեմ էին ուղղված Ս. Սպանդարյանի այն խոսքերը, թե «պետք է ազնու լինել, շահականալու համար այն, որ պահպանողականը չի կարող ժողովրդի լուսավորութեան գործին (ընդարձակ առումով) — Թ. Ս.) հակառակ լինել»²։

Վերջին տարածակիւմ լույս տեսած մի շարք աշխատություններում՝ XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական հոսանքների հարցը քննարկվել է նոր գիտակետից, այն բարձրացնելով տեսական մեկնություն մեր նոր աստիճանի, առաջադրելով նոր պրոբլեմներ նաև հայ տնտեսագիտական մտքի առջև։

Ինչպես արդեն նկատել ենք, լիբերալ-բուրժուական հոսանքն ազգի զարգացումը կապում էր «նյութական հարստության» մեծացման հետ, որի հիմքում ընկած էր «աշխատանքի փոխոժիպությունը»։ «Մենք սովոր ենք, — գրել է «Մշակը», — ամեն մի պատմական, հասարակական երևույթ՝ տնտեսական կետից քննելը³։ Այս իմաստով նա ըմբռնում էր գաղափարական ու բարոյական երևույթների կախումը տնտեսական հարաբերություններին բազիսային հիմքից, պնդելով, թե «մի ազգի տնտեսական կյանքից է կախված նրա մտավոր ու բարոյական կացությունը»⁴։

Ազգային պահպանողականներն առաջադրում էին հակառակ բանաձև, թե «երկրի տնտեսական վերածնությունը» պետք է հաջորդի «երկրի բարոյական վերածնությունը»։ Սա նշակետային նշանակութեան փաստ է, ցույց տալու համար այն հակադրությունը, որ գոյություն ունի ազգային պահպանողական

և լիբերալ-բուրժուական հոսանքների միջև՝ ազգի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների վերաբերյալ, պայմանավորելով պահպանողականության տնտեսական բովանդակությանն առանձնահատկությունները։

Ազգային պահպանողականությունը կապիտալիզմի զարգացման առաջամարտիկ չէր։ Նա երկյուղով էր նայում երկրամասի բուրժուական վերածնությանը, հիվանդագին քննունելով մարտաբնասալորությունն ու մանրբուրժուական այլ շերտերի քայքայումը, դրա մեջ գուշակելով ազգի միասնության տրոհումը։

Իսկ այն իրողությունը, որ պահպանողականներն արժարժում էին կապիտալիզմի զարգացման հացքերը, «ենթացրում գյուղի ու քաղաքի բուրժուական զարգացման հեռանկարները, ոչ այլ ինչ էր, եթե ոչ իրական հանգամանքների համակերպվելու ձգտում։ Առանց այս էական փաստի հաշվառման անհասկոնելի կիտիկ կապիտալիզմի պահպանողական քննադատությունն բնույթ էր սեղծաբան, որին դիմանում է պահպանողական հոսանքի ազգանքը՝ կապիտալիստական զարգացման փաստի հանդեպ։ Հենց այստեղից էլ ծայր է առնում կապիտալիզմի ոտմանտիկական քննադատությունը պահպանողականների սոցիալական հայեցողության մեջ»⁵։

* * *

Անցյալ դարի 80-ական թվականների վերջերին կապիտալիստական հարաբերությունների զարգացումն Անդրկովկասում արդեն դարձել էր իրական փաստ։ Հասարակության զարգացման ուղիների հարցը այլևս այնպիսի սուր բանավեճների առիթ չէր տալիս, ինչպիսին այն անկա էր «Մշակի» հայտնությունից ժամանակաշրջանում։ Հասարակական հոսանքների ապրում էին որոշակի էվոլյուցիոն։ «Մշակը» կորցրել էր իր նպտակի փայլը՝ 80-ական թվականների վերջերից առաջատարի դերը վիշելով «Մուրճին», որի տեսարանները տնտեսական զարգացման հարցերը քննարկում էին տեսական ավելի խոր ու համակողմանի իմացությունը։ «Մեզու Հայաստանին» իր դիրքերը հասնել էր «Նոր-Գարին», որն ավելի լավ էր գիտակցում կյանքի իրական ընթացքը։ Սակայն ազգային-պահպանողական այս նոր օրգանը կապիտալիզմի զարգացման շատագույց չէր,

¹ «Մուրճ», 1889, № 4, էջ 361։

² «Նոր-գար», 1892, № 209։

³ Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, 5, 3, Երևան, 1964, 5, 4, Երևան, 1972, Մ. 2. Միլիբարյան, 19-րդ դարի երկրորդ կեսի արևելա-հայ պարբերական մամուլի պատմությունից, Երևան, 1976 և այլն։

⁴ «Մշակ», 1873, № 35։

⁵ «Մշակ», 1881, № 100։

¹ Հայ նոր գրականության պատմություն, 5, 4, էջ 19։

և դա հասկանալի է: «Նոր-Գարի» տեսարանների համոզմամբ, կապիտալիզմի սուր հակասությունները տրոհում էին ազգի բարոյական միասնությունը:

Անդրդիվկասում ևս կապիտալիզմը գնալով ավելի ու ավելի խոր արմատներ էր գցում: Ականատես լինելով այդ փաստին, «Նոր-Գարի» անշխատակիցներն առաջադրում էին դյուլդի ու քաղաքի տնտեսական նորոգության մի ուրույն ծրագիր, փորձելով ներկրամասում շրջանցել արդյունաբերական կապիտալիզմի արշավը: Քերես այդ էր պատճառը, որ տարիներ շարունակ տնտեսական առմանտիզմի գիրքերից նրանք զբաղվում էին կապիտալիզմի զգայացունց քննադատությամբ:

Ինչպես հայտնի է, լիբերալ-բուրժուական հոսանքի ներկայացուցիչները նկատում էին կապիտալիզմի ներհակությունները, սակայն կապիտալիզմը համարում էին բանական հասարակարգ և բուրժուական տնտեսագիտության ներկայացուցիչների պես նպատակ ունեին փոքրամեծի միջոցով կանխել այդ հակասությունները: «Նոր-Գարը», ընդհակառակն, ամենուր քննադատում էր կապիտալիզմի հակասությունները, դիմադրած լինելով նրա տնտեսական հեռանկարից:

Ընչու է, հայ ազգային պահպանողականները չէին պահանջում վերագրած դեպի անցյալը, բայց և փորձում էին նոր արեւտեսական հարաբերություններ վերածնել արտադրության կազմակերպման ազգային կացութեան վրա: Արդեն առաջին իսկ համարներում «Նոր-Գարը» որոշակիորեն պարզել է իր ուղղությունը, ցույց տալով սոցիալ-տնտեսական ուղեգծումների այն սկզբունքային տարբերությունները, որ ուներ ազատամտականների համեմատությամբ. «Կա բարոյական շահերի մրցում, կա նյութական շահերի մրցում: Գործարան հիմնել, խանութ բանալ, տնտեսական արդյունաբերություն պարագել, փող կորզելու զանազան միջոցներ հնարել— դրա բոլորը ծառայում են մարդկային նյութական շահերը բազմապատկելու համար... մեր աշքում մի առանձին կարևորություն էլ չունի»: «Ինչպես կարելի է մի երկրում նկույթական տնտեսակարգը մտցնել երկրի մոտավորապես թողնելով մտավոր անշարժության և ասիական խավարի մեջ,— լրացնում է թերթը մի այլ համարում,— ասել է երկրի տնտեսական վերածնությունից առաջ պիտի ընթանա

երկրի բարոյական մտավոր վերածնություն»: Այդ պատճառով էլ նրանք նախադասում էին այն ուղղությունը, որը ձգտում է երկրի մտավոր և բարոյական վերածնության, կարծելով, թե դրան ինքնին կհնարի նաև երկրի տնտեսական վերածնությունը:

«Նոր-Գարի» բարոյագիտական կոնցեպցիան որոշակի սեպկելիս էր հասարակության կապիտալիստական զարգացման հանդեպ: Խոշոր արդյունաբերությունը խորտակում էր մանր արտադրությունը, ազատում համայնական, նահապետական հարաբերությունները՝ անհատին օտարելով հասարակությունից: «Մարդկանց մեջ ավելի է մեծանում տեսականության և գործնականության միջև եղած տարածությունը,— գրել է թերթը,— զեղեցիկ իդեալները մնում են զեղեցիկ իդեալների երեակայության մեջ, իսկ դրանց տեղը բռնում է զործնական կյանքը», որում մեղավոր են «նեղիա տնտեսական, քաղաքական և հասարակական պայմանները»:

Տպագրելով ռուս գիտնական Մորիստովի «Բարոյական ճրգնամա» հոդվածը, թերթը խմբագրության ծանոթագրության մեջ գրել է. «Մենք սիրով ընդունում ենք այս ռուս գրողի խորհրդածությունները, որովհետև մեր հայացքներով մենք հետևող ենք սոցիալական փոխափառությանը, և մեր մոգզվածք մտավոր, հոգեկան վերածնության փրկիչները գտնում ենք միայն այն կրթության մեջ, որը հիմնված է սոցիալական փոխափառության վրա»: Իսկ սոցիալական փոխափառության գրիխավոր խեղիքը հանգրվում էր բարոյագիտությանը, գիտելիքն ապրելու միջոց համարում:

XIX դարի փոխափառական ուսմունքներից «Նոր-Գարի» հայեցողության վրա հատկապես մեծ ազդեցություն ունեին բարոյական էվոլյուցիոնիզմի զազափարներն ակնկալող տեսությունները: Այդ ուսմունքների բոլոր զգալորոշիկ տարրերն ընդունելի էին «Նոր-Գարի» համար, ձև տալով մի «համապարփակ էկլեկտիզմի», որը ներառում էր և՛ հասարակության սոցիալական վերակառուցումը «մարդկային բնության» անկատարությանը բացառողը Ապենսերի օրգանական տեսությունը, և՛ սոցիալական ներդաշնակության Օգյուստ Կոնտի գոկտրինան, և՛ տնտեսական երեւոյնների նկատմամբ բարոյական գործոնը

1 «Նոր-Գար», 1887, № 52:

2 «Նոր-Գար», 1898, № 210:

3 «Նոր-Գար», 1884, № 52:

1 «Նոր-Գար», 1884, № 12:

առաջնութեան Սիւմոնդիի իդեալիստական տեսութիւնը, և՛ գերմանական պատմաբան Ռաուտերի ուսմանտիպական ուսմանտիպի ինչ-ինչ կողմերը, և՛ նարդիկներին անտեսական ծրագիրը, և՛ սլավոնաֆիլներին այն մտայնութիւնը, թէ պատմութեան ընթացքը որոշում են եկեղեցական ու բարոյական գործունեները և այլն, և այլն: Ահա թէ ինչու հասարակական պրոբլեմների ընկնելու ժամանակ «Նոր-Գարն» իր էջերում տեղ էր տալիս սոցիալական, փիլիսոփայական, անտեսարկական ամենատարբեր ուղղութիւնների տեսութիւններից բխող ընդհանրացումներին:

Տեսնական զարգացման առաջնութեան վերաբերյալ թերթի կոնցեպցիայի առանձնատեսութիւնները պայմանավորված էին հայ իրականութեան յարահարկութիւններով: Բանն այն է, որ մի կողմից դեռևս պահպանվում էին արտազորութեան նահապետական ձևերը, մյուս կողմից՝ կապիտալիզմը խորտակում էր դրանք: «Նոր-Գարն» մի կողմից ընդարձակում էր կապիտալիզմը, մյուս կողմից՝ տեսնում այդ զարգացումը և փորձում հասարակութեան օրինակները հարմարեցնել դրան:

Նույնիսկ դասական կապիտալիզմի այնպիսի երկրում, ինչպիսին Անգլիան է, որտեղ XIX դարի սկզբին մեքենայական արտադրութիւնն արդեն տիրապետող էր, մանրբորժուական պատրանքների համար հիմքեր կային: Իսկ «Անպիսի երկրներում» — գրել են Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը, — ինչպես Ֆրանսիան, որտեղ գյուղացիութիւնը կազմում է ամբողջ ընկալիչական կենսից շատ ավելին, բնական էր այնպիսի գործիքների հանդես դալը, որոնք կանգնելով պրոլետարիատի կողմը, բուրժուալիզմի դեմ, բուրժուական կրթների իրենց ընդարձակութեան մեջ գործադրում էին նրա վերաբերմամբ մանրբորժուական և մանրգյուղացիական շահիանիշը...»¹ Այստեղ բացահայտված է մանրբորժուական գաղափարախոսութեան ծագման սոցիալական հիմքը, որպես անտեսական ուսմանտիպի գաղափարական մեկնակետ: Հենց այդ առումով էլ Վ. Ի. Լենինը նարդիկներին անտեսական ուսմանտիպը, որի հետ ինչ-ինչ երեք էր որոնում նաև «Նոր-Գարն», համարում է «համահեղուկական ուսմանտիպի լոկ ուսական տարատեսակութիւնը»²:

Կապիտալիզմի նոր-դարական բննադատութիւնն ինքնին ունի ազդեցող կողմ, բայց որքանով այն դեմոնիստ էր կապիտալիստական զարգացմանը և չէր համապատասխանում պատմական նոր իրադրութեանը, այնքանով էլ նրա սոցիալական հայեցողութեան ունի ուսմանտիպական բովանդակութիւն:

* * *

Տեսնական զարգացման հարցերի վերաբերյալ «Նոր-Գարն» ուրույն մտեցում ունի: Թերթի խմբագիր Ապահոբ Ապան-զարյանը բուրժուալիզմ էլ հակված չէր ներքին անտեսութեան ընդհանրապես: Նա բմբուն էր, որ երկրների միջև արտաքին կապեր, որպես օրինակի՛վ կապեր, պայմանավորված են սրնտեսական գործունեքով, իսկ այդ կապերի հիմքում ընկած է աշխատանքի բաժանումը:

«Նոր-Գարն» ճիշտ է նկատել, որ շահերի բախումը տարբեր երկրների միջև իր հիմքում ունի անտեսական դրդիչ. «Թեթև աշխատութեան բաժանման տեսութեանը հնարավոր լինելու ազդեցող վերաբերմամբ նա գործադրել, այսինքն յուրաքանչյուր երկիր իր արդյունաբերութեան որոշ ճյուղն ունենալ, այն ժամանակ ազգերի անընդհատ ընդհարումները, եթէ բուրժուալիզմ էլ լվերանային, զոնե խիտ շահով կնվազեին»³:

Տեսնական մրցապայքարում հաղթում են այն երկրները, որոնցում արդյունաբերութիւնն ավելի զարգացած է: Ընդ որում, զարգացման յուրաքանչյուր հասարակ անհրաժեշտութեան է առաջնում որոշակի անտեսական քաղաքականութեանը նպաստել այնպիսի երկրի արդյունաբերութեան այս կամ այն ճյուղի վերելքին: «Նոր-Գարն» տեսարաններն ընդունում էին անտեսութեան ասպարեցում պետութեան գեքը, որը կարող է նպաստել ուրիշ ազգերի նկատմամբ երկրի անտեսական շահերը գեղելու այնպիսի հարաբերութեան մեջ, որ եթէ գերակշիռ օգուտ էլ տանան, գեթ չլինասի միջազգային մրցման մեջ, այսինքն յունենա պատիվ անտարական հաշվեկշիռ:

XIX դարի վերջերին զարգացած երկրներին հատուկ էր հսկանալորման քաղաքականութիւնը: Այս հարցում «Նոր-Գարն»,

1 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Շխեր երկրներ, հ. 1, Սերան, 1972, էջ 167—168:
2 Վ. Ի. Լենին, Նժժ, հ. 2, էջ 303:

1 «Նոր-Գարն», 1889, № 192:
2 Տե՛ս նույն տեղում:

Յյունների նախահայրը և հատկապես շեշտելով նրա բարոյական նշանակությունը¹։

Ազատամտականների աշխատանքի փիլիսոփայությունը գործնականում ենթադրում էր խոշոր արդյունաբերության զարգացում, դրան հակառակ «Նոր-Դարը» սեղալին, մանր արդյունաբերության զարգացման կողմնակից էր. «Շանքերը բովանդորելուց, գործարաններ հիմնելուց առաջ, պետք է զիննզործությունը, շերտնապահությունը, անասնապահությունը և երկրի մյուս առատ բերքերի մշակությունը անաչ տանել»։ Ըստ էության այս էր թերթի անտեսական զարգացման ծրագրի շարժումը։ Եվ պատահական չէ, որ թերթի այդքան առատորեն հողաձևներ էր տալարում տեղային նշանակության ճյուղերի զարգացման մասին, կշտամբելով «աշխատ մրցության, սերունդի միջամտության և հասարակական ինքնօգնության» որպես միջամտության և հասարակական զարգացման զսպանակների վերաբերյալ Գ. Արծրունու հայացքները, դրանք համարելով «սեղործական և անօգուտ», «կործանարար» անաշարկություններ²։

«Նոր-Դարի» համար, ըստ էության, անընդունելի էր լիբերալ-բուրժուական հոսանքի օրյեկտիվիզմը։ Ի դեպ, այդպիսին էր նաև Սիսմոնդիի ֆանդալիզմը բուրժուական դասական անտեսագիտության ներքոյը։

Որքան աշխատանքի նոր-դարական փիլիսոփայությունը ուսմանակ էր ու սահմանափակ, նույնքան ազատամտականները կնոմ էին հասարակության զարգացման օրինաչափության բմբռնումից։ Որքան առաջինը սուրյեկտիվ էր ու հետադիմական, նույնքան երկրորդը կրում էր բուն հասարակական առաջադիմության դադափարը։ «Նոր-Դարի» հողաձևագիրներից մեկը, քննարկելով Ռուսաստանի և եվրոպայի ուսումնարաններում արհեստագիտական ուսուցման զարգացման հարցերը, հասկապես ուշադրություն էր հրավիրում Գերմանիայում տիրապետող շերտարտ-ֆիլիբրական զարթոցի վրա, որը մեծ նշանակություն էր ստլխա օտառնին արհեստագործությանը։ Լեզիանակը հողաձևում հանդում է այն եզրակացությունը, թե տե-

զական մանր արտադրության շատ արդյունքներ ավելի «դիմացելուն, զեղեցիկ և էժան են գործարանական» արտադրանքի հետ համեմատած։ Մի այլ հողաձևում զրգատվում են սղեղեցիկ սկզբունքների» վրա հիմնված ուսուական արտեկների բունմասնությունները³։ «Նոր-Դարը» չէր նկատում, որ կապիտալիզմի հակասություններն արդեն առկա էին հենց այդ մանր, տեղային արտադրության մեջ, որոնք միջնորդված էին կապիտալիզմի կապերով։ Այդ վրիպումը թույլ էին առլխ նաև նարոգնիկները։

Բնութագրելով Բաբլի օնալթային ճգնաժամը» և առաջադրելով դրանից դուրս գալու միջոցները (պետություն օգնություն, նալթարդյունաբերողների միությունների ու սինդիկատների կազմակերպում և այլն), «Նոր-Դարը» հանգում էր մի հետևության, որն ուղիղ զմով կալոված էր նարոգնիկության տեսնական ուսմունքի հետ։ Առաջարկի և պահանջարկի համամասնության սկզբունքից գիտելով, թե օնալթն արդյունաբերվում է ավելի շատ, քան պահանջ կա», նա եղրակցցնում էր, որ անհրաժեշտ է «նորանոր շուկաներ ձևեց բերի»⁴։ Փաստորեն ստացվում էր, որ կապիտալիզմի զարգացման հետ տեղի է ունենում ներքին շուկայի նեղացում, որից դուրս գալու ելքը կա՛մ արտաքին շուկաների որոնումն է դեպի արևելյան երկրները, կա՛մ էլ պահանջարկին համապատասխան «արդյունաբերական գործի» կարգավորումը⁵։ Այնքան է, որ «Նոր-Դարը» փորձում էր մի դեպքում արտադրությունը հարմարեցնել շուկային, իսկ մյուս դեպքում՝ շուկան արտադրությանը, ըստ էության նույնացնելով իրացման և արտաքին շուկաների անհրաժեշտության հարցերը։

Ինչպես հայտնի է, հեղափոխական նարոգնիկությունը, ելակետ օնենալով Ռուսաստանի զարգացման յուրօրինակ ուղու վերաբերյալ Ա. Ի. Գերցենի տեսությունը, ընդհանրապես ժրխում էր երկրում կապիտալիզմի զարգացման հնարավորությունը։ Սակայն 90-ական թվականներին արդեն կապիտալիզմի զարգացման հարցը լիբերալ նարոգնիկության մոտ քննվում էր նրա հետագա զարգացման հնարավորության տեսանկյունից։

1 Տե՛ս «Նոր-Դար», 1892, № 48։

2 Տե՛ս «Նոր-Դար», 1886, № 125։

3 «Նոր-Դար», 1893, № 127։

4 Տե՛ս «Նոր-Դար», 1893, № 127։

1 Տե՛ս «Նոր-Դար», 1892, № 189։

2 «Նոր-Դար», 1886, № 45։

3 Տե՛ս «Նոր-Դար», 1886, № 120։

Մանրորժուական գաղափարախոսության դիրքերից, որն իր հիմքում ուներ իրացման սխալներով և տեսությունը և Սմիթի դոգման, լիբերալ-նարոզիկները գտնում էին, որ կապիտալիզմի զարգացման հետ միասին մանր արտադրողների քայքայումը հանեցնում է ներքին շուկայի նեղացմանը: Նրանց կարծիքով, քանի որ Ռուսաստանը լուծի արտաքին շուկաներ, ուստի «գեր-բարձր» իրացվել չի կարող, հետևաբար և բացակայում են կապիտալիզմի հետագա զարգացման պայմանները¹: Փաստորեն տնտեսական ճգնաժամների և արտաքին շուկաների վերաբերյալ «Նոր-Պարի» մեկնությունները եզրեր էին որոնում լիբերալ նարոզիկության տեսական դրույթների հետ:

Վ. Ի. Լենինը ցույց է տվել, որ կապիտալիստական վերաբարձությունը զուգորդվում է ոչ թե ներքին շուկայի նեղացումով, այլ ընդլայնումով: Արտադրողական ուժերի զարգացման հիման վրա աշխատանքի հասարակական բաժանման խորացումը նպաստում է ապրանքային կապերի շրջանակների ընդլայնմանը, ապրանքային տնտեսության զարգացմանն ընդհանրապես:

«Նոր-Պարը», իհարկե, անտեսում էր այն իրողությունը, որ արտահանությունը միշտ զուգորդվում է դեմքեմք ներմուծմանը և, փաստորեն, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում ապրանքային մասսայի ընդհանուր քանակությունը մնում է նույնը: Սակայն թերթը սխալվում էր, երբ արտաքին շուկայի հարցը կապում էր իրացման պրոբլեմի հետ: Ինչպես նկատել է Վ. Ի. Լենինը, «արտաքին շուկայի հարցը բացառապես կապել ոչ մի ընդհանուր բան չունի իրացման հարցի հետ, և կապես ոչ մի ընդհանուր բան չունի իրացման հարցը բացառապես իբրև մի ամբողջություն իբրև հետ կապելու փորձը բնութագրում է միայն կապիտալիզմը «կասեցնելու» ուսմանտիկական ցանկությունները և տրամաբանելու ուսմանտիկական անընդունակությունը»²:

Տնտեսական ճգնաժամների առկայությունը «Նոր-գարը» հակվում էր կապելու արտադրության և սպառման միջև գոյություն ունեցող հակասության հետ՝ սպառմանը հատկացնելով առաջնային դեր: Մինչդեռ դա կապիտալիզմի հիմնական հա-

կատության՝ արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր կապիտալիստական ձևի ներհակության դրսևորման ձևերից մեկն է: «Նոր-Պարը» չի նկատում մի բան, որ ընչամիտ կապիտալիզմի զարգացման հետ անձնական սպառումը կրճատվում է, այնուամենայնիվ, ներքին շուկան ընդլայնվում է առաջին հերթին արտադրողական սպառման հաշվին: Ինչ վերաբերում է արտաքին շուկայի անհրաժեշտությանը, սակայն օբյեկտիվորեն բխում է կապիտալիստական տնտեսակարգի բուն էությունից:

«Նոր-Պարը» յուրովի էր բմբռնում հասարակական առաջադիմության եվրոպական ուղու անհրաժեշտությունը, ընդգծելով նրա, այսպես ասած, լուսավորական կողմը: «Մեր երկիրը,— գրում է թերթը,— իր մտտիկ անջայտի հետ համեմատած, զգույն կերպով առաջդիմել է Կանտոնավորված ճանապարհները, երկաթուղիները մեծ պարկ տվեցին երկրի առևտրին և զարգացմանը:

Այդ փոփոխությունները և շոգիի գործադրությունը Կովկասում մեծ զարկ տվեցին երկրի լուսավորության զործին: Եթե եվրոպական տեսակետից մեր երկիրը դեռ շատ հա է մնացած... բայց իր մտտիկ անջայտի հետ համեմատելով, չենք կարող չնկատել, որ նա հետևում է եվրոպային հետևում է եվրոպական լուսավորության, ինչքան կարողանում է... Այդ հետևության մեջ մեր երկիրն այն սխալներն է անում, ինչ-որ հասուկ է խավարից լույսին ձգտող երկրին:

Բարոյագես ընկեկով, շարապր իրեն վնասելով և մեղանչելով նահապետական շատ զեղչելի սովորությունների, բարբի և վարբի, մաքրության դեմ՝ մեր երկիրը անպայման ձգտում է զեպի լույսը... հարկավոր է միայն այդ ձգտումին կանոնավոր բնացած տալ: Այստեղ դրսևորված են և հասարակական զարգացման ընթացքի վերաբերյալ թերթի օպորտիզմը, և միաժամանակ նրա «սոցիալական հաշիցության» սահմանափակությունը: Որքանով կապիտալիստական հարաբերությունների զարգացումը խախտում է «ազգային օրգանիզմի ավանդական դիմապատկերը», այդքանով նա այդ զարգացումը փորձում է «հարմարեցնել ազգի ամբողջությունը անխախտ պահելու պատրանքին»: Քննարկելով Բարբի նախարարումարերության մեջ ար-

¹ Տե՛ս Նիկոլայ-Օն, Очерки нашего пореформенного общественного хозяйства. Народническая экономическая литература, М., 1958, стр. 529—531.

² Վ. Ի. Լենին, ե՛տ, 5, 2, էջ 189:

¹ «Նոր-Պար», 1889, № 106.

Մանրորժուական գաղափարախոսության դիրքերից, որն իր հիմքում ուներ իրացման սիստոնիական տեսությունը և Միթի դոգման, լիբերալ-նարոդնիկները գտնում էին, որ կապիտալիզմի զարգացման հետ միասին մանր արտադրողների քայքայումը հանգեցնում է ներքին շուկայի նեղացմանը՝ նրանց կարծիքով, բանի որ Ռուսաստանը չունի արտաքին շուկաներ, ուստի օգեր արժեքը» իրացվել չի կարող, հետևաբար և բացակայում են կապիտալիզմի հետագա զարգացման պայմանները¹։ Փաստորեն անտեսական ճգնաժամերի և արտաքին շուկաների վերաբերյալ «Նոր-Պարիս» մեկնությունները եզրեր էին որոնում լիբերալ նարոդնիկության անտեսական գրույթների հետ։

Վ. Ի. Լենինը ցույց է տվել, որ կապիտալիստական վերաբարձրությունը զուգորդվում է ոչ թե ներքին շուկայի նեղացումով, այլ ընդլայնումով։ Արտադրողական ուժերի զարգացման հիման վրա աշխատանքի հասարակական բաժանման խորացումը նպաստում է ապրանքային կապերի շրջանակների ընդլայնմանը, ապրանքային տնտեսության զարգացման ընդհանրապես։

«Նոր-Պարը», իհարկե, անտեսում էր այն իրողությունը, որ արտահանությունը միշտ զուգորդվում է դեմընթաց ներմուծմանը և, փաստորեն, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում ապրանքային մասսայի ընդհանուր քանակությունը մնում է նույնը։ Սակայն թերթը սխալվում էր, երբ արտաքին շուկայի հարցը կարգում էր իրացման պրոբլեմի հետ։ Ինչպես նկատել է Վ. Ի. Լենինը, «արտաքին շուկայի հարցը բացառականապես ոչ մի ընդհանուր բան չունի իրացման հարցի հետ, և դրանք իբրև մի ամբողջություն իրար հետ կապելու փորձը բնութագրում է միայն կապիտալիզմը «կասեցնելու» ուժանտիկական ցանկությունները և տրամաբանելու ուժանտիկական անընդունակությունը»²։

Տնտեսական ճգնաժամների առկայությունը «Նոր-Պարը» հակված էր կապելու արտադրության և սպառման միջև գոյություն ունեցող հակասության հետ՝ սպառմանը հատկացնելով առաջնային դեր։ Մինչդեռ դա կապիտալիզմի հիմնական հա-

կասության՝ արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր կապիտալիստական ձևի ներհակության գրոնորման ձևերից մեկն է։ «Նոր-Պարը» չի նկատում մի բան, որ շնայած կապիտալիզմի զարգացման հետ անձնական սպառումը կրճատվում է, այնուամենայնիվ, ներքին շուկան ընդլայնվում է առաջին հերթին արտադրողական սպառման հաշվին։ Ինչ վերաբերում է արտաքին շուկայի անհրաժեշտությանը, այդ այն օբյեկտիվորեն բխում է կապիտալիստական տնտեսակարգի բուն էությունից։

«Նոր-Պարը» չուրովի էր բմբռնում հասարակական առուցադրության եվրոպական ուզու անհրաժեշտությունը, ընդգծելով նրա, այսպես ասած, լուսավորական կողմը։ «Մեր երկիրը,— գրում է թերթը,— իր մոտիկ անցյալի հետ համեմատած, զգալի կերպով առաջադիմել է Կանոնավորված անապարհները, երկաթուղիները մեծ զարկ տվեցին երկրի առեփարհի և զարգացմանը։

Այդ փոփոխությունները և շղթի գործադրությունը կովկասում մեծ զարկ տվեցին երկրի լուսավորության գործին։ Եթե եվրոպական տեսակետից մեր երկիրը սեռ շատ եււ է մնացած... բայց իր մոտիկ անցյալի հետ համեմատելով, չեն կարող չնկատել, որ նա հետևում է Եվրոպային, հետևում է եվրոպական լուսավորության, ինչքան կարողանում է... Այդ հետևության մեջ մեր երկիրն այն սխալներն է անում, ինչ-որ հասուղ է խափարից լույսին ձգտող երկրին։

Բարչապես ընկնելով, շարաշար իրեն վնասելով և մեղանչելով նահապետական շատ գեղեցիկ սպորտիստների, բարքի և վարքի, մաքրության դեմ՝ մեր երկիրը սեռ շատան ձգտում է դեպի լույսը... հարկավոր է միայն այդ ձգտումին կանոնավոր բնացք տալ»։ Այստեղ դրսևորված են և՛ հասարակական զարգացման ընթացքի վերաբերյալ թերթի օպտիմիզմը, և՛ միաժամանակ նրա «սոցիալական հայեցողության» անհամափակությունը։ Որքանով կապիտալիստական հարաբերությունների զարգացումը խախտում է «ազգային օրգանիզմի ավանդական դիմապատկերը», այդքանով նա այդ զարգացումը փորձում է «հարմարեցնել սզգի ամբողջությունը անխախտ պահելու պատրանքին»։ Քննարկելով Բաբիի նավթարդյունաբերության մեջ ար-

¹ Տե՛ս Николай -Он, Очерки нашего пореформенного общественного хозяйства, Народническая экономическая литература, М., 1958, стр. 529—531.

² Վ. Ի. Լենին, եժ, չ. 2, էջ 182.

¹ «Նոր-Պար», 1889, № 106.

տասնամեայան կապիտալների տիրապետության հարցը, նա կշատմբում էր տեղացիներին, որոնք «մասնավոր բնկերություններ հիմնելու» փոխարեն, հիանում էին օտարների «Նախա-մշտություններով ու գործարարությամբ», ազիպցնում «չար-լինների և բազագների» թիվը, իսկ այնուհետև գոտողություններ անում տեղական արտադրության նահապետական ձևերի, «ան-հաստական ուժի» նկատմամբ «համայնական ուժի» առավելու-թյան¹, չափավորության սահմաններում «զգուշավոր» ձևով ակցիոներական հիմունքներով արտադրություն կազմակերպելու մասին, առաջադրելով հինը թողնելու և զործարանային գրու-թյունից օգուտ քաղելու դադարաբեր²: Այդ գործում թերթն էա-կան դեր էր հատկացնում «կրթված առևտրականին»³, ինչպես նաև փոխատու վարկային հաստատություններին, ինքնօգու-թյան և այլ միջոցառումներին, որոնց շնորհիվ, իբր, հնարա-վոր կլինեք համակերպվել «ժամանակի նշանին», այսինքն՝ հասարակության բուրժուական վերածնունդը:

Տարբեր առիթներով «Նոր-Գարը» անդրադարձել է նաև գը-րարային հարաբերությունների հարցերին, սպագրելով գյուղա-ցիտության տնտեսական ու սոցիալական միճակը լուսարանող հողգլածներ: Այսպես՝ Ս. Բահաթրյանը «Մի հայացք այժմյան Զանգեզուրի գավառի գյուղացուց տնտեսական գրության վրա հողգլածաշարում գյուղացիության տնտեսական ծանր պայման-ների պատճառներից հիմնականը համարում էր հողերի խիստ անհավասար բաշխումը: Նրա տվյալներով, «մեկ հողարածին հողը մեկ զեսայտինից էլ պակաս է»: Վկայակոչելով ուս պը-ֆեսոր Ցանտերի այն տեսակետը, որ նորմալ կարելի է համարել, եթե հողարածինը հավասար է հինգ զեսայտինի, նա նկատում է, որ Զանգեզուրի գավառի գյուղացիության 2/3 մասը բոտ էլուցյան հողագրել է: Ս. Բահաթրյանը միտածամանակ հավա-տում էր, որ ինչպես հողերն են խիստ անհավասար բաշխված, այնպես էլ հարկային սխտանն ուս կամայական ու ձևական բնույթի, որ հարկաշարքը որոշելիս բոլորովին հաշիվ չի առնվում գյուղացիության տնտեսական գրությունը: Հեղինակը սակա-վաճողությունը էր բացատրում գյուղացիության տարագնացու-

թյունը, գտնելով, որ գյուղատնտեսության տվյալ հյուղերի գար-գացումը կարող էր գյուղացուն կապել հողի հետ, բարձրել նրա տնտեսական գրությունը¹: Մի այլ հեղինակ Երևանի նա-հանգի գյուղացիության մասին գրել է. «Հողարածին հարա-բերությունը զեպի հասարակությունը տարեց տարի փոխվում է, մինչև հողարածին բանակությունը մնում է միշտ միևնույնը, գյուղական հասարակության անգամների թիվը հետզհետև ավե-լանում է»²:

Այսպիսով, «Նոր-Գարը» եթե մի կողմից տարագնացու-նը կապում էր բնակչության աճի ու բնության ուժերի հարա-բերակցության փաստի, մյուս կողմից՝ հայկական համայնքի տնտեսական կյանքի թույլ զարգացման, ապա մի երրորդ կող-մից՝ գյուղացիների սակավաճողության հետ: Իրականում տա-րագնացության ուժեղացումը վկայում է գյուղում ագրարային գերակալության երևան գալու մասին: Գա կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանք էր, որը, ինչպես նկատել է Կ. Մարքսը, միտածամանակ հենց այդ զարգացման պայմանն է:

Խոշոր արդյունաբերությունը, որը երկրամասում վերելք էր ապրում, լրացուցիչ աշխատուժի պակասը լրացնում էր հենց գյուղում առաջացած «ավերորդ» ուժերի կամ ագրարային գեր-բնակչության հաշվին: Կապիտալիստական խոշոր արդյունա-բերությունը Հայաստանում, համեմատած Անգրիկոլիստի մյուս տնտեսական շրջանների հետ, թույլ էր զարգացած Արդյունա-բերական խոշոր կենտրոնների բացակայությունն էլ պայմանա-վորում էր բնակչության հուսը երկրի սահմաններից դուրս, զեպի առավել զարգացած տնտեսական շրջանները:

«Նոր-Գարը» մի անգամ չէ, որ անդրադարձել է համայնա-կան հողատիրության հարցերին: Ա. Ագապյանը, օրինակ, հե-տևելով ուս տնտեսագետներին, վերլուծում էր համայնական և ծխական կամ անհատական հողատիրության առավելություն-ների ու պակասությունները: Նա համայնական հողատիրության ստավելությունները մեկը համարում էր այն, որ եթե ոչ լրիվ, սպա գտնե ինչ-որ շափով «Նկում է հավասարությունը»: Ա. Ագապյանը համամիտ էր համայնքի քաղաքական նշանա-

1 Տե՛ս «Նոր-Գար», 1888, № 54:

2 Տե՛ս «Նոր-Գար», 1890, № 135:

3 «Նոր-Գար», 1894, № 162:

1 Տե՛ս «Նոր-Գար», 1885, № 150:

2 «Նոր-Գար», 1888, № 206:

կրթյան վերաբերյալ ուս գիտնական Ն. Բ. Իվանյուկովի գնահատականին, քառ որի այն «բնութագրելով է համերաշխության» գաղափարի հետ, զատարարաբար «հասարակական ոգի»:

Քերթի կարծիքով, համայնական հողատիրության թերությունն այն է, որ գյուղացին անբացած չէ հողին: Վերջինս առկա է ծխական հողատիրության ժամանակ, բայց սա էլ իր «քերթին այն թերությունն ունի, որ բնույթի սնդղամների թիվը՝ մեծանալով՝ հողը ալլես չի բավականացնում», այսինքն՝ համայնքի աշխատանքային սամանափակ հնարավորություններն արդեն չեն կարող բավարարել ազգաբնակչության բնական աճի պահանջները: Ենթա է, Ա. Ագասյանը մեծ տեղ էր հատկացնում հողի արտադրողական հատկությունների բարձրացմանը՝ բնական գիտությունների գործադանն և ներդրման միջոցով, արնումամենայնիվ, անհամաչափության հաղթահարումը նա համարում էր անհնարին, որանով իսկ ակամա տուրք տալով մալթուսականությունը:

Չնայած Ա. Ագասյանը, հետևելով Գլեր Ուայենսկուն, հողին վերադրում էր մեծ ուժ, որանով էլ պայմանավորում գյուղացու «նշտական, ֆիզիկական և բարոյական աշխարհը», սակայն համայնական տնտեսական չէր խղճալականացնում: Այսինքն, նա երբեմն կասում էր համայնքի պատմական դատապարտվածությունը: Քերթի մեկ այլ «նշտական» Կ. Մելիք-Շահնազարը, ի տարբերություն անհատական սկզբունքի, աշխատանքի համայնական ձևի հետ էր կապում իր իղնալը, որա մեջ տանելով հասարակության նշտական և բարոյական գաղափարման երաշխիքը՝ «Առանց արմատական փոփոխության,— գրել է նա,— զվարթ թե բարեփոխիչ գյուղացու դրությունը, իսկ այդ փոփոխությունը պետք է լինի գյուղացիների մեջ համայնական աշխատանքի գաղափարը տարածելով»: Հողի հետ էր կապում գյուղացու «նշտական և բարոյական իրավունքն» նաև Դուրկեյանը: Նա գրվատում էր համայնական սկզբունքների վրա խորախմբած արտադրությունը և նշում այն պակասությունները, որոնք առկա են Ախալքալաքի գաղափարում¹:

«Նոր-Գարի» արծարծած այս տեսակետները, որոնք գաղափարական ընդհանուր կետեր են որոնում ուս գյուղացիության գաղափարախոսների դեմոկրատական իրենների հետ, իրականում հետո էին հասարակական զարգացման վերաբերյալ ճիշտ պատկերացումներին: «Գյուղացիների մասուն,— գրել է Վ. Բ. Անինը,— չի գիտակցում և չի էլ կարող գիտակցել այն, որ ամենալիակատար «ազատությունը» և թեկուզ անգամ ամբողջ հողի «ամենաարագաբացի» բաշխումը ոչ միայն չի ոչնչացնի կապիտալիզմը, այլ, բնորոշանալով, պայմաններ կտեղծի նրա առանձնապես լայն ու հզոր զարգացման համար»:

Համայնքի և համայնական հողատիրության վերաբերյալ «Նոր-Գարի» գնահատումներն ընդհանրություններ են հայտաբերում սլավոնաֆիլների հայեցության հետ: Եվ պատահական չէ, որ թերթը զրվատներով է խոսում Ա. Սամայրիցի, Յ. Սամարինի և հատկապես Կ. Ակսակովի մասին, որպես «նշանավոր հայրենասեր», որի գաղափարն էր լուսավորությունը ոչ թե իբրև շարիչ հազցնելու ուսուց և առհասարակ սլավ ազգին, այլ պատվաստեր եվրոպական բաղադարկթությունը սլավյան աշխարհին, թողնելով նրան ազատորեն և ինքնուրույն զարգացնելու ազգային հատկությունները²: «Նոր-Գարի» բարոյախոսությունն ընդհանուր կետեր ուներ նաև կրոնի, իբրև ժողովուրդների համընդհանուր մտածողության, սլավոնաֆիլական գաղափարների հետ: Ինչպես վերջիններս, նա համայնական սեփականությունը չէր հակադրում մասնավոր սեփականությանը: Քերթի կարծիքով, դրանք պետք է կատարեն տարբեր հասարակական-սոցիալական ֆունկցիաներ: Մասնավոր սեփականությունը «Նոր-Գարը» ներկայացնում էր իբրև արտադրության զարգացման նախապայման, իսկ համայնական սեփականությունը՝ հասարակական հակասությունների վերացման միջոց:

Անդադադանալով XIX դարի հասարակական զարգացման խնդիրներին, «Նոր-Գարը» տարբեր առիթներով բնույթի է տիրապետող տնտեսական ու սոցիալական ուսումնասիրող, առտահայտել իր վերաբերմունքը դրանցից յուրաքանչյուրի պետական ու պատմական նշանակության մասին: Եթե մի կողմից

¹ Տե՛ս «Նոր-Գար», 1894, № 187 (տես նաև) Ի. Иваницова, Падение крепостного права в России, изд. второе, СПб., 1903, стр. 138—140):

² Տե՛ս «Նոր-Գար», 1900, № 110:

³ «Նոր-Գար», 1896, № 59:

⁴ Տե՛ս «Նոր-Գար», 1895, № 81:

¹ Վ. Բ. Անին, ընթ, հ. 11, էջ 352:

² «Նոր-Գար», 1886, № 14:

դա ուներ հայ միաբեր տնտեսագիտական ուսմունքների պատմությանը հաղորդակից զարմնելու միտում, ապա մյուս կողմից թերթը փորձում էր ցույց առնի սոցիալական զարգացման իր հայեցողության հշմարտացիությունը: Քերթի սպագրամ տնտեսագիտական բնույթի հղովածներում կարելի է հանդիպել իրատեսակ կարծիքների, տնտեսագիտական, փիլիսոփայական ու սոցիալական տարբեր ուսմունքներից բխող ընդհանրացումների: Եվ տրամաբանական է, որ «Նոր-Գարո» տնտեսական այս կամ այն հարցեր բնույթի էր ենթարկում տեսական մտքի տարբեր զուգահեռներում, այդ տեսությունների այս կամ այն կողմը հարմարեցնելով տնտեսական զարգացման իր իղեկալին: «Նոր Գարո» տեսարաններից ընդհանրացումները: Ս. Սապահ-Գյուլյանը, նկատել է, որ ազատության և բարօրության ձգտումը մշտապես ուղեկցում է թաղաքակրթության պատմության ընթացքին: Եվ կապված այն բանի հետ, թե ինչ սկզբունքներ ու մեթոդներ են առաջադրվել խնդրի լուծման համար, առանձնանում են զարգացման համակարգերը, ուղղություններն ու զարգացնող փորձերը: Ս. Սապահ-Գյուլյանը նախատեսել էր հանդես գալ առանձին Ս. Սապահ-Գյուլյանի «Տնտեսագիտական զարգացումներ» ընդհանուր խորագրով: Սակայն թերթում տպագրվել է նրա այդ բնույթի հղովածներից միայն մեկը, որը նվիրված է ֆիզիոկրատիզմին: Ընդ որում, անտեսելով մեկանախիվյան, Հեղինակը իբրև բարձրագույն քաղաքատնտեսության առաջին ուղղությունը բնութեսել է ֆիզիոկրատների զարգացումը:

Ս. Սապահ-Գյուլյանը բմբռնում է, որ ֆիզիոկրատների սոցիալական փիլիսոփայությունը խարսխված է բնական իրավունքի տեսության վրա, բայտ որի «մարդկային ընկերությունները կառավարվում» են մարդկանց «կամփոց բուրյուրվին պնկայ» գոյություն ունեցող բնական օրենքներով, սուսի և հասարակության զարգացումը պետք է ընթանա այդ օրենքներին համակցատարժան: Համաձայնելով ֆիզիոկրատների հետ, որոնք դիպատասխան: Համաձայնելով ֆիզիոկրատների հետ, որոնք դիպատասխան: Համաձայնում էին տնտեսության համընդհանուր տեսության խնդիրը համարում էին տնտեսության համընդհանուր տեսության մեկընդմիջում տրված օրենքների հետադրությունը, հեղինակը պետում էր, որ դրանք բնավ էլ «հակառակ չեն մարդկային անհատական ազատությանը»: Ընդհակառակն, այդ օրենքների շնորհիվ, իբր «անհատական շահերի միջև հաստատվում է մի ներդաշնակություն, որ կազմում է բնական կ-դրը, որը

և բարձր է մարդու տեսակական ամեն տեսակ արհեստական բաղադրություններից»:

Այդ բուրի հետ միասին, Ս. Սապահ-Գյուլյանը տեսնում էր ֆիզիոկրատների ուսմունքի թերությունները: Նա նշում էր, որ վերջինս անհասին համարում է հասարակության կենտրոնական դեմք, այն դեպքում, երբ պետության կողմից օրենսդրական ամեն մի կարգավորում խանգարում է մարդկային ընկերական ասոցիացիայի ներդաշնակությանն ու անարդի-մությանը, նկատի ունենալով այդ, հեղինակը գտնում է, որ ֆիզիոկրատների դարպոքը իր բարձրագույն վարդապետություններով անկարող է ընկերային արդի դրությունը բարեփոխել:

Ս. Սապահ-Գյուլյանի համոզմամբ, ֆիզիոկրատների դրպարոնքն արդարացիում էր կապատարտեսական տնտեսակարգը, նրա նկատմամբ ցուցաբերում «կոտակապական» կանխակալ մտացում, «լավատես էր» բուրժուական հաստատությունների նկատմամբ, սուսի և նրա տեսական շատ դրպլներ Հին բխում «գիտական ոգու թիկարանքից»: Մանրբուրժուական բնագագա-տը Հեր բմբռնում, որ սրբան բնական էր կապիտալիստական արտադրանդանակի հաստատումը, նույնքան և բնական էր ֆիզիոկրատների տեսության ի հայտ գալը:

Բուրժուազիայի ֆիզիոկրատներին, Կ. Մարքսը նկատել է, որ նրանց համար արտադրության բուրժուական ձևերն անհրաժեշտաբար ընդունում էին արտադրության բնական ձևերի տեսք: Ֆիզիոկրատների մեծ ծառայությունն այն էր, որ նրանք այդ ձևերը դիտում էին իբրև հասարակության ֆիզիոլոգիական ձև-վեր, որոնք կյանքի են կռչվել բուն արտադրության բնական անհրաժեշտությունները: Նրանց սխալը Կ. Մարքսը համարում էր այն, որ մի որոշակի պատմական աստիճանի նյութական օրենքը դիտում էին իբրև հասարակության բոլոր ձևերի վրա հավատարապես իշխող արտաբնական օրենք:

Թեև Ս. Սապահ-Գյուլյանը մտորվալին հասարակության պատմությունը ներկայացնում էր որպես տնտեսական ու սոցիալական անհավատարմության պատմություն, բայց և, գերպահաստելով բնության գործոնի դերը, կապիտալիզմի տեղ-տեսական և քաղաքական կարգը դիտում է իբրև «հետևանք պատմության»:

1 «Նոր-Գարո», 1898, № 172:

2 Տե՛ս К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 26, ч. 1, стр. 12.

տերազմական իրողությանց և բանության կովան եղող աշխարհակալութիանց¹: Ակններն է, որ Հեղինակը բազաբական կարգերն հիմքերը տեսնում էր ոչ թե նյութական պայմանների, այլ բանության մեջ:

Մարքսիզմի դասականները բացահայտել են բանության և արտադրության զարգացման միջև եղած կապը, ցույց տվել, որ բոլոր շահագործողական հարաբերություններն էլ ներթոժված են բանության հարաբերություններով, որոնք, սակայն, իրենց հիմքում ունեն ճառագայտաբան տնտեսական գործոններ: Արտադրության ձևերի և արտադրական հարաբերությունների փոփոխության հիմքում միշտ էլ ընկած են տնտեսական պատճառները:

Ս. Սապաճ-Փյուլյանը, ինչպես և XIX դարի սոցիոլոգիական մտքի շատ ուրիշ ներկայացուցիչներ, պետությունը և իրավունքը գիտում էր իբրև բնական երևույթ: Քաղաքական իշխանության հիմքը նա չէր տեսնում նյութական հարաբերությունների մեջ: Այսպիսի բնկայմամբ, բանությունը ներկայացնում է որպես այն հիմքը, որի վրա կազմավորվում է պետության սիստեմը, առաջ բերելով շահագործողներ և շահագործվողներ, իշխողներ և ստորադրյալներ: Այսանդից էլ տնտեսական տիրապետության անխտանափելիությունը: Այդ կապակցությամբ Ֆ. Էնգելսը քննադատելով Ե. Գյուրինգիև, գրել է. «Բանության այս վկայակոչումը մի ողորմելի խտաբախանք է, մի միջոց, որով տնտեսական բնագավառից հարցը տեղափոխվում է քաղաքական բնագավառ և, որն ի վիճակի չէ բացատրելու ոչ մի տրեստեսական փաստ»²:

Ս. Սապաճ-Փյուլյանը հետևյալ ձևով է պատկերացնում հասարակական հերթափոխության անհրաժեշտությունը. «Ժամանակակից գիտությունը անհերքելի կերպով վճռել վերջացրել է որ է՝ դիսպոզոր բնական օրենքը շրջափոխության (evolution) օրենքն է: Եթե այդ այդպես է, ապա բնական օրենքը բնավ ընդհան չէ փոփոխության օրենքին, ինչպես հավատացնում է, ճգնում ազատական դպրոցը, ընդհակառակը փոփոխության սկզբունքն է, որ բնական օրենքները հարստան և մնայուն գո-

յություն ունեն»³: Այստեղից թվում է, թե Ս. Սապաճ-Փյուլյանը չէր բնզոնում կապիտալիզմի իրենակատարելագործման և մշակչենականության թեկն վերաբերյալ բուրժուական տնտեսագիտողների դրույթը: Իրականում, սակայն, արտադրության եղանակների հերթափոխության անհրաժեշտության հարցում նա կողմնորոշվում էր դեպի էվոլյուցիոն սկզբունքը, բնզոնում հասարակական զարգացման աստիճանական փոփոխությունների ուղին: Գեո ափլիխ, բառ էություն ինչ-որ տեղում նույնացնում է բնական ու տնտեսական օրենքները, սուրբ տալով հասարակության տարերային զարգացման տեսությունը:

Ս. Սապաճ-Փյուլյանը «Էնգելսական ինդիքը և գործազուլը Արևմտյան Եվրոպայում» հոդվածաշարում հասարակական նախորդ ֆորմացիաների կործանման պատճառը համարում էր սոցիալական ինդիքը՝ կապված դասակարգային ներհակությունների հետ: Նա, ինչպես մանրերլործական տնտեսագետ Պրուտոնը, բոլոր շարիքների պատճառը տեսնում էր մասնավոր սեփականության մեջ, այն համակցով զորություն²: Հեղինակը թերահավատությամբ էր վերաբերում նաև պետությանը վերաբրվող բարեփական ֆունկցիաների մասին պատմական դպրոցի հայեցությունը:

Հայտնի է, որ Հեգելի մաս պետությունն ազատության բարձրագույն մարմնացումն էր, հասարակության զարգացման բարձրագույն քնական ուժը: Պետության այսպիսի իդեալականացումը նպատակ էր հետամտում քողարկելու նրա դասակարգային էությունը՝ որպես շահագործող դասակարգերի դիկտատուրային: Հենց այս զուգահեռներում էլ Ս. Սապաճ-Փյուլյանը կասկած էր հայտնում պատմական դպրոցի «սոցիալական ներգաշնալություն» ծրագրի հանդեպ. «Եսխ ո՞վ է, ի՞նչ է այդ պետությունն ապաված բարձրագույն մարմինը, ի՞նչ է նրա սահմանը, ո՞ր է սկսում և ո՞ր վերջանում: Եթե այդ Բյունդլիի, Հեգելի քարոզած, եզրագավառ պետությունն է, ապա նա այդպիսի ինդիքներ վերջնականապես վճռել անկարող է: Նա այդ չի անի, որովհետև ինքն իր ձևերով իր գոյության իրավունքը կունենացնե»³:

Այսպիսով, ընդունելով այն, որ տնտեսագիտական հայտնի

¹ «Ենոր-Գարո, 1898, № 172:

² Ֆ. Էնգելս, Անտի-Գյուրինգ, Նրեան, 1907, էջ 289:

¹ «Ենոր-Գարո, 1898, № 172:

² Տե՛ս «Ենոր-Գարո, 1898, № 158:

³ Նույն տեղում:

գարդեցիներից ոչ մեկը ի վիճակի չեղավ առաջադրելու հասարակական հակամարտությունները լուծելու ամբողջական ծրագիր, Ս. Սալպահ-Պոլյանը, հավանաբար ակնարկելով սոցիալիստական ուղղությունը, նկատում էր. «Այն դարացը, որ կռված է մի օր այդ կնճռոտ խնդրին ուղղապես վճռելու, թեև կազմ ու պատրաստ՝ բայց դեռևս իր ուժերի պատանակության մեջն է գտնվում: Եվ այդ հուժկու պատանին օրեցօր աճում, դարգանում, առաջադնում է»¹:

Ս. Սալպահ-Պոլյանը քննադատում էր այն տնտեսագետներին, ովքեր փորձում էին կապիտալիստական «ազատություն» հակադրել ստրուկության ու ճորտության շահագործման ձև-վերին: Նա նշում էր, որ առաջ են եկել շահագործման նոր եղանակներ, որ Արիստոտելի ժամանակներին «ստանյակն ու կնիցքը» փոխարինվել են XIX դարի քաղաքակրթության «հրեշավոր մեքենաներով»: Իրավական և փաստական ազատության միջև առաջացել է մի մեծ խզում և եթև շահագործումը ճորտատիրության պայմաններում ուներ բացահայտ բնույթ, ապա կապիտալիզմն այն իրականացնում է «նորը» թողարկված ձևով: Ս. Սալպահ-Պոլյանը հեղեղում էր բուրժուազիայի հռչակած հավասարության, եղբայրության, ազատության գաղափարները, որոնք այդպես էլ գաղափարներ մնացին, խոստում սոցիալական պայքարի անհրաժեշտության մասին: Սակայն, ըստ էության, այդ ուղղիվախիցը դուրս չէր գալիս կապիտալիզմի բուրժուական քննադատության ընդհանուր հանցությունից: Հասարակական զարգացման հարցերում ինչևիդ էլ դիպուկահիստ, նա բնորոշում էր սոցիալական խնդրի լուծման ռեֆորմատորական ուղին, ըստ էության հավերժացնում գասակարգային ներհակությունները: Հենց այդ դիրքերից էլ «Նոր-Գար» սոցիալական հակասությունները մեղմում նպատակով առաջարկում էր ռեֆորմների մի ամբողջ ծրագիր, որտեղ զլխավոր տեղը հատկացնում էր փայտափրական հիմունքներով ընկերությունների կազմակերպմանը: Ենթադրվում էր նաև Ռուսաստանի օրինակով բացել աղքատանցները, էժանապես ճաշարաններ, կոստեջիլ բնակարաններ, սահմանափակել աշխատանքային օրը և այլն²:

«Նոր-Գարը» համարակի անդադարձել է նաև տնտեսական այլ ուսմունքների վերլուծությունը: Նրա «Մի տնտեսական խրեդր» հոդվածը նվիրված է Մայիսուսի ազգաբնակչության տեսությանը: Նշենք, որ ձեռք չէ հեղինակի այն նկատառումը, թե ի գեմա Մայիսուսի ստեղծվել է ժողովրդին մի նոր՝ տեսություն: Մայիսուսի ազգաբնակչության տեսության հիմնական դրույթներն արդեն առկա էին նրա նախորդներին՝ Ջեյնս Սոլուարտի, Ադամ Սմիթի, Օրտենսի, Թունդսենի աշխատություններում: Եարագրելով Մայիսուսի ուսմունքի ստեղծման մանրամասները և նշելով նրա «ուղիղ կողմերը», հեղինակը, այնուամենայնիվ, ազգաբնակչության և կենսամիջոցների արտադրության աճի միջև անզլիացի տնտեսագետի գծած հակադրության չի համաձայնում: Չնայած Մայիսուսի սեսության այս քննադատությանը, չի կարելի սասել, թե «Նոր-Գար» հայեցողությունը արևսներ չի հայտնաբերում նրա գաղափարների հետ:

Թերթի առաջնորդներինց մեկում՝ «Կոլոզ գոյության կոլիզներն քնորոշ վերնադիր կրող անստորագիր հոգվածում հեղինակը համաձայնելով անզլիացի բնախոյոյ Թ. Հեբրլիի հայացքների հետ և ընդունելով այն, որ ինչպես բնության, այնպես էլ հասարակության դարդացումը ենթարկված է գոյության կոլիզ օրենքին, հարց է դնում. «Մարդուն էլ այդ իսկ սկիզբը պիտի առաջնորդե, մարդն էլ իր գործածության մեջ պիտի հետեի այդ օրենքին, թե նրա կյանքը պիտի հիմնվի ավելի վե՛ սկզբունքների վրա, որոնց և արտադրելու, մշակելու կուում ունեին նրա բանականությունը և բարոյական զրացմունքները»: Եվ պատահական հարցերում ինչևիդ էլ դիպուկահիստների սգություն կոլիզ տեսությանը, հեղինակը փորձում էր արբերական այլ օրենքի գոտնորման առանձնահատկությունները կենդանական աշխարհում և մարդկային հասարակության մեջ: Իրանից էլնելով, նա առաջարկում էր գոյության կոլիզ օրենքի գործողության անխուսափելիությունը քաղաքակրթական ձևի մեջ դնելու ինչ-որ վերացական սկզբունք: Ընդ որում, նա մի դեպքում քաղաքակրթության զարգացման ստախանք համարում էր գոյության կոլիզ արդյունք, մյուս դեպքում «սոցիալական առաջադիմությունը» այլ սրբոցիտ

¹ «Նոր-Գար», 1895, № 155:

² Տե՛ս «Նոր-Գար», 1895, № 155, 1895, № 103, 152, 1597, № 9, 1898, № 212:

¹ Տե՛ս «Նոր-Գար», 1896, № 148:

² «Նոր-Գար», 1893, № 194:

տիրապետութեանը սահմանափակելու միջոց, հույսեր կապելով ապագայում ինչ-ինչ «բարձր բարոյական կարգերի և սկզբունք-ներին», «գործունեության և կենցաղափարութեան նոր եղանակ-ներին» հետ¹։

Հասարակական առաջադիմութեան հարցում «Նոր-Պարք» գրաստրում էր լավատեսութիւն։ Նրա խմբագիրն ու աշխատակիցները հավատում էին, որ կգա մի այնպիսի ժամանակ, երբ «մարդիկ այլևս գայլեր ու գառներ չեն լինիլ», այլ կզատուան «եղբայրներ, ընկերներ, կապված իրար հետ փոխադարձ սիրո և համակրութեան զգացմունքներով»²։ Սակայն թերթը այդ հարցերի լուծման հեղափոխական ուղին չէր ընդունում։ Նրա հեղինակներին թվում էր, թե հասարակութեան վերափոխելու ուժի կրողը «մարդկութեան անընդհատ առաջադիմող, այսինքն կատարելագործվող հոգին է»³։ միայն ու միայն էվոլյուցիոն դարացուները։

«Նոր-Պարք» առաջադրած տեսական և գործնական սկզբունքներին, տնտեսական դարգացման ուղիների վերաբերյալ նրանում տեղ գտած հակասութիւնների վերլուծութիւնը սրտշակի հետաքրքրութիւն է ներկայացնում արգային-պահպանողական ուղղութեան սոցիալական հայեցողութեան առանձնահատկութիւնների բացահայտման տեսակետից։

«ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԿԻՐԸ ԵՎ ՌՈՒՍ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ

Անցյալ դարի վերջին, որպէս Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման ակնհաստեսներ, «Մուրճ» տեսարանները փորձում էին ըմբռնել հասարակական առաջընթացի օրինաչափութիւնները։ Այս առումով նրանց համար հակասական չէր թվում ինչպէս նախորդ, այնպէս էլ իրենց ժամանակի տնտեսագիտական ուսմունքների դրական կողմերի յուրացումն ու մեկ միասնական համակարգում դրանց համատեղումը։

«Մուրճի» տեսարանների համար գլուխթուն շունք բացարձակ ճշմարիտ տնտեսագիտական ուսմունք։ Նրանք փորձում էին եղած տնտեսագիտական այդ ուսմունքներից վերցնել այն դրական տարրերը, որոնք հարմար էին գտնում Անդրկովկասի տնտեսական զարգացման կոնկրետ պայմանների համար։ Միաժամանակ նրանք քննադատում էին այն ամենը, ինչը, նրանց հակացողութեամբ, հնացել կամ անընդունելի էր։ Ահա թե ինչու հետադուռելով XIX դարի հայ հասարակական զարգացման տնտեսական օրինաչափութիւնները, «Մուրճի» հողվածագիրները բազմիցս անդրադարձել են էվրոպական ու ռուս հասարակական մտքին, արտահայտել իրենց վերաբերմունքը դանազան տնտեսագիտական հոսանքների գիտական ու պատմական նշանակութեան մասին, մտել դրանց փորձով հաստատելու իրենց սոցիալ-տնտեսական ծրագրերի ճշմարտացիութեանը։

«Մուրճի» խմբագիր Ա. Արասխանյանը բազմաթիվ առիթներով անդրադարձել է ռուս վախճանականների սոցիալ-տրնտեսական հայեցողութեանը։ Բարձր գնահատելով Վ. Բելինսկուն, Ն. Գորբոլյուրովին, Գ. Պիսարևին, որպէս մեծ մտածողների, նա հատկապէս արժեքաւորել է Ն. Չերնիշևկուն, որպէս հասարակական կյանքը հետադուռողի։

Ուշագրավ է Ն. Չերնիշևկու մահվան կապակցութեամբ Ա. Արասխանյանի գրած հողվածքը, որը, սակայն, գրաքննութեան արգելման պատճառով չի հրատարակվել։ Հիշելով, որ

¹ «Նոր-Պարք», 1893, N 184։

² Նույն տեղում։

50—60-ական թվականների ուս իրականության գլխավոր հարցը ճորտատիրության վերացումն էր, և որ այդ ուղղությամբ հասարակական մտքը գրադեղնեկու գործում առաջատար դեր կատարեցին «Սովրեմեննիկը», Ն. Չերնիշևսկին, Ն. Գորբուլյուրովն ու Ն. Կեկրասովը, հոգովամագիրն իրավացիորեն նշել է, որ հասարակական ամենարգիմազան հարցերի վերաբերյալ Ն. Չերնիշևսկու «ստաղանգավոր և առք գրված հոդվածները» միշտ էլ արժանացել են արձագանքի ինչպես Ռուսաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: «Չերնիշևսկու առաջացրած շարժումը Ռուսիայում,— գրել է նա,— կղզիացած չէր մի կենտրոնում, այլ ծավալված էր այդ մեծ երկրի հեռավոր տեղերն ևս: Կովկասյան երիտասարդությունը կրեց նույն ազդեցությունը և բազմաթիվ պատանիներ է ն. Չերնիշևսկու գրվածքները երկրպագության պաշտամունք էին շինած»¹:

Շնարավոր է, որ այտուղ Ա. Արասխանյանի ակնարկը վերաբերում է Մ. Նալբանդյանին: Թեև այն թույլ չի տալիս լայն շրջանակներում քննարկել տնտեսագետի վերաբերմունքը Մ. Նալբանդյանի նկատմամբ, այնուամենայնիվ, հայ հասարակական-տնտեսագիտական մտքի պատմությունից Մ. Նալբանդյանին «լուծված և անտեսելով» հանելու Ա. Արասխանյանին վերաբերող որոշ միտումները գուրկ են բավարար հիմքից, քանի որ հազիվ թե Ն. Չերնիշևսկուն այդքան բարձր գնահատողը Նալբանդյանի հանդեպ շոգաբերեք նման կանխակալ մտածեցում: Ընդհակառակն, ամսագիրը XIX դարի երկրորդ կեսի հայ գրական-հասարակական պրոգնեսների գնահատությանն անդրադառնալիս տարբեր առիթներով իր համակարգել է արտահայտել Մ. Նալբանդյանի նկատմամբ, իբրև «մարտնչոտի», իբրև մի «ստաղի», որի թողած «պայծառ գիրք» հայ հասարակական մտքի քնազգավառում զեռ կարիք ունի ըստ արժանիուն հետադոտմության և պատմական գնահատության²:

Ա. Արասխանյանը հատուկ դրադվել է Ն. Չերնիշևսկու աշխատությունների հետադոտմությանը: Բարձր գնահատելով Ն. Չերնիշևսկու «Փաղաքատնտեսության ուրվագծի» ըստ Միլի» աշխատությունը, որն արժանացել է Կ. Մարքսի հավանությանը³, Ա. Արասխանյանը գրել է. «Չերնիշևսկին տվեց գիտական

տեսակետից մի նշանավոր աշխատություն, դա մի լիակատար և ինքնուրույն քննադատական վերլուծություն է նշանավոր անգլիացի բուրժուաբանտեսի վարպետության»⁴:

Հայ գործիչները Ա. Արասխանյանն առաջինը տեսավ աշխարհայացքային այն ընդհանուր կետերը, որոնք գոյություն ունեն Ն. Չերնիշևսկու և Կ. Մարքսի ու Յ. Հնգիստի ուսմունքի մեջ: Ահա թե այդ առթիվ ինչ է գրել նա. «Որքան և որքան մտքեր հուղել են մի ժամանակ միմիայն նրա անունը լսելով: Չերնիշևսկին մեռավ, կապելով յուր անվան հետ երիտասարդական ժամանակի պատմությունը: Չերնիշևսկու անունը ամենահայտնի ու ամենաժողովրդական անուններից է, թեպետ և հազիվ գտելի մի ուրիշը, որի շուրջը կուտակված լինի այնքան ասակություն ու թշնամություն: Չերնիշևսկին պարզապես էր մի կուտակցության Ռուսիայում, և այդ կուտակցության պատմությունը սերտ կերպով կապված է Արևմտյան եվրոպայի նորագույն շարժումների հետ, որոնց պարզալուծները, եթե ավելի հետևել չգնանք, եղած են հեղափոխության, Պրոտոն, Կարլ Մարքս, Լասալ, Եվլյեյն, Հնգիստ, Բեռլի, Լիբկնիխտ և ուրիշներ: Բայց Չերնիշևսկին ավելի ուղղակի Մարքսի և Լասալի հետևողներից էր, բայց և նույնքան և իոշոր անձնավորություն էր, ոչքան և նրա ժամանակակիցները»⁵: Ռուս մեծ մտածողի աշխարհայացքին Ա. Արասխանյանի ավագ այս գնահատականը եզակի երևույթ է 1880-ական թվականների հայ իրականության մեջ:

«Մուրճը» բարձր է գնահատել նաև Ն. Եկլոսնովին, նրան գտնելով «60-ական թվականների սերնդի ամենանշանավոր ներկայացուցիչների» և «Ռուսաստանի ազատամիտ ժամադրի դրոշակակիրների շարքում, որի արդեցություն ներքո անվել է և հայ երիտասարդության մի ստվար մասը»: Նրա գործունեության նպատակը «կյանքի իդեալականությունն էր», «Ազատուք զեպի լավագույն շոտարակական կարգերը»⁶:

Ամսագիրը հատուկ ուշադրություն էր դարձնում պարարյան հարաբերություններին վերաբերող հարցերի ուսումնասիրությանը: «Մուրճի» տեսարանների կաթիլներով, հուղային խնդիրը քաղաքական, սոցիալական ու տնտեսական զարգացման դրժ-

¹ ЦГИА Гruzинской ССР, ф. 480, он. 1, № 862.

² «Մուրճ», 1897, № 11—12, էջ 1631.

³ Տե՛ս Կ. Մարքս, Ապոլոստ, հ. 1, Երևան, 1954, էջ 131.

¹ ЦГИА Гruzинской ССР, ф. 480, он. 1, № 862.

² Նույն տեղում:

³ «Մուրճ», 1891, № 3, էջ 670.

վար լուծելի հանգույցներից ամենակարևորն է, որը հասարակության զարգացման բոլոր էտապներում միշտ էլ ծառայել է մարդկության առև, իսկ առավել սրբալիամբ կապիտալիզմի հասարակությանն անցման ժամանակաշրջանում, երբ հասարակության հերթափոխության հետ ծնունդ առան նոր հողային օրենքներ:

Անցյալ դարի 60-ական թվականներին հայ իրականության մեջ Մ. Նալբանդյանն էր, որ փորձեց ուղղություն տալ և հասարակական քննության առարկա դարձնել արքայալին հարաբերությունների պրոբլեմը: Եվ ահա երկու տասնամյակ հետո «Մուրճը» այն նորից կարևոր էր դիտում հայ իրականության համար, պնդելով, որ այստեղ ես պետք է «բացել հողային խեղդի ուսումնասիրության էրան»¹: Լույս էին տեսնում հողփառներ, որոնցում փորձ էր արվում տալու հասկանալի գյուղացիության պատկերը: Ըննել այս զուգահեռներում էլ ի հայտ են գալիս հողային հարցի քննության «Մուրճի» տեսաբանների նկատառումները, որոնք եզրեր էին գտնում որևէ հասարակական-անտեսական մտքի ոլորտներում:

«Մուրճի» խմբագիրն իրավաբանական նկատում էր, որ Ռուսաստանում ճորտատիրական կարգերի վերացման տարեթվին նախորդող տասնամյակներում հողային հարցի շուրջը սկսվել էր մի գաղափարական պայքար, որն ընթանում էր հիմնականում երկու ուղղությամբ: Պայքարի մասնակիցների մի մասը գտնում էր, որ հողային խեղդից պետք է լուծում ստանա եվրոպական ձևով, իսկ մյուս մասը առաջարկում էր «բուն ռուսական» ուղին: Ինչպես ենթադրում էր Ա. Արասխանյանը, հասարակական մտքի խմբուման այդ պրոցեսը «հասարակական կազմակերպության նոր իդեալներ ստեղծեց», ի վերջո ստանալով «օրենքի ուժ և գործություն»²:

Ինչ խոսք, որ գաղափարական այդ պայքար և ճորտատիրական կարգերի օրենսդրական վերացումը Ռուսաստանում իրենց ազդեցությունն են թողել Անդրկովկասում, այդ թվում Հայաստանում հողային հարցերի լուծման հետագա ընթացքի վրա: Մի կողմ թողնելով հողային հարաբերությունների Ա. Արասխանյանի վերլուծությունների քննությունը, նշենք, որ նա միշտ

էր բնորոշում ռուսական իշխանությունների ռեֆորմների արևտեսական ու քաղաքական նկատառումները: Հետաքրքրական է, որ Ա. Արասխանյանը երկրամասի հողային օրենքները բնունելով եվրոպական երկրների ու Ռուսաստանի փորձի ու տեսության դիտակետից, գրանք էր համարում «պատմական զորեղ հասանքների արդյունք»³: Բնարկն, այստեղ նկատի են առնվում ոչ միայն նարոդնիկական հոսանքը Ռուսաստանում, կամ ֆիդեիկրատների ուղղությունը Ֆրանսիայում, այլև բոլոր այն հոսանքները, որոնց սոցիալական իդեալները հասարակական մեծ վերափոխումների պատմաշրջաններում զրվում էին նույն կետի վրա: Ըննել այս առումով էլ Ա. Արասխանյանը շնչում էր, որ ամեն մի տնտեսական ու քաղաքական ռեֆորմ նախապատրաստող հասարակական կարծիք ինքնին ներգործական է և կարող է որոշի առաջարկվող վերափոխության բեռնակն ու ուղղությունը, ինչպես, օրինակ, եվրոպական երկրներում, ուր վերափոխությունները սերտորեն կապված են «փիլիսոփայական, գրական ու քաղաքաստեսական փայլուն ներկայացուցիչների ահռելի հետ»⁴:

«Մուրճը» ի ղեմս մտավորականության տեսնում էր այն ուժը, որը պետք է որոշի երկրի, հատկապես գյուղատնտեսության զարգացման ուղին: «Ամբոխի խաբըներ մտնելու» և հասարակության զարգացման զրգապատճանոններն ուսումնասիրելու համար Ա. Արասխանյանը պահանջում էր «իջնել մտավոր սանդուղիների վերին աստիճաններից զեպի ստորին աստիճաններ, հաղորդակից լինել ժողովրդական կյանքին, որպեսզի հնարավոր լինի նույն ժողովրդի սցենարյամբ կրկին վեր բարձրանալ»⁵: Այդ պահանջը, փաստորեն, թելադրում էր նարոդնիկների կամ, ինչպես Ա. Արասխանյանն էր րեոսֆաղում, «այդ համակրելի ուղղության» միտումներից: Եվ արամբանական է, որ գյուղատնտեսության ու գյուղացու վասիթար վիճակը «Մուրճի» հողփառագրքները շատ բանով էլ բացատրում էին գյուղատնտեսական մտավորականության բուցակայությունը:

«Մուրճը» գյուղատնտեսական մտավորականության ստեղծման հետ էր կապում հայ գյուղի տնտեսական զարգացման հե-

1 Տե՛ս «Մուրճ», 1889, № 9, էջ 1287—88, 1890, № 9, էջ 1190 և այլն:

2 «Մուրճ», 1889, № 9, էջ 1882:

3 «Մուրճ», 1889, № 9, էջ 1285:

4 «Մուրճ», 1890, № 11, էջ 1499:

1 «Մուրճ», 1889, № 9, էջ 1295:

2 «Մուրճ», 1889, № 9, էջ 1289:

անկարբ: «Մի դասակարգ կա առաջադն ազգերի մեջ,— գրում է Ա. Արասխանյանը,— որ մեզանում գրեթե գոյություն չունի, բայց որից մենք կապասենք ամենամեծ բարիքներ, քե՛ն քաղաքական զարգացման և քե՛ն նորա կուլտուրական առաջադիմության համար: Այդ դասակարգն է, որ ամենից լավ կատար է գիտությունը հողի հետ, երկրագործական դասակարգը՝ ինտելիգենտ դասակարգի հետ: Գա գյուղատնտեսական ինտելիգենցիան է»¹:

Նարոդնիկների կարծիքով, մտավորականությունն իր պատմական առաքելությունը Ռուսաստանում պետք է կատարեր գյուղական համայնքի պահպանության պայմաններում՝ որպես ռուսական կյանքի յուրահատուկ կառուցվածքի համար բնորոշ ձևի: Եվ ընայած հոտեֆորմիան շրջանի համայնքը դեռ որոշ աստիճանով շարունակում էր սարկել իր ներքին կյանքով, արդեն XIX դարի վերջին բառորդում կապիտալիզմի զարգացման հետևանքով հայկական գյուղում կատարվեցին արմատական տեղաշարժեր: Գյուղը կանգնում էր կապիտալիստական զարգացման ուղու վրա: Գյուղական համայնքը բայցբայովում էր, վերանում էին ավատական հին հարաբերությունները: Տնտեսության մեջ կատարվող տեղաշարժերը ոչնչով չփոխեցին գյուղացիության դրուժյունը: Այդ իսկ պատճառով նարոդնիկների առաջադրած գյուղական համայնքի պատմական հեռանկարը բնավ էլ չէր գրավում «Մուրճի» տեսաբաններին: Վերջիններս ավելի շատ փորձում էին մեկ բառակրուսու մեջ տեղադրել գյուղի վերակառուցման համար եվրոպական սոցիալ-դեմոկրատիկ և առական նարոդնիկության գաղափարախոսների առաջադրած միջոցառումները: Հենց սոցիալ-դեմոկրատիկ գուղահեռններում է Ա. Արասխանյանը նարոդնիկների պրակտիկ միջոցառումների տեսական ակունքները փնտրում եվրոպական տնտեսական սխումբներում, կարծելով, քե՛ն զրա շնորհիվ «...եվրոպական հասանքը միջոց գտավ Ռուսիայի միջոցով իր ալիքները ձգելու նաև Անդրկովկասի եզրերը և զրանով իսկ Անդրկովկասի հողային խնդիրը կապել ընդհանուր եվրոպական պատմության հետ»², երկրամասի գյուղատնտեսության զարգացման հեռանկարը Ա. Արասխանյանը կապում էր խոշոր կալվածատիրական ու

Ֆերմերային տնտեսությունների ստեղծման հետ: Նա ֆերմերի կալվածքն ու տնտեսությունը կատարյալ դպրոց էր համարում գյուղացու համար: Մակայն Ա. Արասխանյանը կողմնակից էր չափավոր ֆերմերային տնտեսությունների կազմակերպմանը: Այդ գործում «Մուրճը» առաջնությունը հասկացնում էր գյուղատնտեսական մտավորականության առաքելությունը: «Ենչպես կարելի է գործը հարողովյամբ տանել,— գրել է Ա. Արասխանյանը,— երբ մենք մեր կրկրում գյուղատնտեսական ոչ միջոցահարցը և ոչ էլ բարձրագույն գյուղացիներ ունենք, ոչ փորձական դաշտեր»³:

Ինչ խոսք, նման հայեցակետը իդեալիստական էր: Մտավորականությունը նախ չէր կարող իրականացնել առաջադրված տնտեսական վերափոխումները, բանի որ նյութապես կախված էր հասարակության բարձր խավերից, և ապա, արտագրողական ուժերի անբավարար զարգացման պատճառով չէր կարող կատարել այն տնտեսական ֆունկցիան, ինչ իրականացնում էր մտավորականությունը եվրոպական երկրներում: Ինչպես և պետք էր ենթադրել, «Մուրճի» տնտեսագետ հոդվածագիրները իսկական խորությունով չէին բմբռնում կապիտալիստական հասարակարգի զարգացման օրինակությունները: Ինքնօգնությանը, վարկային հաստատությունների միջոցով գյուղացիության դրուժյունը բարելավելու, վաշխաստական կապիտալը վերացնելու, գյուղացիության քայքայումը կանխելու և գյուղը բարեկարգելու մանրբուժմանական ուսուցիական ձիգերի պատմական նշանակությունն ավելի չէր, քան Հայաստանի տնտեսական զարգացումը կապիտալիստական ուղիով տանելու «համադեմոկրատական միջոցառումները»⁴:

Գյուղատնտեսության և գյուղացիության դրուժյան բարելավման համար «Մուրճի» հոդվածագիրները (Ա. Արասխանյան, Ա. Տեր-Ջաբարյան, Հ. Խոջա-Էնյաթյան) պահանջում էին հողը դնել անմիջական արտագրողի արամագրության տակ, գտնելով, որ անհրաժեշտ է «տեր հողեր» բաժանել գյուղացիներին և այլն: «Մեր լիբերալները,— գրել է Վ. Ի. Լենինը.— գյուղացիական հարցը մշտապես գնում են գյուղացիների «հողատակալության», կամ նրանց կենցաղը օպեսականորեն կարգավոր-

¹ «Մուրճ», 1891, № 11, էջ 1549:

² «Մուրճ», 1889, № 9, էջ 1287:

³ «Մուրճ», 1893, № 9, էջ 1394:

⁴ Վ. Ի. Լենին, ԵԺԺ, հ. 1, էջ 673:

բելու» անհրաժեշտութեան, կամ այս կամ այն «նորմալով» հող հասակացնելու (այս մեզքը գործում են նաև նարդիկները) տեսակետից: Այսպիսի տեսակետը արժատապես սխալ է¹, Գա ամբողջութեամբ կարելի է վերագրել նաև «Մուրճի» տեսարաններին:

«Մուրճի»: տնտեսագետ Հեղինակները փաստեն ու երևույթներն արձանագրում էին, հաճախ առանց խորանալու տնտեսական հարաբերությունների էություն մեջ: Եվ օրրամարանական է, որ գյուղի տնտեսական ու հասարակական կյանքի վերակառուցման վերաբերյալ ամապրի առաջարկած միջոցները հիմնոված լինելով տնտեսական սխալ գրությունների վրա, արժատական ոչինչ չէին տալիս:

«Մուրճի» տեսարանները նարդիկներին նման գյուղական դասակարգը համարում էին երկրի տնտեսական դրության բարելավման և ամենաբեղահանոր հասկացությամբ ազգի բարոյական հավասարակշռության հիմքը: Իրանք փորձում էին որսական իրականություն մեջ տասնամյակներ առաջ հայտնի գաղափարները համահունչ դարձնել հայ իրականությանը: Հենց այդ էին ակնկալում «ազգի մարմինը երկրագործ դասակարգն է» Ա. Արասյանյանի նշանաբանից բխող «ազգի ուժի, կենսունակության», «բնավորության»² միտումները, Ա. Աբանեսյանի «Գուլիանը հայրենիքի հիմնադիրն է, նրա պահողը, նրա գոյության առհավատաշունչ» պատվիրանը, Ե. Ղազարյանի որս կարողների գրող Գ. Ուսպենսկու պատմահայեցողության գրգռատենքը³ և այլն և այլն: Եվ հասկանալի է, թե ինչու ամապրին իր էշերը շատ էր սրբաձգում գյուղագիրներին:

Նարդիկներին հայացքների ազդեցությունը և գյուղի սոցիալական դիմապատկերի փոփոխությունը հետ կապված «Մուրճը» սարքը առիթներով անդրադարձել է համայնքի ու համայնական հողատիրության հարցերի քննությանը: Այսպես, Հ. Սաղաթելյանն անդրադառնալով հողատիրության հարցի քննության պատմությանը և նշելով այդ սապարհում իրանդական պատմագիր Սուլիվանի, գերմանացի Գ. Մաուրերի, բելգիացի է. Լավելյի վաստակը, որս գիտնականնեո Կ. Կալիլինի,

Ա. Վասիլիկովի, Ի. Բելլանի և ուրիշների վաստակը, հատկապես արժեքավորում է Մ. Կովալեսկու «Համայնական հողատիրություն», «Հողային վնասարերություններն արևմուտքում» դասախոսությունների ցիկլը: Երկրանք, որ մարքսիզմի դասականները բարձր են գնահատել Մ. Կովալեսկու աշխատությունները, նրա տեսական քնդհանրացումները համայնքի ծագման ու պատմության վերաբերյալ: Հ. Սաղաթելյանը հետևելով Մ. Կովալեսկուն, «գյուղա-համայնական» սեփականությունը համարում էր հողատիրության նախնական նշանավոր ձևերից մեկը և «ամենաբավարար» ամբողջ ծովագրի բարորության տեսակետից: Ելնելով դրանից, նա առաջադրում էր համայնքի գոյությունը դուրսդրել կապիտալիստական զարգացմանը⁴:

Հ. Սաղաթելյանը բազմիցս անդրադարձել է հայ իրականության մեջ համայնքի երկարակեցողության պատճառների քննությանը: Նա իրավական հաստատությունների ծագման ու զարգացման սապարհում կարևոր տեղ էր հատկացնում տնտեսական գործոնի ազդեցությանը: Սակայն, նրա կարծիքով, համայնքի «հարստությունը» պայմանավորված է «հողի պահպանման» ազդեցությամբ և «հողի վրա ունեցած իրավունքի անձնանամխելիության մասին համազգայնացման» բացակայությամբ⁵: Նա Հայաստանում հողի մասնավոր սեփականության թույլ դարգացման պատճառները կապում էր բազարական պայմանների հետ, դանելով, որ պատերազմական գործողությունների հետևանքով բնակչությունը նվազում էր, հողերն օգտագործվում էին քստ պահանջի և անբեղահատ գաղթելու վտանգը ծնում էր «բնակության անհաստատությունը և իրավունքի տեսպահովությունը»⁶, խոչընդոտելով մասնավոր սեփականության ծագման ու զարգացմանը:

Մի կողմ թողնելով մասնավոր սեփականության ծագման վերաբերյալ Հ. Սաղաթելյանի հայեցողության քննությունը, նկատենք, որ նա հարցը իրավագիտորեն կապում էր փոխանակային հարաբերությունների զարգացման հետ: Հասարակության երկարատև զարգացումը նա բացատրում էր հողօգտագործման և հողի սեփականության համայնական ձևերի առկայությամբ, զրանով իսկ ժխտելով մասնավոր սեփականության բանական-

1 Վ. Ի. Անին, ճվժ. հ. 25, էջ 112:

2 «Մուրճ», 1892, № 11, էջ 1550:

3 «Մուրճ», 1894, № 7-8, էջ 1061:

4 ՏՊՊ «Մուրճ», 1891, № 8, էջ 375-375:

1 ՏՊՊ «Մուրճ», 1890, № 5, էջ 706:

2 ՏՊՊ «Մուրճ», 1893, № 5, էջ 812:

3 «Մուրճ», 1890, № 7, էջ 1003-1004:

նության սկզբունքը, ինչպես նաև համայնքը դուռ ուստական երևույթ համարելու պազնուաֆիլիական մեկնությունները: Հողերի վերաբաժանման անհրաժեշտությունը կապելով համայնքի ներսում բնակիչների թվի անհ հետ, Ս. Մարտիկյանը փորձում էր համայնքի հավասարության սկզբունքը տեղադրել սոցիալ-դար-վիելիզմի գոյության կովի տեսության շրջանակներում: Իսկ նման մտտեցմամբ համայնքի ծագումը կտրվում է բուն արտադրողական ուժերի դարգացման բնդհանուր պատմական պրոցեսից:

Արդեն XIX դարի վերջին բառորդին ուստական համայնքի կայունության վերաբերյալ նարդիկական մտանության հավաստութունը կասկածների տեղիք էր տալիս: Հայտնի է, որինակ, համայնքի քաչաչաման անխոստփելիության մասին Մ. Կովալևսկու կոնցեսյացիայի ազդեցութունը Գ. Պելխանովի վրա¹: Նույնիսկ համայնքի պաշտպանության կոդենակիցներին անկե²: Կավելիքը, ոչ թե խրախուսում էր նրա անգամների իրավունքի ապահովումը հողի նկատմամբ, այլ, բնդհակառակն, պաշտպանում էր գյուղացիության մի մասը վարձու բանվորների վերածելու անհրաժեշտության զազափարը: Կա փորձում էր համայնքը որպես «կապիտալիզմի պահպանության» միջոց օգտագործել բնդգեմ «սոցիալիզմի»³:

Իհարկե, «Մուրճը» հասարակության վերակառուցման իր ծրագրեր բնվ էր կապում համայնքի օգտագործման հետ և եթե մի կողմից նոր հարտերությունների արտաձու անձի «սոցիալական ազատության» իրավունքը համարում էր բնպատմական, նրա գոյությունը որգանապես կապելով ճներկա արդյունագործության և առտերի պայմանների հետ», ապա մյուս կողմից փորձում էր կանխել այն: Դա բխում էր ազդի պահպանության նրա բնդհանուր հայեցությունից: Երկրամասի գյուղատնտեսության զարգացման միակ ուղին ամաաղրի համար խոշոր կալվածատիրական ու ֆեոդերալիսն տնտեսությունների ստեղծումն էր:

«Մուրճի» էջերում անտեսական ոտմանտիզմի արձագանքներ հիշեցնող սէլ շկա անցյալի անհոց ու նահպտետական

կյանքը⁴ (Մ. Տեր-Հարությունյան) արտահայտությունները ոչ թե հետամուտ էին վերադարձ դեպի անցյալը, այլ այլիկ շուտ անտեսական ձևերի փոփոխության քիկումային մամանակաշրջանի առաջընթացի խթանը: Ճիշտ է, ամաաղրն իր էջերում գրեթե չի քննարկել վարձակալական հարաբերությունները, սակայն համախապի է անդրադարձել վաշխատական կապիտալի աշխուժացմանն ու գործունեության լաչն աուպարեզի լուսարանմանը, ցույց տալով, որ այն ուղեկցվում էր գյուղացիության շահագործման ուժեղացմամբ, նրա քաչաչամամբ ու շերտավորմամբ և որոնց լուսարանութունն ամաաղրի առանցքային հարցերից էր: Դա վկայում էր սեփականության հին ձևերի ոչնչացման ու տնտեսության կապիտալիստական ձևերի առաջացման մասին: Եվ պատահական չէ, որ ամաաղրի խմբագրերը հակված լինելով երկրամասում խոշոր կալվածատիրական տրեստությունների զարգացմանը և դրան նպաստող հողի գրավադրման իրավունքի արձատագործմանն ու վարկային հաստատությունների ստեղծմանը, վերապահումով էր խոսում համայնքի գոյության մասին: «Մուրճը» (վարկային հաստատություններ) — Ռ. Ս.) «հշուրվամբ իրագործվելուն, — գրել է Ա. Արասխանյանը, — որպես օկտր է ենթադրել, մեծապես խանգարում է հողը զրավ դնելու զովարությունը, քանի որ մեզանում գյուղացիական հոպտերությունը համանական է, քանի որ այն երկրներում, ուր էմանագին վարկի հաստատությունները ծաղկած դրություն մեջ են, հոպտերությունը համանական չէ, այլ մասնավոր է, կալվածատիրական է»⁵:

«Մուրճի» էջերում կարելի է հանդիպել ուստ տնտեսագետներից կատարված վկայակերտների ու հիշատակումների, կապված ինչպես տեսության, այնպես էլ ներտնտեսական խրեդիների հետ: Ամաաղրը պարբերաբար հոգովաններ էր տապարում Ռուսաստանի տնտեսական կյանքի զարգացման անհնարարներ պրոբլեմների՝ ետակտորման գյուղի վիճակի, արդյունարերություն, բանվորական և այլ հարցերի վերաբերյալ: Ռուս տնտեսագիտական միտքն իր անմիջական ազդեցությունն ուներ «Մուրճի» հեղինակներին վրա և տնտեսական կապացման շատ պրոբլեմների քննությունը ամաաղրի էջերում մատարվում էր ստեղական հենց այդ գուղահաններում:

¹ Տե՛ս «Մուրճ», 1890, № 10, էջ 1441:
² Տե՛ս Գ. В. Плеханов, Соч., т. III, М., Петроград, 1923, стр. 197.
³ Н. А. Цаголов, Очерки русской экономической мысли периода падения крепостного права, М., 1956, стр. 398—440.

⁴ «Մուրճ», 1893, № 5, էջ 512.
⁵ «Մուրճ», 1890, № 1, էջ 7:

**ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՏԸ «ՊՍԱԿ» ԵՎ «ԱՐԱՔՍ»
ՊԱՐԵՐԿԱԿԱՆՆԵՐՈՒՄ**

XIX դարի հայ տնտեսագիտական մտքի գլխավոր ուղղությունները մի ուրույն համապատասխանություն ունեին հասարակական հոսանքների սոցիալ-պատմական բովանդակության հետ: Այս տեսակետից միանգամայն որոշակի են տարբերակվում տնտեսական զարգացման վերաբերյալ այն ուղեգծումները, որ առաջադրում էին հասարակական որոշակի հոսանքներ ներկայացնող «Մշակ», «Մեղու Հայաստանի», «Նոր-Գար», «Մուրճ», «Արձագանք» պարբերականները: Սակայն կային նաև բազմաթիվ այլ պարբերականներ, որոնք թեև ձև չէին տալիս ամբողջական ու վերջավորված ուղղության և, թերևս, աչքի չէին ընկնում սոցիալ-տնտեսական կյանքի խոր ու համակողմանի վերլուծությամբ, այնուամենայնիվ, զբաղվում էին ժամանակի առաջադրած խնդիրներով: Այդ տեսակետից քննորոշ են երկու պարբերական՝ «գավառական-գեմեոկրատական» ուղղության հարթ վ. Պապազանյանցի «Պսակ» շաբաթաթերթը և Ս. Գուլամիջյանի «Արաքս» հանդեսը:

Նախ նկատենք, որ չի կարելի ստույգ համարել «Հայկական սոցիետական հանրապետականում» արված այն անվերապահ¹ բնորոշումը, ըստ որի «Արաքսը» «ունեցել է լիբերալ-բուրժուական ուղղություն»²: Դրանում համոզվելու համար բավական է թեկուզ վկայախոչել հանդեսի կարծիքը Գրիգոր Արժուռու մասին՝ վերջինիս նվիրված մասհարոսակաևում. «Ընչան էլ նրա գաղափարները հայ կյանքին հարմարվելով՝ լուրջ քննադատության չդիմանան, ինչքան էլ նրա դատողությունները մի քանի հասարակական խնդիրներում բուրբորփին սխալ արձամարդության վրա հիմնված լինեն, այնուամենայնիվ նորա քարոզչները միշտ գրավել են երիտասարդությանը ոչ այնքան նոցա սխալ եզրա-

կացություններով, որքան նոցա հիմքը կազմող գեղեցիկ ճշմարտություններով»³:

«Արաքսը» չէր հավանում ուղղություն տալու գաղափարական ամբողջական սխտեմ ենթադրող հասարակական ուրույն հոսանքի: Նրանում կարելի է հանդիպել և՛ լիբերալ-բուրժուական, և՛ ազգային-պահպանողական և ազգային-գեմեոկրատական մտայնություններին հարող հայացքների, որոնց ամենաներում էլ հանդեսն անդրադարձել է Անդրկովկասի սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարի հարցերին:

XIX դարի վերջին քառորդում կայստատիրապական հարաբերությունների զարգացումը երկրամասում հանգեցրեց մանրացուցացիական տնտեսության քայքայմանն ու գյուղի դասակարգային շերտավորմանը: Ծանրացավ ամենաբազմամարդ զասակարգի՝ գյուղացիության տնտեսական ու սոցիալական վիճակը: Ահա այս պարագաներում էր, որ առկայեն նարոդիկների հեռանդությանը, հայ գյուղի բարեկարգման առաջնությունը ասպարեզ եկավ, այսպես կոչված «ժողովրդական շարժումը»:

Ըստ էության, մանրբուրժուական այս գաղափարախոսությունը հակակապիտալիստական բովանդակություն ուներ և միտում էր համայնի վրա պատմատեղի մի ուրույն գյուղացիական սոցիալիզմ: Հասկապես պատմական մեծ առաքելություն էր վերագրվում մտավորականությանը՝ ծառայել գյուղի «հասարակական բարօրությանը»: Հենց այս պատմական դերն էր պատվիրում «Պսակի» խմբագիր Վասակ Պապազանյանը Մոսկվայի մի խումբ հայ ուսանողներին ուղղված պատասխան նամակում. «Մասնավոր սեծիք, «Ճա», «Գու», «Նա» կարող են գործել, ասենի, երբ բարձրանալով ընդհանուրի միջից, կհասան մեր մասնավոր գործունեությանը ընդհանուրի բարօրության, բարրավանության ու յուսավորության մեծ գործին և, կգործենք նպատակահարմար, երբ կծուվենք հասարակ ժողովրդին հետ, երբ մեր անձնավորության և հասարակ ժողովրդի մեջ կլինի մեկ անխզելի կապ ու կենդանի կապակցություն»⁴:

Հաղիվ թե վ. Պապազանյանցը միտում ունենար ուսանողներին դարձնելու համայնական սոցիալիզմի իսկական գաղափարախոսներ: Սակայն ակներև էր հայ իրականության սոցիալ-

¹ ՏՆՏ «ՀՈՒՆ», հ. 1, էջ 703:

² «Արաքս», 1892, դիրք թԵ, էջ 11:

³ «Պսակ», 1886, Մ 1:

տնտեսական կառուցվածքի բաղադրամասերում ազդարարային հարբերությունների դեմոկրատական վերանորոգությունների նրա առաջնային ծրագրերը: Նա գյուղացուն համարում էր. ազգի արունն ու մարմինը, ուստի պահանջում էր նրան փրկել քաղաքայումից. «Հասարակ ժողովուրդը մեկ ազգի, իսկ ընդհանուր հասարակ ժողովուրդը, մարդկության հասարակական շինվածքի հիմքն է: Նա ծնողն է բոլոր մեկ ազգի պատկանող դասակարգերի, սա այն սուսուս ու պարարտ հողն է, որ ուր որ ինչ ցանես, այն և սնչուշտ կհնձնես Սոցիալից է կախ, բարգավաճություն, բարբորություն մեկ ազգի կամ ընդհանուր մարդկության»¹:

Սոցիալական այս նույն փիլիսոփայությունն էր հետամտում նաև «Արաքսը», հողի զորությունն հետ կապելով հասարակական զարգացման անտեսական ու քաղաքական շրջադարձային անցումները. «Բայց թե որքան մեծ է հողի ուժը, ոչ միայն նեղ, տնտեսական կյանքի մեջ, այլև ամենամեծ քաղաքական հարցերում, այդ դժվար է մինչև անգամ կարճ կիրպով նկարագրել: Հիշենք միայն, որ հողի տիրապետության հարցը, կամ հողային հարբերությունց անբարկանացուցիչ ձևը և ուրիշ երկվույթների հիմքն եղել են պատմական ամենամեծ գործողությունների, անթիվ պատերազմների, հեղափոխությունների և շատ ազգերի ոչնչանալու պատճառը»²:

«Հողի իշխանությունն ժողովրդասիրական այս դիտողությունները տնտեսական դարգացման բնագավառում առաջըրում էին գյուղափրկիչ բազմաթիվ նախագծումներ: Նշվում էին գյուղի տնտեսական վերանմուծների ու բարեկարգման բազմաթիվ ուղիներ, դրանց իրականացման հետ կապելով գյուղացիության սոցիալական առաջընթացի հեռանկարը: Կարծես կրկնելով նորոգիկների այն պահանջը, որ կրիտասարքությունը ծառայելով ժողովրդին պետք է «փակեր իր պարտքերը» և իրականացնել սոցիալական արմատական վերափոխումներ, Վ. Պապազեանյանը պահանջում էր տեղական հանգամանքները բնագոտության ենթարկել, գավառներն ուսումնասիրել, խեղճ, թշվառ գյուղացուն սիրել ու սպառնալներ: «Ուսումնասիրելով գավառներն ու տեղական հանգամանքներն,— գրել է նա,— ջա-

նանք մատնացույց լինել այնպիսի վնասավոր ու օգտաբեր երևույթների վրա, առաջինը աշխատել դուրս մղել նոցա կյանքից, իսկ երկրորդը ներս տանել նոցա կյանքի մեջ»³: Նույն կարծիքին էր նաև «Արաքսը». «Իսկապես գիտուն և տնտեսագետ անձնավորությանց պետք ունիք, որոնք երկրին շորս կողմն են ճամփորդելով, ժողովրդի վիճակն ուսումնասիրեն, թշվառության բուն գաղտնիաց թափանցեն և սրշառնապես կարող լինեն իրենց ըմբռնած եղանակով հիմնական բարեփոխումներ ի գործ դնել»⁴:

Կայսրալիպի ներթափանցումներից հեղաբեկվող գյուղի սոցիալական հակասությունները վերացնելու այս միտումը, ինչ խոսք, ուսուպիական էր: Երիտասարքությունն արդյոք կարո՞ղ էր իրականացնել տնտեսական վերափոխություններ: Նա որ-ասեղի՞ց պետք է վերցրեր անհրաժեշտ նյութական միջոցները, որտեղի՞ց պետք է սկսվեր և որտե՞ղ վերջանար նրա տնտեսական ու սոցիալական գործունեության շառավիղը: Սկզբունքային նշանակություն ունեցող հարցեր են սրանք, որոնք լուծումներ չեն ստանում ոչ «Պասկին» և ոչ էլ «Արաքսի» լեզբում:

Սոցիալական հարցն ըստ «Պասկին» սրան պատմական, նույնքան և համամարդկային է, որը միշտ էլ ծառայել է մարդկության առջև, նրա զարգացման բուրբ էտապներում: Որտեղ կա անարդարություն ու բնուժթյուն, այնտեղ էլ կա սոցիալական հարց: «Սոցիալական մտքերը,— գրում է թերթը,— տխրեցրին, ամբողջ մարդկության սեփականություն է, և ոչ թե ատանձնապես մեկ երկրի կամ մեկ ազգի, ինչ տեղ կա կյանք, այնտեղ կան սոցիալական մտքեր, ինչ տեղ կա անիրավացի բնություն, հարց կարոտություն, շքավորություն, այնտեղ էլ կարեկցություն, մարդասիրություն»⁵:

Թերթի լեզբում Պապազեանյանը մտորումներ է անում բնության ու հասարակության վերաբերյալ, փիլիսոփայական հայտնե ուսմունքների ողով փորձում է բացատրել այդ օրգանական մարդկությունների ներքին կապերը: Նրա համոզմամբ, ինչպես բնության մեջ ամբողջի մեծությունը կախված է նրա մասերի զարգանալուց ու անկուց, այնպես էլ մարդկային հասա-

1 «Պասկ», 1880, № 1:

2 «Արաքս», 1888, դեբր քրթ, էջ 9:

1 «Պասկ», 1880, № 1:

2 «Արաքս», 1890, դեբր քրթ, էջ 31:

3 «Պասկ», 1880, № 3:

բարկության մեջ յուրաքանչյուր ընկերություն կամ ազգի մի-
ծությունը պայմանավորված է անհատների զարգացմամբ:

Ինչպես տեսնում ենք, հասարակությունը, ալիքի շուտ
ամբողջ մարդկությունը Վ. Պապազանյանցին ներկայանում է
որպես մի օրգանական ամբողջություն նա ընդունում էր վեր-
ջինիս առանձին տարրերի՝ անհատների, ազգերի, ընկերու-
թյունների ինքնազարգացումը, դրանք առկա էր ամբողջ
մարդկության զարգացմանն ու կատարելությանը: Սակայն,
ամբողջը հանգեցնելով մասերի մեխանիկական գումարին, նա,
այնտամեննայնիվ, գերազանհատում էր ամբողջի դերը, գտնե-
լով, որ ամբողջը գերիշխում է մասերի վրա, պայմանավորում
վերջիններիս զարգացման ընդհանուր ուղղությունը: Սա ուղղ-
ված էր բուրժուական տեսարանների այն մտայնության դեմ,
ըստ որի անհատը հասարակությունից մեկուսացված է ներ-
փակված էակ է:

Որքանով հասարակության առանձին տարրերի սոցիալական
վիճակով է պայմանավորված ամբողջ մարդկության սոցիա-
լական վիճակը և որքանով ներհակություններ «Պատկին» ներ-
կայանում էին ոչ թե որպես «ընդհանուր» օրգանական, այլ
«տեղական» բնույթի հակասություններ, այնքանով թերթը դրանց
լուծման համար առաջարկում էր համազմեռարտական միջո-
ցառումներ, որոնք իրենց ընդհանրության մեջ տեղադրվում էին
ժամանակի հասարակական մտայնության ոլորտներում:

«Պատկին» առաջարկում էր հացի շտեմարաններ բացել երաշ-
տի տարիներին գյուղացիության կարիքների բավարարման հա-
մար, եվրոպական երկրների և Ռուսաստանի տնտեսության
փորձով օրինակելի Ֆերմաներ ստեղծել, որոնք հնարարու-
թյուն կտային ներդնելու կատարելագործված արտադրության
միջոցներ և նոր արտադրանքներ, պարբերաբար կազմակերպել
ցուցահանդեսներ ու մարդկանց հաղորդակից դարձնել գիտու-
թյանն ու տեխնիկայի նորություններին, վերացնել սակավհորու-
թյունը, մանրգյուղացիական տնտեսությունները զարգացնելու
և վարձակալական հարաբերությունները վերացնելու համար
փոխառու-խնայողական ընկերություններ հիմնել էժանազին
վարկ տալու նպատակով: Իսկ ամենից առաջ թերթն անհրա-
ժեշտ էր համարում լուսավորել գյուղացուն, էժան և հանրա-
մատչելի գրքերի և աշակերտներին գյուղատնտեսության վե-
րաբերյալ տեղեկություններ հաղորդելու միջոցով նրան սովո-

րեցնել տնտեսության արդյունավետության բարձրացման մե-
թոդները¹:

Թերթն առանձին նշանակություն էր տալիս գյուղատնտե-
սական վարկին: Այսպես, օրինակ, Գրիգորիս Երզնկյանը «Գյու-
ղական կրեդիտ» հոդվածում խորհրդածություններ է արել
վարկի բարեմասնությունների մասին. «Կրեդիտը (փող փո-
խանելու միջոցը) մարդուս կանոնավոր տնտեսական կյանքի
ամենաանհրաժեշտ պայմաններին է պատկանում: Եվ արգարև,
յուրաքանչյուր արտադրող, լինի նա վաճառական, գործար-
անատի, կալվածատեր կամ գյուղացի, շատ քիչ բացառությամբ,
չի կարող բավականանալ սեփական միջոցներով, սեփական
զրամագույններով»²:

Հետաքրքրական է, որ հեղինակը հատկապես կարևոր էր
համարում վարկի արտադրողական կիրառումը, որը ոչ միայն
ձածկում է տոկոսը, այլև շահ է բերում: Սպառողական նպա-
տակով վարկի կիրառումը նա համարում էր վնասակար:

Ինչ խոսք, վարկը որոշակիորեն նպաստում է արտադրողա-
կան ուժերի զարգացմանը, բույց և մյուս կողմից այն տանում
է դեպի կապիտալիստական հարաբերությունների արմատը:
Վարկի վերաբերյալ Գ. Երզնկյանի գաղափարությունները եզրեր
էին որոնում գլխավորապես կոոպերացիայի տեսության հետ:

Գյուղատնտեսության մեջ վարկային կոոպերացիան հաս-
կապես լայն տարածում ուներ Գերմանիայում, որի նախաձեռ-
նողն էր Ռայֆշտեյները: Ռուսաստանում կարճատև վարկի բա-
րեմասնությունները պրոպագանդում էին նարոդնիկները: Դա
մանբերութուական ուսույթն էր, որը ենթադրում էր կանոնակ
գյուղացիության քայքայումը և կանխել կապիտալիստական
հարաբերությունների զարգացումը գյուղում: Բանն այն է, որ
փայտախրական հիմունքներով կազմակերպված ազգ վարկային
կոոպերացիայի միջոցներ կազմավորվում էին նրա անդամների
ձուժանքների հաշվին: Գյուղացիական շրջավորությունն ըստ
և՛ու՛թյան հնարավորություն չունեի փայտախր գտնալու, ուստի
և կոոպերացիայի անզամ ունեւոր խավը, որի ձևարում կենտրո-
նացված էին հյուսիսական լճակները, վարկի օգտագործում էր
իր շահասիրական նպատակների համար:

1 Տե՛ս «Պատկ», 1880, № 17, 19, 1881, № 6, 1882, № 13, 16:

2 «Պատկ», 1882, № 14:

«Պսակի» մեկ այլ հեղինակ նույն դիրքերից անտեսական դարգացման կարեորագույն պայմաններից մեկը համարում էր բնկերական ոգու դատարարությունը. «Ամեն մի լուսավորված՝ ու բարգաթակիքված երկրի ու ազգի մեջ, երբ անհատական ուժը բավականանում չի մի գործ առջ տանելու ու զուգու ածելու համար, միանում են մի քանի անհատներ, կազմում են մի բնկերություն և սպա միասիրտ ու միակամ սկսում են գործել ու աշխատել այդ գործի կատարելության ու առաջադիմության համար», ուստի և «մեր ազգի համար անհրաժեշտ են Նողազորական և արհեստական բնկերությունների գոյությունը և որքան շատ լինի, նույնքան և մենք մտտ կլինենք և շուտով կհասնենք մեր նպատակին»¹:

Ինչպես ասեսում ենք, «Պսակը» հասարակական դարգացման իր իդեալը կատարում էր Նողազորական և արհեստագրական կոոպերացիաների վրա: Կ. Մարքսը բազմիցս շեշտել է, որ կոոպերացիաների միջոցով անհնարին է սոցիալական խոշոր վերափոխումներ կատարել, որ կոոպերատիվ աշխատանքը սկզբունքով որքան էլ գերակշռող և գործնական տեսակետից օգտակար լինի, այնուամենայնիվ, ի վիճակի չէ կասեցնելու Երկրաշարժական պրոգրեսիայով աճող մոնոպոլիային, և ոչ էլ ապաստարկելու մասնակերին, կամ նույնիսկ թեթևացնելու աղքատացման ծանրությունը²:

«Պսակն» քնդհանրապես հաված էր սոցիալական հարցի լուծումն իրականացնել առանց հասարակական ցնցումների: Փամանակակից քաղաքական անջքերի վերա» Հողվածում հակադրվելով ուսական նիհիլիզմին, մասնավորապես «Փոլոս» թերթին, «Պսակը» գրել է, որ համաձայնել «Փոլոս» լրագրի կարծիքին, կնշանակի «ժողովրդի գլխի տակը կակուղ բարձրել, քնացնել նորան, լիցոնել, որ նա իր պատրաստություններն տեսնի բոլորիս սասանեցող ու ամենայն ինչ հիմք ի վեր ապայայտ կուսակցությունների ու բնկերակությունների առաջն ստեղծու համար»³: Ակներե է, որ «Պսակը» սոցիալական վերադարձությունների հիմնական ուղին համարում էր ուժգործը: Տեսեսական դարգացման հեռանկարը կապելով մանր կոո-

պերատիվ արտադրության հետ, «Պսակն» այնուամենայնիվ ուշադրություն էր հրավիրում երկրամասի արդյունաբերական առաջընթացի անտեսական հետևանքների վերլուծությանը, գրադեղնիկով իրեն անտեսական զարգացման օրենքների բացատրությամբ: «Ճշմարիտ անասություն» սկզբունքների իմացությունը, նրա համոզմամբ, հնարավորություն կտա որոնելու նահապետական դրուժյունից կատարելագործված արտադրամեկերին անցման միջոցներ: Մինչդեռ «ժողովուրդ»,— գրել է «Պսակը»,— ոչ Նողազորք և ոչ արհեստավորը, ոչ վաճառականը և ոչ գրամատերը գիտեն թե՛նչ է և ինչու՞ն են է կայանում իսկապես հարստությունը, չգիտեն ինչ է աշխատանքը և ինչ գեր է խաղում բողճանրապես նա անտեսության մեջ, չգիտեն նաև ինչ է աշխատանքի բաժանումն և թե՛ն աշխատանքի բաժանմունքով կատարելագործվում է ինչպես արհեստը, նույնպես և մեծ աջողակություն է ստանում բանվոր մշակը: Չգիտեն, որ մեք պարտական ենք աշխատանքի բաժանմունքին, որ արհեստները արդի ծաղկալ գոտիայն մեջ են, չգիտեն, որ եթե լլինք աշխատանքի բաժանմունքը անհնարին կլինեք գաժողներում կամ ֆարրիկաներում ստանալ կարճ միջոցում իրերի այն աճազին բանակությունը, որ այժմ ստացում է»⁴:

Թեև թերթը հետագայում չի անդրադարձել նշված հարցերի հանգամանային քննությանը, այնուամենայնիվ, ակներե է, որ առաջադրված հարցերը բխում էին կապիտալիստական արտադրության ուղին թևակոխած երկրամասի անտեսական զարգացման օրենքիով պահանջների հաշվառումից:

Եթե «Պսակը» անտեսական հարցերի իր արժաբնումներում գլխավորապես անդրադարձել է զուղատեսեսության հարցերին, այս «Սերաբին» սոսակիական հետադրում է էին երկրամասի արդյունաբերական զարգացման պրոգրամները:

Անցյալ դարի երկրորդ կեսին արտասահմանյան կապիտալն արդեն լայնորեն մտադ էր գործում Անդրկովկաս: Նշելով, որ նավթի, ծխախոտի և տնտեսության այլ ճյուղերում այն արդեն տիրապետել է դարձել, հանդիսը պահանջում էր սեփական ուժերով կազմակերպել բնական հարստությունների արդյունաբերական մշակումը⁵: «Տեսեսական խորհրդածություն-

1 «Պսակ», 1881, № 5:

2 Տե՛ս K. Մարքս, Փ. Զնեդեկ, սոց., տ. 16, սր. 10.

3 «Պսակ», 1880, № 2:

4 «Պսակ», 1881, № 18:

5 Տե՛ս «Սերաբին», 1888, գիրք Կրթ., էջ 10:

ներ» հողվածի հեղինակը հիշեցնում էր XVIII դարի ռուս տնտեսագետ Ի. Պոստոլոպին, որը հակառակ մերկանտրիխտների, երկրի հարստությունը պայմանավորում էր ոչ թե զանաբանում կազմ ազնիվ մետաղների քանակությամբ, այլ ժողովրդի հարստության աստիճանով, որին կարելի է հասնել նյութական արտադրության ճյուղերի զարգացման միջոցով¹։ Հայ տնտեսագետը կարծես լրացնում էր Պոստոլոպին, երկրամասի հարստությունը նշակման գործում վճռական նշանակություն հասկացնելով տեղական նախաձեռնությունները, տնտեսական շրջանակների մեջ ժողովրդական լայն խավերի ընդգրկմանը։

Երկրամասում արտադրողական ուժերի զարգացումը պահանջում էր մեծ կապիտալներ։ Անհատական կապիտալների սահմանափակությունը չէր կարող բավարարել ընդլայնվող վերարտադրության պահանջները։ Այս հակասությունը վերացնելու և օտար կապիտալներին դուրս մղելու համար «Արաբսի» հողվածագիրներին մեկը կարևոր տեղ էր հատկացնում քրիկերական ոգուց դաստիարակությանը, որպես տնտեսական կյանքում «բարոյական» և «գործնական» որոշիչ նշանակություն ունեցող գործոնի²։ Սակայն հողվածագիրն ակնհայտորեն չի նկատել ընկերակցական հիմունքներով կազմակերպված գյուղատերերի ներքին հակասությունները։ Իրականում բաժնետիրական ընկերություններն այն հիմքն են, որի վրա խարսխվում են արտադրության հասարակական բնույթն ու կապիտալիստական հակասությունների սրումը։ Արտադրության կազմակերպման բաժնետիրական ձևը որոշակի փոփոխություններ է առաջ բերում սեփականատիրական հարաբերություններում։ Այս իրողությունը շեղակցույց է, որ հանդեսի տեսարանը հասարակական ներհանությունները կազում էր անհատական խոշոր կապիտալների սովորական հեռու Ուստի, նրա կարծիքով, նրան տնտեսական զարգացումը լիքականացիի բաժնետիրական սկզբունքներով, «իրերի դրությունը համարյա թե միևնույնը կ'մնա, այն զանազանությունը միայն, որ օտար կապիտալիստի տեղ կլինի մեր բնիկը, որի անձնական շահերը միևնույն կերպով կարող էին ճնշել ընդհանուր ժողովրդական շահերը»։ Այս իմաստ-

տով նա ընկերակցական սկզբունքների արմատավորումը կարևոր էր համարում նաև գյուղատնտեսության մեջ։ Գերմանիայում և Ռուսաստանում կազմ ազգային ընկերությունները, նրա կարծիքով, գործում են «ամենքը յուրաքանչյուրի համար, յուրաքանչյուրը ամենքի համար» սկզբունքով³։ Սա մանրրոք-ժուական այն ուսույթն է, որին հարում էր նաև «Պսակի»։

«Արաբսը» երկրամասի տնտեսական զարգացման համար կարևոր էր համարում արտադրության կատարելագործված կաշնակների ներդրումը, գտնելով, որ սպազան «գործարանական արդյունաբերությանն» է, որ «կույտուրական սոսազգիությունն» գինը սկսել ենք հասկանալ» և որ զա է զարգացման միակ ուղին։ Բայց հանդեսն ավստասներով է նշում արտադրության նահապետական ձևերի, մասնավորապես արհեստների կործանումը, մի ինչ-որ տեղ մանր հողատիրոջ աշխատանքը գերազանում էր վարձու աշխատանքից, մի երրորդ դեպքում հնարավոր էր համարում անանագործական արտադրության հարատևությունը տնտեսական զարգացման նոր իրադրության պայմաններում⁴։

Ընդհանուր առմամբ սրանք են «Արաբսի» և «Պսակի» տնտեսական հարցադրումները, որոնք իրենց հակասություններով հանդերձ, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում XIX դարի հայ տնտեսագիտական մտքի պատմության մեջ։

¹ Տե՛ս С. Т. Посонов, Книга о скудности и богатстве, М., 1951, стр. 13—14.

² Տե՛ս «Արաբս», 1888, գիրք քր, էջ 17։

³ Տե՛ս «Արաբս», 1888, գիրք քր, էջ 15—16։

⁴ Տե՛ս «Արաբս», 1888, գիրք քր, էջ 12—13, 1894—1895, գիրք քր, էջ 29։

**ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԼԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
«ՏՍՐԱԶ» ՀԱՆԴԵՍՈՒՄ**

XIX դարի վերջին բառերգում հայ հասարակական միտքն իր ուշադրության ոլորտն է առնում Մարքոս տետեսական ուսմունքը, փորձեր են արվում հանցեղը լուսարանին տեսական այդ գիտակեանքից: Մարքոսի մտքերային պրոպագանդայի այդ ժամանակաշրջանում, հատկապես 90-ական թվականներին, նկատելի էր գիտական սոցիալիզմի և մարքոսիզմի յուրացման միտումը: Ժամանակի հայ պարբերականներում սպաղովում էին հոգովածներ, որոնցում վիճախոչումներ էին արվում Կ. Մարքոսից, Ֆ. Էնգելսից, ռուս և մյուս առաջավոր սոցիալիստներինց, առաջադրելով հասարակության տեսական ու սոցիալական զարգացման նոր վերլուծություններ: Դրանք ներդրվ էին հայ տեսնագիտական մտքի ասպարեզում: Այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Գեորգ Լարաշյանի և Արշակ Զուրաբյանի հոգովածները, ստպահոված «Տարազ» հանդեսում, 1890-ական թվականների վերջերին:

Չնայած կապիտալիստական հարթերությունների զարգացումն արդեն փաստ էր դարձել Անդրկովկասում, հասարակական զարգացման ուղիների հարցը շարունակում էր զրադցնել հայ մտավորականությանը: Մամուլի էջերում արվում էին սոցիալական հերթափոխությունը պայմանավորող նոր տեղաշարժերի պատճառներն ու հետևանքներն քնննելու փորձեր: «Մ»-ը է գնում մեր երկիրը,— գրել է Գ. Լարաշյանը.— «ո՞րն է նրա մտավոր սպագան, որո՞նք են նրան որոշող, զեկավարող սոցիալ-տեսական հանգամանքները, որոնք պատրաստում են այդ մերձավոր պատմալույսնը մեր երկրի համար»¹:

Հայտնի է, որ 80—90-ական թվականներին Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման հետագա ճակատագրի հարցը լիբերալ նարոզնիկությունից հայեցության մեջ ստացավ նոր մեկ-

նություն: Ն. Դանիելսոնը արտաքին շուկան համարելով արտագրության կապիտալիստական ձևերի գոյության անհրաժեշտ պայմանը, գտնում էր, որ Ռուսաստանը զուրկ է վերջինից, հետևաբար, կապիտալիզմի հետագա զարգացումը Ռուսաստանում անհնարին է և անհրաժեշտ է վերադառնալ արտագրության նահապետական ձևերին: Նման տեսակետներն իրենց արձագանքն էին գտնում նաև հայ մամուլում:

Դեռևս 1894 թվականին Գ. Լարաշյանը «Մուրճ» ամսագրում հանդես եկավ «Բանվորների ապահովագման խնդիրը» հոդվածաշարով, որում խոսելով կապիտալիստական երկրներում գոյություն ունեցող դասակարգային ներհակությունների մասին, ուշադրություն էր հրավիրում նվիրուպալում և Ռուսաստանում «սոցիալական հարցին» լուծման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների վրա²:

«Տարազ» հեղինակներից մեկը նշել է դասակարգային այն հակասությունները, հարստության և աղքատության այն բնույթումը, որ գոյություն ունեին կապիտալիստական երկրներում: Նա քնննել է կապիտալի և աշխատանքի այն հակասությունը, որը տեղիք էր առնում տնտեսական ստրկության: Այս առթիվ նա Գ. Լարաշյանի աշխատությունը բնորոշել է իբրև Անդրկովկասի համար ժամանակավրեպ աշխատություն, գտնելով, որ Հայաստանում «գործարանական արդյունաբերությունը ընդ նոր է սկսել, այն էլ շատ սահմանափակ քանակությամբ, կապիտալի կենտրոնացում չկա, հետևաբար չկա և չի էլ կարող առայժմ բանվորների խեղդի լինել գոնե եվրոպական մտքով»³:

Գ. Լարաշյանն ինքն է նկատել, որ նոր իրագրության հանդեպ այսպիսի մոտեցումը արտացոլում է ոչ թե զարգացման բուն ընթացքը, այլ ավելի շուտ «ստսիկումը» այդ զարգացման հանդեպ: Դա նահապետական կարգերի քայքայման մտապալուտ գուշակությունն էր, քանի որ կապիտալիզմի հակառակորդները սգիտեն, որ խաղոք արդյունաբերությունը, մաշինիզմը իրենց «նվիրական» հնավանդ կարգերն ու հայացքները հիմն ի վեր պետք է ստապալե՞՞: Մինչդեռ զարգացման իրական ընթացքը վկայում էր այն մասին, որ կերպարանափոխվել է սրեանկու-

¹ ՏՆՏ «Մուրճ», 1894, № 1—4:

² «Տարազ», 1894, № 21, էջ 313:

³ «Տարազ», 1898, № 47, էջ 1063:

¹ «Տարազ», 1898, № 46, էջ 1036:

բլան եհառ ու կացը», արդյունաբերական կենտրոններում ձևավորվել է հայ բուրժուազիան, թեև դանդաղ, որոշակի տեղաշարժեր են նկատվում գյուղում։ ՄՔն պաշարված դրուժյան մեջ ենք։ Կապիտալիզմը խորխոր աճելի ուղիվակների դեմքով դեմ հանդիման կանգնած է մեր առաջ և հաղթանակով առաջ է քննադատում։ Ես արդեն պաշարել է մեր միտքն ու զգացմունքը»¹։

Ք. Լարաշյանը ցույց էր տալիս, որ եթե երկրամասի կապիտալիստական զարգացումը մի կողմից կյանքի պատմական թելադրանքն է, ապա մյուս կողմից դրա վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ բնական հարուստ ռեսուրսները, ուսուսական կապիտալիզմը (որն իր հետևանքների էր ունենում նաև ծայրամասերի վրա), օտար կապիտալների մուտքը և այլն։ Այլ պակաս դեր ուներ նաև պետությունը, որը, ինչպես նկատում էր հեղինակը, «սակհայտ կերպով խրախուսում է նույն զարգացումը»²։

Եվ իրոք, 90-ական թվականներին «ազգային տնտեսական սխառնի օտեղծման ուսուսական պետության տնտեսական քարտեզակառուցումն ընդգծում էր ավարտուն տեսք, որն ակնկալում էր երկրի արդյունաբերական-կապիտալիստական զարգացման շահերը։ Փա զրսեղովում էր հարկային, բյուջետային, ֆինանսական, վարկային, արտաքին անտարական ու մարտային քաղաքականության և այլ բնագավառներում»³։

Հակառակ տնտեսական ուժանտիզմի հայեցողության, Ք. Լարաշյանը տեսնում էր տնտեսական կյանքի պրեթն բոլոր ոլորտներում արտադրության կապիտալիստական ձևերի կազմավորումը։ Փա նրան թույլ էր տալիս եղրակացնելու, որ արեղիլյան ժողովուրդների առաջընթացը տեղի է ունենում արեղմրայան ժողովուրդների առաջընթացի անաղղգիաղով, որ երկրամասի ապագա զարգացման ուղին արդեն կանխորոշված է ներկաղով։ Նա չէր տարակուսում, որ Անդրկովկասն արդեն մտել է կապիտալիստական զարգացման ուղին։

Նշելով այն խոշոր առաջադիմական դերը, որ նախորդ արտադրանդանակի համեմատությանը կատարում էր կապիտալիզմը արտադրողական ուժերի և արտադրական հարաբերու-

թյունների զարգացման բնագավառում, «աղխատանքի ձևի և տեխնիկայի, աղխատանքի բնույթի, մարդկային տնտեսական հարաբերությունների» մեջ, Ք. Լարաշյանը ցույց էր տալիս, որ դրա հետ միաժամանակ հասարակույթունը արհճվում է երկու խոշոր դասակարգների, որոնց միջև օրըստօրն խորանում են գասակարգային ներհակույթունները։

Կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը զուղընթաց կազմավորվում է բանվոր դասակարգը, Ք. Լարաշյանի համոզմամբ, այն ամենատաղաղն մարքը, որով բնորոշվում է ազգերի քաղաքական և տնտեսական հասունության աստիճանը։

Հեղինակը հասկանում էր, որ կապիտալիզմն իր հետ բերում է բազմաթիվ շարիքներ՝ «տնտեսական կրիզիսներ, մեծ շափերով թշվառություն և պատարկերկամ (աղխատություն), խրեղիկական տառապանք բանվոր դասակարգին⁴, բայց և մեծապես բնչկայնում է «հասարակական հավաքական աղխատանքի» մասշտաբները, նպաստում նոր սոցիալական ուժի՝ բանվոր դասակարգի կազմավորմանը։

Ք. Լարաշյանը ոչ միայն նկատեղ կապիտալիզմի զարգացման անխուսափելիությունը երկրամասում, այլև նշեղ նրա պատմական անցողիկ բնույթը։ «Հասարակության բարձր շահերը պահանջում են,— գրել է նա,— որ երկիրը անցնի կապիտալիստական ֆազիսում»⁵։

Հասարակության սոցիալական հակասությունների լուծման համար Ք. Լարաշյանը կարևոր էր համարում երկրամասի արեղտնեսական կյանքի և հատկապես, բանվոր դասակարգի ու գյուղացիության դրույթունն արժարժող հարցերի մանրակրկիտ ուսումնասիրությունը։ Այս առումով նա տնտեսական երևույթների տեսական վերլուծությունները դիտում էր որպես՝ կարևոր միջեղ զործնական հետեղությունների համար։ «Թերիական ծանոթությունը խնդրի հետ, ոչ մի կասկած չի կարող լինել, կուեննա նաև իր զործնական հետևանքները. դիտելով կապիտալիզմի զարգացման բնթացը և լավ ճանաչելով սրա ծնունդ բանվոր դասի դրույթունը, կարիքները և պահանջները, բնականապես գործնական հողի վրա, այղ կարիքներին ու պահանջ-

¹ «Տարաղ», 1898, № 46, էղ 1037։

² «Տարաղ», 1898, № 47, էղ 1063։

³ Տեղս Ս. И. Ляшенко, История народного хозяйства СССР, т. П, Л. 1952, стр. 184.

⁴ «Տարաղ», 1898, № 47, էղ 1063։

⁵ Նույն տեղում։

ներին բավարարութիւն ապու, աշխատող մարդու թշվառութիւնը ամբոյնու գործում, կհետեւն որական և խելացի միջոցառումների գործարարութիւնը¹:

Ակններն է Գ. Ղարաջանի հայացքների վրա մարքսիզմի դասականների աշխատութիւնների ազդեցութիւնը: Ավելին, ինչպես իրավացիորեն նկատել է պրոֆեսոր Խ. Բարսեղյանը, այդ տարիներին նա նորոգելիութունից շրջադարձ է կատարել դեպի մարքսիզմ²:

1890-ական թվականների վերջերի «Տարազում» տնտեսագիտական բնույթի հոդվածներով հանդես էր գալիս նաև Արշակ Ղուրաբյանը: Արտչակի հետազոտութիւն էր ներկայացնում նրա «Տնտեսական առաջադիմութիւնը XIX դարում» հոդվածաշարը, որտեղ արեւելքում դատողութիւններ են արված հասարակութիւն տնտեսական էվոլյուցիայի հարցերի վերաբերյալ:

Ա. Ղուրաբյանը հասարակական գաղափարները համարում էր առաջին թայ պրոցես, որի յուրաքանչյուր աստիճանին համապատասխանում է արտադրութիւն կազմակերպման որևէ տիրապետող ձև: Նա չէր ընդունում միատարր տնտեսական սխեման, գտնելով, որ միշտ էլ տիրապետող ձևի կողքին առկա են լինում ոչ միայն այնպիսի տնտեսականներ, որոնք արդեն ապրել են իրենց դարը, այլև այնպիսի նորագույն ձև, որն իր սկիզբն է առնում տիրապետող ձևից: Ա. Ղուրաբյանը դա համարում էր գաղափարային բարձրագույն աստիճանը, որն առնում է, ամբողջում և փոխարինում տիրապետող ձևին³:

Տնտեսական ձևերի հարգափոխութիւնը Ա. Ղուրաբյանը համարում էր օրինաչափ երևույթ, գտնելով, որ հասարակութիւն ընդերքում նոր գաղափարը անտեսանելի աստիճանական քանակական փոփոխութիւնները հանդեպնում են հնի կործանմանը:

Վ. Գ. Բելինսկուն նվիրված հոդվածաշարում, Ա. Ղուրաբյանը վերլուծելով ռուս հեղափոխականի աշխարհայեցողութիւն փրիխտփայական հանգույցները և նշելով, որ նրա զաղափարները գործան աշխ հասարակական շարժման հիմնարարը, որին փիճակված էր 60-ական թվականների ռուս քաղաքակրթութիւն

մեջ նշանավոր դեր խաղալու, նորից խորհրդածութիւններ էր առնում պատմութիւն առաջին թայ շարժման վերաբերյալ: Նա երևում էր մարքսիստական այն դրույթից, ըստ որի հասարակական հաստատութիւնների հաջորդափոխութիւնը կատարվում է ոչ թէ միանգամայն, այլ գաղափարային յուրաքանչյուր աստիճանի հիմունքները ձևավորվում են հնի ընդերքում: Դա հնի և նորի պայթարի պրոցեսն է, որն ավարտվում է վերջինիս հաղթանակով: Դրա հետևանքով «այն ամբողջը, — դրել է Ա. Ղուրաբյանը, — ինչ-որ համարով է տվորակել, ավանդական սրբազան և անձնամիտի, բոլորը հետզհետ քայքայվում, կործանվում է և վերջ ի վերջո նրա տեղ ընդմ է նորը»: Այդպես է ընթացել նաև կապիտալիզմի, որպես տնտեսական էվոլյուցիայի օգակներից մեկի զարգացումը:

Ա. Ղուրաբյանը մանր արտադրութիւն տարբերութիւնը կապիտալիստականից համարում էր այն, որ արտադրողն ու արտադրութիւն միջոցների սեփականատերը միաժողոված էին նույն անձնավորութիւն մեջ, ապրանքային արտադրութիւնը դեռևս շուկայ լայն մասշտաբներ և այդ տնտեսական արգալիքը զուտ ինքիվիզուալիստ բնավորութիւն էր կրում⁴, այսինքն՝ արտադրութիւն նպատակը սպառումն էր: Կապիտալիստական արտադրութիւն, հատկապես խոշոր մեքենայական արտադրութիւն բնորոշ դիժը Ա. Ղուրաբյանը համարում էր աշխատանքի բաժանման խորացումը, որը մեծ շահերով բարձրացնում է աշխատանքի արտադրողականութիւնը և արտադրութիւն պրոցեսում բաշխորինի աշխատանքի լարմնութիւն աստիճանը: Վերջիններս դառնում են մասնակի գործողութիւններ կատարողներ, «փոխադարձաբար օգնում են իրար այնպես, որ յուրաքանչյուրը նրանցից կատարում է իրեն հատուկ որոշ գործողութիւններ և միևնույն ժամանակ մասնակցում նույն բարբի պատրաստելուն»⁵:

Կապիտալիզմի բնորոշ առանձնահատկութիւններից մեկը Ա. Ղուրաբյանը համարում էր այն, որ խորանում է աշխատանքի միջազգային բաժանումը, վերանում է սեղական սահմանափակութիւնը, ազգային տնտեսութիւնները ներ են քաշվում

¹ «Տարազ», 1898, N 43, էջ 1064:

² Տէ՛ա Խ. Հ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, հ. 1, Երևան, 1967, էջ 200:

³ Տէ՛ա «Տարազ», 1899, N 38, էջ 879:

⁴ «Տարազ», 1901, N 15, էջ 168:

⁵ «Տարազ», 1899, N 33, էջ 879:

⁶ Նույն տեղում, N 42, էջ 968:

ընդհանուր համաշխարհային տնտեսության մեջ, միմյանց դեմ-
լով այնպիսի փոխադարձ կապ ու կախիվածություն մեջ, «որոնք
լրացնում են իրար և որոնցից յուրաքանչյուրը առանց մյուսի
չի կարող պահպանել իր գոյությունը»¹։ Դա համահնչուն է
մարքսիզմի դասականների այն դրույթին, ըստ որի խոշոր ար-
դյունաբերությունն առաջին անգամ ստեղծել է համաշխարհա-
յին պատմություն, բանի որ ամեն մի քաղաքակրթված երկրի
և անհատի պահանջները կախման մեջ է գրել ամբողջ աշխար-
հից, ոչնչացրել է առանձին երկրների նսխական քնակառնին
ձևաորժված առանձնահատկությունը²։

Ա. Զուրաբյանը նկատել է, որ համաշխարհային տնտեսու-
թյան օղակներից որևէ մեկում վերարտադրության պրոցեսնե-
րի խախտումը ծանր հետևանքներ է ունենում ամբողջ աշխար-
հի համար, տեղիք տալով ճգնաժամային երևույթների։ Այս
առումով նա հատկապես նշում է 1873 թվականի ճգնաժամը,
որն ընդգրկել էր գրեթե ամբողջ համաշխարհային կապիտա-
լիստական տնտեսությունը։ Տալով ճգնաժամերի ընդհանուր
նկարագրերը, Ա. Զուրաբյանը մեքերոմսներ է արել իր իսկ խոս-
քերով ասած՝ աշխարհահռչակ տնտեսագետ Ֆ. Էնգելսի աշ-
խատություններից և ցույց տվել նաև հսկայական նյութական
կորուստները, որ կրում է հասարակությունը ճգնաժամերի հե-
տևանքով։ Նա դատապարտել է ոգևորի ուժով նոր շուկաների
զբաղումը, որը ասանում է կապիտալիստական պետությունների
պատասզինությունների ուժեղացմանը, առաջ բերում պատե-
րազմներ³։

Հայտնի է, որ աշխատող-ապրանքի հաստնագործումը բա-
նայի ծառայից բացահայտելու կապիտալիստական շահագործ-
ման րոպանգակությունը։ Կ. Մարքսը ցույց տվեց, որ կապի-
տալիստական հարարբերությունների մակերեսին ստեղծվում է
այն խարուխիկ երևութականությունը, թե բանվորը կապիտա-
լիստին է վաճառում ոչ թե իր աշխատուժը, այլև իր աշխա-
տանքը։ Եվ պատահական չէ, որ բուրժուական տնտեսագետ-
ները, ինչպես նաև հայ իրականության մեջ շատ լիբերալ մտա-
ծողներ, չիայած նկատեցին կապիտալիստների ու բանվորների

տնտեսական գործարքի ապրանքային բնույթը, այնուամենայ-
նիվ, չբժռնեցին դրա էությունը գրքերուման ձևի յուրահատկու-
թյունը և աշխատանքը հռչակեցին որպես ապրանք։ Սա հան-
գեքեց այն բանին, որ նրանք լիարողացան բացատրել կա-
պիտալիստական շահագործման գաղտնիքը։ Ա. Զուրաբյանը,
սակայն, վեր էր կանգնած այդ մտայնությունից։ «Ենչ վերա-
բերում է արտադրության գործիքներին,— գրել է նա,— բան-
վորն ընդմիշտ գրկվում է նրանցից և իբր սեփականություն նա
իրավունք ունի ձանաչել միմյանի իր աշխատող ուժը, որը և
վաճառում է կապիտալիստին»¹։

Կապիտալիզմի զարգացումը հասարակական մտքի առաջ
ամբողջ սրությունը գրեց պրոլետարիատի հարցը, որպես զարի
սոցիալական հարցի։ Սակայն, ինչպես նկատել է Ա. Զուրաբ-
յանը, կապիտալիզմի որք հսկայական տնտեսական առաջա-
դիմությունը չի դուզորդվում բանվոր դասակարգի սոցիալական
վիճակի համապատասխան բարելավմամբ։ Աշխատանքային
օրը դեռևս չափազանց երկար է, աշխատանքի լարունությունը
բարձր, աշխատավարձը ցածր, իսկ բանվորն անբեղհատ են-
թարկված է աշխատանքը կորցնելու վտանգին։

Կանգնելով բանվոր դասակարգի հեղափոխական ուժին դեմ
հանդիման, բուրժուազիան սկսեց աշխատավորների որոշ դի-
մուններ կատարել բացելով ազգատանցներ, հիվանդանոցներ,
բանվորների երկխաների համար դպրոցներ, մտցնելով սոցիա-
լական ապահովագրության որոշ օրենքներ և այլն։ Այս փաս-
տերն օգտագործում էին բուրժուական տեսաբանները և պետու-
թյունը ներկայացնում իբրև սոցիալական շահերի ներդաշնա-
կության կազմակերպություն։ Հակադրվելով այդպիսի տեսա-
կետներին, Ա. Զուրաբյանը ցույց էր տալիս, որ բուրժուական
պետությունը լուկ գործին է տիրող դասակարգի ձեռքին սեփա-
կան շահերը պաշտպանելու համար²։

Հասարակության դասակարգային ու սոցիալական հակա-
ությունների պրոբլեմով ժամանակին զբաղվել են նաև XVIII
դարի լուսավորիչները։ Երանք ֆեոդալական հաստատություն-
ներն ու կարգերը համարում էին ոչ քանակա, բոլոր դժբախ-
տությունների պատճառը տանում էին այն բանի մեջ, որ հա-

¹ «Տարազ», 1899, № 43, էջ 388։

² Տե՛ս Կ. Մարքս և Փ. Էնգելս, Կոլ., Է, 3, սթր. 60։

³ Տե՛ս «Տարազ», 1899, № 43, էջ 988։

¹ «Տարազ», 1899, № 42, էջ 968։

² Տե՛ս «Տարազ», 1899, № 46, էջ 1053։

գարնում տնտեսագիտական տարբեր տեսությունները միմյանց հարմարեցնելու հնարամտությունը:

Հյուլեն արտադրության բնդհանրությունը պայմանավորում է մարդկային «եսի» անեղհատ կատարելագործման գաղափարով: Կյանքն «իր ամբողջության մեջ» նրան ներկայանում էր սոսոցիալ մի ուրախություն ու երջանկություն: Ուստի արև-տեսական գիտության ուսումնասիրության խնդիրը համարում էր նաև բարիքների արդարացի բաշխման հարցերը, գտնելով, որ «սու-ոք շարժի զրկի», յուրաքանչյուրը պիտի իր հալալ աշխատանքի տերը լինի¹: Տնտեսական գիտության հետազոտության ոլորտները հեղինակի մտա սահմանագծվում են, հանգելով այն բանին, թե ինչպես պիտի կատարվի աշխատանքը, որպեսզի ըստ կարելիքն արդյունավետ լինի, և ինչպես պիտի մարդիկ օգտվեն իրենց աշխատանքի արդյունքից: Չնայած զրծփար է որոշել նման մեկնաբանության տեսական ելակետը, այնուամենայնիվ, ակներև է մի բան. հեղինակն անտանել է մարդկանց հասարակական արտադրական հարաբերությունները և, զրանով իսկ, բաղաբանտնեսության հետազոտության ոլորտը հանգեցրել աշխատանքի շահավետության բուրժուական պրակտիցիզմին ու արդարացի բաշխման մանրբուժութու-կան սկզբունքին:

Ֆերմանական պատմական դպրոցի տնտեսական ուսմունքն ուղղված էր դասական տնտեսագիտության հիմնական սկզբունքների դեմ, որն իբր գերադասելով ազգի նյութական հարստության հարցը, էր կոչում թե՛ թողնում նրա ինտելեկտուալ զարգացումը: Թերևս հենց այս նկատառումով էլ Հյուլեն տնտեսական գիտության խնդիրը համարում էր բարիքների ստեղծման հարցերի վերլուծությունը: Ընդ որում, նա բարիքները բաժանում էր երկու խմբի՝ նյութական և զարգիարական, նշելով, որ զրանց «համապատասխանում են աշխատանքի երկու տեսակները, ֆիզիկականը և հոգեկանը»²:

Աշխատանքի այսպիսի դասակարգումը, ըստ էության, ուղղված էր բուրժուական դասական տնտեսագետների, հատկապես Ա. Սմիթի արտադրողական և անարտադրողական աշխատանքի մասին ուսմունքի դեմ: «Անցյալ դարում,— գրել

է Հյուլեն,— տնտեսագետները մոլորություն մեջ բնկնելով, սկսեցին քարոզել, թե հոգեկան աշխատանքը ապարդյուն է, իսկ միայն ֆիզիկական աշխատանքն է արդյունավետ: Որոնց տեսությունից հետևում էր, թե ուսուցիչը, բժիշկը, գրողը, բանասերը ձրիակներն են, որովհետև ֆիզիկական աշխատանք չեն գործ դնում»³: Հյուլեն պարզապես վերաբառադրում է գերմանական պատմական դպրոցի ներկայացուցիչների ուսմունքը: Պատահական չէր, որ նա վկայակոչում էր Տրիգրիխ Լիստի այն խոսքերը, թե ինչպես է խոչըրիկ դասախարակող աշխատանքը հասարակության համար համարել արտադրողական, իսկ մանուկները դասախարակողներ՝ անարտադրողական: Հյուլեն երբևէ մեջբերումներ էր կատարում նաև պատմական դպրոցի մեկ այլ ներկայացուցիչ՝ Վիլհելմ Ռոշերի զգածքներին, ըստ որի արտերը պաշտպանողի և զինվորական աշխատանքների միջև արտադրողական առումով որևէ տարբերություն չկա: Եվ հասկանալի է, թե ինչու կոչակարի և ֆիլիսոփայի, նարտարապետի և բուրժուաչ աշխատանքները Հյուլենի համասարապես ներկայանում էին որպես արտադրողական աշխատանք:

Արտադրողական աշխատանքի վերաբերյալ դասական դպրոցի, հատկապես Ա. Սմիթի և Դ. Ռիկարդոյի տեսությունը համապատասխանում էր բուրժուական արտադրության էությանը և ուղղված էր ֆեոդալական արխաոկրատիայի դեմ, որը ոչ արտադրողարար սպանելով հասարակական հարստության մի մասը, խոշորեցնում էր արտադրողական ուժերի կապիտալիստական զարգացմանը, բուրժուական գեներիկ բազաբառնետեսության ներկայացուցիչները (Մալթուս, Սեյ, Գառնիև և ուրիշներ), ընդհանրապես, որևէ տարբերություն չդնելով օգտակար և արտադրողական աշխատանքների միջև, հասարակական կյանքի բուրժուական ոլորտներում ամեն մի գործունեություն հուշակեցին արտադրողական: Այդօրինակ մտածելակերպն իր հետագա օգարգացումն ստացավ պատմական դպրոցի ներկայացուցիչների մոտ, որոնք, ըստ էության, գերմանական յունիզմության զուգափարատիստներն էին: Կ. Մարքս բազմիցս նշել է, որ կապիտալիստական արտադրության սխտեմում արտադրողական աշխատանքն այնպիսի աշխատանքն է, որը հա-

¹ «Տարազ», 1898, № 26, էջ 579:

² Նույն տեղում, № 27, էջ 606:

³ «Տարազ», 1898, № 27, էջ 606—607:

վկայւոյ արժեք է արտադրում: Գա հասարակականորեն որոշակի աշխատանք է, որն ընդգրկում է միանգամայն որոշակի հարաբերություններ աշխատանքը զեռոյի և այն վաճառողի միջև:

Իր հոգովածում Հյուլեն անդրադարձել է նաև «տնտեսականությունը», այսինքն՝ շահավետությունը պայմանավորող գործոնների վերլուծությունը: Այդ գործոնները նա բաժանել է երեք խմբի՝ աշխատանքի կադրակիրությունը, ստիկիկայի կատարելագործություն և գումար (կապիտալ): Հեղինակը հասկանում էր ընդլայնված վերարտադրության նշանակությունը՝ նա նշում էր, որ մարդկանց միացյալ ուժերը միշտ էլ հանգեցնում են արդյունքների արտադրության շափերի մեծացմանը: Աշխատանքի արտադրողականության բարձրացման պատճառը նա համարում էր այն, որ համատեղ աշխատանքի պայմաններում յուրաքանչյուր բանվոր մասնագիտանում է որոշակի գործողություն մեջ, կրճատվում է մեկ գործողությունից մյուսին անցնելու ժամանակը:

Աշխատանքի բաժանման հարցում Հյուլենի վրա նկատելի էր Ադամ Սմիթի որոշ ազդեցությունը: Հայտնի է, որ Սմիթը, եննելով «քնական կարգից», փոխանակությունը դիտում էր որպես բնական երևույթ, այն կապում մարդու բնական էություն հետ, որն իրը հակում ունի փոխանակության նկատմամբ: Ստացվում է, որ աշխատանքի բաժանումը ոչ այլ ինչ էլ է, քան մարդու՝ փոխանակային հակվածության գրեթեամբ ձև: Հետեվելով այդ սխալ գրույթին, Հյուլեն ևս աշխատանքի բաժանումը չէր դիտում որպես պատմական զարգացման պրոցես, որպես արտադրողական ուժերի զարգացման հետևանք: Այն նրան ներկայանում էր որպես բնական ձևով ստացյալ իրևույթ:

Այս հարցում Հյուլենի վրա նկատելի էր նաև օրդանական դպրոցի ազդեցությունը, որը հասարակությունը նմանեցնում էր կենդանի մարմնին: Իսկ սա ստանում էր հասարակական երևույթների կենսաբանականացմանը: Հենց այս առումով էլ Հյուլեն նկատել է, որ ինչպես մարդու մարմնի տարբեր մասերը տարբեր ֆունկցիաներ են կատարում, ինչպես ծափի տերևները, արմատները և այլն տարբեր դեր ունեն, նույնպիսի դեր կատարում են աշխատանքի բաժանման տարբեր հասարակության

մեջ: Հյուլեն հենց դրանով էր պայմանավորում աշխատանքի բաժանման անհրաժեշտությունն ամբողջ հասարակության մասշտաբով, լինի դա արտադրողական, թե անարտադրողական ոլորտ: Սակայն մյուս կողմից էլ նա տեսնում էր, որ աշխատանքի բաժանումն որոշակի կապի մեջ է հասարակական ստացրնթացի հետ: «Աշխատանքի բաժանման աստիճանը կախված է պահանջի քանակությունից և օրակույթներից: Իսկ վերջին հանգամանքը կախված է քաղաքակրթության աստիճանից... աշխատանքի բաժանումը և քաղաքակրթությունը փոխադարձաբար ազդում են իրար վրա»¹:

Այսպիսով, եթե մի կողմից աշխատանքի բաժանումը Հյուլենի ներկայանում էր որպես հասարակական զարգացման իրան, ապա մյուս կողմից նրա խոսքում պայմանավորվում էր հասարակական պահանջների աճով: Իհարկե, ինչպես նկատել է Կ. Մարքսը, տնտեսական պահանջները ներկայացնում են արտադրության իրենազանք, ներքին մղման զրգապատճառը²: Սակայն Հյուլենի մոտ այդ պահանջները կտրված են իրենց ծնող նյութական հիմքից:

Հյուլեն որևէ տարբերություն չէր տեսնում աշխատանքի մանուֆակտուրային բաժանման և հասարակական բաժանման միջև նրա կարծիքով, այդ երկուսն էլ ենթարկվում են նույն օրինաչափություններին:

Մենք նույնպես արտադրության հիմքի վրա աշխատանքի կոոպերացիան ձևը կհատարալիզմի պայմաններում դատում էր տիրապետող, զրա հետևանքով այն իր իրանում աշխատանքի բաժանումը, անմիջական արտադրող դասվում էր լոկ որոշակի գործողության: Աշխատանքից զարմեղով այդ փոփոխությունների վրա, Հյուլեն հենց աշխատանքի տեխնիկական բաժանման մեջ էր տեսնում արհեստանոցի և գործարանի զիստավոր տարբերությունը, «Ռթան մի արհեստի մեջ տեխնիկական բաժանումը սուր կերպարանք է ստանում, այնքան ավելի արհեստանոցը գործարանի կերպարանք է ընդգծում և այնքան ավելի վարպետը բանվոր է դառնում»³: Հեղինակի կարծիքով, այդպիսի պայմաններում վերանում է ամբողջական

1 «Տարազ», 1893, № 31, էջ 697:

2 Տե՛ս Կ. Մարքս և Փ. Զնգելս, Տոմ. 7, 12, սթր. 717:

3 «Տարազ», 1893, № 3, էջ 790:

և սահեղձագործող արտադրողը, այն վերածվում է «մեռած ուժի, մեքենայի, ֆիզիկական ուժ գործ դնողի»: Նա գտնում էր, որ այդպես շարունակելիս դեպքում «մարդկային կյանքը կդառնա մի բարդագույն մեքենա, իսկ մարդիկ նրա անիվները, օդակները, պտուտակները», որ կտանդձփի «ընդհանրական» գերության վիճակ¹:

Ի՞նչ մանրրոծուական տեսեսագետ Միստոնդին մեքենաների կապիտալիստական կիրառման հակասությունները փորձում էր շտկել հարստության «արդարացի բաշխման» շնորհիվ², ապա Հյուսիս մեքենաները, տեխնիկան համարում էր դրան հասնելու և հասարակական ներհակությունները վերացնելու միջոց: Ընդուն է, նշում էր նա, աշխատանքի բաժանումը տանում է անհատի հիվանդագին զարգացմանը, սակայն «Ազամի սրդիները» գտել ու դանից դուրս գալու էլքը. «Որքան աշխատանքը տեխնիկական ավելի է բաժանվում, նույնքան ավելի հնարավոր է լինում մեքենաների գործադրությունը... Հաստատ կարելի է ասել, որ մեքենաները իսկապես աշխատանքի տեխնիկական բաժանման պտուղներ են և կոչված են միակողմանիությունից փրկելու ղեկավարման և կոչված են... բամբին, չուրը, շոգին, էլեկտրականությունը... փոքր առ փոքր օտանձնում են մարդուն հարկավոր ամբողջ ֆիզիկական գործունեությունը, թողնելով նրա համար դուրս ստեղծագործությունը, որ մարդկային ցեղի իսկական կոչումն է»³:

Արդյունաբերության մեջ կապիտալիզմի զարգացման մեքենայական արտադրության ժամանակաշրջանը բնորոշվում է արտադրողական ուժերի աճով: Ականատես լինելով այդ երեւույթներին, բազմաթիվ անտեսագետներ փորձում էին տեսականորեն հիմնավորել տեխնիկայի հասարակական դերը:

Բյուրժուական զազափաթախանների հայտնաբերում արտադրողական ուժերի առաջընթացը համախ նույնացվում էր հասարակության անտեսական ու սոցիալական ընդհանուր առաջընթացի հետ: Տեխնիկային վերաբրվում էր գերբնական հատկություն սոցիալական ներհակությունների վերացման գործում,

Պա մի ժամանակաշրջան էր, երբ, ինչպես նշել է Կ. Մարքսը, արտադրության պրոցեսն էր իշխում մարդկանց վրա և ոչ թե մարդի էր իշխում արտադրության պրոցեսի վրա⁴:

Արտադրության միջոցների նկատմամբ սեփականության ձևն այն առանցքն է, որի շուրջը պտտվում է բյուրժուական արտադրական հարաբերությունների ամբողջ համակարգը, և որով որոշվում են հարստության բաշխման կարգը, անհատի ու դասակարգի տեղը կապիտալիստական հասարակության մեջ: Հյուսիսն գիտակցում էր սեփականության դիրքի վճռողական նշանակությունը, այդ պատճառով էլ շեր համաձայնում բուրբ այն անտեսագետների հետ (և առաջին հերթին սոցիալիստները—Ռ. Ա.), որոնք զա համարում էին ելակետային, մարդկային կյանքի փրկության առաջին պայմանը տեսնելով սեփականության (գումար) ձևակերպումների մեջ: «Մենք սրանք բարի ձգտումներն նշանակություն չենք տալու» ենք,— պրեկ է նա,— այնուամենայնիվ ստացնակարգ տեղը տալիս ենք տեխնիկայի զարգացմանը: Վերջինիս օգնությամբ կարելի է ապահովել ու հարստացնել ամբողջ մարդկությունը, բայց ուղղերը, բուրբ դասակարգերը, և այդպես էլ, առանց բացառության, մասնակից անել ջաղարակիրթ, մարդավալել կյանքին»⁵: Տոգերի հեղինակը հիշեցնում է Գուստավ Շմոլերին, որ սոցիալական սեփականության ծրագրեր, բանվորների ընդհանուր բարեկեցությունը հնարավոր էր համարում այն զեպերում, երբ նրանք հյուսնեն ժողովրդական տնտեսության տեխնիկայի բարձունքներին ու բարոյականությունը, և հարեն ընդհանուր առաջադմությունը:

Տեխնիկայի զարգացման մակարդակը բնորոշում է արտադրողական ուժերի և, առաջին հերթին, արտադրության միջոցների զարգացման աստիճանը: Դա, որպես նյութական բարեբերի արտադրության ելակետային գործոն, անմիջական ազդեցություն ունի հասարակական ընդհանուր առաջադմության վրա: Հայտնի է այն հսկայական ծառայությունը, որ կատարել են ն. Չերնիշևսկին ու Դ. Պրասերը տեխնիկայի սոցիալական դիրքի գնահատման հարցում⁶: Մարքսիզմի դասականները բազ-

¹ «Տարաք», 1898, № 34, էջ 269—270:

² Ж. Симонд де Сисмонди, Новые начала политической экономии или о богатстве и его отношении к народонаселению, т. II, М., 1937, стр. 153.

³ «Տարաք», 1898, № 35, էջ 791:

⁴ ՏՄ՝ Կ. Մարքս, Կապիտալ, 5, 1, էջ 89:

⁵ «Տարաք», 1898, № 42, էջ 948:

⁶ ՏՄ՝ Գ. Чернышевский, Полн. собр. соч., т. IX, стр. 189, 193, 220—221, Д. И. Писарев, Соч., т. 2, стр. 233, 260, 271.

միջոց քննադատել են տեխնիկայի ֆեոտիչացման բուրժուական տեսարանների փորձերը, ցույց տվել, որ տեխնիկայի կիրառման հասարակական ձևեր, նրա սոցիալական հետևանքները պայմանավորված են տիրապետող արտադրական հարաբերություններով, իսկ վերջիններիս բնույթն էլ պայմանավորված է արտադրության միջոցների սեփականության ձևով: Մինչդեռ բուրժուական տեսարանները լոկ նպատակ են հետամուտ հենց կապիտալիստական հարաբերությունների մեջ ստորալուծելու աշխատանքի և կապիտալի հակասությունները, առանձին բարեփոխումները համարելով սոցիալական հարցի լուծման ամենաուպրոնեալ ուղին:

«Տնտեսականությունը» պայմանավորող մյուս գործոնը, Հյուլիեի կարծիքով, գումարն է (կապիտալը— Ռ. Ս.): Այս հարցում են Հյուլիեի դատադրություններում շկա որևէ արամբանություն: Հեղինակը «Ճշգրտելով» կապիտալ հասկացությունը, ստաշարիում էր դրա փոխարեն գործածել «գումար» բառը: Չէ որ վերջինս համապատասխանում էր նրա «գիտական սխառման»: Նա կապիտալ համարում էր «այն միջոցը, որի հիման վրա արդյունագործությունն ավելի շահավետ է լինում»¹: Ինչպես տեսնում ենք, Հյուլիեի համար կապիտալ են թե՛ մանր արտադրողի տունն ու աշխատանքի գործիքները, թե՛ կապիտալիստի արտադրության միջոցները: Կապիտալը նրան ներկայանում էր որպես ազգայատմական ու բովանդակազուրկ կատեգորիա: Նրա կարծիքով, կապիտալ է նաև դարերի բնթացքում և աստիճանաբար կուտակված մարդկության մտավոր կարողությունների ամբողջությունը: Այս հայեցողության տեսական սկզբունքները ուղիղ գծով կապվում են Ֆրեդրիխ Էխսի ուսմունքի հետ: Վերջինս քննադատելով Ադամ Սմիթի ուսմունքի ելակետային դրույթները, ազդի հարստության աստիճանը որոշելիս կարևոր տեղ էր հատկացնում մտավոր կապիտալին, որպես երկրի արտադրողական ուժերի հիմնական բաղադրամասի: Իսկ նման մոտեցմամբ վերանում է արտադրողական և անարտադրողական աշխատանքի պարբեր, և ստացվում է, թե ամեն մի գործունեություն արտադրողական է, իսկ կապիտալիստական հասարակարգը մի ներթաշնակ ստացիա-

ցիա, որտեղ յուրաքանչյուրն արգարացի բաշխման սկզբունքով ստանում է իր բաժինը:

Ինքնին հասկանալի է, որ Հյուլիեի մոտ չէր կարող լինել տնտեսական կատեգորիաների որևէ դիտական վերլուծություն: Իրեն դրա օրինակ կարելի է բերել արտադրության ծախսերի նրա մեկնարանությունը. «Յուրը այն ուժերը կամ նյութերը, որ սպառվում են գրքին գրություն տալու համար, կազմում են նրա ծախսը»: Ահեհեհ է, որ արտադրության ծախսերը հեղինակին ներկայանում են ոչ թե որպես որոշակի արտադրական հարաբերություններ արտահայտող տնտեսական կատեգորիա, այլ լոկ ստորեկան մի հասկացություն, որը ցուցաբերում է թե ինչպես «քստ կարելույն քիչ ծախսերով ստացվեն բոտ կարելույն շատ արդյունքներ»²:

Հյուլիեն որևէ պատկերացում չունեի արտադրության ծախսերի երկու բաղադրամասերի՝ հաստատուն և փոփոխուն կապիտալների մասին, և, իհարկե, այն դերի մասին, որ կառուարում են նրանցից յուրաքանչյուրը արժեքի ստեղծման պրոցեսում: Հյուլիեի հոգովաններում ո՛չ արժեքի մասին որևէ խոսք կա և ո՛չ էլ նրանում պարունակվող հավելյալ արժեքի մասին: Տնտեսական կատեգորիաներն այդպիսի խառնաշփոթ ձևով էր ներկայացնում նաև Վ. Ռոչերը, որը, Կ. Մարքսի բնորոշմամբ, կարծում էր, թե «բնությունը փոխանակային արժեքի նկատմամբ նույն դիրքն է բռնում, ինչ դիրք որ բռնում էր հիմար օրերոջը երխիայն նկատմամբ»³:

Այսպես, ուրեմն, Հյուլիեն իր հայացքներով կապված էր բուրժուական զոնհիկ տնտեսագիտության պատմական դպրոցի հետ և այդ շրջագծում էլ կասարում էր տեսական իր վերլուծությունները:

1 «Տարազ», 1898, № 28, էջ 627:

2 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 217:

ՍՈՂՈՄՈՆ ԵՂՈԱԶԱՐՅԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՌՄԱՆՏԻՉՄԸ

XIX դարի երկրորդ հինամյակին համայնքի հարցի քննությունը սուր կետի վրա էր դրվել, դրազոցեցելով մտավոր հասարակական ուղղությունների ուշադրությունը: Վերլուծվում և առաջադրվում էին տեսակետներ, որոնց նպատակը տեսություն և պրակտիկայի ուղղորդումն էր համայնքի տեղի ու զեկի որոշումն էր հասարակական զարգացման պրոցեսում: Համայնքի հարցը վերահսկ էր տեղական շրջանակները, իր վրա սենտելով ինչպես ոտակահան, այնպես էլ եվրոպական անվանի հետազոտողների ուշադրությունը: Եվ դա հասկանալի էր: Կապիտալիզմի արագ զարգացումն իր ոլորատույտի մեջ էր առել համայնքը: Փոխակերպվում էր համայնական հարաբերություններին կոտորվածքը: Օրակարգում էր դրված համայնքի պատմական գոյության իրավունքը: Հասարակական զարգացման այդ բեկումնային ժամանակաշրջանում հայտնի տեսնագետ Ս. Եղիազարյանը հանդես եկավ մի աշխատությամբ, որով նպատակ էր հետամտում ուսումնասիրել Անդրկովկասի հաստատությունների պատմությունը և սույլ գյուղական համայնքի յուրահատուկ կառուցվածքային ուրվագիծը: Այդ աշխատությունը տեսնագիտական կարեոր արժեք է ներկայացնում հասկապես համայնքի սոցիալական զեմքի բացահայտման տեսակետից: Սովետական գիտնական Ի. Փ. Պետրուշևսկու գնահատմամբ, այն նախահեղափոխական հետազոտությունների մեջ լամվագույնն է: Ս. Եղիազարյանի քննարկվող աշխատությունը հարուստ վիճակագրական ու փաստական նյութ է պարունակում ժամանակաշրջանի գյուղացիության տնտեսական վիճակի վե-

րաբերյալ: Երկրամասի համայնական հարաբերությունների հարցերը մինչ այդ արծարվել էին առանձին աշխատություններում, որոնցից Ս. Եղիազարյանը հատկապես արժեքավորում էր ուս հայտնի տնտեսագետ Մ. Կովալևսկու հետազոտությունները և Վ. Միլերի օսեթական էությունները:

Հավանաբար իր վրա կրելով Մ. Կովալևսկու ազդեցությունը, Ս. Եղիազարյանը դանձր էր, որ համայնական հոգատրությունը հատուկ է եղել բոլոր ազգերին նրանց զարգացման սկզբնական շրջանում: Նա չի համաձայնում այն հեղինակների հետ (Ա. Երեցյան, Ս. Զեյնիսկի, Ն. Աբելով), ովքեր հայ մոլոդոբի համար քնորոշ էին համարում հոգատրության միայն համայնական ձևը. «Որ համայնքը երբևիցե գոյություն ուներ և գոյություն ունի ոչ միայն հին Հայաստանի կողմից մեջ մտնող Անդրկովկասի շրջաններում, այլև ամբողջ Պարսկաստանում և Փոքր Ասիայում, այդ փաստ է: Բայց մյուս կողմից մասնավոր հողային սեփականության միաժամանակյա գոյությունը նույնպես կուսկածի ենթակա չէ»: Այնտեղ է, որ Ս. Եղիազարյանը ժխտելով միայն մասնավոր սեփականության նախահղանակն գոյության վերաբերյալ բուրժուական տնտեսագետների դադարվար, միաժամանակ նշում է նրա առկայությունը հին Հայաստանում:

Հայտնի է, որ Հայաստանում համայնական հողագտագործման հիմքը համփաշարեբային համակարգն էր: Ըստ այդ համակարգի, մեկ համփաշի հողարածին ստանում էին 16 շունչ ունեցող ընտանիքները, դրանց բիշ, բայց դույզ թվով ընտանիքները համապատասխանաբար ստանում էին 3/4, 1/2, 1/4 և 1/8 համփա: Կենտ թվով ընտանիքներին լրացուցիչ տրվում էր մեկ շնչի հողարածին: Ս. Եղիազարյանն այսպիսի տարբերակումը համարում էր արհեստական, գտնելով, որ այդ սղա-սակարգումը արվել էր ավելի շուտ հողարածնման հարմարության գործնական նկատառումներից ենթելով:

Ընդհանրապես համփաշի տնտեսական էության բացահայտումը ելակետային նշանակություն ունի հայկական համայնքի հողագտագործման հարաբերությունների լուսարանման տեսակետի: Ուստի այն ոչ միայն անկաստ ընկող Ս. Եղիազարյանի կողմից, այլև դարձավ նրա հետազոտությունների առանցքային

1 ՏՃ՝ С. А. Егiazаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. 1, Сельская община, Казань, 1889, стр. 1.
2 ՏՃ՝ И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв., Ленинград, 1949, стр. 222.

1 С. А. Егiazаров, Исследования..., ч. 1, стр. 151.

հարցերից մեկը: Մի կողմ թողնելով համափաշարեան ճամփա-կարգի վերաբերյալ երկրամասի ազգային հարաբերությունների հետազոտողների մեկնաբանությունները, կարևոր ենք գտնում անդրազանալ Ս. Զելինսկու կողմից համափան «վճարունակություն» դիտելու մտայնության Ս. Եղիազարյանի քննությունը:

Քննադատելով Ս. Զելինսկուն, Ս. Եղիազարյանը գրում էր. «Քրեկերի գյուղական համայնքում ամենից առաջ որոշում են համայնքի անզամի տնտեսական, ունեցվածքային ունակությունը և հետո նոր հարկադրում այդ տունակությունը» համապատասխան հարկերն ու պարհակները, այլ խոսքով, ոչ թե հողի շահին և կախված հարկերի շահից, այլ, ընդհակառակն, հարկերի շահը կախված է համայնքի անզամի հողաբաժնի մեծությունից¹: Հետևապես, համափան մեծ հողաբաժնի էր ստանում ոչ թե այն պատճառով, որ ավելի շատ հարկեր և պարհակներ ստներ, այլ այն պատճառով, որ համայնքի մյուս անզամների հետևանքով մեծ հողաբաժնի ուներ: Համափայի տնտեսական ունակության և հարկերի ու պարհակների փոխհարաբերության այսպիսի հարցադրումը ինքնին տրամաբանական է: Սակայն համափան, որպես նահապետական ընտանիքի տնտեսական կարողության միակ շահի, իր ֆունկցիան կատարում էր վաղ ֆեոդալիզմի շրջանում:

Նաագայում մի շարք տնտեսական գործանքների ազդեցության հետևանքով համափան բաժանվեց առանձին մասերի, մասերառվեց, գրանով իսկ խախտելով բնամեղիքի հողաբաժնի մեծության ու վճարունակության ուղիղ համեմատական կապը: Ուստի միակողմանի պետք է համարել ինչպես Ա. Պարվիցկու համափան վճարունակությունը դիտելու մտայնությունը, այնպես էլ վճարունակությունը միայն հողաբաժնի մեծությունից ածանցելու Ս. Եղիազարյանի տեսակետը: Այն, ինչպես իրավախորհրդի նշել է պրոֆեսոր Մ. Եղանյանը, իրեն տնտեսական կատեգորիա «արտահայտում է յուրաքանչյուր ընտանիքի վիճակն ու վճարունակությունը»²:

Հողերի վերաբաժանման համափայի կարգը հատկապես կա-

պտախտասական հարաբերությունների զարգացման ժամանակաշրջանում, երբ բնատնտեսությունն իր սեղը դիզում էր ապահովելու տնտեսությանը, առիթ էր տալիս լուրջ տնտեսական հակասությունների, նպաստում գյուղի սոցիալական ու դասակարգային շերտավորմանը: Գյուղական բուրժուազիան իր մեղքում էր կենտրոնացնում լավագույն հողերը, որն ուղեկցվում էր գյուղացիության քայքայմամբ, վաշխատական կապիտալի աշխուժացմամբ և տարագնացության ուժեղացմամբ:

Սոցիալական հիշյալ ներհակություններն առիթ էին տալիս համափաշարեային համակարգի պատմական հարատևության ստուգաբանումների: Մի շարք հեղինակներ (Ա. Պարվիցկի, Է. Սարգիով) առավել նպաստահարմար էին գտնում հողերն ըստ շնչի բաշխման սկզբունքը: Ս. Եղիազարյանը, ընդհակառակն, այն կարծիքին էր, որ վերջինս շահագնաց բացասական հետևանքներ կունենա գյուղացիական տնտեսությունների վրա, կհասցնի հողաբաժնիների շահից ավելի մանրատման և շերտ-ընդմիջությունների առաջացման: Նա, շրջանակելով նաև համափային համակարգի թերությունները՝ կապված անհող շնչերի առաջացման հետ, այնուամենայնիվ, հակված էր համայնքի ներսում հողի, ջրի, հարկերի և պարհակների բաշխման համափաշարեային սկզբունքի պահպանմանը, գտնելով, որ այն կապահովի գյուղացիական զանգվածների նյութական բարեկեցությունը:

Ս. Եղիազարյանի կարծիքով, համափային համակարգի թերությունները հնարավոր է վերացնել «աշխուրջ վերահսկողության և տեղական կառավարությունների ժամանակին միջամտության» շնորհիվ: Այնքան է, որ այս պատողություններում բացակայում է տնտեսական զարգացման օրենքների քմրանումը, անսուսուսում են հասարակական առաջընթացի օրինաչափությունները: Ս. Եղիազարյանը չէր հասկանում, որ իրավական միջամտությունը անհնարին է կանխել տնտեսական զարգացման ընթացքը: Համայնքի հարցերում նրա վրա նկատելի էր նորոգիկության ազդեցությունը: Համափաշարեային համակարգը նրա համար ծառայում էր որպես համայնքի հետագա հարտատևությունն ապահովելու միջոց:

Մ. Կովաչևսկին եթև առաջավոր եկրոպական երկրներում համայնքի քայքայման փաստը դիտում էր որպես նրա ներքին զարգացման արդյունք, ապա զարգացման երկրներում, ինչ-

¹ Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, т. 1, Тифлис, 1887, стр. 18.

² С. Ե. Ս. Ա. Կովաչևսկի «Аграрные отношения в Армении до и после ее присоединения к России» զոգտարական դիտարարան, էջ 168.

պես, օրինակ, Հնդկաստանում վճռական տեղ էր հատկացնում բնությանն ու քաղաքական գործոններին¹։ Նույն ձևով էլ Ս. Եղիազարյանը հողերի ըստ շնչերի բաշխումը դիտում էր որպես միջոց, որն արհեստականորեն արագացնում էր համայնքի բալթալումը։ Այդ սկզբունքը թեև «մաթեմատիկորեն» արդարացնելի է, սակայն հողաբաժինների մասնատումը զմվար կացության առաջ է կանգնեցնում հատկապես փոքր ընտանիքներին, որոնք հնարավորություն չունենալով՝ հողը մշակելու, վեր են ածվում վարձու բանվորներին։ Խախտվում է համայնքի ներքին կառուցվածքը. «Փոլուպցու աշքում հողը կորցնում է և՛ իր արժեքը, և՛ իր տնտեսական նշանակությունը»², եվ Ս. Եղիազարյանն իր եղբայրացուներին էր հիմնավորում էր համապատասխան թվական ավալներիով, ցույց տալով, որ այն շրջաններում, ուր իշխում է համփաշարեբային համակարգը, հողագործների թիվը անհամեմատ քիչ է³։

Հակառակ համայնքի պահպանման Ս. Եղիազարյանի ակնկալություններին, «տնտեսական զարգացման ուժք ցույցադրում էր այլ օրինաչափություն։ Հայտնի է, որ 1882 թվականին Երևանի նահանգայնոր կարգադրից հողաբաժինները բաշխել ոչ թե համփաշարեբային, այլ ըստ շնչերի սկզբունքով։ Այնուհետև, 90-ական թվականներին հրապարակվեցին գյուղագործների հողաբաժինները վաճառելու և գրավ դնելի արդենվելու վերաբերյալ օրենքներ, որոնք նպատակ ունեին կասեցնելու համայնքի բալթալումը։ Միևիդեռ, ինչպես ընդգծել է Վ. Ի. Անինը, «Հին՝ թե՛ կալվածատիրական և թե՛ գյուղացիական հողատիրության հեղափոխումը տնտեսական անվերապաս անհրաժեշտություն է դարձել։ Այդ հեղափոխումը բացարձակապես անխուսափելի է, և աշխարհում ոչ մի ուժ չի կարող խանգարել դրան»⁴։

Պատմահասարակական պայմանները համայնքի բալթալումը դարձնում էին օրինաչափ, որպես հասարակության զարգացման համընդհանուր օրինաչափության դրսևորում։ Համայնք

նական տնտեսաձևի սոցիալական համակարգի ոչնչացումը պայմանավորված էր արտադրողական ուժերի զարգացման հետևանքով նրա անդամների գոյացման ու սոցիալական շերտավորմամբ։ Թերևս չենք որսնցով էր պայմանավորված համայնական հողօգտագործման սկզբունքների որոշ էվոլյուցիան, հողերի բաշխման այն նոր ձևի ի հայտ գալը, որի մասին Ս. Եղիազարյանը գրում է. «Այս դեպքում ծիխն այս կամ այն հողաբաժնի հատկացման համար հիմք է ծառայում ոչ թե տասնձին շնչերի թիվը, ինչպես զա տեղի ուներ համփաշարեբային հին ձևի ժամանակ, այլ պարզապես ծխի տնտեսական ունակությունը— աշխատունակ շնչերի թիվը և տնտեսական գույքը»⁵։ Սակայն հեղինակը չի անդադարակն հողերի վերաբաշխման նոր կարգի և նրա զրգացածուներին բնութայնը, դրանք չի կապել այն փոփոխությունների հետ, որոնք տեղի էին ունենում ավատական կապալաներից ազատվող և կապիտալիստական զարգացման ուղին թեևսկիսած հայկական գյուղում։ Ընդհակառակն, հենվելով վերաբաշխողական ուղղության ներկայացուցիչ Պ. Սոկոլովի «Ռուսաստանի հյուսիսի գյուղական համայնքի պատմության ուրվագծեր» աշխատության վրա, նա փորձել է ցույց տալ, թե հողերի նման զասակարգում գոյություն ունեց նաև հին տնտեսական համայնքում, ուր ծխերը բաժանվում էին ըստ լավագույն, միջակ և թույլ տնտեսական ունակությանը⁶։ Ս. Եղիազարյանը չէր բերանում, որ զա, ինչպես նկատել է նաև պրոֆեսոր Ս. Զուրաբյանը, «պարաներգրամական հարաբերությունների զարգացման և համայնքի անդամների միջև տնտեսական անհավասարության աճի հետևանք» էր և վկայում էր գոյություն կատարվող զասակարգային շերտավորման մասին, այն մասին, որ հողերի վերաբաշխման կարևոր գործոն էին դարձել տնտեսական լծակները։

Չնայած համայնքի կենտունակության վերաբերյալ Ս. Եղիազարյանի դատողություններին, այնուամենայնիվ, զարգացման պատմական պրոցեսի գլխիկտիկական օրինաչափություններն ստիպում էր խոստովանելու, որ համայնքի կառավարումն

¹ Տե՛ս Մ. Ковалевский, Очерк происхождения и развития семьи и собственности. СПб, 1896, стр. 140, նույնի Общинное землеуладение, причины, ход и последствия его разложения, ч. 1, М., 1879, стр. 156.

² Շ. А. Егизаров, Исследования..., ч. 1, стр. 69.

³ Տե՛ս նույն տեղում, էջ 70։

⁴ Վ. Ի. Անին, Սժ, է. 17, էջ 114—115։

⁵ Շ. А. Егизаров, Исследования..., ч. 1, стр. 63.

⁶ Տե՛ս Շ. А. Егизаров, Исследования..., ч. 1, стр. 63—64.

⁷ Ս. Ե. Զուրաբյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր, Երևան, 1959, էջ 309.

քնդուծում է օրհարիսիկ երանգ և համայնական հողատիրո-
թյունն աստիճանաբար բայթայլում է¹։

Ս. Եղիազարյանի կարծիքով որո՞նք էին այդ բայթայլումը
պայմանավորող գործոնները։ Նա գտնում էր, որ համայնակի՝
այդ հինավուրց հաստատություն, բայթայլումը հատկապես նկա-
տեղի է և ինտենսիվ ձևով է կատարվում տաք դաշտավայրային
շրջաններում, որտեղ զարգացած են այլգործությունն ու տեխ-
նիկական կուլտուրաների մշակությունը։ «Սակավահողությունն
ու սակավաչրությունը,— գրում էր նա,— զբոսում են գյուղա-
ցիական վերնախավին առանկլ արեճաբավոր և ջրովի տեղամա-
սերի աստիճանական ցանկապատմանը, վերջիններս ցանկա-
պատմից հետո ամբողջում էին տիրոջը՝ ժառանգական տնօ-
րինության իրավունքով Զանկապատման այսպիսով համայնակի
բայթայլմանը նրաատող զվաճվող գործոններից մեկն է²։

Համայնքի բայթայլման հետ միասին հողային սեփականու-
թյունն աստիճանաբար կենտրոնանում էր ունեւոր դասի ձեռ-
քում, որը հանգեցնում էր չբավոր անդամների աշխատանքի
շահագործմանն ու քառարկության առաջացմանը։ Վկայադ-
չելով Գովալսկու, Մատրերի, Խարույկնի աշխատությունները,
Ս. Եղիազարյանը նշում էր, որ ցանկապատմաների միջոցով
հողերի սեփականացման երևույթը տեղի է ունեցի ինչպես
Անդրկայում ու Քերմանիայում, այնպես էլ Գոնի կաղակների
ժամանակակից համայնքներում։ Հայ տնտեսագետը չէր նկա-
տում, որ հողերի, ստաջին հերթին համայնական հողերի, ցան-
կապատմը ինչպես եվրոպական երկրներում կապիտալիզմի
նախապիղծական կուտակման ժամանակաշրջանում, այնպես
էլ Անդրկովկասում պայմանավորված էր նոր տնտեսական հա-
րարերությունների, նոր տնտեսածների առաջացմամբ։ Ինչպես
Անդրկայում հողերի ցանկապատման համար կարևորագույն
խթան հանդիսացավ Գոնակական բրդի մանուֆակտուրայի
արագ զարգացումը, այնպես էլ հայ իրականության մեջ նորա-
մուտ արդյունաբերությունն առաջադրում էր գյուղատնտեսա-
կան քաղաքային հումքի պահանջ։ Այդ պրոցեսը ենթադրում
էր, մի կողմից, խոշոր հողատեխնիկաների առաջացում ու
արտադրության նորագույն եղանակների ներմուծում, մյուս

կողմից՝ շուկայական հարաբերությունների ընդլայնում։ Սա-
կայն ճիշտ է Ս. Եղիազարյանի այն եզրակացությունը, որ տն-
տեսական հեղաշրջումը, նահապետական համայնքի աստիճա-
նական բայթայլումը՝ համապատասխան փոփոխություններ է
առաջ բերում ժողովրդի իրավական գիտակցության մեջ։ Փաս-
տորեն ցանկապատված հողատարածությունները վեր են ած-
վում ժառանգական կամ մասնավոր սեփականության, ստա-
նալով համարժեքային րովանդակություն, լնայած իրավական
գիտության առումով դրանք տարբեր ինտսիտուտներ են։ Հենց
այս առումով էլ նա հակադրվում էր բոլոր այն հեղինակներին,
ովքեր, հենվելով մուսուլմանական արևելքի կրոնական օրենք-
ների վրա, ժխտում էին մասնավոր սեփականության անկալու-
թյունը, այն համարելով անբովանդակ ֆիկցիա³։ Այլապիսին է
Ս. Եղիազարյանին ներկայանում նաև մյուսը, որովհետև նրանք
ձեռք են բերված այն շանապարճով, ինչպես ուրիշ շատ սե-
փականությունները⁴։

Գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացումը գյու-
ղում ևս ուժեղացրեց վարձակալական հարաբերությունները։
Գյուղական րուբժուալիայի ձևերում հողերի կենտրոնացման,
վարձակալական հարաբերությունների աշխուժացման հետևու-
թյով գյուղացիության մի հակալական մասը զրկվելով արտա-
գրության միջոցներից, աշխատումի համապատասխան կի-
րառում չէր գտնում, հիմում էր տարաբնույթի միասին աշխա-
տանք ու ապրուստի միջոցներ փնտրելու երկրամասի արդյու-
նաբերական կենտրոններում։

Գյուղական րուբժուալիան հողը վարձակալության էր տա-
լին ամենածանր պայմաններով։ Ս. Եղիազարյանը տարբերա-
կել է հողի վարձակալության երեք հիմնական ձև՝ առանձին
անասնաբերի, գյուղացիական խմբերի և ստրոգը համայնքների
կողմից։ Հաճախ վարձակալում էր ոչ միայն հողաբաժնիով շա-
պհուլված պետական գյուղացիությունը, այլև նրա այն մասը,
որը տնօրինում էր ավելցուկ աշխատուժը։

Վարձակալական հարաբերություններ ձևող գրգռապատճառ-

1 С. А. Егнazarов, Исследования... ч. 1, стр. V.

2 Նույն տեղում, էջ 151։

1 С. А. Егнazarов, Исследования... ч. 1, стр. 151.

2 С. А. Егнazarов, Исследования... ч. 1, стр. 138.

3 Ս. Եղիազարյան, Ցեղացական հողատիրությունը եվրոպայում, մեր
երկրի հարթակի մասում և մեր գյուղացու պայման տնտեսական գիտությունը,
Քիթիկա, 1882, էջ 22։

ներքից գլխավորը Ս. Եղիազարյանի կարծիքով սակավահոգությունն է և սակավաբուխությունը¹։

Ս. Եղիազարյանը հատուկ ուշադրություն է նվիրել քրատորման համայնական սկզբունքների վերլուծությանը², որտեղ ցույց է տվել, թե ինչպես համայնքի ներսում հեռուցման խարխլվում են ջրի բաշխման գեոմոկրատական ավանդույթները, և միաբաներն ու չուվարները ջուրը փաստորեն դաժմել են մասնավոր սեփականություն, շահագործման, նոր հողերի յուրացման ու կաշառակերության միջոց։ Նշված հանգամանքները տարազանացության գլխավոր պատճառ դիտելու մասնությունն ընդհանրապես հատուկ էր լիբերալ ուղղության բոլոր տեսաբաններին։ Նրանք Նշել են փաստը, առանց խորանալու այդ երևույթն առաջացնող տնտեսական հարաբերությունների կոլեյան մեջ։ Եվ տրամաբանական է, որ կապիտալիզմի զարգացման հետևանքով վարձակալական հարաբերությունների արձատագործման ճարտք նրանց մոտ լայն շրջագծով ընծայվան լի են կարկվել։ «Մեր լիբերալները,— գրել է Վ. Ի. Լենինը,— «գյուղացիական հարցը» մշտապես գնում են գյուղացիների «հողասակավության կամ նրանց կենցաղը սպիտակաբորեն կարգավորելու անհրաժեշտության, կամ թե այս կամ այն «նորմայով» հող հատկացնելու (այս մեղքը գործում են նաև նարոդնիկները) տեսակետից։ Այսպիսի տեսակետը արձատագեն սխալ է»³։

Գյուղում խոր արձատներ էր ձգել վաշխատական կապիտալը։ Հնարավորություն չունենալով ժամանակին մարելու պարտքը, գյուղացին հողի օգտագործման իրավունքը զիջում էր վաշխատունին։ Կուլակներն ու գյուղացիության ունեոր դասն ամեն կերպ բռնազորվում ու յուրացնում էին ամենակամուտաբեր և արժեքավոր հողերը։ Ս. Եղիազարյանը վիճակալուծումներ է արել Դյակոնսկուց, Խան-Աբելյովից, Պարվիցկուց, ցույց տալով կուլակության շահագրությունները, ժամանակին չմարելով վարկը, գյուղացին ստիպված էր կամ վաճառելու իր տնտեսական գույքը, կամ էլ վարկատունին զիջելու իր հողաբաժնի օգտագործման իրավունքը մինչև պարտքի մարումը։ Առաջինները կամ իրենց հողարժեքները տալիս էին վարձակալության, կամ

էլ վարձակալում համապարզացի հարուստ վերնախավի մոտ հաստատելու, իսկ երկրորդները ստիպված թողնում էին հողագործությունը, անցնում այլ դրազմունքների, կազմավորելով «անտեսնե ծխեր»⁴։ Եվ այդ բոլորը հետևանք էր «վաշխատության և աշխատանքի ստրկացման», որոնք էլ, Ս. Եղիազարյանի կարծիքով, խախտում էին համայնական հարաբերությունների հիմքերը։

Ընդհանրապես վաշխատական կապիտալը, որպես շահագործման միջոց, միշտ էլ նպաստել է սեփականության հին մեծերի խորտակմանը, գյուղացիական մասսաների քայքայմանը, մանր արտադրողների անշատմանն արտադրության միջոցներ և վարձու բանվորների կազմավորմանը։ Վաշխատական կապիտալն արդեն հաշվական գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացման վկայություն էր։

Ս. Եղիազարյանը հաշվական համայնքի առանձնահատուկ գծերից է համարում նրա համադասային բնույթը, այն, որ գյուղացիների հետ մեկտեղ ապրում և հողին տիրում էին նաև այլ խավերի ներկայացուցիչներ։ «Գյուղական համայնքը մուսուլմանական Արևելքում և Անգրիվկայում մասնավորապես,— գրել է նա,— լուծի մեկուսացած, ենդ դասային կաղմակերպություն։ Գյուղերում գյուղացիների հետ մեկտեղ, թեև սահմանափակ բանակությամբ ապրում և տիրում են պետական և սեփականատիրական հողերին անմիջ, որոնք պատկանում են այլ խավերի... Սրանց են պատկանում ամենից առաջ տեղացի գյուղական ազնվականությունը՝ մեկիները, բեգերը, ազալարները... հուկուրականությունը, առևտրականները»⁵։ Պատմականորեն ձևավորված այս համադասային կազմը, հեղինակի կարծիքով, նպաստում էր համայնքի քայքայմանը, որը հատկապես դրսևորվում էր հարկային սխառնի բնագավառում։

Հարկերի ամբողջ ծանրությունն ընկած էր շքավոր գյուղացիության վրա։ Հարկաշափը որոշվում էր կամայական ձևով և հաշվի չէր առնվում գյուղացիության տնտեսական փաստական վիճակը։ Ս. Եղիազարյանը համաձայնում էր Մարկովի այն կարծիքին, որ համայնքում կողմնակի անձանց համար գյուղություն չունի հարկերի ու պարհանքների սահմանված որևէ շափ,

¹ С. А. Егизаров, Исследования..., ч. 1, стр. 199.

² *Տե՛ս* С. А. Егизаров, О водовладении в кавказском крае, Киев,

¹ С. А. Егизаров, Исследования..., ч. 1, стр. 231.

² Նույն տեղում, էջ 1։

երանք կամ բնօճանրապես ազատվում են, կամ էլ վճարում են մասնակիորեն: Գյուղացիական վերնախավի մյուս ներկայացուցիչներին հանդիպ ցուցաբերելով հանդուրժողական վերաբերմունք, նա հատկապես բնագագառում էր առևտրական զասի ներկայացուցիչներին գյուղ ներթափանցման երևույթը, որոնք սեփականացնում էին գյուղացիության հողերը, բացասական ազդեցություն ունենալով նրանց բարեկեցության վրա:

Ս. Եղիազարյանն առաջարկում էր հարկալին սխտանի ալդ «ցավոտ տեղը» շտեկի երկու եղանակով՝ կամ հատուկ օրենքով հարկադրել նաև կողմնակի անձանց (պետական գյուղացիությանը հավասարապես), որը, սակայն, կարող էր հակասակուն լինել նրանց արտոնյալ վիճակին, կամ էլ հարկերն ու պարահանները փոխարինել մեկ բնօճանուր տասնորդական դրամական հոգատուրքով, որը բացառապես բնկնում էր հողի, որպես հարկադրման օրինկոի վրա¹: Ըստ էության, Ս. Եղիազարյանն առաջարկում էր հարկումը իրականացնել հողաբաժիններին համապատասխան: Բայց հալիվ թե գա օրեկ փոփոխություն առաջ բերել գյուղացիության վիճակի մեջ: Բանն այն է, որ հարկերի բաշխումը կատարվում էր համայնքի ունեւոր անդամների կողմից, ուստի հարկերի հիմնական մասն էլ բաժին էր բնկնում լուծեւոր գյուղացիությանը: Մյուս կողմից վարձակալության արված հողերից ստացված համախառն արդյունքից գյուղացին հարկ էր վճարում ոչ թե մի մասի, այլ ամբողջ հողի համար, որը և նրան դնում էր տնտեսական ավելի ծանր պայմանների մեջ:

Արո՞նք են այն միջոցները, որոնցով Ս. Եղիազարյանը նպատակ էր հետամտում բարելավել գյուղացու տնտեսական դրությունը, վերացնել վաշխատությունը, պայմաններ ստեղծել գյուղատնտեսության զարգացման համար և, վերջին հաշվով, կանխել համայնքի քայքայումը: Նա չէր բնօրնում հասարակական այն հասանքի դրկարծումն, որն անկեկալում էր հողը վերջնել կալվածատերերից ու արամադրել գյուղացիությանը և առաջարկում էր արավել «Յիմնավոր միջոցներ»:

Ս. Եղիազարյանն անհրամշտ էր համարում գյուղացիներին վաշխատունների շահագործումից ազատելու, նոր հողեր գնելու և գնած հողերը ձեռքից չիղղնելու, ջրանցքներ կառուցելու և

ազատ հողերը յուրացնելու նպատակով նրանց արամադրել ձեռնաւու վարկ, նրանց ծանոթացնել գյուղատնտեսական գիտաթյուններին, ներքնել արտադրության առաջավոր եղանակներ, սահմանափակել հողերի առքն ու վաճառքը¹, կարգավորել հողերի վերաբաժանման ժամկետներն ու հավասարակշռել բնակչության աճի և համայնքի աշխատանքային հնարավորությունները² և այլն և այլն: Նկատենք, որ նման տեսակետներ էր հայտնում նաև Ա. Նրիցյանը³: Նա չէր նկատում, որ համայնքի քայքայումը հասարակության կապիտալիստական փոխակերպության հետևանք է: Այդ պատճառով էլ գյուղացիության սոցիալական շերտավորման փաստը նա դիտում էր ոչ թե դասակարգային, այլ ունեկնամթային շերտավորման տեսակլուինք⁴:

Ս. Եղիազարյանի առաջարկած «Յիմնավոր միջոցները» արմատական ոչինչ չէին տալիս և ոչ միայն ենթարկված էին տեսական սխալ կանխադրությունների, այլ և հաշվի չէին առնվում հայկական իրականության մեջ զրանք կիրառելու գործնական հնարավորությունները:

Ս. Եղիազարյանի ուղեգծումները լոկ նպատակ էին հետաժրտում նոր իրադրության հետ կապակցելու և պահպանելու պատմական շրջափոխությանը դիմակայած տնտեսական հաստատությունները: Նա տեսնում էր վերջիններիս քայքայումը, բայց և փորձում էր դիմակայել զարգացման արամարանտեթյանը: Ուստի և տնտեսական զարգացման նրա հալեղությունը ձեռք է բերում առմանախկան բովանդակություն:

Ս. Եղիազարյանի Անդրկովկասի հաստատությունների պատմությանը վերաբերող երկրորդ խոշոր աշխատությունը նվիրված է քաղաքային ցեխային կազմակերպությունների՝ համարությունների վերլուծությանը: Պորլումը, հեղինակի կար-

¹ Տե՛ս Ս. Եղիազարյան, Զեղապական հողաթրթությունը Երզրայանում... էջ 33-40.

² Տե՛ս Ս. Ա. Եղիազարյան, Исследования..., т. 1, стр. 66.

³ Տե՛ս Ա. Դ. Երիցов. Экономический быт государственных крестьян Борчалинского уезда Тифлисской губернии, Тифлис, 1889. Խոյի է Экономический быт государственных крестьян Казახского уезда Елизаветпольской губернии, Тифлис, 1889.

⁴ Տե՛ս Ա. Ս. Ամբարյան. Развитие капиталистических отношений в Армянской деревне, Ереван, 1959, стр. 6.

¹ Տե՛ս Տвод материалов по изучению..., т. 1, стр. 10-15.

միջով, կարևոր է հետևյալ նկատառումներով. «Ռուսաստանի ծայրամասերի... մոզովորդները գտնվում են բազաբացիտիվյան տարրեր աստիճաններում, նրանց իրավական կայանքով մշակված հասարակական միությունները, հիմնարկություններն ու ինստիտուտները միաժամանակ կարելի է ուսումնասիրել զարգացման տարրեր փուլերում և այդպիսով հետևել դրանց ընթացման անհի բնթացքին»¹։ Նման հարցադրումը, իհարկե, պատահական չէր։

Ռուսաստանում կապիտալիստական արագ զարգացման վերափոխությունների իրենց հետևանքներն էին ունենում նաև Անգղիոլվկասում։ Քայքայվում էին ոչ միայն դուրյական համայնքի, այլև արտադրության համաբարական տնտեսաձևերի հիմքերը։ Ամեն ինչ զրվում էր կատարված դեպքերի քննության սակի։

Չնայած հարցը մինչ այդ զբաղեցրել էր նաև այլ հետազոտողների (Պ. Շանչյան, Գ. Հախվերդյան), սակայն Ս. Նդիազարյանի աշխատությունն իր բնույթով ու կառուցվածքով համաբարական տնտեսաձևի առաջին համակողմանի ուսումնասիրությունն է։ Նրանում արժարժվում են ցեխային կազմակերպությունների պատմության ու տեսության մի շարք այնպիսի էական դրույթներ, որոնք կարևոր նշանակություն ունեն հարցի լուսարանման տեսակետից։ Տնտեսագետը Անգրիոլվկասի հաստատությունները քննելով իրենց պատմական զարգացման պրոցեսում, հարցերը դիտում էր լայն շրջանակներով, հետազոտության որոտն անելով բազմաթիվ արխիվային նյութեր ու ցեխային կազմակերպությունների նյութիված ինչպես ռուսական, այնպես էլ եվրոպական հեղինակների (Կոլիալեյի, Կուլիակովսկի, Չագորսկի, Հակաստաուդեն, Շմոլեր, Շյոնբերգ, Շանց, Բրենտանո, Գիրկե, Մաուեր և շատ ուրիշներ) աշխատություններ²։ Ս. Նդիազարյանի վրա հատկապես նկատելի էր Մ. Կոլվալեկու ազդեցությունը։ Դա ժամանակին նշվել է նաև Ա. Բորդոզինի կողմից։ Վերջինս միաժամանակ Ա. Նդիազարյանի աշխատությունը համարում էր արժեքավոր ձեռքբերում ինչպես

հայրենական, այնպես էլ համաեվրոպական դիտական գրականության մեջ³։

Ցեխային կազմակերպությունների ծագման հարցը դուրսին հարց չէր և, չնայած XIII դարից սկսած վեճեր էին գեում դրա շուրջը, մինչև XIX դարի վերջն այն վերջնականապես լուծված չէր։ Առկա էին բազմաթիվ իրարամեծ տեսություններ։ Այսպես, օրինակ, առաջ էր քաշվում հոտմեական ծագման տեսությունը, բայտ որի միջնադարյան ցեխերը որոշակի «գնեևտիկական կապ» են ունեցել «հոտմեական մոնիցիդալ կարգի հետ»։ Համաձայն մեկ ուրիշ տեսակետի, անհրաժեշտ է կարևոր տեղ հատկացնել ազգային առանձնահատկությունների գործոնին։ Այլ հեղինակներ առաջադրում էին դրանց ծագման «պետական» տեսությունը։ Ոմանք էլ այն կապում էին ցեխայի անդամների կրոնական ընդհանրության փաստի հետ։ Այս պարագայում, բնականաբար, որոշակի կարևորություն է ստանում համաբարական կազմակերպությունների ծագման ու զնահատման, դրանց և եվրոպական երկրների միջնադարյան ցեխային կազմակերպությունների միջև ընդհանուր օրինալուծությունների և առնչությունների ուրվագծումը։ Հակաստաուդենը գտնում էր, որ համաբարություններն Անգրիոլվկաս են թափանցել խաչակրացների կողմից, կամ Նդիպտոսից Պարսկաստան, իսկ այնուհետև Անգրիոլվկաս։ Ըստ Զաղորսկու, դրանք ունեն թուրքական ծագում։ Գ. Հախվերդյանը դրանք վերագրում էր հայերի ազգային առանձնահատկություններին⁴ և այլն։ Այդ տեսակետներից ոչ մեկը Ս. Նդիազարյանը դիտական և պատմական փաստերով հիմնավորված չէր համարում։ Քննադատելով համաբարությունները «թուրքական հզուտության և պետական կարգի աղյուծներ գիտելու» մտալուծությունը, Ս. Նդիազարյանը նշում էր, որ թուրքերը, որպես հետամնաց և բուլժորական մոզովորդ, իրենք էին ընդօրինակում միմեկված մոզովորդների կառույտան։ Նա դրանում էր, որ ժամանակակիցության անույով համարում չի կարելի համարել նաև ինչպես եւ Մատնակոզյանի տեսակետը, բայտ որի համաբարությունները գոյություն ունեին դեռևս XIII դարում⁵,

¹ С. А. Егизаров, Исследования по истории укреплений в Закавказье, ч. II, Городские цехи, Кавказ, 1891, стр. 1.

² Ուղչես նշում է Բ. Ա. Կուլեր, Ս. Նդիազարյան, Մ. Կոլվալեկու տեղյաւած զարգիւնեիկայացուցիչներէց էր (տես Ե. Ա. Կազաւ, Մ. Մ. Կովալեւսկիի ու ու. ուսուցումն ուրսիւք Րայոնո՞ւ Կաւկազ, Մ., 1979, էտր. 19)։

¹ ՏՄ «Կաւկազ», 1892, № 60.

² ՏՄ Հախվերդյանի ՍՁ ՊԳՊ, ֆ. 38, յ. 1, գ. 13, է. 34։

³ ՏՄ «Ե. Մատնակոզյանի շէրքումի և Կարտի արհեստագործների համայնական կարգերը հոգնամայրը, յՄՊԿԿ, 1981։

այնպես էլ Շանշյանի կարծիքը, որը դրանք համարում էր առավել հին հաստատություն:

Ռուս հայտնի տնտեսագետ Մ. Կովալևսկին ցեխերը դիտում էր որպես պատմական զարգացման միատեսակ պրոցես անցած հաստատություններ: Որոշ չափով կրելով Մ. Կովալևսկու հայացքների ազդեցությունը, Ս. Եղիազարյանը մեկ անգամ չէ, որ վկայախոչ էլ է նրա «Համալսական կարգն Անգլիայում, Նշելով այն դժվարությունը, որը կապված է համաբարությունների առաջացման գործում այս կամ այն ժողովրդի մասնակցությունն սահմանների որոշարկման հետ, նա գտնում էր, որ հաստատության ձևավորման, որոշակի կերպարանք ստանալու և ընդհանուր պետական կառավարության ու հասարակական կյանքում ճիշտ գործիչու համար «անհրաժեշտ է ոչ մեկ հարյուրամյակ»¹:

Դարեր շարունակ եղել են համաբարական կազմակերպությունների նախատիպեր ու դրանց հետ կապված առանձին սովորություններ, սակայն համաբարությունների գոյությունը Ս. Եղիազարյանը որոշակիորեն կապում է XVII դարի հետ, չնայած «XVII դարում առանձին համաբարությունների տնտեսական գործունեության ոլորտը և շահերը չէին սահմանափակված և գոյություն չունեին արհեստի մոնոպոլացում», այնուամենայնիվ, «քաղաքային բնակչության մեջ ցեխային կազմակերպությունները խիստ տարածված էին. ճիշտ է, նրա հիմք էր ծառայում գրազմունքների միասնությունը, բայց տնտեսական շահը, իբրև այդպիսին և արհեստը այն ժամանակի սովորություններով չէր դիմում որպես ցեխային վարպետների բացառիկ մոնոպոլ իրավունք: Աշխատանքն ազատ էր սահմանափակումից, ցեխերի կողքին գոյություն ունեին ազատ վարպետներ, որոնք չէին մտնում ցեխերի կազմի մեջ»²: Ս. Եղիազարյանը գտնում էր, որ XIX դարի Անգլիոյվկայան համաբարական կազմակերպություններն իրենց զարգացման աստիճանով համապատասխանում էին XIII—XV դարերի Լճրոպական ցեխային միություններին:

Համաբարությունների ծագման հարցի վերաբերյալ Ս. Եղիազարյանի մոտ չկա միասնական տեսակետ: Որոշակի տեղ հատ-

կացնելով տնտեսական ու համաբարության անդամների կրոնական և էթիկական ընդհանրության գործոններին, նա ավելի շատ հակված էր ընդունելու «պետական տեսությունը, ըստ որի համաբարություններն արդյունք են պետության զուտ ֆինանսական և ոստիկանական նկատառումների:

Եղիազարյանը գա բացատրում էր այն ֆունկցիաներով, որ կատարում էին համաբարությունները հարկային ու պետական կարգի պահպանության բնագավառներում³:

Նետենով պատմական դպրոցի տեսարաններից մեկին՝ Լուի Բրենտանոյին, Ս. Եղիազարյանը զարգացրել է մեկ այլ թեզ ևս, ըստ որի զեռու շատ հին ժամանակներից սկսած մարդկանց ներհատուկ ինքնապահպանման և ինքնապաշտպանության զգացմունքները ստիպել են միավորվելու: Սկզբում զա դրևորվում էր արյունակցական համայնքների ձևով, որոնց հետագա քայքայումը բնակչությանն առաջադրեց «արհեստական միությունների» ստեղծման պահանջը: Բնական թև արհեստական այլ միությունները ենթադրում էին որոշակի տնտեսական, հոգևոր թև կրոնական շահեր: Ահեբը և, որ նման բացատրությունը կապեն ունի սոցիալ-դարմիկիզմի սոցիոլոգիական տեսությունը, որը գոյության պայքարը դիտում էր իբրև հասարակական զարգացման շարժիչ ուժ, ցեխային միությունների ծագման ու զարգացման հիմքում զենելով բնակչության անհիմամիկան:

Համաբարությունների ծագման վերաբերյալ Ս. Եղիազարյանի տեսակետները չեն արտահայտում աբստրաղոգական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման պրոցեսները: Կ. Մաբբը և Ֆ. Էնգելսը «Գերմանական գաղափարախոսություն» աշխատության մեջ համաբարությունների ծագման պատճառները պայմանավորում էին հասարակության ֆեոդալական կառուցվածքով⁴, իսկ Ֆ. Էնգելսը շեշտում էր այնպիսի տնտեսական գործոնների գերը, ինչպիսիք են փոխանակության և շուկայի սահմանափակությունը, արտադրության եղանակի կառուցվածքը, տեղական պարփակվածությունն արտաքին աշխարհի նկատմամբ⁵ և այլն:

¹ С. А. Егiazаров, Исследования..., 4. II, стр. XXXVIII.

² Նույն անգամ, էջ XXXVI:

¹ Տե՛ս С. А. Егiazаров, Исследования..., 4. II, էջ 255:

² Տե՛ս Կ. Մաբբ և Ֆ. Էնգելս, Շուքր կրկեր, հ. 1, Երևան, 1972, էջ 15:

³ Տե՛ս Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, Երևան, 1967, էջ 367:

Ս. Եղիազարյանի աշխատության մեջ կարևոր տեղ է արբված համաքարտիկոնների արտաքին կառուցվածքի վերլուծությանը, նա նշել է այն փաստը, որ համախ խոշոր ցեխերը արհմում էին առանձին ինստիտուտներ միավորների: Ճիշտ է, հեղինակը որոշակի դեր էր հատկացնում բնակչության թվին, սակայն, ընդհանուր առմամբ, խոշոր համաքարտիկոնների արտհումը նա կապում էր արտադրության նյութական հիմքի զարգացման, աշխատանքի բաժանման հետ: Վերջինս առանձին ղեկավարում նա հանգեցնում էր հին համաքարտիկոնների վերացմանը և նորերի ստեղծմանը: «Նին համաքարտիկոնների քայքայումը և նորերի կազմավորումը ուղղակի կապվածություն մեջ է գտնվում ժողովրդական տնտեսության և արդյունաբերության աշխատանքի բաժանման և մասնազտացման հետ»: Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է աշխատանքի հասարակական բաժանմանն ընդհանրապես, քանի որ համաքարտիկոն արտադրությունը զարգանում էր շատ զանազակ և աշխատանքի բաժանումը, որպես արտադրողական ուժերի զարգացման շահանք, հանդես էր գալիս ոչ թե ցեխերի, այլ հասարակության մասշտաբով:

Ոլորտական երկրներում, հատկապես ուշ միջնադարում ցեխային կազմակերպություններն ունեին կաստայական բնույթ և դրանց մեջ մտնելը կապված էր մեծ դժվարությունների հետ: Դա, Ս. Եղիազարյանի կարծիքով, պայմանավորված էր ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական նկատառումներով: Որոշակի նյութական ցեղերի առկայությունն անհրաժեշտ էր գործիքներ և հումք գնելու, ցեխի նյութական հզորությունը մեծացնելու համար: Մյուս կողմից, աղքատ անգամներով ցեխի համարումը կտաներ նրա նյութական ու քաղաքական անկմանը:

Եթև ցեխային միությունների ծագման հարցում Ս. Եղիազարյանը որոշակի տեղ էր հատկացնում Լ. Բրեստանյի դուրսության պայթյալի տեսությանը, ապա մյուս կողմից, տարակուսանքով էր նայում Շանցին, որը ցեխերի կաստայական բնույթը ճգնում էր բացառելով բնակչության արագ աճով: Նա համաքարտիկոնները նկրտական ցեխերից մի աստիճան բարձր էր դասում, գտնելով, որ վերջինում, իբր, միայն հաշվի էին առ-

նելվում գիտելիքները, փորձ ու բարոյական հատկանիշները: Եղիազարյանը հակված էր գունագարգելի համաքարտիկոն միությունները, որպես պատկերիզմի դեմ փայլուն միջոցի, որպես մրցակցությունից ազատ, հավասարության ու հզորացման կազմակերպություններ, որոնցում «ընձուկրատական ոգին... ներթմված էր ներքին կյանքի բոլոր ոլորտները»: Ընչպես ակներև է, Ս. Եղիազարյանի հայացքներն ուղղված էին դեպի նահայտական մանրաարանքային արտադրանք: Ենչնով դրանց պատմական դատապարտվածությունը, որ 70-ական թվականներին Ֆարբիկային արտադրությունն ինտենսիվ ձևով քայքայում ու դուրս էր մղում համաքարտիկոններին, անուամենայնիվ, նա դրանցում փորձում էր գտնել հասարակական շահերի ներդրանակություն: Տեսնեազետը չէր նկատում կապիտալիզմի առաջադիմական ուղղվածությունը և փաստորեն ձգտում էր իր բարոյական իդեալը կառուցել միջնադարյան անցյալի սոցիալական կարգի վրա: Եղիազարյանը, սակայն, տեսնում էր նոր հասարակարգի հաղթանակի անխուսափելիությունը: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Սիանոնը կամ Նարոզնիկների նման «հարձակումներ» չէր գործում կապիտալիզմի վրա կամ էլ առաջարկում կանխել այդ զարգացումը: Բայց և այնպես նրա հայեցողությունը ընդհանուր եզրեր է որոնում «անսահման անմահության» ուսմունքի հետ:

Ս. Եղիազարյանը, իհարկե, նկատում էր անհավասարության փաստի առկայությունը համաքարտիկոնների ներսում: Բայց գտնի որ մասնատրիակական հավասարություն աներևակայելի է մարդկային հասարակարգերից և ոչ մեկում, ապա և սովորաբար իրավունքը ձգտում էր համաքարտիկոն առանձին անդրամների ինքնազործնետության սահմանափակմանը, նրա ներսում հաստատելով մոտավորապես հարաբերական տնտեսական հավասարություն և այդպեսով յուրաքանչյուր վարպետի բարեկեցությունն ապահովելու միջին ունեությունը²: Ս. Եղիազարյանի կարծիքով, համաքարտիկոնների ներսում հավասարապաշտության սկզբունքը դրսևորվում էր գործունեության բոլոր ոլորտներում՝ և՛ անգամների միջև հումքի հավասար բաժանման, և՛ ապրանքների իրացման, և՛ յուրաքանչյուր անդամի

¹ С. А. Егизаров, Исследования..., ч. II, стр. 58, 59.

² Նույն տեղում, էջ 166:

¹ С. А. Егизаров, Исследования..., ч. II, стр. 6.

քարեկեցության, և վարպետների և աշակերտների փոխհարարերությունների բնագավառում և այլն: Ս. Եղիազարյանը փաստորեն համաքարությունների համաարապաշտության սկզբունքը դիտում էր որպես որոշակի սեպագիտ հասարակական տիրոջ ստեղծական ներհակությունների և ունեցվածքային անհավասարության դեմ:

Որքան էլ Ս. Եղիազարյանն իդեալականացնում էր համաքարական կարգը, այնուամենայնիվ, տեսնում էր նրանում գոյություն ունեցող բազմաթիվ անտեսական ներհակությունները: Բացահայտելով համաքարությունների կողմից արձեատների և առևտրի մոնոպոլացման միտումները, նա նշում էր, որ XIX դարի 40-ական թվականներից սկսած ուժեղանում էր պաշարը համաքարական միությունների և ազատ արճեստավորների միջև ընդ որում, այդ պայթյանը իրականացվում էր ամենատարբեր ձևերով: Մեկից վերջնում էին գործիքները, մյուսի՞՞ պարանջները, արտասահմանյան անտարականների ստիպում էին փող մտնել համայնքի գրամարկը, ազատներին արգելում էին բացել առանձին արճեստանոց: Մոնոպոլացումը հատկապես ուժեղ էր Քիֆիսում, Ախալցխայում, Ալեքսանդրապոլում, իսկ նրեկվանում ու Շուշում դեռևս առկա էին բավական թվով ազատ արճեստավորներ: Ս. Եղիազարյանն այդ երևույթը համարում էր ոչ թե անտեսական հակասությունների, այլ որպես գոյություն ունեցող ֆինանսական կառավարման համակարգի արդյունք: Դրա պատճառը նա համարում էր տնտեսական կյանքում սեղի ունեցած մի շարք փոփոխություններ: Բանն այն է, որ մինչև ռուսական տիրապետությունն ազատ արճեստավորներն ու առևտրականները տեղերում իրենք էին հարկ վճարում ֆինանսական մարմիններին: Ռուսական իշխանությունները հարկերի ու պարհակների հետ կապված բոլոր հարցերը լուծում էին համաքարությունների հետ: Չունենալով որևէ անձնական պարտավորություն, ազատները հաճախ ազատվում էին հարկերից: Ահա թե ինչու համաքարությունները ձգտում էին համապատասխան հարկաբանի միջոցով վերջիններս մասնակից դարձնել պետության հետ կառավարող ֆինանսական գործառնությունների: Մոնոպոլացման միտումը նկատելով հանդերձ,

Ս. Եղիազարյանն այն համարում էր համաքարության բնոճանուր նորմաներին անհարկ երևույթ:

XVII—XVIII դարերում երկրամասի արտադրությունը նահապետական էր, իսկ ապրանքաըրամական հարաբերություններն ունեին սահմանափակ բնույթ: Համաքարություններում արտադրված արդյունքների իրացումը անսղիղում էր որոշ զբվարությունների: Դա պայմանավորված էր տեղական շուկաների տարողության սահմանափակությամբ և հետագայ շրջանների հետ տնտեսական թույլ կապերով: Այդ զվարությունները հազի՞հարեցու նպատակով համաքարությունները ձգտում էին լրիվ օգտագործել տեղական շուկաների հնարավորությունները, ուստի նրանք մոնոպոլացնում էին և՛ արտադրությունը, և՛ առևտուրը, դրանով իսկ տնտեսական մրցակցությունից դուրս թողնելով ազատ արճեստավորներին ու առևտրականներին, որոնք այս կամ այն ձևով կարող էին վնասել համաքարության մենաշնորհային իրավունքին: Ս. Եղիազարյանը հենց ինքն էր նկատում, որ ոչ միայն անդրկովկասյան բազարներում, այլև ամբողջ մուսուլմանական Արևելքում չկար արճեստի և առևտրի այնպիսի տեսակ, որ միավորված չլիներ որևէ համաքարության դեմ: Ճիշտ է, ի տարբերություն արևմտաեվրոպական երկրների, ուր ապրանքաըրամական հարաբերությունների արագ զարգացումը հանգեցրեց բազաբային բնակչությունից առևտրական դասի արագ անջատմանը և միավորմանը առանձին գիրդաններում, Արևելքում՝ կապված արդյունաբերության թույլ զարգացման և ամբողջ հասարակական կարգի նահապետականության հետ, առևտրական դասի անջատումը կատարվում էր դանդաղ, իսկ առևտրական համաքարություններն էլ քիչ էին տարբերվում արճեստավորական միություններից¹:

Համաքարությունների միջև հատկապես սուր պայթար էր գնում դեղի բաղաբանականության հարցում: Եթե իբրև արտադրող համաքարությունը ձգտում էր իր արտադրանքը իրացնել բարձր գներով, ապա իբրև սպառող՝ պայթարում էր իրեն անհրաժեշտ արդյունքների գների իջեցման համար: Սխալախոս, փոխադարձ սահմանափակումների ճանապարհով նրանք կարգավորում և պահում էին գները բոլոր կոոպերացիաների հա-

¹ Տե՛ս С. А. Егизаров. Исследования..., ч. II, стр. 23, 255.

¹ С. А. Егизаров. Исследования..., ч. II, стр. 1.

մար նորմալ և հանդուրժելի մակարդակի վրա»¹։ Դրա հետ կապված էլ պարբեր էր գնում ու միայն համաքարտիվունների միջև, այլև համաքարտիվունների ներքում՝ Ս. Արշագարյանը բերել է աղպիսի բազմաթիվ փաստեր։ Այսպես, ՔիՖլիսի բազազների համաքարտիվուններում առանձին առևտրականներ նիժգորդյան տոնավաճառից վարկով գնած ապրանքներն իրացնում էին էժան գներով՝ հաշվարկները ժամանակին մարելու համար։ Արիշներն ապրանքները կանխատժածված ձևով իրացնում էին ցածր գներով, որպեսզի դրանք արագ վերածեն կանխիկ փողի, իսկ հետո իրենց հայտարարին անվճարունակ և այլն։ Գները խախտվում էին շուկայում, խախտվում էր գների հարցում համաքարտիվան մենաշնորհային իրավունքը։ Վերջինս ապահովելու համար հաճախ զազարեցվում էին գործարքներն այն մեծածախ առևտրականների հետ, որոնք իրենց ապրանքները ցածր գներով իրացնում էին առանձին մարդիկը, կամ խարում համաքարտիվան։ Այս բերույթները Ս. Արշագարյանը համարում էր ոչ թե զարգացման տնտեսական լծակների, այլև միջնադարյան եվրոպական ցեխերին հատուկ «եսասիրական ողու» ներթափանցման հետևանք։ Գների նման քաղաքականությունը, նրա կարծիքով, նպաստակ էր հետամտում պաշտպանելու «քաղաքարևանկների շահերը»²։ Նկատենք, որ ցեխերի այդ «քարեգործական քաղաքականության» նկատմամբ համակրանքով է արտահայտվել նաև ռուս տնտեսագետ և Գրիգորյանսկին «Փարիզի արհեստագործական ցեխերը XIII և XIV հարյուրամյակներում» աշխատությունները³։

Այնքան է, որ Արշագարյանը կրկնում էր միջնադարյան կանոնականների և նրանց զազափարակյան առաջնորդ Քոմա Արվիկացու այն թեզը, ըստ որի ցեխերի հավասարապաշտական սկզբունքը գների բնագավառում հանգեցնում է «արդարացի գների» կազմավորմանը։ Ընդուն է, արհեստավորական կազմակերպությունների արտադրած ապրանքների գների հիմքում դրվում էին աշխատանքի քանակն ու ծախսերն և գոյությունը չունեի գների ազատ խող, սակայն գների մոնոպոլացման միտումը մի կողմից ունեի էթիկանորմատիվային դասային բու-

վանդակություն և բխում էր միություն շահերից, իսկ մյուս կողմից ինքնապաշտպանության միջոց էր «վաճառականական կապիտալի, համաքարտիվունների կցած կանգնած կապիտալի հայ միակ ազատ ձևի,— ամեն մի ոսկեգույնից»⁴։ Չնայած ցեխերի ունեցած որոշ ազդեցությանը, զնապոչացման պրոցեսն ընթանում էր տարեբաշին ձևով, արժեքի օրինքին համապատասխան։

Ս. Արշագարյանը չէր նկատում, որ համաքարտիվունների ներքում գոյություն ունեցող տնտեսական ներհակությունները պայմանավորված էին ապրանքարտմական հարաբերություններին զարգացմամբ։ Համաքարտիվանները, իրականացնելով մասն ապրանքային արտադրություն, նախադրյալներ էին ստեղծում ունեցվածքային շերտավորման համար։

Առևտրականություն, համաքարտիվունները որոշակի դրական դեր են խաղացել արտադրողական ուժերի և փոխանակային հարաբերությունների զարգացման բնագավառում։ Սակայն իրենց գոյության որոշակի աստիճանում դրանք վեր էին աճվում հասարակական առաջադիմության արգելակիչ ուժի, խոչընդոտում էին արտադրության կապիտալիստական տնտեսական զարգացումը, տեխնիկական առաջադիմությունը, արհեստականորեն կասեցնում արտադրության ընդլայնման մասշտաբները։

Չնայած XIX դարի վերջերին Անդրկովկասն արդեն թևակոխել էր զարգացման կապիտալիստական ուղին, բայց արտադրության ամենատարբեր ոլորտներում զերակշռում էր նահապետական տնտեսակը։ Հենց այս հանգամանքը հաշվի առնելով, Ս. Արշագարյանը կատարում է հետևյալ ընդհանրացումը. «Եթեխային սխառնեմ, որպես աշխատանքի կազմակերպում արդյակի ձև, ունի իր թույլ և լավ կողմերը։ Տնտեսական ու կուլտուրական զարգացման որոշակի աստիճանում այն լիովին նպաստահարմար է օգտակար է, մյուսում, ընդհակառակը, հանդիսանում է իր զարն պարծե և իր նշանակությունը կորցրած հիմնարկություն։ Անդրկովկասյան երկրի արհեստավորական արդյունաբերության ժամանակակից վիճակում ցեխային կարգը անհրաժեշտ է, այն չի հակասում նաև գործող օրենքներին»⁵։

¹ С. А. Егнзаров, Исследования..., ч. II, стр. 244—245.

² Նույն տեղում, էջ 246—247.

³ Ф. Я. Полянский, Очерки социально-экономической политики цехов в городах Западной Европы XIII—XV вв., М., 1952, стр. 9.

⁴ Մարտի, կապիտալ, հ. 1, Երևան 1954, էջ 378.

⁵ С. А. Егнзаров, Исследования..., ч. II, стр. 358.

Ս. Եղիազարյանը շնկատեց պատմականորեն դատապարտված համբարական կազմակերպությունների և կապիտալիստական արտադրանգանակի միացնող ներքին կապերը: XIX դարի 70-ական թվականներից սկսած ֆարրիկային արտադրությունը սկսում է ինտենսիվորեն զուրս մղել համբարական տնտեսավար: Տնտեսական այդ մրցակալությամբ մանր արտադրողը կամ աստիճանաբար փոխակերպվում էր ուրիշի աշխատանքը շահագործող մանր կապիտալիստի, կամ զրկվում էր իր արտադրության միջոցներից՝ փոխակերպվելով վարձու բանվորի: Այդ էին թելադրում տնտեսական զարգացման օրենքները:

ԱՏԵՓԱՆ ԳՈՒԼԻՉԱՄԲԱՐՈՎԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Ստեփան Գուլիչամբարովի գիտական գործունեությունը համընկնում է Խոնեֆորմյան Ռուսաստանի տնտեսական զարգացման այն էտապին, երբ մանուֆակտուրային արդյունաբերությունն իր տեղը զիջում էր խոշոր մեքենայական արտադրությանը: Տնտեսագետները փորձում էին արտացոլել արտադրության նոր ձևերի զարգացման ընթացքը և ընդհանուր այդ պրոցեսում հայտնաբերել հասարակության առաջընթացի օրինաչափությունները:

Ս. Գուլիչամբարովն իր ապրած ժամանակաշրջանի տնտեսական զարգացման պատմաբանն էր: Այդ հարցերը արծարծելի են նրա հարյուրից ավելի մենագրություններում ու հոդվածներում: Դրանք նվիրված են ինչպես Կովկասի ու Ռուսաստանի, այնպես էլ համաշխարհային տնտեսության զարգացման բազմաթիվ հարցերի լուսարանմանը և հարուստ նյութեր են պարունակում ժողովրդական տնտեսության պատմության հետազոտության համար:

Ի տարբերություն լիբերալ-բուրժուական տնտեսագետների մյուս թևի (Ա. Արատյանյան), հասարակական կյանքի ճանաչողության հարցերում Ս. Գուլիչամբարովն ավելի շատ պրակտիկ էր, քան տեսաբան: Նա, իհարկե, լավատեղյակ էր ինչպես եվրոպական երկրների, այնպես էլ Ռուսաստանի տնտեսական ու սոցիալական տիրապետող սխտեմներին, սակայն նրա աշխատություններում փաստական նյութից բխող տեսական ընդհանրացումներն ու սոցիալ-քաղաքական եզրակացությունները համեմատաբար սակավ էին:

Տնտեսական զարգացման ընթացքի հետազոտությունը Ս. Գուլիչամբարովի աշխատություններում կատարվում է պատմականության սկզբունքով: Նրա միանգամայն ճիշտ կարծիքով, զահարավորություն է տալիս ոչ միայն կոնկրետ պատմական պայմաններում հետևել երևույթներին ծագման ու զարգացման

ընթացքին, այլև բացահայտել ապագա միտումները՝ «Նշտ հասկանալու ներկան և կանխատեսելու ապագան»:

Ս. Գուլիշամբարովի տնտեսագիտական ժառանգության մեջ զգալի տեղ է զբաղում շրջանառության ոլորտի հարցերի քննությունը: Այս զուգահեռներում էլ նա տարբեր առիթներով անդրադարձել է տնտեսագիտության տարբեր դպրոցների գնահատությունը:

Հայտնի է, որ մերկանտիլիզմը, որպես տնտեսագիտական ուսմունք, Ֆրանսիայում իր զարգացման գագաթնակետին հասավ Լյուդովիկոս XIV-ի ժամանակ: Ֆինանսների մինիստր Կոլբերտի տնտեսական միջոցառումները նպատակ էին հետապնդում աշխուժացնելու երկրի արտադրողական ուժերն ու միջնադարյան ասպարեզում բարձրացնելու Ֆրանսիայի առևտրական դերը: Ս. Գուլիշամբարովը ճիշտ է նկատում, որ շնայած Կոլբերտի այդ հովանավորական քաղաքականությունը որոշ շահով նպաստեց արդյունաբերության ու նավագնացության, ապրանքաշրջանառության զարգացմանը, սակայն ի վերջո հանգեցրեց գյուղատնտեսության քայքայմանը¹:

Երկիրն այս վիճակից հանելու մերկանտիլիստական միջոցառումները չէին տալիս համապատասխան արդյունք: Այս առումով Ս. Գուլիշամբարովը ճիշտ է նկատել, որ բանկային սխտանի, վարկային հարաբերությունների աշխուժացման միջոցով երկիրը տնտեսական ճգնաժամից զուր բերելու մերկանտիլիստ Լոն Լոյի ծրագրերը անփութանալով իրենց անհեշտացնելու մետաղե դրամաշրջանառությունը տնտեսության զարգացման համար համարելով արեղյակիչ ուժ, ամենաապահովումը փոքր հողակեց թղթադրամը և դրանով իսկ վերջնականապես ամերկանտիլիզմը հասցրեց անհեթեթության², նպաստելով նրա կայացումը:

Մի կողմից Ֆրանսիայի գյուղատնտեսության քայքայված վիճակը, մյուս կողմից՝ տնտեսական կյանքի զարգացումը պայմանավորեցին երկրի բարեկեցության արդյունքների վերաբերյալ հայացքների արմատական փոփոխությունը, և մերկանտիլիստ-

ների տեսական դպրոցն իր տեղը դիջեց մի այլ դպրոցի՝ ֆիզիոկրատներին: Տիրապետող հայացքների արմատական փոփոխությունը Ս. Գուլիշամբարովն ընդունեց որպես հարստության ստեղծման պրոբլեմի քննության տեղափոխում շրջանառության ոլորտից նյութական բարիքների արտադրության ոլորտ:

Ֆիզիոկրատների տնտեսական ուսմունքը շմանց մեկուսացված միայն Ֆրանսիայում: Արտադրողական ուժերի զարգացումը կերտական երկրներում և, հատկապես, մանուֆակտուրային արտադրության առաջացումը Անգլիայում ընդլայնեցին նյութական արտադրության էությունի և երկրի հարստության ստեղծման վերաբերյալ ֆիզիոկրատների պատկերացումները: «Այդ ուսմունքի ազդեցության ապ, — գրել է Ս. Գուլիշամբարովը, — 18-րդ հարյուրամյակի վերջին ձևավորվեց կիրառական գլխավոր երկրների ժողովրդական տնտեսության բնույթը»³: Այն ժամանակաշրջանում, երբ, Կ. Մարքսի խոսքերով, Անգլիայում կապիտալիստական հասարակարգը «Նական քայլեր է արել դեպի մտահոգ շարժումը», որն անհետևանք շմանց ինչպես կիրառական երկրների, այնպես էլ Ռուսաստանի համար⁴:

Ս. Գուլիշամբարովը լուսավորիչների և ֆիզիոկրատների ուսմունքների միջև իրավումը ինչ-որ սղոթերակ էր տեսնում, վերջին հաշվով, լուսավորիչների սրնական կարգիտ տեսությունը բխում էր հենց ֆիզիոկրատների կողմից մերկանտիլիզմի քննադատության կոնցեպցիայից: Նրանք մերկանտիլիզմը համարում էին անբնական և մարդու բնութանն անհամապատասխան ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով: Նրև Ֆրանսիան XVIII դարի երկրորդ կեսին աշխարհի մտավոր կենտրոնն էր, ապա նույնը չի կարելի ասել տնտեսական զարգացման առումով: Անգլիան միջուկային ասպարեզում ձեռք էր բերել գերիշխող դերը: Արդյունաբերական հեղաշրջումը, որը «ստորերկրյա ցնցումներ» էր առաջացնում Անգլիայի տնտեսական կյանքում, արագորեն ընդլայնում էր ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկան, այդ պրոցեսի մեջ ներգրավելով

¹ ՏՆ՝ Ստ. Գուլիշամբարով. Всемирная торговля в XIX в. и участие в ней России, СПб. 1898, стр. 10.

² ՏՆ՝ նույն տեղում, էջ 11:

³ Д. Розенберг, История политической экономии, ч. 1, М., 1934, стр. 66.

¹ Ստ. Գուլիշամբարով. Всемирная торговля и ..., стр. 11.

² Կ. Եսեֆ, Բուլղարական տնտեսության քննադատության շուրջը, Կ. 1945,

էջ 231:

³ ՏՆ՝ Ստ. Գուլիշամբարով. Всемирная торговля и ..., стр. 12.

«կուսական» շատ երկրներ: Ս. Գուլիշամբարովը փաստական տվյալներով ցույց է տվել, թե ինչպես էին ուժեղանում առևտրական կապերը Հին ու նոր աշխարհների միջև, ինչպես էին գրեթե բոլոր երկրները ներգրավվում համաշխարհային ընդհանուր ապրանքաշրջանառության ոլորապատույթի մեջ: Գրանույնում դրսևորվում էր կապիտալիստական արտադրանքանակի օրինաչափություններից մեկը, իբրև նրա զարգացման նախապայմանի:

Աշխարհի քարտեզն անընդհատ վերածվում էր զարգացած կապիտալիստական երկրների միջև: Ինչպես իրավագիտրեն նկատել է Ս. Գուլիշամբարովը, եվրոպական երկրների արդյունաբերական արագ զարգացումը փոխում էր դադարի մեծ տեսակական կշանակությունը, առաջ թերևով փոփոխություններ ինչպես մայր երկրների, այնպես էլ գաղտնիների տնտեսության ճյուղային կառուցվածքում, իսկ սա էլ իր հերթին՝ միջազգային ապրանքափոխանակության մեջ: Գաղտնիները պահում էին գաղտնիություն երկրների արդյունաբերության հումքի մատակարարներ և ապրանքների իրացման շուկաներ: Մայր երկրներում արագորեն զարգանում էր վերամշակող արդյունաբերությունը, իսկ գաղտնիներում՝ արդյունահանող արդյունաբերությունը: Գաղտնիների շահագործումն իրականացվում էր նախ որպես էժան աշխատուժի ու հումքի արդյուր, ապա որպես ապրանքների իրացման շուկաներ, ուր մայր երկրներում գաղտնիների էժան հումքից պատրաստված արդյունքները վաճառվում էին անհամեմատ բարձր գներով: Ակներն է, որ Ս. Գուլիշամբարովը ճիշտ էր ըմբռնել գաղտնիների դերն ու նշանակությունը կապիտալիզմի պայմաններում:

Մինչ Զրանսիայում բուրժուական հեղափոխությունը ցնցեց ամբողջ աշխարհը, Անգլիայում աստիճանաբար հասունանում էր մեկ այլ հեղափոխություն՝ արդյունաբերական հեղաշրջումը, որը, Ս. Գուլիշամբարովի կարծիքով, ոչ պակաս կարևոր նշանակություն ունեցավ ինչպես Անգլիայի, այնպես էլ մյուս երկրների տնտեսական կյանքի բոլոր կողմերի հետագա զարգացման համար:

Տնտեսագետը ճիշտ է նկատել, որ նապոլեոնի կոնսերվեն-

տու շրջափակման պատճառով արդյունաբերական հեղաշրջումը Եվրոպայի մայր ցամաքում այն արագությամբ չկատարվեց, ինչպես Անգլիայում: Այն էլ ավելի նպաստեց Անգլիայի արագ զարգացմանը: Անգլիայի տեխնիկական նորամուծությունները չէին ներգրվում այլ երկրներում, իսկ կոնսերվենտալ շրջափակման վերացումից հետո երկիրն այնքան էր զարգացել, որ դարձավ սկզբում արդեն գտնվում էր ամեն մի մրցակցությունից դուրս վիճակում ինչպես համաշխարհային տնտեսության, այնպես էլ միջազգային քաղաքականության ասպարեզում: Անգլիայի էժան ապրանքները սկսեցին որդուղի ամբողջ միջազգային շուկան և արդյունաբերական պրոտեկցիոնիզմը փոխարինվեց ազատ առևտրի կամ ֆրիտրեդերականության քաղաքականությամբ:

Ինչպես արդեն նշել ենք, միջազգային ապրանքաշրջանառության հարցերի ճնշությունը եղել է Ս. Գուլիշամբարովի գիտական հետազոտությունների հիմնական օբյեկտներից մեկը: Ապրանքաշրջանառությունը երբեք այնպիսի մասշտաբներ չէր բնորոշել, ինչպես XIX դարում: Տնտեսագիտը իրավագիտրեն դա կապում էր արտադրության նյութական հիմքի՝ արտադրողական ուժերի զարգացման և աշխատանքի հասարակական բաժանման խորացման հետ: Նա իր բազմաթիվ աշխատություններում մանրամասն տվյալներ է բերել կապիտալիստական զբոսաշրջող երկրների նյութական արտադրության ճյուղերի զարգացման և ապրանքաշրջանառության վերաբերյալ և ցույց տվել Ռուսաստանի մասնակցությունը նրանում: Ռուսաստանի արևմտական զարգացման և միջազգային ասպարեզում նրա դերի բարձրացման գործում Ս. Գուլիշամբարովը շրջադարձային էր համարում 1861 թվականի գյուղացիական ռեֆորմը. «Դա մեծ ռեֆորմների պատմաշրջան էր Ռուսաստանի արդյունաբերական զարգացման պատմության մեջ»:

Գյուղացիության ազատագրման հետ միասին արագորեն վերանում էին Ռուսաստանի արդյունաբերական գործունեության նահապետական մեթոդը, լայն ծավալ էր ստուգել և ամուսնալոր նախաձեռնությունը, պրոծնական կիրառում էին գտնում ազատ կապիտալները, սկսեցին կառուցվել հազարավոր գոր-

1 Տե՛ս Ս. Գուլիշամբարով, Всемирная торговая п., ... стр. 14.

2 Տե՛ս նույն տեղում:

1 Հաշիկյան ՍՍԷ ՊՊՊ, ք. 39, ք. 1, գ. 7, Թ. 1.

2 Նույն տեղում:

ծարաններ ու ֆարրիկաներ, ընդլայնվեց երկաթուղային շինարարությունը՝ ծաղկմանսպին ժողովուրդներին ներքաշելով այդ ընդհանուր զարգացման մեջ։ Դա մի բացառիկ ժամանակաշրջան էր Ռուսաստանի տնտեսական կյանքում։ «Յվ 61 թվականից հետո,— գրել է Վ. Ի. Լենինը,— կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում ընթացավ այնպիսի արագությամբ, որ մի քանի տասնամյակներում կատարվեցին այնպիսի փոփոխություններ, որպիսիները եվրոպական մի քանի հին երկրներում տեղի էին ամբողջ հարյուրամյակները»¹։

Ս. Գուլիշամբարովը նկատ էր նկատում, որ երկրի արտադրողական ուժերի զարգացումը մի զգալի շահով կախված էր առկա մաքսային քաղաքականությունից։ Ռուսաստանի տնտեսական զարգացման նախանֆորմյան ժամանակաշրջանի մաքսային քաղաքականությունը, նրա կարծիքով, համարի հանգեցրել է երկրի արտադրողական ուժերի շատմանը։

Յարական կառավարությունը 1839—1843 թթ. իրականացրեց ֆինանսական ռեֆորմ, որը նպատակ ուներ կայունացնելու գրամաշրջանառությունը։ Չնայած որոշ հաջողությանը, Ս. Գուլիշամբարովի շատ ճիշտ եզրակացություններ, այդ ռեֆորմի սպառնալից արդյունքները տալ չէր կարող ճառանց երկրի արտադրողական ուժերի աջակցության ու իրախուսմանը², որոնք շարունակում էին մնալ բացթողված վիճակում։ Եվ, իրոք, պետությունը ստիպված էր պետական ու ուսգլմական ծախսերը հոգալու համար շրջանառության մեջ բաց թողնել նոր վարկային տոմսեր։ Դա, ի վերջո, բերեց նոր ինֆլյացիայի։ Արժի պատերազմն ուշադրություն սեռեց գյուղական ունեցող արևտեսական կարգի շատ թույլ կողմերի վրա, որոնք համբնդհանուր վերափոխումների կարիք ունեին և հասարակության արթնացող ինքնագիտակցության ընդուսջ դնացին կատարվելիք տնտեսական ռեֆորմները։ Ս. Գուլիշամբարովը իրավագիտորեն Արժի պատերազմում Ռուսաստանի պարտությունը կապում էր երկրի սոցիալ-տնտեսական հետամնացության հետ։ Յ. Էնդլերը Գանիելսոնին գրած նամակներին պատասխանելով էր պատերազմն էլ հենց բնորոշում է այն անհուսալի պայթյունով, որ արտադրության պրոմիտիվ միջոցներ ունեցող ազգը

մղում էր ժամանակակից արտադրություն ունեցող ազգերի դեմ»³։ Ինչպես լրացնում է Լենինը, այդ պարտությունից հետո ակնհայտ դարձավ «ճորտատիրական կարգերի պահպանման լիակատար անհնարինությունը»⁴։

Ճորտատիրական ռեֆորմից հետո Ռուսաստանի հասարակական մտքի հիմնական հարցը տասնամյակներ շարունակ մնում էր կապիտալիզմի լինել-չլինելը։ Գուլիշամբարովը, որը լավատեսելի էր Պիսարևի, Չերնիշևսկու, Նեկրասովի, Շելդուեոյի և ուս առաջավոր մտածողների ուսմունքներին, որոնք «ամբողջությամբ տիրում էին» նրա մտքերին⁵ և վկայում նրա զարգաբարական նախատիրությունների ինչ-ինչ նստվածքների մասին, այդ գործիչները «սոցիալ-քաղաքական գաղմանքներ» նրա կողմից շրջանվեց։ Ս. Գուլիշամբարովը կապիտալիստական հարաբերությունների զարգացումն անխուսափելի էր համարում, նա տեսնում էր այդ պրոցեսը, նա այդ պրոցեսի պաշտպանն էր, որովհետև զոր հետ էր կապում երկրի արտադրողական ուժերի արագ զարգացումը։ Արդեն 90-ական թվականների կապիտալիզմի լինել-չլինելու հարցը Ս. Գուլիշամբարովի համար լուծված էր հօգուտ առաջինի։ Տնտեսական զարգացման օբյեկտիվ պրոցեսը վկայում էր հասարակական հերթափոխության անխուսափելիության մասին, հատուտանով «մանր արտադրության հանրեպ խոշոր կապիտալիստական արտադրության հազթանակը»⁶։ Ավելին, նա տեսնում էր, որ կազմավորվել է բանվոր դասակարգը, «ձեռավորվել մշտական բանվորի տեղը, լրիվ կտրված հողից, որի գոյության միակ աղբյուրը գործարանն է»⁷։

Տնտեսական քաղաքականության հարցերում Ս. Գուլիշամբարովը պրոտեկցիոնիստ էր։ Նրա կարծիքով, հայրենական խոշոր արդյունաբերության զարգացումը զգալի շահով կախված է հովանավորող տարիֆամաքսային քաղաքականությունից։ Այս առումով նա դրվատանքով է խոսում 1877 թվականին

¹ Վ. Ի. Լենին, նվժ, հ. 20, էջ 213։

² Ս. Գուլիշամբարով, Всемирная торговля и... стр. 167.

³ Վ. Գուլիշ, Յ. Էնդլեր, նամակներ Գուլիշին, մասին, ն., 1954, էջ 267։

⁴ Վ. Ի. Լենին, նվժ, հ. 20, էջ 169։

⁵ Հայրենական ՈՍԸ ՊԳՊԸ, ք. 39, ց. 1, գ. 36, ք. 2։

⁶ Ս. Գուլիշամբարով, Всемирная торговля и... стр. 172.

⁷ ՍՈՍԸ ՊԳՊԸ, ք. 39, ց. 1, գ. 7, ք. 2։

Ռուսաստանում ընդունված նոր տարիֆամաքսային սխեմանի մասին¹։

Պրոտեկցիոնիզմի բազաբանությունը խրախուսվել է ուսումնական շատ տնտեսագետների կողմից (Մենդելև, Յանսուլ, Կարիշև, Ներսիսյն, Կոլվալսկի և ուրիշներ), որոնց հետ Գուլիշամաքսարովը սերտ կապեր է աշխարհայացքային ընդհանրություններ կաներ²։ Նա նրանց հետ համատեղ մասնակցել է տարիֆների մշակման աշխատանքներին։ Հինց այդ զուգահեռներում հայտնի տնտեսագետ Ի. Յանսուլը բարձր է գնահատում Ս. Գուլիշամաքսարովի «Համաշխարհային առևտուրը XIX դարում և նրանում բարովի» «Համաշխարհային առևտուրը XIX դարում և նրանում» աշխատությունը։ «Այն,— Ռուսաստանի մասնակցությունը» աշխատությունը «Այն,— Ռուսաստանի մասնակցությունը,— հավասարապես հետաքրքիր է իր գրել է ուստ տնտեսագետը,— հավասարապես հետաքրքիր է իր կառուցվածքով, ինչպես և օգտակար՝ իրեն տեղեկատու։ XIX դարի վերջի համաշխարհային առևտուրը հայտարարի բերելու միայն շահագույնը օրիգինալ է»³։

Հայրենական արդյունաբերության հովանավորման անհրաժեշտությունը բխում էր ժամանակի պահանջներից։ Ընդհանր իր նամակներից մեկում գրում է. «Մի բանում կարելի է չկասկածել, եթե Ռուսաստանը իր օգու հայրենական խոշոր արդյունաբերության կարիք ուներ և հաստատ որոշել է ունենալ այդպիսին, ապա նա չէր կարող այլ կերպ ստանալ, քան թեկուզ մի որոշ աստիճանի պրոտեկցիոնիզմի միջոցով»⁴։

Կապիտալիստական վերարտադրությունը երբեք հարթ չի ընթացել։ Տնտեսական ճգնաժամերը պարբերաբար ցնցել են կապիտալիստական երկրների էկոնոմիկան։ ՅՄԻ Ս. Գուլիշամաքսարովը ընդհանուր ամամբ ճիշտ էր բացատրում ճգնաժամերի հետևանքները, ապա դրանց պատճառի բացատրումն էր անսովորաբար սխալ պատկերացում ուներ։ Վկայակոչելով տարբեր տեսակետներ, նա, բայց էլ ուղիղ, համաձայնում է այն տնտեսագետների հետ, որոնք տնտեսական ճգնաժամերի պատճառը փնտրում էին բանկային կազմակերպություններում, այն կապիտալիստներում, որոնք տնտեսական ճգնաժամերի պատճառը փնտրում էին արժաթի ու ոսկու նոր հանքերի հայտնագործման

հետևանքով շրջանառության մեջ փողի քանակության ավելացման, կամ էլ թե մաքսային-տարիֆային ոչ ճիշտ բազաբանականության հետ⁵։

Ճգնաժամերի բացատրության հարցում Ս. Գուլիշամաքսարովը հարում էր վարկագրամային տեսությանը։ Նա տնտեսական ճգնաժամերի պատճառը որոնում էր ոչ թե կապիտալիստական արտադրության օրյեկտիվ հակասության մեջ, այլ՝ «ամենատեղիքային և ամենավերացական ոլորտում, դրամաշրջանառության ոլորտում»⁶։

Նրա հայացքների վրա որոշակի ազդեցություն է ունեցել նաև Տոգան-Բարանովսկու անհամամասնության տեսությունը, Ի ղիպ, Ս. Գուլիշամաքսարովը ծանոթ էր վերջինիս «Արդյունաբերական ճգնաժամերը ժամանակակից Անգլիայում» աշխատությունը, որը և օգտագործել է իր հետազոտություններում։

Համաշխարհային կապիտալիստական սխեմայի առաջամասն հետ միասին կազմավորվում էր նաև համաշխարհային կապիտալիստական տնտեսությունը։ Ս. Գուլիշամաքսարովը նկատել է, որ բնատնտեսության պայմաններում աշխատանքի միջազգային որևէ բաժանում չէր կարող լինել, ազգերը ներթափված էին, երկրի արտադրողական ուժերը օգտագործումն ամենուր ունեց տեղական նշանակություն, ամեն մի երկիր իրենից ներկայացնում էր մի ինքնուրույն ամբողջություն՝ ստանձնացված բազաբանական և տնտեսական առումով։ Արտադրողական ուժերի զարգացումը և դրա հետ կապված աշխատանքի բաժանման խորացումը, մի խոսքով, մարդկության առաջընթացը համաշխարհային տնտեսության կազմավորման պատճառ դարձավ։ Տարբեր երկրների աշխարհագրական-տնտեսական ինքնուրույնությունը հակացուցվությունը, Ս. Գուլիշամաքսարովի կարծիքով, այժմ արդեն ունի հարաբերական իմաստ, քանի որ նրանցից յուրաքանչյուրը լուրջ ամբողջի մասն է։ Այդ կապակցությամբ նա վկայակոչում է տնտեսագետ Ս. Սերգենի հետևյալ խոսքերը. «Անհիմաստ է խոսել կուլտուրական որևէ երկրի մասին, որը տնտեսական առումով մեկուսացված է աշխարհից»⁷։

¹ Տե՛ս Տ. Գուլիշամարով, Всемирная торговля и... стр. 169.
² Այդ մասին հանգամանորեն տես Բ. Հովակիմյան, «Ստեփան Գուլիշամաքսարովի աշխատությունը»։
³ ՀՄՍՆ ՊԿՄ, ք. 39, ց. 1, գ. 35, ք. 2։
⁴ Գ. Մարտի և Յ. Ենգիսի նամակագրությունը սուս բազաբանական արժեքների հետ, Ե., 1954, էջ 214.

⁵ Տե՛ս Տ. Գուլիշամարով, Сравнительная статистика России в мировом хозяйстве и в ряду великих держав., С. Петербург, 1907, стр. 6.
⁶ Գ. Մարտի, Բազաբանականության ընդհանրական խոսքը, Ե., 1948, էջ 221—222։

խարհից»։ Ս. Գուլիշամբարովը սարբեր հրկրների մերձեցումը համարում էր օրյակափոխ և անխուսափելի, գտնելով, որ այն ավելի պետք է ուժեղանա, տանելով ժողովուրդների տնտեսական միավորմանը, և որ այդ ընդհանուր միության մեջ յուրաքանչյուր ժողովուրդի ազգային-քաղաքական զեքն ուղիղ համեմատական կլինի ընդհանուր համաշխարհային տնտեսությանը նրա մասնակցության մեջ¹։

Ս. Գուլիշամբարովին, ճիշտ է, հիմնականում հետաքրքրում էր Ռուսաստանի արտադրողական ուժերի զարգացման պատմական հակատապիրը², սակայն նա ոչ քիչ թվով աշխատություններ է գրել նաև Անդրկովկասի տնտեսական վիճակի ու նրա հեռանկարների վերաբերյալ։ Գրանք հարուստ փաստական նյութ են տալիս երկրամասի տնտեսության գրեթե բոլոր հյուղերի մասին։ Առանձին զեպերում այդ աշխատություններում արվում են նաև գործնական առաջարկություններ։

Տնտեսագետը կարևոր նշանակություն էր տալիս Քաբլի նավթային շրջանի տնտեսական զարգացմանը, հատկապես բարձր էր գնահատում կյուրդիկ նորիի գործունեությունը³, Այդ գուղահաններում էլ նա գրական էր համարում արտասահմանյան կապիտալի մուտքը Անդրկովկաս։

Ս. Գուլիշամբարովը սարբեր առիթներով անդրադարձել է «մտիվ ժողովրդի» ծանր տնտեսական պայմանների նկարագրությանը, գյուղություն ունեցող սոցիալական հակառակություններին։ Սակայն այդ հակառակությունների լուծման հարցերում նա սոցիալ-անֆորսիտ էր։ Քարենորոգումների նրա ծրագիրը համընկնում էր լիբերալ-բուրժուական տնտեսագետների հայացքներին։

ԱՅՑ ԵՄՐՈՂՆԵՒՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՏՈՂԱՆ

«Գործ» հանդեսը XIX դարի վերջի այն պարբերականներից էր, որը փորձում էր հայ երականության առաջընթացի միտումները ընդգծված ձևով բացահայտել նարդիկական տնտեսագիտական մտքի շրջանակներում։ Ամսագրին իր առաջին իսկ համարում այսպես է ուրվագծել երիտասարդ մտավորականության գործունեության առաջարքը. «Զվախենալ վտանգից, չխրտնել խոնավ բնակարաններից, կիսավեր խրճիթներից, մաշող հիվանդությունից, մտնել համարձակ զոցա մեջ, ընկեր գտնել աբհետաժողովին գործի ժամանակ, գյուղացուն իր ցանքի ժամանակ Գոսնել թաշտաների... նկարագրել զոցա գյուղությունը, բացատրել պատճառները, տալ ժողովրդին իր աշխատանքը, իր անձը, իր կյանքը— ահա ինչ անող երիտասարդներ են հարկավոր։ Գրանց էլ նվիրված «Գործը»⁴։ Մտավորականության պատմական այսպիսի առաքելություն վերադրել տնտեսական ներք էր գտնում «Կուրիչի» զեռես ՅՈ-ական թվականների սկզբների միտումների հետ, որը հետագայում դարձավ նարդիկության տնտեսական ծրագրի հանգույցներից մեկը։

Անցյալ դարի վերջին քառորդին կապիտալիզմի զարգացման հետևանքով վերանում էին աշխատական հարաբերությունները, փոխվում էր գյուղի սոցիալական դիմապատկերը, խարխուլվում էին համայնքի հիմքերը։ Հասարակական կյանքի այդ մեծ փոփոխությունների բեկումնային ժամանակաշրջանում «Գործի» հորձանգից Ա. Քալանթարը գյուղացիության տնտեսական վիճակի բնության հետ էր կապում հայրենիքի բարօրության գաղափարը, հարելով լիբերալ նարդիկիկների այն հայեցողությանը, որ դա կարող է ուղղություն առ կառավարության կողմից արվող գյուղական կյանքի բարենորոգումներին⁵։

¹ «Գործ», 1882, № 1, էջ 2։

² Տե՛ս նույն տեղում, էջ 18։

¹ Տե՛ս Տր. Գուլիշամբարով, Россия в мировом хозяйстве, стр. 3, 4, 18.

² Հրատարակված նրա տնտեսական աշխատություններից ու հոդվածներից բացի 2002 ՊԿՊԱ պատմագիտական «Фабрично-заводская промышленность России в период царствования Александра III», «Иерсть и шертственная промышленность», «Горный промысел и горнозаводская промышленность» և այլ հեղադրությունների ձեռագրեր (տես Քանց 29, 31)։

³ Տե՛ս Տր. Գուլիշամբարով, Деятельность Людвиг Эммануэловича Нобеля на Кавказе, Тифлис, 1883, стр. 1.

Ամսագրի տեսարանների սոցիալական բնորոշումները կապվում էին համայնքի ու համայնական հողատիրության գաղափարների հետ՝ Անհուսի սեփականությունն անառջվում էր որպես նրա աշխատանքի արդյունք, իսկ հողը՝ բնութան պարգև: «Ամեն մարդ, որ ապրում է այժմ աշխարհում, իրավունք ունի մյուսների հետ վախճել բնության բոլոր պարգևները, զոցա իբրև և հողը»¹:

Ամսագրի հողվածագիր Հ. Տեր-Բարսեղյանի կարծիքով, մարդու և բնության ներդաշնակությունը վաղուց խախտվել է, հողը դարձել է մասնավոր սեփականություն, և առկա հողատիրության ձևերից միան համայնքն է, որ համապատասխանում է մարդկային իրավունքին: «Փորձի» տեսարանը պաշտպանում էր ուսու հայտնի տնտեսագետ Մ. Կոպլանկու աշխարհըրտվը, որ համայնական հողատիրությունը հատուկ է կեղծ բոլոր ազգերին զարգացման սկզբնական շրջանում: Դրանով իսկ նա, փաստորեն, մատուց էր մասնավոր սեփականության նախակերպնական գոյության վերաբերյալ բուրժուական արևտեսականների կարծիքը և պայքարում համայնական ու կուրկատիվ սեփականության համար ընդհանրապես:

Հ. Տեր-Բարսեղյանը հասարակության կառուցվածքի իր իդեալը կառուցում էր ոչ թե առկա համայնքի վրա, զորը շատ պակասություններ ուներ, այլ «համայնքի բուն զազափարի վրա»: Հետևելով լիբերալ նարոնիկ տնտեսագետ Պ. Ա. Սոկոլովի և վիպակուրումներ կատարելով Պոստնիկովի, Կոպլանկու, Մասուերի, Լավիյեի և ուրիշների աշխատությունները, նա աշխարհ էր հայտնում, որ համայնքը ոչ թե խոչընդոտում է հասարակական առաջընթացին, այլ, ընդհակառակն, ջրնանիքի, հասարակության և առհասարակ կյանքի մեջ մի տեսակ ներդաշնակություն և հավասարություն է մտցնում: Հնդկական առաջընդունում էր համայնքը քաղաքակրթական ձևի մեջ դնելու մի սկզբունք, որը բնավ էլ ռուսավորության և զարգացման անհամապատասխան կազմակերպություն չէ: Հ. Տեր-Բարսեղյանը համայնքը համարում էր հավասարության սկզբունքի ուղեցույցը: Նրա այդ պատկերացումը պարուրված էր

մի այնպիսի նախապաշարունակությամբ, ըստ որի համայնքը մասնավոր սեփականության հակադրում է Այս խորհրդածություններն աղերսներ են հայտնաբերում Սպենսերի փիլիսոփայական հայացքների հետ, որը ուտոպիստ Կարևի հասարակության սոցիալական վերակառուցման անհաջողության պատճառը որոնում էր հասարակության անդամների մարդկային բնության անկատարության մեջ, որն իբր զնուս լի հասել արդարության ու քաղաքացիական կարգապահության բարձրության: «Փորձի» տեսարանը չէր նկատում, որ Սպենսերի այդ էվոլյուցիոն տեսությունն հիմքում, իրրև հասարակության ներդաշնակության անհրաժեշտ պայման, զրված էր մասնավոր սեփականության քաղաքական զազափարը և լրվ նպատակ ուներ արդարացնելու կապիտալիզմի սոցիալական կարգը:

Հ. Տեր-Բարսեղյանի կողմից համայնքի իդեալականացումն ալվել շուտ բխում էր տնտեսական զարգացման պրոցեսին հակադրվելու ցանկությունից: Կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով համայնքը հնուդեպի կորցնում էր իր զասական դեմքը, կասկածի սուղ առնելով նրա հասարակության վերաբերյալ նարոնիկների սկզբունքը: Պատմահասարակական պայմանները համայնքի քաջայումը դարձնում էին օրինաշարի Համայնական տնտեսական սոցիալական համայնքի վերացումը պայմանավորված էր արտազոտական ուժերի զարգացման հետևանքով հասարակության անդամների գոյության ու սոցիալական շերտավորմամբ: Հ. Տեր-Բարսեղյանը հակված էր համայնական հողատիրության վերացման պատճառները որոնելու «համայնքի ներքին կազմակերպության հետ ույիչ կապ չունենալ, արտոքին»² հանգամանքների մեջ: Նման մտայնամբ բանության գործունի վերաբրվում էր առաջնակարգ դեր: Հին հասարակական հաստատությունների վերացման գործում, տնտեսարարելու, առանձին վերահրում բնությունը նր արշակի դեր կատարել է, սակայն ամեն մի բնություն, վերջին հաշիվով, իր հիմքում ունի տնտեսական պայմաններ:

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը գուրգորվում էր, մի կողմից, կապիտալի կենտրոնացումով, իսկ

¹ «Փորձ», 1882, № 1, էջ 41:

² «Փորձ», 1882, № 1, էջ 49: Բարսեղյանը թերթում հանդես է եկել Հրայալ առաջարկությամբ:

³ Նույն տեղում, էջ 51:

¹ См. В. Гоффеншефер. Из истории марксистской критики, М., 1967, стр. 106.

² «Փորձ», 1882, № 1, էջ 42:

մյուս կողմից՝ գյուղացիության շերտավորումով ու քայքայումով: Գյուղացիների քայքայումը, նրանց բռնի ունեզրկումը արտադրության միջոցներից է, առաջին հերթին, հողից, արագ զարգացող արդյունաբերությունն ապահովում էր վարձու բանվորներով: Աշխատուժը դառնում էր ապրանք: Հ. Տեր-Քարսեղյանը նկատում էր, որ «գրամալսիի (կապիտալի—Մ. Ս.) կենտրոնացման» համար անհրաժեշտ է, որպեսզի «մշակը կատարյալ ազատ լինի», իսկ մյուս կողմից՝ «զրկված լինի արդյունաբերողները: Աշխատուժը դառնում էր ապրանք դիտելու հեղինակի սուրբը բուրժուական տնտեսագիտությանը, ճիշտ է, սակայն, նրա այն նկատառումը, որ մշակին այլ ելք չի մնում, քան «ծախելու իր աշխատանքը կամ սովից մեռնելու»: Նա բուրժուական կարգերի հաստատման հետևանքը համարում էր այն, որ «ամբողջ իրավաբանական ստրկությունից ընկավ իրական ստրկության մեջ», ամբողջապես դառնալով «կապիտալի ստրկույթ»¹:

Բանվորը ստիպված է լինում «իր աշխատանքը» վաճառել մի զնով, որ հազիվ գոյություն կարող է ապահովի, իսկ աշխատանքի մյուս, ավելի նշանավոր մասը՝ յուրացնում են արտադրության միջոցների սեփականատերերը: Մինչդեռ համայնքն ամենից լավ է համապատասխանում հողի նկատմամբ ունեցած մարդկային իրավունքին, քանի որ «մարզու ձևերն է սալիս նրա աշխատանքի բոլոր արդյունքը, այս ղեպքում մարդս ոչ ոքից կախված չէ, որովհետև նրա ձևերն են արդյունագործության գործիքները, հողը և աշխատանքը»²:

Ակնհերև է, որ այստեղ քննարկվում են արտադրության միջոցների սեփականության, աշխատանքի կազմակերպման և արդյունքների բաշխման այն սկզբունքները, որոնց վրա պետք է հիմնվի հեղինակի պատկերացրած ապագա հասարակարգը: Քանի որ կապիտալիստական արտադրության եղանակը չէր համապատասխանում արդարության ու շահասարության սկզբունքներին, ուստի «Գործի» տեսարաններն անհրաժեշտ էին համարում Անդրկովկասում ազնվացնել ու կատարելագործել համայնական հողատիրության ձևը՝ նորմալ հարաբերություններ

ստեղծել «հասարակության զանազան դասերի, նմանապես և համայնքի անդամների միջև»: Այդ բանում նրանք հիմնվում էին այն փաստի վրա, որ երկրամասում երկար ժամանակ պահպանվել է համայնքը, որի անդամների մեջ «կա մի մեծ ձգտում դեպի ընդհանուր գործունեություն, ընդհանուր կեցություն և հավասարություն», հակառակ եվրոպական երկրների, ուր «համայնական ոգին ամենևին մեռած է»³:

Այս գաղափարների հիմքում դրված են համայնքի միջոցով սոցիալիզմին անցնելու և կապիտալիստական զարգացման աղետները շրջանցելու նարոզնիկական միտումները, որոնք եղբեր էին փնտրում համայնքի նշանակության, նրա տնտեսական ու պատմական դերի մասին օրոսական ուսույթական սոցիալիզմի հայեցության հետ:

Համայնքի միջոցով հասարակության վերակառուցման լիբերալ-նարոզնիկական այս տնտեսական ծրագիրը, լինելով ուսույթական, գործնական կիրառության սարքեր բոլորովին չէր պարունակում: Հ. Տեր-Քարսեղյանը որոշակի պատկերացում չունեց նախաֆորմային Ռուսաստանի տնտեսական էվոլյուցիայի հետևնիկների վերաբերյալ: Նա բուրժուական հարաբերությունների զարգացումը բխեցնում էր ոչ թե տնտեսական առաջընթացի ներքին օրինաափություններից, այլ այն համարում էր կառավարության կողմից կապիտալիզմի արհեստականորեն արմատավորման հետևանք: Նրա կարծիքով, հենց այդ նպատակն էր հետամտում 1861 թվականի գյուղացիական ռեֆորմը, որը չնայած հռչակից ճարտարական իրավունքի վերացումը, սակայն «բոլոր ապստոֆյունը այնպես է կազմված, որ կառավարությունը համոզված է, թե յուր ժամանակին, երբ ամբողջ կզարգանա, հողատիրության այդ ձևը ինքն իրն կոչչանա և նրա տեղը կընեն անձնական սեփականությունը, մի խոսքով, թե այստեղ միևնույնը կպատահի, ինչ որ տեսնում ենք Ամերիկայում»⁴: «Մշակի հողատեր լինելը կապիտալի հակալիզմն է» և կապիտալիզմը Ռուսաստանում չէր զարգանում միայն այն պատճառով, որ հողատիրության տիրապետող ձևը համայնականն էր: «Գործը» Ռուսաստանի գյուղացիության տնտեսական ծանր պայմանները կապում էր հողաբաժինների

¹ «Գործ», 1882, № 1, էջ 46:

² Տե՛ս նույն տեղում, էջ 43:

³ Նույն տեղում, էջ 46:

⁴ «Գործ», 1882, № 1, էջ 49:

² Նույն տեղում, էջ 49—50:

փոքրության հետ, փաստորեն առաջ քաշելով նոր հողեր բաժանելու նարոզնիկական տեսակետը և եկամուտների ու հարկերի անհամապատասխանության վերացումը: Վ. Ի. Լենինը բննադատելով վորոնցովիին, Յուժովիկին, Կիրվենկոյին, Գարիշևին, նկատում էր, որ նարոզնիկները ղեն են նետում պատմական ամեն մի սեպիղմ և այդ ձևով փորձում հաղթահարել բուրժուական հասարակության սոցիալական կառուցվածքը, չնկատելով նրա առաջադիմական ուղղվածությունը, սերանք բայլամների նման թացցնում են զուլիսները, որպեսզի ուղղակի շնայեն իրականությանը, որպեսզի շտանեն, որ իրենք ականատես են հենց այն հողի կապիտալի փոխարկող պրոցեսին, որից անջատվում է գյուղացիությունը, այն է՝ ներքին շուկայի ստեղծման պրոցեսին»¹:

Ամսագրի միակ գործնական առաջարկությունը տնտեսական խնդրի հետազոտությունն է, որպես «օրվա խնդիր», որով պետք է «արտափայլեն» հայ ազգային ամբողջ գրականությունը, կերպարանափոխվելով «սուս» ազատամտու և ժողովրդական ուղղության մամուլի ազդեցության տակ»²: Այս առումով «Փորձ» տեսարան Շ. Առաքելյանը դրվատանքի խոսքեր է ուղղել «Մշակին», որը տնտեսական խնդրի բնությունը մի առանձին ուշադրություն էր դարձնում՝ ժողովրդի գրության բարելավման համար:

Տնտեսական խնդրի «Մշակի» բնությունը բխում էր գործնականության սկզբունքներից և կապիտալիստական հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունից: Սակայն որքանով որ այն վերաբերվում էր աշխատավորության տնտեսական վիճակի ուսումնասիրմանն ու բարելավմանը, բավարարություն էր տալիս «Փորձ» հեղինակի նախադրություններին, եզրեր նշմարելով ռուս ազատամտիկների ժողովրդասիրական հարցերի վերաբերյալ Շ. Առաքելյանը բնագրատում էր հայ մամուլի ուղղության հետ: Շ. Առաքելյանը բնագրատում էր հայ մամուլի այն օրպաններին, որոնք ազգի վերածնության գաղափարը կուպում էին միայն նրա մտավոր աստիճանի բարձրացման հետ: «Ավելի հզոր, ավելի էական կողմը, — դա տնտեսականն է:» Հասարակական կյանքի նյութական ու հոգևոր կողմերը հե-

ղինակը համարում էր ոչ թե իրարից զուրս ու անկախ կողմեր, այլ զրանք տեսնում էր որոշակի փոխկապակցության մեջ, առաջնությունը հատկացնելով տնտեսական գործունին: Սակայն այդ միասնության մեջ «Փորձ» տեսարանների հայացքներում գյուղացիության տնտեսական վիճակի ուսումնասիրությունն ընդունում էր ծրագրային բնույթ և չէր վերաբերում գյուղացիության այն իրական կարիքներին, որոնք բխում էին ավելի տնտեսական զարգացումից: Ավելին, հարաբերական ինքնուրույնության բողի առկ նրանք, որպես մանրրոշմական ուսույնական, նպատակ էին հետաձուլում կանխել կապիտալիստական հարաբերությունների զարգացումը և համայնքը փրկել հետագա քայքայումից:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև «Գյուղական տնային արդյունագործություն» հոդվածը, ուր առավել ակնհայտորեն դրսևորվում է ամսագրի աշխատակիցների և նարոզնիկների տնտեսական ծրագրի գաղափարական կապը: Հայտնի է, որ տնայնագործական արտադրության հարցերը ոչ պակաս շատով է հետաքրքրել նարոզնիկներին, կապված գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման խնդրի հետ:

Ռուսաստանում գյուղական տնայնագործության վերաբերյալ առկա էին երկու հիմնական ուղղություն: Գրանցից մեկը, հատկապես իրերտյ նարոզնիկական թեզ, արտահայտում էր գյուղացիական ուսույնական սոցիալիզմի գաղափարները, իսկ մյուս թեզը բուրժուական կարգերի գաղափարախոսներ էին, որոնք կապիտալիզմի մեջ տեսնում էին բանվորական հարցի լուծումը և գաղափարագրային հակասությունների մեղմումը, բանվորներին գյուղացիական-համայնական ողով մանրսեփականատիրական գաղափարախոսության ներառվումը: «Փորձ» հանդեսում այս երկու ուղղության տեսական գրույթներն առաբերել էր առկա էին Շ. Սիդ-Բարսեղյանը նկատում էր, որ տնայնագործության ձևերից առավելագույն կարևոր է «գյուղական տնային արդյունագործությունը», որը Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում լայն տարածում օձնի: Գա վկայում էր կապիտալիստական զարգացման ուղին թևակոխած երկրամասի էկոնոմիկայի բազմակարգութան մասին, որը մի

¹ Վ. Ի. Լենին, ն(ժ, 5, 1, էջ 216:

² «Փորձ», 1882, № 1, էջ 61:

³ Նույն աեղում, էջ 57:

¹ Տե՛ս Ս. Գ. Рындо́вский, Крестьянская промышленность пре-
реформенной России, М. 1966, стр. 11—12.

կողմից այդ զարգացման, իսկ մյուս կողմից տնտեսության հետամանցության հետևանք էր:

«Գործք» հասարակայնության իր իդեալը կառուցում էր ռուս հասարակական տնտեսագիտական մտքի այն ներկայացուցիչների գաղափարների վրա, որոնք իդեալականացնում էին մանր տնայնագործական արտադրությունը, կարծելով, թե այն որոշ հեռանկար ունի: Առաջարկվող տնտեսաձևերի հետ միասին, շ. Տեր-Բարսեղյանը հասկանում էր տնայնագործական արդյունաբերության պատմական դասապարտվածությունը, այն, որ խոշոր արդյունաբերության զարգացումն ի վերջո կհանգեցնի մանր արդյունաբերության քայքայմանը և գյուղացիության շերտավորմանն ու պրոլետարացմանը. «Կաղ թե ուշ գյուղական տնայնագործական արդյունաբերությունը կունչանա և նրա տեղը կրենի գործարանը: Բայց պետք է սակ, որ բավական շատ երկրների համար այդ օրը հեռու է և առավել արդյունագործության մի քանի մասերի համար, սերմն այս դեպքում մեծու է աշխատել, որ գյուղական տնային արդյունագործությունը զարգանա որքան կարելի է»¹:

Տնտեսական զարգացման հեռանկարների վերաբերյալ ցուցարկվող այս շափավոր ածալիզմը դեռու չի խոսում կապիտալիստական հարաբերությունների զարգացման օրինաչափությունների ըմբռնման մասին: Հեղինակի կարծիքով, բավական է, որ կառավարությունը գործարաններին ու ֆաբրիկաներին զրկի դրամական խրախուսումից և կապիտալը բոլորովին կըլքնաչանա: Մինչդեռ կառավարության հենց այդ քաղաքականության մեջ էր դրսևորվում Ռուսաստանում կապիտալիզմի նախազգրծական կոտակման պրոցեսի տունանհասարակությունը: Հռովանավորական այդ քաղաքականությունը նպատակ ուներ

«Տավաքացրելու կապիտալը»: Ֆ. Էնգելսն այդ մասին նշում է, որ ռուսական ամբողջ խոշոր արդյունաբերությունը գոյություն ունի միայն ի շնորհիվ պետության հովանավորական մաքսերի²:

Այդ առանձնահատկությունը շրկելով ժամանակի ռուս իրականության շատ մասառնների կողմից: Գրանք շրկակալց նաև «Գործի» տեսարանը:

Մանր տնայնագործական արդյունաբերության վերաբերյալ «Գործք» սոցիալ-քաղաքական հայացքները կառուցված էին ամենատարբեր տեսակետների վրա: Այս կղկղկողմը միանգամայն տրամաբանական էր և պայմանավորված ժամանակի պատմական պայմաններով: Վ. Ի. Լենինը բնութագրելով է. Տոլստոյի հայացքները՝ գրում է. «Տոլստոյի հայացքների հակասությունները, նրանց անհատական մտքի հակասությունները շին, այլ այն վերին ատոմիստի բարդ, պատմական պայմանների սոցիալական ազդեցությունները, հատմական տրագիգիաների արտացոլումը, որոնք որոշում էին ռուսական հասարակության տարբեր զասակարգերի ու աաբբեր խավերի հագեբանությունը ետեհֆորմյան, բայց նախահեղափոխական դարաշրջանում»³: Թերևս հասկանալի է, թե ինչու ամսադրի համար բնդունելի էին և՛ Ս. Իսակի գյուղական համայնքի, արհեստագործական արտելների ու կոպպերատիվների միջոցով սոցիալիզմին անցնելու բուքժուական ռեֆորմիզմը, և՛ լիբերալ նարոդնիկությունը ներկայացուցիչ Պ. Ա. Սոկոլովսկու տնտեսությունը, ըստ որի գյուղական համայնքը պետության կողմից էժանազին վարկի օգնության պայմաններում կարող է մեծապես նպաստել տնտեսական ու սոցիալական առաջընթացին, և՛ նարոդնիկ անտեսպետ Ս. Մ. Պոտոնիկովի համայնքի միջոցով գյուղացիությանը պրոլետարացումից փրկելու միտումները, և՛ տնտեսագետ ու հրապարակախոս Ա. Կ. Կորսակի տնայնագործական արտադրության վերլուծությունները, և՛ զեմստովային փինակպիր, պրոֆեսոր Ա. Ա. Վերեերի գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման անհարկիության «սպացույցները» և այլն և այլն:

1 «Մշակի» էրերում Նույն տեսակետն էր պաշտպանում նաև Ն. Արեշյանը, որը ցեմենթաց գնալով բուրժուական զարգացմանը, աղավթնում է արտասոցիալական նաժապետական ձևերի փրիտոսոփայությանը, այդ զուգահեռներում էլ գրական նաժապետական ձևերի փրիտոսոփայությանը, այդ զուգահեռներում էլ գրական նաժապետական ձևերի փրիտոսոփայությանը (այդ մասին հանգամանորեն տես մեր «Նարոդնիկական տնտեսագիտական մտքի արևապանները» «Մշակում» հոդվածը, Հայաստանի ժողովրդական արևապաններ, 1983, № 5):

2 «Գործք», 1883, № 1, էջ 12:

1 В. А. Твардовская, Социалистическая мысль в России на рубеже 1870—1880 гг., М., 1969, стр. 61.

2 Տե՛ս Կ. Մարքս և Փ. Էնգելս. Սոց., տ. 18, էջ 540.

3 Վ. Ի. Լենին, ՅժԺ, հ. 20, էջ 25:

Հենց այս դուզահաններում անանազորական արտադրության կալուստությունը ամսագրին առաջարկում էր իրականացնել կառավարության աջակցությամբ համապատասխան գյուղական բնկերություններ հիմնելու, հումք մեքենաներ գնելու, սպրանքների պահեստներ կառուցելու, գանձադան պատվերներ կատարելու և այլ միջոցներով¹:

«Գործի» տեսարանները բնավ չէին ժխտում ապրանքային արտադրության ու ապրանքափոխանակային հարաբերությունների առկայությունը մանր արտադրության պայմաններում: Նշելով ապրանքների իրացման զգվարությունները խոշոր գործարանների հետ մրցապայքարում, նրանք առաջարկում էին արտադրությունը կազմակերպել արտևային հիմունքներով, կազմակերպել արդյունքների իրացումը, կառուցել պահեստներ, վարելք արամադրել մանր արտադրողներին և այլն:

Արտադրության կապիտալիստական եզանակի զարգացման օրինակությունները «Գործի» նարողնեկական մեկնաբաններին համար մնացին անհասկանալի: Նրանք չնկատեցին, որ արտադրողական ուժերի զարգացումը խորացնում է աշխատանքի հասարակական բաժանումը, ուժեղացնում ապրանքափոխանակային հարաբերությունները, որոնք իրենց հերթին աշխատանքի նոր բաժանման խթան են:

Այսպես, ուրեմն, «Գործ» ամսագրի սոցիալական վերակառուցման ծրագիրը կրում էր նարողնեկական գաղափարների անմիջական ազդեցությունը, այդ գաղափարներում էլ պատասխան տալով հասարակության զարգացման ուղիների հարցերին:

* * *

XIX դարի 70-ական թվականներին նարողնեկական համառուսական կազմակերպությունները արոճվեցին ազգային-նարողնեկական խմբերի: Այդպիսի «գիրքափոխություն» անդի ունեցավ նաև հայ իրականության մեջ: Դա կապված էր 70—80-ական թվականների հայկական ազգային- ազատագրական շարժումների հետ: Արևելահայ նարողնեկների զգալի մասը իր գործունեության հիմնական նպատակը հռչակեց Արևմտյան

Հայաստանի ազատագրումը¹: Այդ գործիչներից էր Արսեն Թոխմախյանը: Նրա «Հայրենիքի պահանջներ և հայ գյուղացին», «Մասիս լեռների հարավային ստորոտներ» հրատարակատեսական գրքույկները ճանապարհորդական ապավորություններ են Արևմտյան Հայաստանի գյուղական իրականությունից: Իբրև դրանցից՝ առաջինի բնաբան, հեղինակն րեառել էր «Բնքանձանաչողությունը ինքնագոյություն արբորեն է» արտահայտությունը: Դա, ինքնին, հուշում է այն մասին, որ Ա. Թոխմախյանն անհրաժեշտ էր համարում մտնել կյանքի խորշերը, ծանոթանալ ժողովուրդի նիստ ու կացին, կենցաղին: Այս առումով նա զրվասանքի խոսքի է ուղղում սուսական երիտասարդությանն ու կիշամբում հայ ոսանողներին, նրանց անմանկով «երևակայական աշխարհի» մեջ ապրող մարդիկ:

«Ուսումնասիրել ամեն կողմից ազգայնության արժան հանդիսացող գյուղացու կյանքը, ճանաչել նորան, ճանաչել նորս բնական աշխարհը, որին հայրենիք ենք առում»²— սա է Ա. Թոխմախյանի կարծիքը, սա է ժամանակի հարցը: Նրա հասարակական հայեցության շրջագծի կենտրոնում հայ գյուղացին է, որպես ազդի գոյությունն ու հարստությունը պայմանավորող տարր: Ուստի նա խնդրել է զնում ճանաչել գյուղացուն, որտեղ ու ջույց տալ այն ուղիները, որոնք հնարավորություն կտան նրան տանելու դեպի բազաբակերթության աստիճանների վերին բարձունքները:

Ա. Թոխմախյանը կոնկրետ փաստերով պատկերել է գյուղացիության շահագործումը տիրող դասակարգերի և կառավարության կողմից: «Շոլի սեփականության իրավունքին երկու տերեր կան,— գրել է նա,— կառավարությունը և խաները: Ամեն մի գյուղացին տասին երկու տասանորդ է վճարում արմտիքից և ընդդեմներից, բացի բամբակը, որ էրեքից մեկն են վճարում և ի վերայ այսօր ամենայն գյուղացին իրավունք չունի իր արմտիքը ծախելու: Եթև արտասահմանում լավ գին է հանում գորեանը, բուրդը կամ բամբակը, խանը իր կամեցած գնովը առնում է գյուղացուց, որը պարտական է իր անասուն-

¹ Տե՛ս Ա. Կ. Նովիկովսկայե, 80-ական թվականների տասյին կեսի արեվելահայ ազգային նարողնեկական խմբակները, Բաների Հայաստանի արխիվներ, 1968, № 2, էջ 127—128:

² Ա. Թոխմախյան, Հայրենիքի պահանջներ և հայ գյուղացին, Թիֆլիս, 1881, էջ 11:

¹ Տե՛ս «Գործ», 1883, № 1, էջ 13:

հերոզը տեղափոխել արդյունաբերութիւնը մինչև խանի նշանակալ տեղը¹։ Եվ նա դա է համարում այն բանի պատճառը, որ շատերը թողնելով տուն, տեղ, հայրենիք, տեղափոխվում են արտաքին կենտրոնները՝ պարտաւիր միջոցներ փնտրելու համար, սակայն բնկնում են ալելիլ ծանր տնտեսական կացութիւն մէջ։

Ինչպես տեսնում ենք, Ա. Քոխմախյանը գլուղացիութեան ծանր տնտեսական դրութիւնը կապում էր ոչ միայն տիրող դասակարգերի շահագործման, այլև նահապետական տնտեսաձեռի առկայութեան և պարսկերային կապիթի թուղ գարգացման հետ։ Եվ իբրև, բնդհանուր հարողակցութեան ճանապարհներից ու քաղաքներից գլուղերի կործանութիւնը գծվարութիւններ էր առաջացնում գլուղացիների համար։ Նրանք իրենց արտադրած արդյունքներն իրացնում էին մեծ գծվարութեամբ, իսկ դա խաներին հնարավորութեան էր տալիս մի քանի անգամ ցածր գներով նրանցից գնել գլուղատնտեսական մթերքներ և բարձր գներով դրանք իրացնել քաղաքներում։ Եվ դա պատահական չէր։ «Որքան ալելիլ խուլ է գլուղը.— գրել է Վ. Ի. Լեւինը.— որքան ալելիլ հեռու է կանգնած նա կապիտալիստական նոր կարգերից, երկաթուղիներից, խոշոր ֆաբրիկաներից ու կապիտալիստական խոշոր հողագործութիւնների.— այնքան ալելիլ ուժեղ է տեղական անտարակալների ու վաշխատների մենաշնորհը, այնքան ալելիլ ուժեղ է շրջակա գլուղացիների նեթարկումը նրանց, այնքան ալելիլ բիտր ձևեր է ընդունում երկ նեթարկումը»²։

Ա. Քոխմախյանը գլուղացիութեան տնտեսական ծանր վիճակը մի էական շափով էլ պայմանավորում էր այն հակաուձեթյամբ, որ առաջացել էր քաղաքի և գլուղի միջև։ Հայտնի է, որ պարսկերային շրջանառութեան քաղաքների դերը։ Քաղաքները տնտեսական առումով զարգանում էին ալելիլ արագ, քան գլուղները։ Իսկ դա այն նախադրայիններից մեկն էր, որով քաղաքը շահագործում էր գլուղին։ Արհեստավորներն իրենց արտադրանքը բարձր գներով էին վաճառում գլուղացիութեանը։ Քաղաքա-

յին անտարակալները գլուղացիութեանց արդյունքները գնում էին արժեքից ցած և այնուհետև վաճառում բարձր գներով։ Գլուղացիները անտեսական կարիքները հողալու և պարտքերը մարելու համար դիմում էր վաշխատուի «ծառայութեանը»։ Գլուղացիութիւնը շահագործվում էր պետական ծառայողների կողմից։ Ա. Քոխմախյանը նկարագրում էր, թէ ինչպիսի անաւելի շափերի էր հասնում ժամանակին շմարված պարտքը, որի դիմաց գլուղացին դրավ էր դնում իր տունը, տեղը, կյանքը, հողի անփակաւնութեան իրավունքը։ Դա, ի վերջո, հասցնում էր գլուղական բնաստիքների կործանմանը։ Գրեթէ նույն ձևով էլ գլուղացիութիւնը շահագործվում էր վանքերի և կառավարութեան կողմից։ Փրկութիւն որոնելով քաղաքներում, գլուղացին դառնում էր սարկիացած մշակ, և իր օրն անց էր կացնում զբոստի շարչարանքով, դիչերում էր խոնավ, հոտած անկույններում... քաղաքի ապականութեան մեջ»։ Ա. Քոխմախյանի այս դատողութիւններում որոշակիորէ է ընդգծվում առաջագնացութիւնը կանխելու միտումը։ Անկնիւնը տարագնացութիւնը համարում էր ազգի հիմքի՝ գլուղացիութեան քայքայման, ազգի կազմալուծման պատճառ։

Ինչպես նկատել է Ք. Աղլարիեղյանը, «Քոխմախյանը պարզ գիտակցում է, որ տնտեսաւաշի պահպանութեան պատճառը վաշխատութեան է, ուրեմն և վերջին կետում՝ տնտեսական լայն պայմանները, որոնք հնարավոր են դարձնում վաշխատութեանը»։ Դա, իհարկե, ճիշտ է։ Սակայն անհրաժեշտ է արտաբնագութեան պատճառները որոնել բնդհանուր գարգացման պայմանների մէջ։ Ինչ խոսք, XIX դարի վերջին Հայաստանում տնտեսական կապիտալը մեծ աշխուժացում էր սպարում և դործույնութեան լայն ասպարեզ ուներ, որը որոշ ասումով պայմանավորված էր կապիտալի պակասութեամբ բնդհանրապետ նպաստելով աշխատավոր զանգվածների շահագործման ուժեղացմանը, այն պուակցվում էր գլուղացիութեան քայքայմամբ։ Այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ արդյունաբերական կապիտալը տիրապետող էր դառնում երկրամասի տնտեսական կյանքում, վաշխատական կապիտալն արագացնում էր տրե-

1 Ա. Քոխմախյան, Մասիս լեւների հարավային ստորոտները, որք մաս, էջ 14—23։

2 Ք. Աղլարիեղյան, Արտէն Քոխմախյան, Արտէն, 1926, էջ 25—29։

1 Ա. Քոխմախյան, Մասիս լեւների հարավային ստորոտները, Քիֆիտ, 1892, սթո մաս, էջ 8։

2 Վ. Ի. Լեւին, նեթ, Շ. 3, էջ 474։

տեսութեան կապիտալիստական ձևերի առաջացումը, մի կողմից ունեացնելով սեփականութեան հին ձևերը, մյուս կողմից ստեղծելով արտադրութեան միջոցներից զրկված վարձու բանվորների բանակ: Գյուղացին ընկնելով մեծ պարտքերի տակ, այլ ինչ չէր գտնում, քան աշխատանք փոխարէն երկրամասի քաղաքներում: Այս առումով էլ միակողմանի է Ա. Քոխմախյանի մասին Ք. Ավգուրիչյանի ավճած գնահատությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել մի այլ հանգամանք ևս: Կապիտալիստական խոշոր արդյունաբերությունը Հայաստանում, համեմատած Անգլիոյի հետ է մյուս տնտեսական շրջանների հետ, թույլ էր զարգացած: Արդյունաբերական խոշոր կենտրոնների քաղաքացիությունը պայմանավորում էր բնակչության հոսք երկրի սահմաններից դուրս, դեպի առավել զրգացած տնտեսական շրջաններն ու քաղաքները: Ա. Քոխմախյանը տնտեսական հարցի հետ էր կապում հասարակության ներդաշնակության հարցը. «Երբ մի ազգային մասրին ձգտում է իրենագոյնական, ամենից առաջ նա լրջորեն ուշադրություն պետք է դարձնէ թե իր ներքին կենսական ուժերի միավորության կապեր ինչ պայմանների մէջ են գտնվում... Այդ կենսական ներքին ուժերից նշանավորը տնտեսական հարցն է: Դա կենսական շրջանառութեան հարաբերական կապն է, մի հանրության մէջ գտնված ամեն աստիճանի դասակարգութեանց համար»: Հետ Ա. Քոխմախյանի, տնտեսական իրենակոլ են պայմանավորված դասակարգերի, հասարակական խավերի և անհատների միջև դրություն ունեցող սոցիալական տարբերությունները, ուստի և տրնտեսական կետում պետք է փնտրել հասարակության զասակարգային կառուցվածքում գոյութեան ունեցող ներհակությունները: Սակայն հեղինակն առանձնացնում էր մի դասակարգ, որն իր սոցիալական ձգտումներով դիմակայված է մյուս բոլոր դասերին ու խավերին: Այդ դասակարգը նա համարում էր գյուղացիությունը, գտնելով, որ և՛ թէ մյուս դասակարգերն ու խավերը նույնիսկ իրենց հայրենասիրական ձգտումներում ակնկալում են տնտեսական տիրապետության ու իշխանության, ապա գյուղացին ցանկանում է թողնել իրեն, միայն, որ նա կարողանա լծել իրեն առատություն պարզեղ գութանը, մշա-

կել դարերով խոպան մնացած երկիրը և ընտանեկան ցնծություն մը հնձել աշխատասեր ձեռների պտուղը»¹:

Միտումն ակներև է գյուղացիությունը պետք է դառնա աշխատանքի միջոցների, իր աշխատանքի արդյունքների տերը: Սակայն Ա. Քոխմախյանը որևէ գրական քան չէր կանխագուշակում ապագա «իրենագոյնական» մասնակիների վերաբերյալ: Նա չէր ըմբռնում, որ մինչև գյուղացիության քաղաքական ազատագրությունն անհրաժեշտ է բարեկալի նրա տնտեսական դրությունը, այլպես հարստահարողները կշարունակեն ուժեղացնել շահագործումը:

Ա. Քոխմախյանը հասարակական, դասակարգային ներհակությունների պատճառը որոնում էր դասակարգերի ու անհատների շահասիրական նպատակների, համազգային պապափարի գիտակցության բացակայության մէջ: Նա ցանկանում էր ներդաշնակություն ստեղծել ներքին դասակարգերի միջև: Եվ պատահական չէ, որ գյուղացիության տնտեսական դրության բարեկալման նրա առաջադրած միջոցներն ունեին ռեֆորմատորական բնույթ և ակնկալում էին առաջընթաց էվոլյուցիոն ուղին: Ա. Քոխմախյանը հանրային կարծիքով, այդ գործում մեծ դեր ունի կատարելու մտավորականությունը և, հատկապես, գյուղական վարժապետը, որը լինելով գյուղի մտավոր զարգացման առաջնորդը, պետք է գյուղացուն ցույց տա արտադրության սպորտին արդյունավոր հասարակությանը, հողը պարարտացնելու, սերս անձանոթ սերմեր ցանկելու», «երկրագործական նոր գործիքներ ունենալու» վերաբերյալ խորհուրդներ: Մյուս կողմից նա կարծում էր, թէ վարկային ընկերությունների միջոցով կարելի է գյուղացուն ազատել վաշխատուններից և օգնել նրան զգոյամազլի տեր դառնալու»²:

Ա. Քոխմախյանի այն պահանջը, թէ օմիայն հայրենիքը, ազգը բարբերազ է, որի որդիք մենք գիտեն, բարի սկզբունքների համար, որոնց համար մահը կյանքի սկիզբ, անմահություն է»³, թեև իր մէջ պարունակում էր 60-ականների գաղափարական հայեցողության ինչ-ինչ նստվածքներ, բայց էություն

1 Ա. Քոխմախյան, Մասին լոճների հարավային ստորոտները, քրս մաս, էջ 25:

2 Տե՛ս նույն տեղում, քրս մաս, էջ 63—65:

3 Ա. Քոխմախյան, Հայրենիքի պահանջներ..., քրս մաս, էջ 83:

4 Ա. Քոխմախյան, Հայրենիքի պահանջներ..., քրս մաս, էջ 85:

1 Ա. Քոխմախյան, Մասին լոճների հարավային ստորոտները, քրս մաս, էջ 22—24:

ծողովրդապիրական շարժման շտապանով ուսմանտիրական ուսուցիչ կը, որը մտավորականության առարկայի վրայ հետ կը կապում գյուղը բարեկարգելու սոցիալական առաջընթացի հեռանկարը:

Արևմտահայության տնտեսական վիճակը զբաղեցրել է նաև Գարրիել Մնացականյանին (Բարկեհն): Նրա տնտեսագիտական բնույթի հետազոտություններից է «Աղբարային հարցը Ռուսահայաստանում» ձեռագիր աշխատությունը, որը պահպան է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում: Այն, ինչպես նշված է առաջարանում, պետք է բազմապատկվի ինքն երեք գրքից: Առաջինը լինելու էին բնօրինակ նկատողությունները աղբարային հարցի վերաբերյալ, երկրորդը՝ ավյալներ Ռուսահայաստանի բոլոր ազատական ու մյուլթագարական հայ գյուղացիների ու հողերի և գրանց բարեկարգման միջոցների մասին, իսկ երրորդը՝ վիճակագրական տեղեկություններ:

Ընդհանրապես XIX դարի վերջին քաղաքում արևելահայ հասարակական միտքը մի առանձին ուղադրություն էր դարձնում Անդրկովկասի աղբարային հարաբերությունների ուսումնասիրությանը: Գ. Մնացականյանը ևս աղբարային հարցը համարում էր հասարակության զարգացման կարևորագույն հանգույցը շրջադարձային բուրք կտապներում և հատկապես XVIII դարից: Մինչև աղբարային շարժումը չեկար, — գրել է նա, — երկրի մեծամասնությունը չի հեղափոխվում և ամենայն մի վերանորոգում վերենկերումն է մնում և երբ նա չի իջնում ժողովրդի ստոր խավերի մեջ, լինում է ժամանակավոր, փոփոխական: Մինչև գյուղական ամբողջի կոհակը չի խփում տիրող պետական, սոցիալ-տնտեսական կարգերին և նրանց հիմնահատակ չի անում, հին կարգերը մնում են սոցիալում¹: Հեղինակն ուղադրություն է դարձրել այն բանին, որ մինչև կապիտալիզմի տնտեսակարգի հաստատումը հասարակական հարստության հիմքը կապված էր հողին տիրապետելու ձեռ հետ և պրակտիկ էին պայմանավորված ինչպես պետական սխտանին ու պետության հզորությունը, այնպես էլ նրա կազմի մեջ մտնող դա-

սակարգերի, նվաճող ու նվաճված ազգությունների հարաբերությունները:

Գ. Մնացականյանը կարևոր տեղ էր հատկացնում աղբարային հարցի ուսումնասիրությանը, այն համարելով աղբարային կյանքի ինքնաճանաչման և սոցիալ-քաղաքական հարցերի լուծման կարևոր միջոց: Նա նշում էր, որ Հայաստանը, լինելով օտար նվաճողների թատերարան, մշտապես՝ ենթարկվել է հողատիրության և հողագտադրման օտարամուտ ձևերի, որի հետևանքով նրա հողային հարաբերություններում ստեղծվել է մի խառնարկային վիճակ: Հենց դրանով էր նա բացատրում հողատիրության թրուլական և մյուլթագարական ձևերի սակավությունը Հայաստանում:

Մեկ անգամ չէ, որ Գ. Մնացականյանն անդրադարձել է գյուղացիության տնտեսական ծանր վիճակի բնույթին և նշել այն ուղիները, որոնք հնարավորություն կարող էին տալ նրա բարեկաման համար: Հեղինակը հատկապես կարևոր տեղ էր հատկացնում գյուղական վարժարաններին, որոնք, նրա կարծիքով, կսովորեցնեին կիրառելու արտադրության առաջավոր եղանակներ և կատարելագործելու գյուղատնտեսական արտադրությունը, օգտվելու կիրառական քաղաքակրթությունից²:

Ճիշտ է, Գ. Մնացականյանը հակված էր ընդունելու արտադրության եվրոպական ձևերի առաջավոր բնույթը, այնուհանդերձ, նրա մտ ձեռնպահության որոշ երանց է նկատվում այդ զարգացման հանդեպ: Նա նպատակ էր հետամտում մի կողմից արմատավորելու արտադրության առաջավոր եղանակները, արմատավորելու արտադրության անցյալի ինչ-ինչ տարրերը: Այս առումով նրա հայեցողությունը մի կողմից ուղղված էր դեպի առաջ և համահունչում էր հասարակական զարգացման հետ, մյուս կողմից՝ դեպի ետ արևմտյան հայտնաբերված տնտեսական ուսմանտիրակի հետ: «Վերջին ժամանակներս, — գրել է նա, — ակնհայտ կերպով նշմարվում է եվրոպական քաղաքակրթության ընթացքը դեպի Ասիան: Այս վերջինը, մարդկային լուսավորության նախնին օրրանը, կարծես ուզում է սթափվել իր բազմադարյան քնից և թաղանթավորվում է մտնել համաշխարհային կյանքի մեջ³: Սակայն Գ. Մնացականյանը չէր բնորոշում,

¹ Տե՛ս «Երևանագրք», 1884, № 17, էջ 257:

² ԳԱԹ, Բարկեհնի ֆոնդ, № 7, Բ. 1:

1 Տե՛ս ԳԱԹ, Բարկեհնի ֆոնդ, № 9, Բ. 1:

2 ԳԱԹ, Բարկեհնի ֆոնդ, № 9, Բ. 3:

որ հենց դա է որում հասարակական ներհատկությունները և վերացնում հին հաստատությունների տարբերը: Այսպես, սակավաճառությունը նա հակված էր բացատրելու ոչ անբան կապիտալիստական զարգացման փաստով, որքան Հայաստանի պատմական անցյալի առանձնահատկություններով: Այստեղից էլ անկատար է սակավաճառությունը վերացնելու և տարագրագրությունը կանխելու նրա այն ծրագիրը, ըստ որի անհրաժեշտ է գյուղացիներին զաղթեցնել զեպի Անդրկովկասում եղած դատարի հողերն ու Տանկահայաստանի և Պարսկահայաստանի մտտակա սահմանները, ոտոզել Անդրկովկասի ամայի և անջուր հողերը, ինչպես նաև գյուղացիներին մեջ տարածել գյուղատնտեսական գիտություններ և արհեստներ, «որ հողն ավելի լավ կարողանան հարստահարել և ավելի շահավետ արդյունաբերություններով պարպակել»¹:

Գ. Մնացականյանը, անշուշտ, վրիպում էր: Նա անասում էր իր առաջադրած տնտեսական նախագծումների սոցիալական բովանդակությունն ու դրանց իրականացման հնարավորությունների բացակայությունը: Այս հարցում նրա մոտ նշմարվում է երկենտարանը նա երբևէ իր իդեալը կապում էր համայնական սկզբունքի արմատավորման հետ. «Հողի սակավությանը, կարելի է դարձան տալ միայն հայ ժողովրդի մեջ տարածելով համայնական գաղափարը, ոչին և սովորեցնելով նրան համայնական կյանքի»²: Գ. Մնացականյանի կարծիքով, դա հնարավորություն կտա անհատական շահը զուտորոշել համայնական, հասարակական շահի հետ: Նա չէր նկատում, որ կապիտալիզմի զարգացմանը զուգընթաց համայնքն ավելի ու ավելի վնասակար էր դառնում գյուղացիության համար: Այստեղ է, որ նրա հայացքները եզրեր էին որոնում լիբերալ նարոդնիկության ծրագրի հետ, որը նպատակ ուներ գյուղացիության գրուկությունը բարելավել տիրապետող կարգերի պահպանման պայմաններում:

Անդրկովկասի ագրարային հարաբերություններին վերաբերող հարցերի ուսումնասիրությանն են նվիրված նաև Սիմոն Զավարյանի աշխատությունները:

Իր աշխատություններից մեկում՝ Ս. Զավարյանը լիբերալ նարոդնիկության զուգահեռներում փորձել է պատկերել նրկվանի նահանգի և Կարսի մարզի գյուղատնտեսության և գյուղացիության վիճակը: Աշխատության մեջ, ինչպես և հեղինակի մյուս գործերում յնպիսի բացակայում են տնտեսական խոր վերլուծությունները, սակայն կան արժեքավոր վիճակագրական և փաստական նյութեր գյուղացիության տնտեսական դրության վերաբերյալ: Ինչպես նշում է Ս. Զավարյանը, տնտեսական հարցերի քննության ժամանակ ինքն առաջադիմ տեղը հասկացրել է բնատնտեսական պայմաններին:

Ռուս հայտնի տնտեսագետ Յու. Յանսոնը Արևմտյան եվրոպայում և Ռուսաստանում հողերի բաշխման բնագավառում զճռական նշանակությունը հատկացնում էր սոցիալական գործոնին, մասնավորապես հողատիրության ակերին: Չժխտելով գյուղատնտեսության վրա սոցիալական գործոնի ազդեցությունը, Ս. Զավարյանը, սակայն, զճռական դեր տալիս էր պայմաններին: Նա գտնում էր, որ գյուղատնտեսության մեջ սոցիալական պայմանները «խաղում են երկրորդական և նույնիսկ երրորդական դեր»³: Այս տեսակետը հաստատելու համար Զավարյանն օգտվել է Ստերտաի «Բասաստություններ, կարգացված Պետրոլյան ակադեմիայում 1892 թվականին զաշտային և մարզագետային հոդաշերտերի մասին», Ա. Չարտունովի «Եվրոպական Ռուսաստանի գյուղատնտեսության վիճակագրություն», Մ. Գավլիի «Մեծերոլդիան և Ֆիզիկական հողագործության վերաբերյալ», Յու. Մեդվեդևի «Ակնարկներ կովկասյան անտառների մասին», Յու. Յանսոնի «Համեմատական վիճակագրություն», ինչպես նաև «Ռուսաստանի արտադրողական ուժերը» աշխատություններից:

Իհարկե, աշխարհագրական միջավայրը կարևոր դեր ունի հասարակության կյանքում և վճռական ազդեցություն է գործում տնտեսության առանձին ճյուղերի զարգացման վրա: Սակայն Ս. Զավարյանը շահագրանցում էր այդ գործոնի դերը: Նրա հայացքների վրա նկատելի է բուրժուական սոցիոլոգիա-

¹ ՏՊՍ. С. Заваров, Опыт исследования сельского хозяйства хлебоборозного района Эриванской губернии и Карсекой области, Тифлис, 1899.

² С. Заваров, Опыт исследования..., стр. 104.

¹ «Արեգապետ», 1884, № 23, էջ 345.

² ԳԱԹ, Բարիկեցի Ֆոնդ, № 9, Թ. 15-10:

յում աւարածում գտած աշխարհագրական դետերմինիզմի ուղղութիւնն ազդեցութիւնը, ըստ որի հասարակութեան զարգացումը ուղղակի կախման մեջ է գտնվում աշխարհագրական պայմաններից: Այդ դեպքում անտեսվում են հասարակական առաքնիքի սոցիալական շարժիչ ուժերը, անտեսական էրեմիայների վերլուծությունները սահմանափակվում են բնօրհանուր նկարագրությամբ, մի կողմ թողնելով արտադրական հարաբերությունների բնույթը, բնութեան և հասարակության փոխհարաբերությունը ներկայացվում է լոկ որպես շրջապատող բնութեան նկատմամբ մարդկանց պասսիվ հարմարվողականություն:

Անցյալ դարի վերջին քառորդին ուժեղանում էր գյուղացիության անտեսական բաշխումն ու շերտավորումը Կա Տեմեսոբ էր երկրամասի կապիտալիստական զարգացման օբյեկտիվ բնութագրի Ս. Զավարյանը, սակայն, այդ գործում ևս վճռական տեղը հատկացնում էր բնական և կլիմայական պայմաններին: Անընդհատ համարելով անբերրիությունը պայմանավորող գլխավոր պատճառ, նա նշում էր նաև այլ գործոններ, ինչպես, օրինակ, հողերի վերաբաժանման պրակտիկան:

Իր աշխատության մեջ Ս. Զավարյանը նշել է, որ հարուստ բնտանիքները ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական առումով անբերուն են մեծ հողակտորների, իսկ սակավահող գյուղացիների կողմից հողի և, հատկապես, միևնույն կուլտուրաների հաճախակի մշակումը ուժապաստ է անում հողը, ինչպես մեծ նրա բերքատվությունը: Նա կարծիք է համարում նաև այն, որ մանրգյուղացիական անտեսությունները հարավորություն չունենին կիրառելու արտադրության առաջավոր ձևեր, պարարտացնելու հողը:

Ինչպես և նորոգյիկները, Ս. Զավարյանը ևս գյուղացիության գորախտությունների պատճառը համարել է հողաանկալությունը: Նա քննադատել է այն հետազոտողներին, որոնք բաժնեհողերի մեջ մտցնելով օգտագործման համար ոչ պիտանի հողակտորները, հանապարհները, խանդակները և այլն, արհեստակետորեն թրթրացնում էին պետական գյուղացիների հողարածվեճների չափերը: Սեփական հետազոտությունների հիման վրա նա ցույց է տվել, որ Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Սրահանի, Նոր Բաշաղեանի գավառներում և Ղարսի մարզում յուրաքանչյուր շնչին բնկնող հողարածվեճների չափերը բարձրաց-

ված են համապատասխանաբար 53, 28, 28, 55 և 132 տոկոսով¹:

Ս. Զավարյանի կարծիքով, սակավահողությունը որոշ չափով էլ պայմանավորված էր հողերի բաշխման գլուխիցում անհնցող սխտանի թերութուններով: Նա նշում էր, որ հողերի արմատական վերաբաշխում չի կատարվում, հողերի ինչպես համափառարեքային, այնպես էլ ըստ շնչերի բաշխման սկզբունքները համարում էր ոչ կատարյալ: Ս. Զավարյանի կարծիքով, եթե հողերի առատության պայմաններում համափառարեքային սխտանը ապցիոնալ էր, ապա բնտանիքի անտեսական օժանդակության սկզբունքը լոկ ավելի է խորացնում գյուղացիության շերտավորումը, հնարավորություն տալով հարուստ բնտանիքներին մեծ շնչի հաշվով ավելի շատ հողեր կենտրոնացնելու իրենց ձեռքում: Հեղինակը նույն անտեսական հետևանքներն էր տեսնում նաև ըստ շնչերի բաշխման սկզբունքի մեջ: Նա նշում էր, որ եթե հաշվի առնենք այն, որ հողերի կարտումը իրականացվում էր հողատիրոջ ցուցումով, ապա բերրի հողերը կենտրոնանում էին ունեւորների ձեռքին: Այդ արդեւոր տեղի էր ունենում նաև այլ համապարհուն: Ունեւոր բնտանիքները փատաղույն հողակտորները որոշ հավելավճարով փոխանակում էին աղքատների լավագույն հողերի հետ և այդ «արժեքավոր տեղաձուլումը գրավագրումը, փաստորեն ոչնչով չէր տարբերվում վաճառքից»²: Ս. Զավարյանը չէր հասկանում, որ հողերի «հափստար և արդարացի» հիմունքներով պարբերական վերաբաշխումները գործնականում անհնարին էին: Հողերի կանոնավոր վերաբաժանումների դեպքում համայնքի անդամ յուրաքանչյուր գյուղացի պետք է նորից ստանար իր հողաբաժնի: Ինականաբար, ունեւոր գյուղացիությունը միշտ էլ հանդես էր գալիս այդ վերաբաժանումների դեմ, քանի որ տնօրինում էր մեծ չափերի վերաճակալված, գրավ դրված կամ այլ ձևերով յուրացրած հողեր:

Ինչպես հայանի է, համայնական հողատիրությունն արգելակում էր հողերի առաւովաճառը: Այսուհանդերձ, նկատում էր Զավարյանը, վարձակալական հարաբերություններն բնօրհան էին լայն մասշտաբներ: Գյուղացիության թույլ տարրերն իրենց

¹ ՏՎ՝ С. Завагов, Опыт исследования ..., стр. 251.

² Նույն տեղում, էջ 218:

ամբողջ հողաբաժինները որոշակի ժամանակով տալիս էին ունեւորներին կամ բերրի մի մասի, կամ էլ վարկի դիմաց, միաժամանակ աշխատելով նույն հողամասերում: Ընդ որում, այդ հողամասերը մնում էին վարկատու գնորդի մոտ մինչև վարկի ու տոկոսի փոխհատուցումը: Առաջ էր եկել կիսավաճառքի ու կիսավարձակալության մի նոր ձև, ըստ որի հողը անորոշ ժամկետով մնում էր որպես վարկատուի սեփականություն մինչև վարկառուի անհետ կամ միասին չմարդ պարտքը: Իսկ քանի որ դա հաճախ գործնականում անհետանում էր լինում, ուստի որ դա հաճախ վարձակալանում անհետանում էր լինում, ուստի որ դա հաճախ վարձակալանում անհետանում էր լինում, ուստի որ դա հաճախ վարձակալանում անհետանում էր լինում, ուստի որ դա հաճախ վարձակալանում անհետանում էր լինում:

Ս. Ջավարյանի դիտողություններում երևույթները չեն գուցարկում հասարակական առաջընթացի բնույթում: Նա նշում է փաստը, առանց խորանալու այն ծնող շարժառիթների մեջ: Ավելին, հեղինակը ոչինչ չի ասում կապիտալիստական հարաբերությունների զարգացման մասին: Նրա բերած տվյալները հաստատում են գյուղացիության բարձրանալու փաստը, որից էլ, ըստ էության, սկսվում է հին նահապետական, համայնական հարաբերությունների քայքայումը: Վարձակալական հարաբերությունների ուժեղացումը գյուղում բնակչության նոր խավերի առաջացման հետևանք էր: Անևեր խավը, կենտրոնացնելով հողերը, սկսում էր անտեսությունը վարել կապիտալիստական շահագործման հիմունքներով, իսկ մյուս կողմից ձևավորվում էր գյուղական վարձու բանվորների դասակարգը:

Անդրկովկասի բնակչության աշխատանքով պայմանավորված, գործում Ս. Ջավարյանը կարևոր տեղ էր հատկացնում գյուղացիանտեսական արտադրության ինտենսիֆացմանը, ոռոգման սխեմաների անցկացմանը: Նա ընդգծում էր, որ այդ պրոցեսը բնակչության աճին համալրելի էր կատարվում և հարթավայրային շրջաններում նույն տնտեսական հետևանքները չի ունենում, ինչ լեռնային շրջաններում, որ բնակչության կանգնումն ազդեցություն է ազդել մեծ է: Անդրկովկասի շրջանների բնակչության թիվը համարելով Ռուսաստանի համապատասխան շրջանների բնակչության թվին, նա ցույց է տվել, որ է՛նք հաշվի առնենք օգտագործման համար ոչ պիտանի տարածությունները, ապա երկրամասում այն անհամեմատ խիստ է Այստեղից էլ նա հանգում է այն հետևությանը, թե սակավահողային պատճառով տարագնացությունը դառնում է անխուսափելի:

Ս. Ջավարյանի կարծիքով, տարագնացությունը բացասական երևույթ է, քանի որ բնակչության հոսքը դեպի արդյունաբերական կենտրոնները մեծացնում է աշխատանքի առաջարկը և, հետևաբար ինչնչնում աշխատավարձը: Սակայն հեղինակը տեսնում էր, որ այլևս հնարավոր չէ կանխել այդ պրոցեսը, ուստի առաջարկում էր դրան տալ կազմակերպված բնույթ՝ նա դառնում էր, որ բնակչության մի զգալի մասին կարելի է վերաբնակեցնել Կարսի մարզում, ուր աղաս հողատարածություններ շատ կային: Դա մյուս կողմից էլ նպաստել էր հետապնդում լուծվող գյուղացիության սակավահողային պարտքերը: Իդեալ, ժամանակին նման անսակեռ էր հայտնի նաև Կ. Կավելինը:

Տարագնացություն երևույթը Ս. Ջավարյանը կապում էր նաև բնակչության կազմաների հետ՝ ստոր ցույց տալով աշխարհագրական գեոտերիթիկները: Մյուս կողմից, այդ երևույթի պատճառը նա համարում էր գյուղացիանտեսության ինտենսիֆիկացիան ցածր աստիճանը, չնկատելով, որ ինտենսիֆացումը կարող էր հակառակ ներդրություն ունենալ՝ առաջացնել ավելցուկային աշխատուժա: Իրականում տարագնացությունը վկայում էր գյուղում ագրարային զերբնակչության երևան դալում, որպես կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքի մասին:

Գյուղացիության տնտեսական ծանր կացությունն ու տարագնացությունը Ս. Ջավարյանը մի մասով էլ պայմանավորում էր վաշխատական կապիտալի առկայությամբ: Նա նկատում էր, որ նահապետական կյանքի պայմաններում, երբ քաղաքակրթությունը դեռևս չէր թափանցել երկրամաս, վարկի տոկոսներն անշահա էին, մինչդեռ ապարնային տնտեսության արմատավորման հետ այն անբեղհատ բարձրանում էր:

Գյուղացիության տնտեսական վիճակը հատկապես ծանրանում էր անբերրիության տարիներին, երբ տոկոսները հասնում

1 ՏՊ՝ Ս. Շավարյան, Опыт исследования ... стр. 279.

1 ՏՊ՝ Ս. Շավարյան, Опыт исследования ... стр. 321.

էին 40—50-ի. Մեծանում էր պահանջարկը փողի նկատմամբ, 5—10 ուրլի պարտք հասնում էր մի քանի տասնյակ, եւսյ-նիակ 100 ուրլու: Դրա հետեանքով կուլակներին ձեռքն էր անց-նում ռազբատ գյուղացիների ամբողջ կենդանի և անկենդան ինվանտարը, ամբողջ գյուղացիական աշխատանքը, գյուղացու ամբողջ կյանքը և վարկառուին դառնում է պարտատեր գյու-ղացու կյանքի լիելշխան տիրակալը»¹:

Աշխատութեան մեջ Ս. Զավարյանը նշում է վարկի բնորոշ դարձած մի նոր ձև. Հակապական շափերի հասած վարկը լմա-բելու դեպքում հարուստներն աղքատների անասունների վրա դնում էին սեփական դրամը և նորից հանձնում նրանց: Գյու-ղական բնուսները ձևականորեն պահպանում էր ծովսբ, բայց բոտ էութեան աշխատում էր հարուստի համար, անասունների արժեքի դիմաց, կատարելով բազմաթիվ նոր պարտավորու-թյուններ:

Ս. Զավարյանը լուի արձանագրում է գյուղում տեղի ունե-ցող ունեցվածքային շերտավորման փաստը, ցույց տալիս, թէ վաղախոտական կապիտալը ինչպիսի բայթայիշ ներգործութիւնն էր ունենում գյուղացիական վրտ: Նա չէր հասել այն բմբումա-նը, որ վերջինս կապիտալիզմի առաջացման շարժիշ ուժերից մեկն է: Ինչպես բնագծի է Կ. Մարքսը, շահագործողական հա-մարերութիւնների ուժեղացման հետեանքով արտադրութեան միջոցներից զրկված մանր գյուղացիութիւնըն այլևս անկարող էր վերարտադրութիւնը վերսկսելու հին մաշտարներով, ու-տի քայքայվում էր, համարելով վարձու բանվորների շարքեր:

Քննարկելով վարչական ձևով վաղախոտական կապիտալի տակունները սահմանափակելու ուղղութեամբ ձեռնարկվող մի-չոցառումները, Ս. Զավարյանը ցույց է տալիս, որ դրանք բոտ էութեան սշինշ շնն տալիս, իսկ 1894 թվականի անբերրութեան հետ կապված, կառավարութեան կողմից վերադարձնելութեան պատանով յարաբանշար շնի հաշվով տրված 26 կոպեկ օգ-նութիւնը (հացով) որքէ դրական ներգործութիւնը չէր կարող ունեւալ, էթէ, մանավանդ, հաշվի անններ, որ այն հավասա-րապես տրվում էր ինչպես աղքատներին, այնպես էլ հարուստ-ներին:

Գյուղացիութեան քայքայման պրոցեսում ոշ պակաս դեր են

խաղացել հարկերն ու պահանջները: Ս. Զավարյանը գոյու-թյուն ունեցող պահանջների բաշխումը սերտորեն կապում էր հողերի բաշխման կարգի հետ: Նա համախաշարեային բաշխու-մը համարում էր արտադրութեան պահանջներին համապատաս-խանող սխտեմ, կարծիով, որ նրանում հաշվի է անովում բնտանիքի տնտեսական ունեւանքիւնը: Ս. Զավարյանը նշում էր, որ հարկերը խիտ անհավասարաշափ են բաշխվում և գյու-ղացիութեան ունեւոր բնտանիքների մի զգալի մասը ազատվում է դրան վճարելուց: Հնտարակական պահանջները ոշ թէ տար-բերակվում են բոտ անտանիքների տնտեսական ունեւանքիւն, այլ գանձվում են բոլորից միտանեակ շափով, բոլորովին հաշ-վի շանեւելով այն, որ ունեւոր բնտանիքների յուրաքանչյուր ան-դամի կկամուտը մի քանի անգամ գերազանցում է շունեւոր բն-տանիքների մեկ շնիին բնկեւող կկամուտաներին:

Նոր Բայաղտի գավառում հարկերի այլ անհավասար բաշ-խումը ցույց տալու համար հեղինակը բերել է վիճակագրական մի շարք տվյալներ: Պարզվում է, որ գավառում հարկերի աս-տիճանը հակադարձ համեմատական կարգի մեջ էր բնտանիքի երկմտին: Սվ որքան շատ են կկամուտները, այնքան քիշ են այլ բնտանիքներից գանձվող հարկերը: Ս. Զավարյանի կար-ծիրով, այլ սխտեմի աղղիւնը պիտի լիներ այն, որ շունեւոր-ները պետք է աղիլ շատ աղքատաւային, իսկ ունեւորներն ու հարուստները՝ հարտասուային¹:

Շեղինակի բերած տվյալներից երևում է նաև, որ հարկա-զրուտն անհավասարաշափ էր կատարվում անտնձին շրջան-ների, գավառների, գյուղերի ու քաղաքների միջև: Գյուղերը, քաղաքների համեմատութեամբ, 2—3 անգամ շատ էին հարկ-վում: Եթէ դրան աղկաւցններ նաև գյուղացիութեան կողմից կա-տարվող բնիրային պարտավորութիւնները, ինչպես՝ հին ճա-նապարհների նորոգում և նորերի շինարարութիւնը, բոտակի համար կատարվող բնկարանային պարտավորութիւնները և այլն, ապա այլ տարբերութիւններն աղիլ են խորանում:

Սակայն Ս. Զավարյանին թվում էր, թէ հարկային սխտեմի կատարելագործումը, հարկերի և գյուղացիութեան վճարունա-կութեան համապատասխանեցումը հնարավորութեան վճարունա-բարձրացնելու գյուղացու տնտեսական յարեկեցութիւնն ու

¹ См. С. Захаров, Опыт исследования ..., стр. 287, 288, 289.

¹ См. С. Захаров, Опыт исследования ..., стр. 328.

պահպանելու նրա ինքնորոշությունը¹, այսինքն՝ կանխելու շերտավորումը: Մանրորոշուական պատրանք է սա միայն: Իհարկե, թե՛ հարկերը և թե՛ պարհանկներն ինքնին գյուղացիության քայքայման պատճառ լինել չէին կարող, բայց զարգացման կապիտալիստական ուղին թեևս հիմնականում անտեսության մեջ դրանք նպաստում էին գյուղացիության անասնական քայքայման ու նրա սոցիալական շերտավորմանը:

Ինչպես արդեն նկատել ենք, փորձելով ցույց տալ եկամտունքի և հարկերի միջև գոյություն ունեցող կապը, Ս. Չավարյանը համապատասխան տվյալներ է բերում գյուղացիական բնտանիքների բյուջեների վերաբերյալ:

Դրանց մշակման մեջ դրահանն այն պետք է համարել, որ հեղինակը մեկ շնչին ընկնող հարկերը համադրել է եկամուտներից ըստ աղքատ, միջին և հարուստ բնտանիքների: Սրանում ավելի ակնառու է երևում, որ հարկաշփաթ չէր տարբերակվում ըստ բնտանիքների եկամտունքի և հարկերի մեծ մասը բաժին էր բնկնում աղքատ բնտանիքներին: Սակայն, ինչպես վկայում են Ս. Չավարյանի հետագա վերլուծությունները, որպես ընդհանրացնող ցուցանիշ նա նարոդնիկների պես բնունում էր միջին ցուցանիշները², որոնք, Վ. Ի. Լենինի խոսքերով, «պղծե միշտ բնորոշում են միջին տիպից բարձր կանգնած անտեսությունը, այսինքն՝ իրականությունն ավելի լավ գույնիցով են ներկայացնում, քան նա կա»³:

Ինչ միջոցներ էր առաջադրում Չավարյանը գյուղացուն արևտեսական ծանր դրությունից հանելու և գյուղատնտեսությունը զարգացնելու համար: Նրա անտեսական ծրագիրը չէր անցնում լիբերալ-բուրժուական միջոցառումների շրջանակներից: Դրանց թվում նա կարող էր համարում արտադրության առաջավոր ձևերի կիրառումը կապված այն բանի հետ, որ «անընդհատ աճող բնակչությունը պահանջում է անտեսության սխտանի (գաշտավարություն, այգեգործություն, անասնապահություն)»

¹ Տե՛ս С. Заваров, Опыт исследования..., стр. 328.

² Տե՛ս նույն տեղում, էջ 428—429:

³ Հարկային սխտանի կառարկագործման վերաբերյալ Ս. Չավարյանի դիտարկումների վրա հատկապես նկատելի է առաջ անածառն Ա. Վախիշկովի «Землеулавление и земледелие в России и других европейских государств». անխտանիքային աղբյուրներ:

⁴ Վ. Ի. Լենին, նե՛տ, էջ 3, էջ 167:

աստիճանական փոփոխություն, առավել ինտենսիվ եղանակների առեղծման խնամարար⁴:

Չեղիեակը կարող տեղ էր հատկացնում ոտոցման սխտանին, որի զարգացման ուղղությամբ XIX դարի սկզբներից սկսած տեղաշարժեր գրեթե չէին կատարվել: Ընդ որում, նրա կարծիքով, դա չէր կարելի վերագրել ո՛չ օրհակության ինդիֆերենտիզմին՝ և ո՛չ էլ սոխնիկական գիտելիքների բացակայությանը: Ուստի և հարցի լուծումը նա կապում էր այն բանի հետ, որ տեղական խոշորերները լիազորված լինեն զեմստային իրավունքներով միջոցների այդ նպատակին ուղղելու համար: Սակայն, ինչպես նկատել է Վ. Ի. Լենինը, զեմստային ցարական կառավարության հերթական «գիշտաններից մեկն էր» և այն «հենց սկզբից գաղտապարտված էր ուսուսական, պետական կառավարման ալլիե հինգերորդ անիվը լինելու»⁵:

Չենց ինքը՝ Ս. Չավարյանը, խորհելով արտադրության առաջավոր մեթոդների կիրառման մասին, թերահավատություն էր նայում դրանց իրականացման գործնական հնարավորություններին. «Տեխնիկան խաղում է երկրորդական դեր, և գյուղատնտեսության բարձրացման ամենապլյախոր պայմանը — դա բնակչության բնդհանուր, անտեսական պայմանների բարելավումն է: Առանց դրա բոլոր տեխնիկական կատարելություններ կմնան լիազորված, կամ էլ իրազորված միայն իր ամենաշնչին մաստղը»⁶:

Գյուղատնտեսության թերզարգացումը և գյուղացու վատթար վիճակը Ս. Չավարյանը պայմանավորում էր նաև գյուղատնտեսական մտավորականության բացակայությամբ, չնկատելով, որ արտադրական ուժերի և արտագրական հարաբերությունների զարգացման այդ աստիճանում մտավորականությունը չէր կարող կատարել սղապող տնտեսական ֆունկցիաները: Ս. Չավարյանի այս ստույգական մանրաբուրժուական միջոցառումների մեջ հատկապես առանձնանում է նրա մթերային ծրագիրը, որը նպատակ էր հետամտում բնակչությունից մասահանումների հաշվին ստեղծել հասարակական պահեստներ և արգելազարկային ֆոնդեր: Այս առաջարկությունները տեսա-

¹ С. Заваров, Опыт исследования..., стр. 307.

² Վ. Ի. Լենին, նե՛տ, էջ 5, էջ 42—43:

³ С. Заваров, Опыт исследования..., стр. 313.

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 265:

կան եզրեր են որոնում նարոզիկություն հայեցության հետ Պատահական շէին այն վիճակիչումները, որ նա անում էր Գլեք Ուսպենսկուց, Իվանյուկովից, Գոլուբից և ուրիշներին:

Ինչպես տեսնում ենք, հասարակության անտեսական ու սոցիալական հակասությունների լուծման միակ ուղին Ս. Զավարյանի համար սեփոքմատարական ուղին էր: Դասակարգային ամեն մի պայքար նրան ներկայանում էր որպես ավելորդ միջամտություն այդ ներհակությունների վերացմանը: Նրա համար ընդունելի էին միայն այնպիսի միջոցառումները, որոնք կհանգեին էժան վարկի կազմակերպմանը, գոյություն ունեցող հարկային սխտեմի բարելավմանը, բնակչությանը միջբարյին օգնություն ցույց տալու նպատակով ապահովագրական ֆոնդերի ստեղծմանը: Հեղինակի կարծիքով, դրանք այն միջոցառումներն են, որոնք իբր հնարավորություն կտային պայքարելու կապիտալիզմի դեմ, որն օրըստօրե հաղթանակ էր տանում բնատնտեսության հանդեպ: Հասարակական կյանքի օլորտները թափանցող «անհասակակություն» սկզբունքների դեմ: Ս. Զավարյանը հույս ուներ դրանով կանխել հարստության բնեացումն ու հասարակության տրոհումը հակամարտ դասակարգերի և պահպանել նահապետական կյանքի ներքին ներդաշնակությունը: Հենց դրանում էր գրեկորվում Ս. Զավարյանի ողմանտիկական, մանրբորժուսական հայեցությունը:

XIX դարի 90-ական թվականների հայ գյուղագիրների շարքում իր ուրույն տեղն ուներ Ազարիա Աղելյանը՝ Մուրճում՝ ապագրված նրա առաջին գործերն արդեն վիճում էին, որ հեղինակի սոցիալական մտածումների սլորտը գոյուց էր:

Նկատենք, որ Ա. Աղելյանի հասարակագիտական հայացքների վերլուծության անզրադարձն են Ա. Տերտերյանը, Ս. Գանիկյանը, Կ. Գանիկյանը, Կ. Կարապյանը և ուրիշներ, աաազրելով աղբեր մեկնություններ:

Արևն Տերտերյանը գրում էր, որ Ա. Աղելյանի հասարակագիտական հայացքներն իրենց հիմքում ունենին «սոսական հասարակագիտական դպրոցը, առանձնապես նարոզիկությունը»:

Ինչ և Չերնիշևսկու հրատարակատությունը¹: Ա. Գանիկյանը շամաձայնելով այդպիսի մեկնությանը, աաազրում էր սրամայածորեն հակառակ տեսակետ. «Աղելյանի ստեղծագործության արժանիքները մեկն այն է, որ աշխատել է հիմնավորել նարոզիկական տեսությունների ուսուպիկ լինելը և ապացուցել, որ այդ գաղափարատեսությունը կորցրել է իր նշանակությունը և որ հայ գյուղում ոչ մի հիմք չկա այդ տեսությունների իրականացման համար»²:

Ա. Աղելյանի ստեղծագործության վերլուծությունը մեթոդաբանական այս մեկնականից չի կարելի հիմնավոր համարել: Թերևս այն է պատճառը, որ Ա. Գանիկյանի աշխատության մեջ Աղելյանի հայացքների վերլուծությունը համախ կատարվում է միակողմանի: Բայց մի՞թե Աղելյանը հիացել է «նարոզիկների կատարած սխրագործություններով» միայն այն բանի համար, որ ցույց տար նրանց նախագծումների ուսուպիկ բնույթը: Կամ մի՞թե նարոզիկները չէին տեսնում այն հակաական զեմպությունները, որոնց բախվում էին սոցիալական բարեկարգումների իրենց ծրագրերը: Մի կարևոր հանգամանք էս, մի՞թե Աղելյանի պրակտիկ գործունեությունը Մեղրիում հասարակական խանութներ բացելու ուղղությամբ նպատակ էր հետամտում ցույց տալու, որ «հայ գյուղում ոչ մի հիմք չկա այդ տեսությունների իրականացման համար»:

Իրավացի է Կ. Գանիկյանը, որը Աղելյանի գաղափարական կողմնորոշումը կապում էր ժողովրդագիտական շարժման աղղեցության հետ³:

1900 թվականին «Մուրճն» մի շարք համարներում լույս տեսավ Ա. Աղելյանի «Հասարակական խանութները հողվածաաարը: Հեղինակը գյուղացիության անտեսական ծանր գոյությունը բացատրում էր այն հակասությամբ, որ գոյություն ուներ գյուղացիության օրեցօր աճող պահանջների և դրանց բավարարման աստիճանի միջև: Գյուղացիության բարեկեցությունը պայմանավորող կարևորագույն գործոններից մեկը հեղինակը համարում էր անտեսականը, գանելով, որ էթն տնտեսությունը

1 Ա. Տերտերյան, նկատություններ մեր գյուղացիների մասին, ԸՈԽԸ Պետհամալսարանի գիտական տեղեկագիր, 1927, № 2—3, էջ 288:

2 Ս. Գանիկյան, Ազարիա Աղելյան, Երևան, 1954, էջ 144:

3 ՏԿ՝ Կ. Ա. Գանիկյան, Հայ գյուղագրությունը XIX դարում, Երևան, 1973, էջ 457—516:

գտնվում է բարյալման, անշարժության վիճակում, ապա հասարակական կառուցվածքը բնորոշվում է սագրատություն, սպիրտություն և հասարակական-բարյալական հարաբերություններին անկումով:

Ա. Ադելյանը բննադատում է բոլոր այն հեղինակներին, ովքեր գյուղացիության թշվառությունները պատճառ կապում էին հենց գյուղացու հետ: Նրա կարծիքով, կան միջոցներ, որոնք ննարավորություն կտան բարձրելու գյուղացու անտեսական դրությունը և հավասարակշռություն ստեղծելու «նրա կյանքի ֆակտորների մեջ»: Այդպիսի միջոցների թվում նա առանձնապես մեծ նշանակություն էր առաջադրում սպառողական կոոպերացիայի կազմակերպմանը:

Նկատենք, որ կոոպերատիվ սկզբունքներով հասարակության սոցիալական վերափոխման նախագծումները վաղուց են զբաղեցրել մարդկությունը: Չնայած այն լայն ատարածում ստացավ XIX դարում, բայց արդեն XVIII դարում ֆրանսիացի մտածող Ֆեզենը գրելատու էր «մորալյան եղբայրներին» համայնական կարգերը, իսկ Ռեյտիֆը դե ևս Բրեստի կոոպերատիվները համարում էր գյուղացիության համար պիտանի ասոցիացիա¹: Կոոպերացիայի գաղափարը լայն ատարածում ուներ նաև նարդերիկության շրջաններում: Գաղափարական այդ հիպսը հաշվի առնելով, Ա. Տերտրյանը շեշտում է Ա. Ադելյանի վրա «տեսական հասարակագիտական դպրոցի» և առանձնապես նարդերիկության ազդեցությունը:

Արդեն 1860 թվականները սկսած կոոպերացիաների ասոցիացիական զերի վերարժեքի շնորհաբանություններով հանդես էին գալիս Ն. Չիրերը, Ն. Բալլիերը, Ա. Չուպրովը, Ա. Վասիլիևի կովը և շատ ուրիշ տնտեսագետներ: Եվ վերջապես, ինչպես նշում է Ա. Ադելյանը, «Հասարակական խանութներ» հոդվածը գրելու ժամանակ իր ձեռքի տակ ունեցել է Բ. Խ. Օզերովի «Ենչ է սպառողական ընկերությունը» գրքուկը: Որո՞նք էին Ա. Ադելյանի կարծիքով սպառողական ընկերությունների առաջացումը պայմանավորող գործոնները և ի՞նչ հիմնական նպատակներ պետք է իրականացնենք դրանք: Նրա համոզմամբ, սպառողական ընկերությունը մի հաստատություն է, որն առաջին հերթին

կոչված է հակահշիտ լինելու մանրավաճառությանը, խոչընդոտելու ապրանքների թանկացմանը: «Եվ այսպես,— արել է նա,— մանրավաճառություն մեզ գոյություն ունեցող միջրբների թանկությունը, բարձր գները, առաջ են բերել սպառող ընկերություններ, որոնք ուղղակի հարաբերություններ հաստատելով խոշոր արդյունաբերողների կամ քանակով վաճառողների հետ, ազատվում են մանրավաճառի թանկ միջամտությունից և ծառայությունից և այդպիսի հարավորություն են սպայի իրենց անդամներին կամ խնայողություններ անել կամ հեշտությամբ ընդգրկակի իրենց պատման կամ պահանջների շրջանը»: Բացի այդ, հեղինակը կարծիքով, սպառողական կոոպերացիան կոչված է գյուղացիությանը ազատելու մանրավաճառների շահագործումից, վերջիններին որհեկու մտնող դիրքերից, բնակչությանը մատակարարելու էժան և լավորակ ապրանքներ, ինչպես նաև ազդելու շուկայական գների վրա:

Այնուհետև Ա. Ադելյանին իր հոդվածներում հանգամանորեն նկատարանել է սպառողական կոոպերացիայի, մասնավորապես 1844 թվականին Անդրիայի Ռոշդել քաղաքում Ֆյանելի արդյունաբերության բանվորների ուժերով կազմակերպված ընկերության ծագման ու նրա հետագա զարթուցման վրա պատմությունը²: Հոդվածից կարելի է եզրակացնել, որ Ա. Ադելյանը ծանոթ էր ոչ միայն ուղղիկյան կոոպերացիայի պատմությանը, այլև կոոպերատիվ տեսության հայտնի ներկայացուցիչ, օտևնյան տիպի համայնքի ստեղծման հետևող Ռոշը խոլոկի «Կոոպերացիայի պատմություն» երկհատոր աշխատությանը:

Մեղրիում ստեղծված սպառողական ընկերությունը 1899 թվականին հրամարվից ուղղիկյան կոոպերացիայի որոշ սերունդներին: Դա պայմանավորված էր մի շարք պատճառներով: Այսպես, եթև ուղղիկյան կոոպերացիայում ապրանքների առուվաճառքն իրականացվում էր միայն կանխիկ հաշվարկներով, ապա Մեղրիում կոոպերատիվի անդամների ցածր կենսամատակարար պարտադրում էր իրացումն իրականացնել նաև ապակաղաղը պարտադրում էր իրացումն իրականացնել նաև ապանիկ ձևով, այսպես էր կոոպը դիմանալ մասնավոր խանութների մրցակցությունը, հանգամանք, որ ընկերությունը համախոհում էր ֆինանսական ծանր կացության մեջ: Ա. Ադելյանը

¹ Մուրճ, 1900, № 5—6, էջ 653—654:

² Այդ ընկերության մասին հանգամանորեն տես Գ. Я. Бланк, Основы теории и истории потребительской кооперации, М., 1963, стр. 37—45.

սպառողական կոոպերացիան համարում էր բաղադրակրթական
այն միջոցներից մեկը, որը կարող էր գյուղական հասարակ-
ութիւնները ազատել «կեղծիքի մանրավաճառներից» ու վաշխա-
ռուներից և ինչ-որ շահով հարթել աղքատութիւնն ու հարստու-
թիւնը բեռնացումը:

Ինչ խօսք, Աղեւյանի մասնակցութիւնը Ստեփան Շահում-
յանի նախաձեռնութիւնով 1901 թվականին ստեղծված «Քերտե-
տիկ» մարքտիստական խմբակին, որն զբաղվում էր անդամներ-
ի մարքտիստական կրթութիւնով, չէր կարող անհետանալ մնալ
նրա գաղափարական էվոլյուցիայի վրա: Սակայն, ինչպես իրա-
վացիորեն նկատում է պրոֆեսոր Գ. Կարապետյանը, վերջնակա-
նայնս ազատվել կոոպերատիվային ոտմանտիզմի ազդեցու-
թիւնից, նա չկարողացավ:

* * *

Անցյալ դարի վերջին քառորդի հայ հասարակական մտքի
ուլտրաներում տակավին լայն տարածում ունեին համայնական
սեփականութիւն ստիլալ-ուսուպիական տեսութիւնները: Այս
ատումով ուշադրութիւն արժան է առանձնապէս Ղազարոս
Աղայանի «Ժամանակակից ատնախոսութիւն» աշխատութիւ-
նը: Այն գրվել է ամերիկյան ուսուպիստ գրող Էդուարդ Բելլամի
«100 տարուց հետո» (կամ «Ապագա դարը») վեպի ազդեցու-
թիւնով:

Ղ. Աղայանը Հովհաննես Թումանյանին ուղարկած նամակ-
ներից մեկում գրել է. «Հանդիմանում եմ, որ Բելլամիին եմ
թարգմանել: Ճշմարիտ է, որ Բելլամիին ներկան չի նկարագրում,
ալլ ապագան, բայց նա ապագայից քննադատում է ներկան...
Ասածները դուռ ճշմարտութիւն են, ոչ մի նախադասութիւն
գիտութիւն վերջին խոսքին հակասակ չէ: Բելլամիին կարգալով,
նրանք բոլորի ասածները յուրացրած կլինի: Ահա մի այսպիսի
վեպ է Բելլամիին և նման չէ սովորական ուսուպիական սոման-
ներին... Ամերիկայումն արդեն տեղ-տեղ ձևեր են դարձել իրա-

կանացնելու նրա նախադիմը, որ միակ մարդավարականն է,
իսկ մեզ համար դեռ իդեալ կարող է լինել»¹: Այս դասադու-
թիւն մեզ զբոսորդում է հասարակութիւնը զարգացման վերա-
բերյալ Ղ. Աղայանի հայեցութիւնը:

«Ժամանակակից ատնախոսութիւնը» գրողի հավատամքն
էր, նրա «նախը»: Այն առաջին անգամ տպագրվել է «Մուրճ»
ամսագրում: Դրանում, ինչպես նկատել էր Ա. Արասխանյանը,
գրողը «պարզում է յուր հայացքները կյանքի կարեւորագոյն
խնդիրների մասին, որպես՝ ընդու, կրոն, խաչքրիք, սեփակա-
նութիւն խնդիր, ժողովուրդ, դասակարգի խնդիրներ և այլն»²:

Վերջին հաշիվով, յուրաքանչյուր ուսուպիստ, որպէս հասարա-
կական գիտակցութիւն տարր, արտահայտում է պատմական
իրականութիւնը: Ղ. Աղայանը նարոդնիկութիւն ժամանակա-
կերն էր: Եթէ մի կողմից նա տեսնում էր այն փոփոխութիւն-
ները, որ առջ էր բերում կապիտալիզմը երկրամասի անտե-
սական ու սոցիալական կյանքում, ապա մյուս կողմից չէր ըն-
կալում այն հակալական պատմական դերը, որ կոչված էր կա-
պիտալիստ կապիտալիզմը՝ ծնելու այն սոցիալական ուժը, որն
ընդունակ էր իրականացնելու անցումը նոր հասարակարգին:
Այս ատումով նրա ուսուպիստ մի կողմից երեք էր որոնում
Բելլամիին, իսկ մյուս կողմից նարոդնիկութիւնը հետ, որպէս
«ապագայից» կապիտալիզմի ընտրատեսիլը:

Հայ գրողի մոտ կայանքի բոլոր պատկերացումները գրվում
էին «սպրելու համար» ընդհանուր տեսանկյան տակ: Նա դա
համարում էր այն գլխավոր սոցիալական պրոբլեմը, որի առջ
արգարացվում է ամեն ինչ: Ղ. Աղայանը հասարակութիւն
զարգացումը դիտում էր որպէս մի միջոցիմ պրոցես, իսկ հա-
սարակութիւն անտեսական ու բարոյական օրենքները նույ-
նացնում էր: Հասարակութիւն ներհակութիւնների պատճառը,
նրա կարծիքով, թաքնված է ետականութիւն մեջ: Ղ. Աղայանն
անհասանելի դրական և բացասական հակումները կապում էր
հասարակական միջավայրի, սպրելու եղանակի հետ: Նա զբա-
նում էր, որ եթէ սպրելու եղանակը զրկի «համայնասիրական,
մարդասիրական, ալլասիրական» սկզբունքների վրա, երբ
սամեն որ աշխատի ամենքի համար», ապա կվերանան ինչպես

¹ Տե՛ս Գ. Պ. Կարապետյան, Սպառողական կոոպերացիայի մասում և զար-
գացումը Հայաստանում, Երևան, 1957, էջ 50:

¹ Ղազարոս Աղայան, Յիկերի ժողովածու, Ե. Յ. 1974, էջ 523:
² «Մուրճ», 1898, N է, էջ 900:

այդ ներհակությանները, այնպես էլ «գոյություն կա՞ի» սկզբունքը¹։

Գրողը տեսնում էր այն հեղաբեկումները, որոնք առաջացնում էր կապիտալիզմն իր զարգացման ճակատագրին։ Նա դրանց հակադրում էր համայնքի միջոցով հասարակական ավելի բարձրագույն ձևին անցնելու հնարավորությունը։

Ինչպես հայտնի է, Շառլ Ժուլյան մարդկային հասարակության զարգացումը բաժանում էր չորս զրգանի՝ վալրենություն, նահապետական շրջան, բարրաբոսություն և քաղաքակրթություն, գանձելով, որ դրանցից յուրաքանչյուրն անցնում է մանկություն, պատանեկության, հասունության և ծերության փուլերը²։

Ղ. Աղալանը հասարակության զարգացումը դիտում էր Ժուլյանի այս վերջին դասակարգման առումով։ «Ը՞նթե այս զարգացումը լինենք, — դեռ էլ նա, — մարդիկ անհուն դարերի ընթացքում ոչ մի փոփոխություն է՞ին ենթարկելի, այլ նույնը կլինեին, ինչ որ եղել են սկզբում իրանց նախնական վիճակի մեջ»³։ Սակայն մարդկային հասարակության շարժիչ ուժերի հասարակական զարգացման հիմքի վերաբերյալ Ղ. Աղալանի հայացքները սուրբեկտիվ էին, նա կարծում էր, թե պատմության ընթացքը որոշվում է ոչ թե օբյեկտիվ օրենքներով, այլ առանձին անհատների գործունեությամբ։ «Շանճարը մարդկանց մտավոր զարգացման ճանապարհը հարթողն է և նրանց առաջնորդող զեպի սպազան»⁴։ Նշենք, որ պատմության մեջ անհատների դերի բացարձակացումը հատուկ էր նաև նարոդնիկությունը։ Յուրաքանչյուր անհատ կրողն է որոշակի հասարակական հարաբերությունների, ուստի և վերջիններիս զարգացման օբյեկտիվ օրենքների բացարձակությունը պահանջում է առաջին հերթին նյակետ ունենալ անհատի սոցիալական բնութագրություններ։ Անհատները կախված են հասարակությունից այնպես, ինչպես և հասարակությունը մարդկանց ստեղծագործական գործունեությունից։

Ղ. Աղալանն իր սոցիալ-փիլիսոփայական հայացքներում

¹ Տե՛ս Ղազարոս Աղալան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963, էջ 86։

² Տե՛ս Մարկ Գորնե, Избранные сочинения, т. III, М., 1954, стр. 93.

³ Ղազարոս Աղալան, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 92։

⁴ Նույն անգում։

էլնում էր տիեզերքի բոլոր մասերի միասնության, բնության և հասարակության օրենքների նույնության գաղափարից, «Տիեզերքի մեջ չուկ-չուկ օրենքներ չկան։ Միևնույն օրենքն է տիրողը թե հողու և թե մարմնի վրա»¹։ Հետևապես, գրողի համոզմամբ, հասարակության ճիշտ կազմակերպումը հնարավորություն կտա սպառնվելու նրա անդամների ներքաշնակ զարգացումը։ Իսկ դա կախված է մասնավոր սեփականությունից և համայնական հասարակական սեփականության ստեղծումից։ Ղ. Աղալանի կարծիքով, ընդհանուր սեփականություն պետք է լինեն ոչ միայն վերնաշնեցային, այլև նյութական, արդյունք բերող ընդհանուր հաստատությունները։

Հասարակության զարգացման հարցերում Ղ. Աղալանը կանգնած էր էվոլյուցիոն տեսակետի վրա։ Նրա կարծիքով, մասնավոր սեփականությունը կարելի է վերացնել և ծառայեցնել հանրության օգտին աստիճանաբար, առանց հասարակական ցինթոմների ու թոկլիսների Ղ. Աղալանի հայացքները ներքին էին որոնում ստոյատոյական սոցիալիզմի» հետ։

¹ Ղազարոս Աղալան, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 97։

ԲՈՎԱՆԳԱԿՈՒՓՅՈՒՆ

Ներածություն	3
«Մեզու Հայաստանի» պարբերականի անտեսական զարգացման ուղեգծում- ները	10
Ավերանոր Երեջյանը և սուստի և զրամաշրջանառության հարցերի մա- տի	25
«Մշակը» և Գրիգոր Արծրունու շատաշաղիմաբան տեսության անտեսական չությունը	38
Անդրկովկասի կադիտալիստական զարգացման սոցիալ-անտեսական պրո- բլեմները «Արձագանքում»	55
«Նոր-Գարի» անտեսական բովանդակությունը	93
«Մուրճ» ամսագիրը և սուստ անտեսագիտական միտքը	119
Տեսանալիստական միտքը «Պատկ» և «Արաբ» պարբերականներում	130
Տեսանալիստական հետազոտությունները «Տարազ» հանդեսում	140
Սոցիալ-Եղիազարյանի անտեսական ուսման արժեքը	158
Ստեփան Գուլիշանբարովի անտեսագիտական հայացքները	181
Հայ նարդիզիություն և սոցիալական ուսուցիչ	191

Սարիյան Ռոբերտ Ներսիսի

ՀԱՅ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԱՌՈՒՄԻՓՅՈՒՆ
(XIX դ. 70—90-ական թվականներ)

Саринян Роберт Нерсесович
КРИТИЧЕСКИЙ АНАЛИЗ АРМЯНСКОЙ
ЭКОНОМИЧЕСКОЙ МЫСЛИ. (70—90 г. XIX в.).
(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1984.

Մամ: Խմբագիր՝ Վ. Ս. Ներսիսյան
Հրատ. Խմբագիր՝ Վ. Մ. Սահակյան
Նկարիչ՝ Ֆ. Գ. Ավերիյան
Գեղ. Խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. Խմբագիր՝ Լ. Մ. Մկրտչյան
Վերստույգ արտադրիչ՝ Գ. Հ. Բարաշեղյան